³ См.: Мнацаканян А., Севак П., По поводу книги З. Бушиятова Азербайджан в VII–IX вв., – ИФЖ, 1967, № 1, с. 177-190; Мелик-Оганджян К. А., Историко-литературная концепция З. Бушиятова, – ВАН, 1968, № 2, с. 169-190; Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н., К изучению истории Кавказской Албании (по поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании»), – ИФЖ, 1987, № 3, с. 166-189; Арутюнян Б. А., Когда отсутствует научная добросовестность, – ВОН АН Арм. ССР, 1987, № 7, с. 33-58; Чобанян П., О некоторых вопросах истории Арцаха (XIII–XIX вв.), – ИФЖ, 2002, № 3, с. 145-160;

ская (правобережная) Албания в частности, всегда привлекали пристальное внимание армянских исследователей¹. В 1960-1980-х гг. албановедение в Армении получило дальнейшее научное развитие. Вышли в свет фундаментальные монографии А. Мнацакяна², Б. Улубабяна³, Г. Свазяна⁴, Ш.

Степанян Г., Против азербайджанских фальсификаторов истории Восточного Закавказья, – Всеармянский журнал «Вэм», 2009, №1 (на арм. яз.), с. 133-143; он же: Армяне Бакинской губернии во второй половине XIX века (историко-демографическое исследование), Ер., 2010; **Galichian R.**, Clash of histories in South Caucasus. Redrawing the map of Azerbaijan, Armenia and Iran, London, 2012; **Туян В.**, Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Ер., 2013; **Վարդանյան Ա.**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Եր., 2013, էջ 69-83; он же: Աղվանքի հարավային սահմանը հայկական եւ հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում, – ՊԲՀ, 2009, №1, էջ 157-165:

¹ См., к примеру, **Арутюнян Б. А.**, О некоторых вопросах этнической и политической истории так называемого Агванка, – «Вэм», часть I, 2011, № 2 (34), (на арм. яз.) с. 31-64; часть II, 2011, № 3 (35), с. 34-73; **Ուլուբաբյան Բ.**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, – ԲԵՀ, 1971, №1, էջ 177-186; он же: «Ալրանի», Աղվանք», «Առան» տեղանունները, – ՊԲՀ, 1971, №3, էջ 120-123; он же: Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության (V-VII դդ.), Եր., 1981; **Акопян А. А.**, Албания-Алуанк..., Ер., 1987; он же: Чашацери եւ Чашацիանա (Чашацք) մարզի տեղադրության մասին, – ԼՀԳ, 1983, №1, էջ 87-98; он же: Պատմա-աշխարհագրական եւ փնագրագիտական հետազոտություններ (Արցախ եւ Ոստիք), Վիեննա-Եր., 2009, էջ 215-245, 264-270; **Степанян Г.**, Против азербайджанских фальсификаторов истории Восточного Закавказья, с. 133-143; **История Агван Моисея Каганкатваци**, Пер. К. Патканова, СПб., 1861; **Լեո, Հայոց պատմություն**, հտ. Բ, Եր., 1947; он же: **Երկերի ժողովածո**, հտ. Ե, Եր., 1967; **Еремян С. Т.**, Раннефеодалные государства Закавказья в III-VII вв., с. 303, 310, 328.

² **Мнацакяня А. Ш.**, О литературе Кавказской Албании, Ер., 1969, с. 15.

³ **Улубабян Б. А.**, Еще одна произвольная интерпретация армянской «Истории страны Агван», Рец. на книгу Ф. Дж. Мамедовой «История албан» Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977, – ВАА, 1979, № 2, с. 219-232; он же: К вопросу о царской династии Агванка, – ВОН, 1971, № 7 (на арм. яз.); он же: О северо-восточном рубеже армянского языка и арцахском диалекте, – ВЕУ, 1968, № 1, 2; он же: «Ալրանի», Աղվանք», «Առան» տեղանունները, – ՊԲՀ, 1971, №3, էջ 120-123; он же: Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության (V-VII դդ.), Եր., 1981:

⁴ **Սվազյան Հ. Ս.**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Եր., 2006; он же: История страны Алуанк (с древнейших времен по VIII в.), Ер., 2009.

Смбатяна¹, А. Акопяна² и др. Работы этих авторов весьма взвешены и глубоко аргументированы. В них прослеживается общая цель показать тот факт, что территориально, политически, культурно, этнически и конфессионально правобережная так называемая «Албания» это – Северо-восточная Армения. Армянские исследователи аргументированно доказывают также, что весь античный период река Кура была политической границей между Албанией и Великой Арменией, а также, что население правобережной, армянской Албании изначально, т. е. с момента образования древнеармянского этноса, было армянским и ошибочно говорить о его «арменизации» в какой-либо период истории³. Известно, что Мовсэс Хоренаци (V в.) называл население Арцаха и Утика произошедшим от прародителя армян Хайка. Согласно воззрениям автора, изложенным в его «История Армении», хороним Алуанк⁴ этимологизируется на почве «Алу» (по-армянски – «кроткий», «мягкий») – прозвища одного из правнуков легендарного прародителя армян Хайка – Сисака. Последний по той же традиции считался эпонимом не только Сисакан-Сюник'а, но и княжеских родов и населения северо-восточного пограничного наместничества царства Великой Армении на правобережье Куры, основанного первым Аршакидским царем страны Валаршаком (по данной исторической версии – II в. до н. э.) «вдоль большой реки по названию Кур, что прорезает обширную равнину, от реки Ерасх до крепости, называемой Хнаракер»⁴. Потомком же Сисака Хайкида, к которому, по словам историка, восходят современные ему княжеские роды Цавдэаци, Гарманаци, Утэаци и Гаргараци, был Аран (следовательно, тоже Хайкида – Г. А.). Вспомним также со-

¹ Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, Пер. с древнеармянского, предисловие и комментарий Ш. В. Смбатяна, Ер., 1984.

² Акопян А. А., Албания-Алуанк..., Ер., 1987.

³ Мнацаканян А. Ш., О литературе Кавказской Албании, с. 15-64, 67-73; Улубабян Б. А., Родословные истоки Хаченского княжества, – ВЕУ, 1972, № 2, с. 68; он же: Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց փառսմության (V-VII դդ.), էջ 63-80; Акопян А. А., Албания-Алуанк, с. 5; Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, Пер. Ш. В. Смбатяна, с. 6-7. В последний же раз подлинное решение поставленного вопроса см. Յակոբեան Ա. Յ., Բուն Աղոսանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոմերը եւ արքայատոմերը Թ-ԺԳ դարերում (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Պատմ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախօսութեան սեղմագիր, Եր., 2014:

⁴ Хоренаци, кн. II, гл. 8.

общение Страбона об одноязычности населения Армении во времена правления царей Арташэса I и Зареһа¹, а также тот факт, известный из рассказов Мовсэса Хоренаци, что правобережье Куры входило еще в состав царства армянских Еруандидов (VI-III вв. до н. э.)².

Таким образом, армянские исследователи едины в том, что значительная часть территории марзпанской «Албании» исторически и этнически принадлежала Великой Армении. Армянским историкам в условиях жесткой идеологической конфронтации в основном удалось сохранить приверженность принципам научности. Они своими работами, основанными, в отличие от азербайджанских, на вполне достоверных данных первоисточников, значительно углубили и расширили познания всемирной науки в сфере истории и культуры армянской Албании (правобережья Куры) и Собственно Албании на ее левобережье.

¹ Страбон, XI, XIV, 5.

² Хоренаци, кн. II, гл. 44, 45.

«Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների համագումար»

Արդի դարաշրջանի նոր մարտահրավերների եւ Ադրբեջանահայերի անհետաձգելի խնդիրների շուրջ

25 տարի առաջ 1991 թ. ապրիլի 30-ին սկսված «Կոլցո» գործողութիւնը շարունակվում է մինչեւ ամռան կեսերը, որի ընթացքում Խորհրդային բանակի եւ Ադրբեջանի օմօն-ի ուժերով ամբողջովին հայաթափվում են ԼՂԻՄ-ի Հադրուլթի շրջանի 14, Բերդաձորի ենթաշրջանի 6 գյուղեր, ինչպես նաեւ Խանլարի շրջանի Գետաշեն, Մարտունաշեն եւ Շահումյանի շրջանի Բուզլուխ, Մանաչիդ, էրքեջ գյուղերը: Նրանց ամբողջ բնակչութիւնը բռնի տեղահանվում է, իսկ մի մասը սպանվում:

Ընդհանուր առմամբ՝ 1988-1992 թթ. ընթացքում հաստատվող Բաքվի ռեժիմի ցեղասպանական բռնարարքների պատճառով ավելի քան 660.000 հայեր դարձան փախստական եւ հեռացան Ադրբեջանական ԽՍՀ-ից, սիրովեցին աշխարհով մեկ:

Անցած 25 եւ ավելի տարիների ընթացքում հայ փախստականների հարցը բոլոր առումներով մեկուսացվեց ու շրջանցվեց թե՛ միջազգային կառույցների եւ քաղաքական քննարկումների շրջանակների կողմից, եւ թե՛ հենց հայկական քաղաքական դաշտի ու հայաստանյան իշխանութիւնների կողմից: Հայութեան այդ հատվածի զրկանքները, նրանց իրավունքների ոտնահարումը, դարերով ստեղծած պատմա-մշակութային եւ հոգեւոր արժեքների պահպանութեան հարցը, սիյուստում, ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում նրանց ներկա վիճակը եւ ինքնութեան պահպանմանն առնչվող խնդիրները մնում են անտեսված ու «մոռացված»:

Եւ այս օրերին, երբ գերտերութիւններն իբրեւ իրենց շահերի ապահովման արդյունավետ միջոց կիրառում են ցեղասպանութիւնը, որին էլ ծառայեցնում են հարավում ստեղծվող իսլամական պետութիւնը, իսկ հյուսիսում՝ դրա նմանակ Ադրբեջանին, հայկական իշխանութիւնները չեն կիրառում հայ փախստականներին վերաբերող քաղաքական կռիւմներ: Դրա փոխարեն նրանք այսպես կոչված «Ղարաբաղյան կոնֆլիկտի» կարգավորման գործընթացում ուղղորդվում են արտաքին պատվերով եւ ելնում այն կեղծված պատմութիւնից, որ գերտերութիւնները հորինել են տարածաշրջանում իրենց խաղերը խաղալու համար. իբրեւ թե կոնֆլիկտը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ է, որի արդյունքում էլ հայութիւնն այսօր աշխարհին ներկայանում է որպես ագրեսոր, իսկ Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների համար Բաքվի ռեժիմից ազատազրկված տարածքները՝ որպես օկուպացված:

Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների Համագումարի նախագահու թյունը 2011 թ. սկսած Հայաստանյան իշխանությունների առջեւ պարբերաբար բարձրացնում է Հայ փախստականներին առնչվող մի շարք խնդիրներ: Դրանցից մեկը պատմության եւ մշակույթի պատմա-ազգագրական թանգարան ստեղծելու խնդիրն է: Թանգարանը Հնարավորություն կտա Համակարգված եւ ամբողջական ձեւով ուսումնասիրել Գարգամանի ու Շիրվանի Հայության պատմա-մշակութային արժեքները, դրանց տեղային առանձնահատկությունները, տարածաշրջանի զարգացման պատմական, ժողովրդագրական, քաղաքական ու քաղաքակրթական յուրահատկությունը եւ, ի վերջո, պահպանել ու սերունդներին փոխանցել մեր ժողովրդի այդ հատվածի մշակութային ժառանգությունը՝ փորձելով վերականգնել 20-րդ դարավերջի բռնատեղահանությունների արդյունքում նրանց կորցրած տեղային մշակութային միկրոմիջավայրը: Նման թանգարանի ստեղծման ծրագիրը ներկայացվել է ՀՀ կառավարութայանը դեռ 2014 թ. սկզբին: Այդ ուղղությամբ իշխանությունների որեւէ գործնական քայլ կամ առաջարկ մինչ օրս չի հնչել:

Այժմ ուզում եմ ձեր ուշադրությունը ներկայացնել

Ադրբեջանական ԽՍՀ-ից Փախստականների Համագումարի Հայտարարությունը *ԵՆԽՎ՝*

«Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր գրկված են խմելու ջրից» բանաձեւի ընդունման առնչությամբ.

«Արդարացիցին Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների Համագումարի վատթարագույն մտավախությունները: Եւրոպական Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովն ընդունեց նպատակային հակահայկական բանաձեւ: Ու եթե մյուս բանաձեւի կապակցությամբ՝ «Բոնությունների ծավալում Լեոնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ գրավված տարածքներում», շատերն ընդգծում են դրա մերժման փաստը, ապա մենք նշում ենք հեղինակավոր եւրոպական մարմնի կողմից դրա մշակման եւ օրակարգ մտցնելու հանգամանքը:

Վերոհիշյալ բանաձեւով հերթական անգամ օրինական կարգով Հավանություն տրվեց եւ քաջալերվեց նորովի շարունակելու Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Նախիջևանում եւ ամբողջ Ադրբեջանական ԽՍՀ-ում ծավալված Հայերի ցեղասպանությունը, խրախուսվեց պատերազմի սանձազերծումը: Արձագանքը չուշացավ Ադրբեջանի իշխանությունը ազրեսիա ձեռնարկեց ապրիլի 2-5-ը ԼՂՀ ողջ սահմանի երկայնքով:

Այն ինչ կատարվեց նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում Հայերի նկատմամբ 1988-1992 թվականներին եւ ինչը շարունակվում է մինչ այսօր, լիովին Համընկնում է այն իրողության հետ, որ տեղ էր գտել մեկ հարյուրամյակ առաջ Հայերի նկատմամբ նախկին Օսմանյան

կայսրութեան տարածքում, եւ ինչը բազմաթիւ երկրներ ու միջազգային կազմակերպութիւններ որպէս ցեղասպանութիւն ճանաչեցին: Իսկ ի՞նչ է այսօր կատարվում նախկին Օսմանյան կայսրութեան տարածքում Հայերի եւ մյուս ժողովուրդների նկատմամբ, նո՛ւյն եղանակներով, նո՛ւյն անսահման դաժանութեամբ, եւ նու՛յն կեղծիքը, նու՛յն խաղացողները բեմի ետեւում, նու՛յն Հանցավոր նպատակները: Ամենակարեւորն այն է, որ տեղի ունեցողը՝ ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ Հիմա պատահական չէ, տարեբային չէ: Մենք ունենք բավարար Հիմքեր իրերը կոչելու իրենց անուններով՝ տեղի ունեցող ոճրագործութիւնները կանխելու եւ ապագայում դրանց բացառելու նպատակով:

Մենք մեղադրում ենք առաջին Հերթին այսօրվա Եւրոպայի եւ աշխարհի առաջնորդ պետութիւններին՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Տրանսիայի, ԱՄՆ-ի կառավարութիւններին 1988 թվականից մինչ այսօր Արեւմտակասպյան տարածքներից Հայերի բնաջնջմանը, արտաքսմանը, սփռմանը նպատակաուղղված եւ իրականացվող գործողութիւնների խրախուսման, Հրահրման, նախաձեռնման, առաջնորդման եւ Հանցագործներին կոծկելու մեջ:

Այդ նպատակով էր, որ նրանք

Ա) Արեւմտակասպյան տարածքների բնիկ ժողովուրդների իրավունքների վերականգման խնդիրը փոխարինեցին «Լեռնային Ղարաբաղի Հակամարտութեան կարգավորման» խնդրով, մինչդեռ Ղարաբաղի կարգավիճակի Հարցը, որ արդիականացվեց 1988 թվականին, կազմում է Արեւմտակասպյան տարածքների պետական կարգի Հարցի միայն մի փոքր մասը, մի իրավական Հարց, որը պարբերաբար սրվում է արդեն մեկ Հարյուրամյակ: Ադրբեջանական Հանրապետութեան մեջ Ղարաբաղյան Հակամարտութեանը նման բազմաթիւ խնդիրները Բաքվի ռեժիմի եւ ժողովրդավարական իրավունքի բախման Հետեւանք են: Խնդրի Հենց այս բնույթի եւ սրութեան մասին է վկայում այն, որ Ղարաբաղի կողմից իր իրավական կարգավիճակը բնակչութեան պատկերացումների Հետ Համապատասխանութեան բերելու առաջարկից Հետո անմիջապէս սկսվեց Հայերի ոչնչացումը Ղարաբաղի սահմաններից Հեռու Բաքվում, Սումգայիթում, Կիրովաբադում: ԽՍՀՄ-ում նման միջադեպեր տեղ չեն գտել ո՛չ Արխաղիայում, ո՛չ Մերձդնեստրյան Հանրապետութիւնում, ո՛չ Չեչնիայում: Նոր կարգավիճակի Հավակնութիւնները չբերեցին արխաղների, ռուսների, չեչենների Հալածանքների, առավել եւս սպանութիւնների Թբիլիսիում, Քիշինեւում, Մոսկվայում: Մոսկ միայն այդ փաստը մեծ տերութիւններին, միջազգային Հանրութեան բոլոր կառույցներից պահանջում էր Արեւմտակասպյան տարածքներում ծավալված դեպքերը գնահատելիս դրսեւորել կատարվածի Հանդեպ առավել մանրակրկիտ, Հստակ որակավորում եւ մշակել առկա խն-

դիրները լուծման ուղիներ: Սակայն, տերությունների ընթացիկ քաղաքական շահերը պահանջեցին այլ մոտեցումներ որդեգրել: «Տարածքային ամբողջականության», «անջատողականության», «տարածքների փոխանակման» հայեցակարգերի ընդունումը նրանց կողմից, ի վերջո, հանգեցրեցին ցեղասպանության ծավալմանը, ինչը կանխելու ջանքերը տարան լիարժեք պատերազմի:

Բ) Ադրբեջանի անկախության ճանաչումը իրականացվել է միջազգային իրավունքի խախտմամբ, որը հանգեցրել է լիարժեք պատերազմի սանձադեբման եւ տարածաշրջանում ցեղասպանության իրագործման: ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու կարգի մասին ԽՍՀՄ Օրենքով նախատեսվում էին ընթացակարգեր, որոնց կատարումը նպատակաուղղված էր հատկապես հակամարտությունների կանխմանը: Այսպիսով, Ադրբեջանի ինքնիշխանության ճանաչումը պետք է պայմանավորված լիներ իր կողմից Օրենքի բոլոր պահանջների կատարմամբ, «դուրս գալու մասին» հանրաքվե անցկացնելու միջոցով եւ դրա արդյունքների ըստ հանրապետության կազմում եղած ինքնավարությունների (Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ եւ Նախիջեւանի ԻԽՍՀ) հաշվառումով, իսկ տարբեր ազգությունների համախումբ բնակչության վայրերում նախատեսվում էին առանձին լուծումներ այդ շրջանների համար: Այդ կանոնների խախտումը մեղսակից դարձրեց աշխարհի տերություններին ինչպես ընդդեմ հայերի հետադաշնում կատարված հանցագործություններում, ջարդերում, բռնի տեղահանություններում եւ լիակատար ոչնչացման փորձերում, որոնք իրենց ամբողջությամբ կազմում են ցեղասպանության հանցագործություն, այնպես էլ այլ ժողովուրդների եւ սոցիալական խմբերի նկատմամբ:

Գ) Ղարաբաղին ցեղասպանությունից փրկեցին ինքնապաշտպանության ուժերը: Փրկվեցին ինչպես տեղի բնակիչների, այնպես էլ Ադրբեջանի այլ շրջաններից փախած հայերի հարյուր հազարավոր կյանքեր: Միջազգային մամուլում այդ ինքնապաշտպանության ուժերը որակավորվեցին որպես «ազգային-ազատագրական», Հետո՝ «անջատողական», եւ ապա ավելի ծանր որակավորմամբ «զավթողական»: Լավագույն կայսերական ավանդույթներով փոխվեցին դահիճի եւ զոհի տեղերը, դրանով էլ՝ ավելի խթանվեց շարունակվող արյունահեղությունը:

Դ) Անգամ ռազմապետ գործողությունների դադարելուց հետո, տարբեր երկրներում ջարդերից փրկված հայերին արգելվեց բնակվել այն տարածքներում, որոնք հայ փախստականները համարում են ազատագրված Բաքվի ռեժիմի ցեղասպանության մեքենայից: Փախստականների տեղավորման եւ օգնության համար պատասխանատու միջազգային կազմակերպությունները, Միջազգային ձգնաժամային խումբը, առաջատար երկրների լիազորված ներկայացուցիչները արգելում են

փախստականներին բնակվել ազատագրված շրջաններում, որը նրանց համար իրենց հայրենիքի միակ ու համեմատաբար անվտանգ տեղն է: Եւ միայն Հայաստանի Հանրապետութիւնն էր, որ այնտեղ բնակվածներին գոնե ինչ-որ օգնութիւն էր տրամադրում, սակայն գործի դրված աննախադեպ ճնշումը ստիպեց Հայաստանի Հանրապետութեանը հրաժարվել իր քայլերի ճնշող մասից: Բացի այդ էլ Հայաստանի պաշտոնատար անձանց կոռուպացիվածութեան մակարդակն այնպիսին է, որ չափազանց հեշտացնում է նրանց ղեկավարելիութիւնը:

Այսպիսով, գրկելով հայերին հարագատ օջախներից, աշխարհի առաջատար տերութիւնները, ի լրումն արդեն իսկ Բաքվի ռեժիմի կողմից իրականացվածի, խթանում են հայերի հետագա տեղահանութիւնը Արեւմտակասպյան տարածքից:

Ե) Փախստականների բնակութեան վայրերը օկուպացված ճանաչելով խրախուսվում է Բաքվի ռեժիմի կողմից շարունակվող ռազմական գործունեութիւնը սահմանի երկայնքով: Դրա շնորհիվ է, որ Բաքվի ռեժիմը պահպանում է սպանութիւնները եւ սպանութիւնների սպառնալիքը՝ որպէս հայերի արտաքսման հիմնական գործիք: Հայերի նկատմամբ կիրառվող նման քաղաքականութիւնը անհնարին է դարձնում այդ տարածքներում նաեւ այլ ժողովուրդների եւ խմբերի բնակութիւնը, որոնք ստիպված են լքել իրենց բնակութեան վայրը:

Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները գտնում ենք, որ տարածաշրջանում խաղաղութեան հաստատման ձգտող մարդկանց, կազմակերպութիւնների, երկրների եւ համայնքների խնդիրն է՝

ա) դատապարտել միջազգային նորմերի անտեսման կայսերական քաղաքականութիւնն ու մարդկանց եւ աշխարհի ճակատագրի խաղարկման կանոնները, անկախ թե ովքեր են դրանց հեղինակները:

բ) վերացնել ցեղասպանութեան ենթարկված, իրենց բնակավայրերից տեղահանված Ադրբեյջանական ԽՍՀ Հայ քաղաքացիների Բաքվի ռեժիմի վերահսկողութիւնից դուրս գտնվող ազատագրված տարածքում բնակվելու եւ բնականոն կյանք վարելու դեմ բոլոր սահմանափակումները, տրամադրել նրանց աջակցութիւն: Դա կօգնի նաեւ բացահայտել հակամարտութեան բուն էութիւնը, Արեւմտակասպիայում պետաիրավական կառուցվածքի հարցը եւ դրա լուծման միջոցները:

գ) այն պայմաններում, երբ Բաքվի ռեժիմի հանդեպ միջազգային հանրութեան վերապահումներն աճում են կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, իրավիճակի կարգավորումը պահանջում է անցկացնել համապատասխան քննարկումներ եւ ձեռնարկել համակարգված գործողութիւններ՝ խաղաղ եւ կառուցողական կյանքի ու համագործակցութեան ձգտող Արեւմտակասպյան տարածքի բոլոր ժողովուրդների միջեւ:

Տեղեկություններ Շամախիի XVII – XX դ. սկզբի հայկական գորգագործության եւ մանածագործության մասին

Մեզ հասած նմուշները եւ բազմաթիվ գրավոր աղբյուրները վկայում են, որ Շամախին Հայտնի է եղել իր բարձրորակ գորգերով եւ բարդ ու պարզ եղանակներով գործվող կարպետներով, ունեցել է զարգացած մանածագործություն, որտեղ առանձնահատուկ տեղ է զբաղեցրել մետաքսագործությունը: Լեւոն Սաչիկյանը խոսելով Շամախիի մասին, մեջբերում է XV դ. ճանապարհորդներ Ջ. Բարբարոյին եւ Հ. Կոնտարինին, որոնք լինելով Շամախիում գրում են, որ այտեղ կա 4-5 հազար տուն եւ բնակիչները հիմնականում հայեր են, որոնք տեղում արտադրում են «թալաման» կամ «դեհհեմին» կոչված մետաքսյա կտորներ, կտավներ: Իսկ ուսս վաճառական Ֆ. Կոտովը նշում է, որ 1623-1624 թթ. Շամախին ուներ մի քանի քարավանատուն, որոնցից մեկը, որտեղ կանգ էին առնում ուսս վաճառականները կոչվում էր «Արմյանսկոյե»:

Մոսկվայի Հին փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվի XVII դ. վավերագրերում մանրամասն տեղեկություններ կան Հայ վաճառականների կողմից Ռուսաստան եւ Եւրոպա ներմուծված գորգերի, թանկարժեք կտորների ու գործվածքների եւ ներկերի մասին: Դրանց մեջ նշվում են Շամախու մետաքսյա գոլավոր կտորները, մետաքսյա Հայտնի գոտիները, բրդյա գորգերը եւն: Ջուղայիցի վաճառական Սարհադ Բանդորյանի 1711-1718 թթ. առեւտրական գործունեության վերաբերյալ կազմած հաշվեմատյանում խոսվում է Շամախուց տարված 21 գորգերի մասին, որոնք նա վաճառել է Սարատովից դեպի Մոսկվա ընկած ճանապարհին: Յուրաքանչյուր գորգի արժեքն է 2000 դրան կամ դիրնար (10 արծաթ): Իսկ Մոսկվայում նա վաճառում է 31 գորգ, յուրաքանչյուրի գինը՝ 3000 դրան (15 արծաթ): Այսպիսով, Շամախիից տարված գորգերի ընդհանուր արժեքը կազմում էր 675 արծաթ: Հիշատակվում են նաեւ Շամախիում արտադրված մետաքսյա գործվածքները եւ դրանց գնային արժեքները:

XIX դ. Շամախին դադարում է միջազգային առևտրի կարևոր կենտրոն լինելուց: Սակայն Հայ բնակիչները շարունակում են զբաղվել արհեստներով եւ առևտրով: Մակար եպ. Բարխուդարյանցը նշում է, որ ծաղկել է հատկապես մետաքսագործության արվեստը, ոստաններով գործում են մետաքսյա ընտիր կերպաս, վերմակների երեսներ, կանացի հագուստեղեն, զանազան գույների եւ մեծության թաշկինակներ: Նույ-

նը կարելի է ասել Շամախու՝ անուն Հանած գորգերի եւ կարպետների մասին: Քաղաքում կային հատուկ ներկատներ, որտեղ կարմիր գույնը ստանում էին որդան կարմիրով: Ուշագրավ է Հայաստանի պատմութեան թանգարանում (ՀՊԹ) պահվող № 9955 գորգը (XIX դ. կես, 237 x 158 սմ, բուրգ, խտութիւնը 10 սմ² 1088 հանգույց, միջնաթելը՝ 2, բաց շագանակագույն, եզրաթելը՝ բուրգ), որի գործողը շամախեցի Արտեմ Արելյանը (Հովհաննես Արելյանի հայրը) Բաքվում ուներ թելերի ներկատուն, որն էլ փակվեց քիմիական ներկերի մուտք գործելու պատճառով: Վերջինիս որդին Շամախի գավառի ապրանքների հաշվետար Ներսես Արտեմի Արելյանը, 1889 թ. գրում է. «Շամախի գավառում իրացվող ապրանքի մեջ առաջինը գորգերն են: Բազմատեսակ գորգեր համատարած արտադրում են տեղացիները»: Ա. Փիրալովը 1913 թ. գրում է, որ Շամախի գավառում արտադրվում էին «կափրիստանյան» կոչված գորգերը, որոնք գործվում էին Ղուբայում: Հեղինակը նշում է, որ չգերազանցված որակ ունեն Շամախի կարպետները: Իսկ նշանավոր գորգագետ Մ. Իսաբեը 1932 թ. նշում է, որ մինչեւ այդ թվականը գորգագործութեան զարգացած ձևերը պահպանվել են Այսրկովկասի բնիկների՝ հայերի եւ լեզգիների մոտ:

Աշխարհի տարբեր թանգարաններում եւ մասնավոր հավաքածոներում պահվող գորգերի մեջ առանձին խումբ են կազմում Շամախու շրջանի գորգերն ու կարպետները, որոնք գրականութեան մեջ հայտնի են «Շիրվան» անվամբ: 1993 թ. «Orient Teppiche von A-Z» գորգերի հանրագիտարանում «Schirwan» վերնագրի տակ տրված է այդ գորգերի տեխնիկական եւ գեղարվեստական բնութագրերը, հատկանշական առանձնահատկութիւնները: Ըստ օտար հեղինակների՝ «Շիրվան» գորգերի երկրաչափական զարդաձևերը կրկնում են «Ղազխ» (Գարդման, Տավուշ) խմբին դասվող գորգերի զարդաձևերը: Նշվում է նաեւ, որ «Շիրվան» գորգերին բնորոշ են բուսական եւ ծաղկային մոտիվները եւ կարմիր գույնի գերակշռութիւնը, որոնք հատկապես բնորոշ են արցախյան գորգերին: Դա պայմանավորված է նրանով, որ դեռեւս XIX դ. վերջում Շամախի գավառում հայկական Արփավուտ, Դարա-Քարքանջ, Խանի-Շեն, Միրի-Շեն, Մեյսարի եւ այլ գյուղերի բնակիչները Արցախի Հադրութ, Ավետարանոց, Տող, Թաղեր, Դահրազ, Խաչմաշ, Ճարտար, Յոր, Ծամձոր, Միրի-Շեն, Կղարծի, Շոշ գյուղերից էին տեղափոխվել այստեղ: Քարքանջ գյուղի հայերը բնիկ են: Շամախի գորգերի մեջ հանդիպում են պարսկական գորգարվեստի հետ առնչվող նմուշներ: Նշենք, որ XVII դարում եւ XVIII դ. սկզբին Շամախին Պարսկաստանից դեպի Ռուսաստան տանող առևտրական գլխավոր ճանապարհի կարեւոր կայաններից էր: Շամախի գավառում ստեղծվում են հայկական բնակավայրեր, օրինակ՝ Մատրասա ավանը, որտեղի բնակիչները

տեղափոխվել էին Սպահանից: Միեւնուէն Հայկական գյուղերում եւ
ընակավայրերում մեծ քանակութեամբ արտադրվում էին մետաքսյա
կտորներ ու գործվածքներ:

Այսպիսով, Շամախին եւ Շամախի գավառը մինչեւ XX դ. սկիզբը
խոշոր Հայկական գորգագործական եւ մանածագործական կենտրոն էր,
որտեղ արտադրում էին բարձրարժեք գործվածքներ: Այսօր դրանց
զգալի մասը գտնվում է Հայաստանից դուրս՝ աշխարհի տարբեր թան-
գարաններում, մասնավոր Հավաքածոներում, անհատ մարդկանց մոտ
եւ Հայտնի է «Շիրվան» սլալմանական անվանումով:

Արեւելյան Այսրկովկասի թյուրքական ցեղերը ԺԹ դարում

19-րդ դ. երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի թյուրքական ծագմամբ բնակչության շրջանում ցեղային պատկանելության շեշտումն աստիճանաբար վերանում էր, քանի որ թյուրքախոսները դանդաժաբար քոչվորական կենսակերպից անցում էին կատարում նստակեցության: Յարական իշխանության պաշտոնական տվյալների համաձայն 19-րդ դ. վերջում Այսրկովկասի «թաթարների» մեծ մասը դարձել էր նստակյաց, իսկ փոքր մասը վարում էր կիսաքոչվորական կյանք¹:

Պաշտոնական տվյալներով՝ 1856 թ. Արեւելյան Այսրկովկասի դգալի մասը ներառող Շամախիի նահանգի բնակչության միայն 21,3 տոկոսն էր (100 հազ. մարդ) քոչվոր: 1886 թ. Բաքվի նահանգում քոչվոր էր բնակչության 7,1 տոկոսը, Ելիզավետպոլի նահանգում՝ 2,8 տոկոսը²: Նույն ժամանակաշրջանում գրեթե նույն պատկերն է հղել Իրանի Ադրբեջան նահանգի թյուրքախոսների շրջանում, որոնց էթնիկ-ցեղային կազմը գրեթե համընկնում էր Արեւելյան Այսրկովկասի թյուրքական ծագմամբ բնակչության էթնիկ-ցեղային կազմի հետ: 1889 թ. Իրանական Ադրբեջան այցելած ռուսական բանակի կապիտան Լ. Արտամոնովը նշում է, որ թյուրքախոսների 2/3-ն արդեն նստակյաց էր, իսկ ցեղային պատկանելությունը հիմնականում ջնջվել էր. այն պահպանվել էր միայն քոչվոր թյուրքախոսների մոտ³:

Այսրկովկասի թյուրքախոս թաթար բնակչությանը նստակյաց դարձնելը Ռուսական կայսրության քաղաքականության գլխավոր նպատակներից էր: Այս քայլը ղիտվում էր որպես երկրամասում ռուսական վարչական համակարգն ամրապնդելու կարենոր միջոց. բացի այդ քոչվորական կենսակերպը խոչընդոտում էր Այսրկովկասի տնտեսական դարգացմանը⁴:

19-րդ դ. վերջում հարեւան ժողովուրդները, եւրոպացիներն ու ռուսները Այսրկովկասի թյուրքախոսներին անվանում էին թաթարներ,

1 Алфавитный список народов, обитающих в Российской Империи, СПб., 1895, с. 69.

2 Народы Кавказа, т. II, Москва 1962, с. 72.

3 Л. Артамонов, Северный Азербайджан, Военно-географический очерк, Тифлис, 1890, с. 21.

4 Հմմ. Народы Кавказа, т. II, с. 72.

Կովկասի թաթարներ, Ադերբեջանական թաթարներ, թուրքեր եւ այլն¹: Երկրամասի թյուրքախոսների շրջանում որպես ընդհանրական ինքնանվանում տարածված էր «մահմեդական» եզրույթը, որը դեռ ընթացող էթնոհամախմբման եւ միասնական էթնանվան բացակայութեան պայմաններում առաջնային դիրք էր մղում կրոնական պատկանելութունը:

Աստիճանաբար մոռացվող ցեղային անվանումները պահպանվում էին Հիմնականում դեռեւս քոչվոր կենսակերպ վարողների մոտ, նաեւ Արեւելյան Այսրկովկասի տեղանուններում: Օր. Արեւելյան Այսրկովկասի տեղանունների մի մասի դեպքում պահպանվել էին ոչ միայն Կարա-կոյունլու ցեղային միութեան անունները, այլեւ հենց Կարա-կոյունլու անունով բնակավայրեր: Օր. Նուխիի գավառում 1414 բնակիչ ընդգրկող Կարա-կոյունլու գյուղական համայնքը² կամ Շամախիի գավառի Կարա-կոյունլու գյուղական համայնքը 584 անդամով³:

Ստորեւ կիրորձենք ներկայացնել այս տարածաշրջանի թյուրքական ծագմամբ բնակչության էթնիկական հիմքը կազմած հիմնական ցեղերի, ցեղամիավորումների (այրում, շահսեւան, փաղար, բայաթ, շամլու, ալփաուտ, ուումլու, կենգերլի, մուղանլու եւն) համառոտ պատմութիւնը, Այսրկովկասում հայտնվելու մոտավոր ժամանակը, բնակչության վայրերը: Դրանց մի մասի դեպքում պահպանվել են միայն կցկտուր տեղեկութիւններ, իսկ մեծ մասի պարագայում առկա են ծագման ու Այսրկովկասում հայտնվելու մի քանի վարկածներ:

Արեւելյան Այսրկովկասում բնակչութուն հաստատած թյուրքական նշանակալից ցեղերից է Փաղարը, որը սերում էր օղուզական Կայ կամ Կայի ցեղից⁴: Կայի ցեղն իր հերթին համարվում է Օղուզից սերող

¹ Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., Вып. 1, СПб., 1897; Число церквей и прихожан православных, армяно-григорианских и магометанских, по сведениям 1884 г., – Кавказский календарь на 1887 г., с. 222; Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893; Алфавитный список народов, обитающих в Российской Империи, СПб., 1895, с. 68.

² Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Нухинский уезд, Тифлис, 1893.

³ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

⁴ Г. Д. Агаев, Данные этнотопоними о расселении тюркоязычных племён в Азербайджане XI-XV вв., – В сб.: Этническая ономастик”, Институт этнографии им. Н. Миклухо-Маклая АН СССР, Москва, 1984, с. 148; М. Велили (Бахарав), Этнография

գլխավոր 24 ցեղերից մեկը¹: Մոնղոլական արշավանքների ժամանակ փաղարները Միջին Ասիայից նախ տեղափոխվել են Իրանական Ատրպատական: 16-րդ դարում իշխանության համար պայքարում նրանք անցել են ղզլբաշների կողմը եւ Սեֆյան Իրանի քաղաքական կյանքում ակտիվ դերակատարություն ունեցել: Հայտնի է, որ փաղարներին Արեւելյան Այսրկովկասի Հյուսիս-արեւմտյան հատվածում բնակեցրել են Սեֆյանները: Իրենց հավատարիմ թյուրքական այս ցեղին բնակեցնելով լեզգիաբնակ շրջաններում՝ Պարսից շահերը ցանկանում էին դրանով հնազանդեցնել լեզգիներին²: Ժամանակի ընթացքում փաղարները տարածվել են ամբողջ Արեւելյան Այսրկովկասում:

19-րդ դարում Ջեւաթի գավառում (ուեղդում) բնակվում էր փաղարների 218 ընտանիք³: 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Փաղար անունով բնակավայրեր պահպանվել էին Ղուբայի, Գյոքչայի, Ջեւաթի, Աղդաշի, Շամախիի, Նուխիի, Արեշի գավառներում⁴: Արեշի գավառի Ղարադաղլի-Փաղար կոչվող գյուղական համայնքում բնակվում էր մոտ 1200 թաթար բնակիչ⁵: Ջեւաթի գավառի Փաղար գյուղում 1886 թ. դրությամբ ապրում էր 72 մարդ⁶: Ջեւաթի գավառի Փաղար անունով համայնքում բնակվում էր 1932 մարդ⁷: Ղուբայի գավառում Փաղար-Շարբան անունով բնակավայրն ուներ 152 բնակիչ: Փաղար եւ Արմուղի-Փաղար գյուղերը միասին ունեին 211 բնակիչ⁸: Շա-

Азербайджана, – В сб.: Азербайджан и азербайджанцы в мире, № 2, Народы Азербайджана, Азербайджан 2009; <http://ethnoglobus.az/>.

¹ Рашина ад-Дин, Сборник летописей, т. I, кн. I, Москва, 1952, с. 88.

² М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>, История Азербайджана, т. I, Баку, 1958, с. 266.

³ Г. А. Гейбуллаев, Топонимия Азербайджана (историко-этнографическое обозрение), Баку, 1986, с. 30.

⁴ Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, том VII, Тифлис, 1887, с. 359; М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>.

⁵ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Арешский уезд, Тифлис, 1893.

⁶ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебраильский уезд, Тифлис, 1893.

⁷ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

⁸ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

մախիի գավառում հիշատակվում է Փաղար-Գյուլմալի համայնքը՝ 546 բնակչով¹:

Այրումների կամ այրումյունների ծագումը վերջնականապես բացահայտված չէ: Այբրկովկասում այրումների հայտնվելու վերաբերյալ տարբեր վարկածներ կան, որոնցից յուրաքանչյուրը կապվում է «այրում» բառի ստուգաբանության հետ: Վարկածներից մեկի համաձայն՝ այրումների նախնիները Այբրկովկաս են եկել Փոքր Ասիայից 14-րդ դ. սկզբում, երբ Իլխանների պետության հետ պայքարում կործանվեց Փոքր Ասիայում Իկոնիայի կամ Ռումի սելջուկյան սուլթանությունը: Այս տեսակետի կողմնակից հայտնի ժողովրդագետ պատմաբաններ Իվան Շոպենն ու Մամեդհասան Վելիլին «այրում» էթնանունը ստուգաբանում են որպես նախնական «էլ ուում», որը հետագայում հնչյունափոխվել է²: Հայտնի է, որ արարները, հետո նաև սելջուկները Ռում (Հոում) էին կոչում Բյուզանդիան (Սելջուկյան տիրապետության տակ նրա տարածքների անցնելուց հետո էլ երկար ժամանակ Փոքր Ասիան կոչվում էր Ռում, իսկ այստեղ ձեւավորված Իկոնիայի սուլթանությունը Ռումի սուլթանություն): Փոքր Ասիայից Այբրկովկաս՝ ավելի ստույգ Գանձակ եւ Արցախի տարածք գաղթածներին տեղի ավելի վաղ շրջանի թյուրքախոսները կոչեցին «էլ ուում», որը նշանակում էր «ուումից եկած» կամ «ուումից սերող»: այս վարկածի համաձայն՝ հետագայում այրումների մի մասն անցել է Ատրպատական եւ ստացել շահսեւան անունը³: 19-րդ դ. առաջին կեսի դործիչ Արասկուլի-աղա Բաքիխանովը եւս այրումների ծագումը կապում է Փոքր Ասիայից բերված թյուրքական ցեղերի հետ, իսկ «այրում» բառը նույնացնում «էլ ուում» անվան հետ⁴:

Մեկ այլ վարկածի համաձայն էլ՝ այրումների նախնիներն Այբրկովկասի տեղաբնիկներ են: 20-րդ դ. սկզբում այրումներին ու նրանց կենցաղն ուսումնասիրած ժողովրդագետ Բ. Բարաքաչլին նշում է, որ այրումները շատ են տարբերվում լեռնաշխարհի մնացյալ թյուրքերից: Հենվելով այրումների շրջանում տարածված ավանդություններից մեկի վրա հեղինակը հնարավոր է համարում եղրակացնել, որ դարեր առաջ այրումների նախնիներն առանձնացել են Առանը բնակեցրած մյուս

¹ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

² И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, СПб., 1852, с. 536; М. Велиян (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>.

³ Նոյն տեղում:

⁴ А. Бакиханов, Гюлистан-и Ирам, Баку, 1991, с. 82-83.

Հիմնական էթնիկ խմբերից¹: Նա իր ենթադրություն մեջ ժամանակաշրջան չի նշում, իսկ այս վարկածը շտապում է կապել «այրում» անվան ստուգաբանության հետ. թյուրքական լեզուներում առկա է «այրում» բառը, որը նշանակում է «բաժանում», «առանձնացում»: Ք. Քարաքաչլին ենթադրում է, որ այրումների ինքնանվանումն առաջացել է հենց պատմական բաժանման հետեւանքով²:

Սակայն մեր կարծիքով այս վարկածը թերի է, քանի որ հեղինակը խոսում է լեռնաշխարհի թյուրքերի եւ այրումների ֆիզիկական ու կենցաղային տարբերությունների մասին՝ ակնարկելով այրումների ոչ թյուրքական ծագման մասին: Միաժամանակ, իր կողմից որպես պատմական փաստ ընդունված ավանդության մեջ նշվում է բնիկ առանցիկների ու նրանցից առանձնացած խմբի մասին, հետեւաբար դեպքերը պիտի տեղի ունեցած լինեին մինչեւ Առանի թյուրքացումը: Այդ դեպքում բնիկ խմբի կողմից թյուրքական «այրում» ինքնանվանման ընտրությունը անտրամաբանական է ստացվում:

Բոլոր դեպքերում կրկինք Ք. Քարաքաչլիի դաշտային ուսումնասիրության ընթացքում արձանագրված ուշադրավ պատմությունը, որը մի կողմից՝ որոշ չափով լույս է սփռում այրումների ծագման վրա, մյուս կողմից էլ՝ մատնացույց անում նրանց խառը ծագման բացահայտման դժվարությունները, միգուցե՝ նաեւ դրա անհնարինությունը: Այրումներին այցելած հեղինակին 1804 թ. ծնված մի ծերունի պատմել է, թե իրենց երակներում մի քանի ազգերի արյուն է հոսում. տեղի է ունեցել շատ մեծ միախառնում, եւ այրումների երակներում հոսում է հայկական, լեզգիական, պարսկական ու թյուրքական արյուն, իսկ իրենք մուսուլման-այրումներ են³:

Այրումներին ուսումնասիրած ազբբջանցի պատմաբան Ա. Ալեքպերովը նրանց ծագումը կապում է աղուանական էթնոսի եւ եկվոր թյուրքական տարրի համախմբման հետ⁴: Ընդ որում, նրա կարծիքով միջնադարում այրումների բնիկ նախնիները եղել են հայկական էթնոսի մշակութային, լեզվական ու կրոնական ուժեղ ազդեցություն տակ եւ ձուլվել են հայերի հետ: Սակայն 451 թ. Քաղկեդոնի ժողովից հետո հայերն ու աղուանները բաժանվեցին 2 խմբի՝ միաբնակության կողմնակիցների եւ դրա հակառակորդների: Վերջին խմբին Քաղկեդոնի ժողո-

¹ В. Кобычев, Айрумы (К вопросу о происхождении этнонима), – СЭ, 1962, № 3, с. 140.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 141:

⁴ А. Алекперов, У айрумов, Изд. общества обследования и изучения Азербайджана, № 5, Баку 1928, с. 240.

վից հետո սկսեցին անվանել «Հայ Հոռոմ», որպիսի անվան հետ էլ Ալեքսանդրովը կապում է «այրում» բառի ծագումը: Նրա կարծիքով Հայերեն նախնական բառը դարերի ընթացքում աղավաղվել է, մոտեցել թյուրքական արտասանությանն ու դարձել «այրում», վերջինս էլ նոր էթնիկ միախառնումների ենթարկված, թյուրքախոս եւ մուսուլման դարձած բնակչության համար դարձել է ինքնանվանում:

Պատմաբան Վ. Կորիչեւը մասամբ մերժում է, մասամբ էլ՝ հաստատում Ալեքսանդրովի առաջ քաշած վարկածը: Նա նույնպես «այրում» բառի ծագումը կապում է «Հայ Հոռոմ» եզրույթի հետ, սակայն այրումների ծագումն ու էթնանվան առաջացումը պայմանավորում է ոչ թե Քաղկեդոնի ժողովով, այլ 591 թ. Սասանյան Պարսկաստանի եւ Բյուզանդիայի միջեւ Հայաստանի երկրորդ բաժանմամբ²: Ըստ Կորիչեւի՝ բաժանման գծի բյուզանդական սահմանային հատվածում 7-րդ դարում առաջացել են «ռոմ» անվան հետ կապված տեղանուններ, որոնք ժամանակի ընթացքում թյուրքացվել են: Որպես օրինակ բերվում են Ուռում-բազար եւ Խնյրում տեղանունները, որոնք հեղինակը ստուգաբանում է որպես «հռոմեական շուկա» եւ «Հայ Հոռոմ»: Սահմանային այս հատվածի հայերին ու հայկական աղբյուրներում բնակված աղուաններին անվանել են Հայ-հոռոմ, որը նշանակել է բյուզանդահայատակ Հայ: Կորիչեւը եզրակացնում է, որ այրումները պատմական Աղուանքի եւ Հայաստանի միջեւ սահմանային շրջանների հայերի ու աղուանների հետնորդներն են, որոնք դարերի ընթացքում իսլամացվել եւ թյուրքացվել են: Նրանց բնակության գործառնամարզը (արեալը) ժամանակի ընթացքում որոշ չափով տեղափոխվել է դեպի արեւելք³:

Այրումների ծագման վարկածները շատ են: Դրանք ունեն ինչպես հատման եզրեր, այնպես էլ ակնհայտ հակասություններ: Մեր կարծիքով՝ ամենից ակնհայտ ընդհանրությունն այն է, որ գրեթե բոլոր վարկածների համաձայն այրումների ծագման գործում դեր է կատարել ինչպես եկվոր թյուրքական տարրը, այնպես էլ տեղաբնիկ էթնոսը: Դժվարություն է ներկայացնում թյուրքական տարրի հայտնվելու ճշգրիտ ժամանակի որոշումը եւ «այրում» էթնանվանման ծագման միակ ճշգրիտ տարբերակի բացահայտումը:

Հայտնի է այրումների շրջանում Այրկովկասից Ատրպատական զանգվածաբար անցնելու երկու փուլ: Ժողովրդագետ Մ. Վելիլին նշում է, որ դրանցից առաջինը տեղի է ունեցել 14-րդ դ. վերջին: Ատրպատական տեղափոխված այրումները Շահ Աբբասի օրոք մտել են շահեւան-

¹ Նույն տեղում:

² В. Кобычев, Айрумы (К вопросу о происхождении этнонима), с. 145.

³ Նույն տեղում, էջ 145-148:

ների ցեղային միության մեջ¹: Երկրորդ արտահոսքը տեղի է ունեցել 19-րդ դ. առաջին կեսին: 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով Իրանը Ռուսական կայսրությանը զիջեց Այսրկովկասի վերջին տիրույթները: Իրանի գահաժառանգ Աբբաս Միրզայի կոչով Արաքս գետից Հյուսիս բնակվող թյուրքական որոշ ցեղեր անցան գետից Հարավ, որտեղ ստացան նոր կեցավայրեր ու արոտավայրեր: Այրումների մի մասն անցնելով Ատրպատական բնակություն հաստատեց Ավաջիքի շրջանում (պատմական Արտազ գավառի արեւմուտք)²:

Այրումների բնակության հիմնական արեալը Արեւելյան Այսրկովկասի Հյուսիս-արեւմտյան հատվածն է, որը 19-րդ դարի վերջում մտնում էր Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ: Այստեղ էլ պահպանվել են Այրում անունով որոշ բնակավայրեր: Նահանգի Ելիզավետպոլի գավառի Այրում (Ղարա-Մուրադ Այրում) բնակավայրում 1886 թ. տվյալներով բնակվում էր ավելի քան 2000 բնակիչ, որոնք վիճակագրական տվյալներում նշված են որպես թաթարներ³: Այրումների էթնանունն առկա է նաև Ղազախի գավառի Ղուչչու-Այրում համայնքի պարագայում, որի բնակիչների թիվը կազմում էր 612 մարդ⁴:

Արեւելյան Այսրկովկասի խոշոր ցեղային միավորումներից մեկն էին շահսեւազները, որոնք մեծ դեր են ունեցել երկրամասի էթնիկ գործընթացներում: Ի տարբերություն շատ այլ թյուրքական ցեղերի նրանց մասին բազմաթիվ, թեպետև հակասական տեղեկություններ են պահպանվել: Այս ցեղամիությունը միավորում էր թյուրքական ծագմամբ ցեղերի, որոնց մեծամասնությունը կապված էր Շահ Աբբասի ժամանակաշրջանի ղզլբաշների հետ, թեպետ պատմագիտության մեջ չկա միասնական մոտեցում շահսեւանների ծագման եւ այդ գործընթացի ժամանակաշրջանի վերաբերյալ: Շահսեւանների՝ որպես ցեղային միություն ձևավորվելու ժամանակաշրջանն նշվում են 16-18-րդ դարերը:

19-րդ դարում շահսեւաններին ուսումնասիրած հետազոտողները ներկայացնում են նրանց շրջանում տարածված իրենց ծագման միեւնույն ավանդապատումը: Ըստ այդ պատումի՝ Յուսիբ փաշա անունով անձը իր քոչվոր ցեղի հետ Փոքր Ասիայից գաղթել է Պարսկաստան եւ շահից ապաստան խնդրել: Պարսից շահը նրան բարեհաճությամբ ըն-

1 М. Велики (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>.

2 ĀYRİMLŪ (in Persian often Āyromlū), Turkic tribe of western Azerbaijan, – Encyclopaedia Iranica, Vol. III, Fasc 2, p. 151-152.

3 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезд, Тифлис, 1893.

4 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Казахский уезд, Тифлис, 1893.

դուներ է եւ թույլ տվել իր ցեղի համար քոչի վայր ընտրել: Յունսիր փաշան ի վերջո կեցավայր է ընտրել Արդաբեյլը¹:

Անգլիացի պատմաբան, պետական ու ռազմական գործիչ Ջոն Մալքոլմն իր «Պարսկաստանի պատմութիւն» աշխատութեան մեջ նշում է, որ Շահ Աբբասը ցանկանում էր հակակշիռ ստեղծել ապստամբ ղզլբաշական ցեղերի ու նրանց անհնազանդ առաջնորդների դեմ եւ այդ նպատակով հիմնեց սեփական ցեղային միութիւնը, որն անվանեց Շահ-սեւան: Շահ Աբբասը նոր միութիւնն հրավիրեց ցանկացողներին բոլոր ցեղերից՝ խոստանալով նրանց իր բարեհաճութիւնն ու պաշտպանութիւնը²: Շահսեւանների թիվը շատ արագ աճում էր, նույնիսկ պատահել է, որ մեկ օրում որպէս շահսեւան զբանցվել է 10 հազար մարդ³:

Այլ վարկածի համաձայն՝ Շահսեւան անվանումը տխողոս էր, որը ժամանակ առ ժամանակ տրվում էր քոչվոր ցեղերին՝ նրանց հավատարմութիւնը շահին մատնանշելու համար: Ընդ որում՝ այն տրվում էր ոչ միայն թյուրքական, այլեւ քրդական եւ իրանական ծագմամբ որոշ ցեղերի, սակայն տվյալ պրակտիկան 17-րդ դարում հատկապէս կիրառվում էր ղզլբաշական թյուրքական ցեղերի դեպքում⁴: Մասամբ այս վարկածի օգտին է խոսում Վ. Մինորսկու թարգմանած ու վերլուծած Թագքիրատի ալ-Մուլուք երկում դեռ Շահ Աբբասից առաջ Shahi-sevan ցեղերի հիշատակվելը: Նշվում է, որ նրանք պահանջում էին պետութեան դեկավար պաշտոններին նշանակել իրենց առաջնորդներին եւ հաճախ շահի ներկայութեամբ գծտվում էին. թահմասսա Ա-ն փորձեց բարեփոխել այս համակարգը եւ կարգի հրավիրել ըմբոստ ցեղերին, սակայն դա հաջողվեց անել միայն Շահ Աբբաս Ա-ին⁵:

Բ. Բալայանի կարծիքով՝ շահսեւանների հիմնական զանգվածը կազմում էին առանձին ղզլբաշական տոհմացեղային խմբեր, որոնց մի մասը մասնակի կամ լիակատար դեֆորմացիայի էր ենթարկվել⁶: Թյուրքական լեզվի միմյանց նման խոսվածքներով, ծագմամբ ու կենցաղով

¹ R. Trapper, Shahsevan in Safavid Persia, – BSOAS, Vol. 37, № 2, London, 1974, p. 331.

² J. Malcolm, The History of Persia: From the Most Early Period to the Present Time, London, 1829, p. 369.

³ Ջ. Մալքոլմը շահսեւան անունը թարգմանում է որպէս «շահի ընկերներ», սակայն ավելի ստույգ թյուրքական ծագմամբ այս բառը նշանակում է «շահին սիրող»:

⁴ R. Trapper, Shahsevan, – Encyclopaedia Iranica, 2010. <http://www.iranicaonline.org/articles/shahsevan>.

⁵ Tadhkirat Al Muluk: Manual of Safavid administration. Persian text in facsimile, Translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 30.

⁶ Б. П. Балааян, К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, – «Արեւելագիտական ժողովածո», I, Եր., 1960, էջ 348:

այս խմբերը, առանձնանալով իրենց նախնական ցեղերից, Շահ Աբբասի հրավերով միանում էին նոր ձևավորվող Շահսեւան միավորմանը: Բ. Բալայանի բնորոշմամբ՝ Շահ Աբբասը փաստացի նոր ցեղախումբ էր ձևավորում, որի ցեղապետը դառնում էր Հենց ինքը՝ Շահը¹: Հայտնի է, որ Շահ Աբբասը Մուղանում բնակեցրել է շահսեւանների բազմաթիվ ընտանիքների²: Հետագայում շահսեւանները մեծ դեր են խաղացել Մուղանի շրջանի քաղաքական պատմության մեջ:

Հավանաբար, սկզբնական շրջանում «շահսեւան» անունը ցեղային պատկանելութունն չի մատնանշել, այլ եղել է տիրոջ, հատուկ անուն, որը ցույց էր տալիս տվյալ՝ որոշակի անունով ցեղի հավատարմութունը Սեֆյան շահին: Ղզրաշական ցեղերի շրջանում իրենց հավատարիմ ցեղերին «շահսեւան» տիրոջը տալով Պարսից շահերն ամրապնդում էին իրենց իշխանութունը՝ նույն ղզրաշական մի շարք հզոր ցեղերի իշխանական նկրտումների ու հաճախակի ապստամբութունների պայմաններում³: Հետագայում արդեն այդ ցեղերը միավորվել են «շահսեւան» անունով ցեղային միավորման մեջ ու որոշ ժամանակ պահպանել են իրենց նախկին ցեղային անվանումները: Սախյան շահսեւանների միութունը կայուն չէր ու անընդհատ համարվում էր: Հայտնի է, օրինակ, որ այրումների մի մասն անցել է Պարսկաստան եւ Շահ Աբբասի կողմից ստացել է «շահսեւան» անունը: Հետագայում այրումներն արդեն շահսեւաններ անվան տակ անցել են Այսրկովկաս եւ տարածվել նախ Մուղանում, այնուհետեւ՝ Արեւելյան Այսրկովկասի այլ շրջաններում⁴: Շահսեւաններին միացած ցեղերի թվում էրիշտակվում են նաեւ խոշոր Ինալու, Բեկդիլլի, Իլխիչի ցեղերը⁵:

Շահսեւան ցեղային միութւյան ներսում անդադար ընթացող էթնիկական համախմբման արդյունքում նախկին ցեղային պատկանելութունն աստիճանաբար տարրալուծվել է, եւ սկսել է գերակայել «շահսեւան» ինքնանվանումը: Այս իրողութւյունը արդեն 19-րդ դ. ուսումնասիրողների մի մասի մոտ այն կարծիքն է ստեղծել, որ շահսեւանները Հենց սկզբից միասնական ցեղ կամ ցեղախումբ են եղել:

1 Նույն տեղում, էջ 351:

2 История Азербайджана, т. I, с. 266.

3 Կարելի է հիշատակել թեկուզ Թեքելլու ցեղը, որը բազմիցս ապստամբել էր Սեֆյան շահերի դեմ, այնուհետեւ նորից ներսում ստացել ու նորից ընդվզել (տե՛ս Ի. Ս. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – нач. XIX в., Ленинград, 1949, с. 57).

4 Г. Д. Агаев, Данные этнотопонимии о расселении тюркоязычных племён в Азербайджане XI-XV вв., – Этническая ономастика, Москва, 1984, с. 146.

5 М. Велики (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>.

Ռուս ժողովրդագետ Ն. Զեյդլիցը 19-րդ դ. երկրորդ կեսին շահսե-
լաններին հիշատակում է որպես Բաքվի նահանգի զգալի թվաքանակով
թյուրքական ցեղի: Ըստ նրա՝ շահսեւաններն ամռանը բնակվում էին
Արդաբիլի մոտակայքում, իսկ ձմռանը 3490 վրաններով քոչում դեպի
Մուղանի դաշտ¹:

Երկար ժամանակ շահսեւաններն ազատ անցնում էին Իրան, այ-
նուհետև վերադառնում Ռուսական կայսրության տիրապետության
տակ գտնվող Արեւելյան Այսրկովկաս: Սակայն նրանց քոչվորական
կենսակերպը վնասում էր շրջանում գյուղատնտեսության զարգացմա-
նը: Բացի այդ հաճախակի էին նստակյաց բնակչության բնակավայրե-
րի վրա հարձակումները հենց շահսեւանների կողմից: Ռուսական իշ-
խանության պահանջով 1830-1860-ական թթ. Իրանի տիրակալները
փորձում էին կարգ ու կանոն հաստատել Մուղանի դաշտավայրի իրենց
ենթակա հատվածում, սակայն՝ անհաջող, եւ քոչվորների սահմանային
ասպատակությունները շարունակվում էին²: Ի վերջո, 1880-1885 թթ.
ցարական իշխանությունը քոչվոր մնացած Շահսեւանների մեծ մասին
վերջնականապես վերաբնակեցնում է Ատրպատականում:

Արեւելյան Այսրկովկասի Շահսեւանները բաժանվում էին 3 մասի,
դրանցից յուրաքանչյուրն էլ բաժանվում էր երեքական տոհմի³:

19-րդ դ. երկրորդ կեսին Շահսեւանների մի մասը նստակյաց կեն-
ցաղ էր ընդունել ու բնակվում էր Լենքորանի գավառի (ուեղդի) հյուս-
սիսի, Արաքս գետի արեւելյան ափի թաթարական գյուղերում: Զեյդլի-
ցը Բաքվի գավառում հիշատակում է Աճմեղլու եւ Ղուլամ-Մահմուդ
գյուղերը, որոնք բնակեցված էին շահսեւաններով⁴:

19-20-րդ դարերի սահմանագծին Արեւելյան Այսրկովկասում եղել
են բազմաթիվ տեղանուններ ոչ միայն Շահսեւան անունով, այլեւ այն
ցեղերի անուններով, որոնք տարբեր ժամանակաշրջաններում մտել են
շահսեւանների կազմի մեջ: Մասնավորապես Շահսեւան, Բեյդլլի, Ի-
նալլու, Իլխիչի անուններով բնակավայրեր հիշատակվում են Շամախի,
Ջեւաթի, Ղուբայի, Լենքորանի, Գյոքչայի գավառներում⁵: 1886 թ. վի-

1 Н. К. Зейдлиц, Этнографический обзор Бакинской губернии, Приложение к Кав-
казскому календарю на 1871 г., приложение, с. 49.

2 R. Tapper, MOĞĀN (or Dašt-e Moğān, also Muqān), a lowland steppe in Azerbaijan, –
Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/mogan-parent-i-i>.

3 Г. А. Гейбуллаев, Топонимия Азербайджана, с. 37.

4 Н. К. Зейдлиц, Этнографический обзор Бакинской губернии, с. 50.

5 М. Велиан (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>; Свод ста-
тистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных
списков 1886 года, Гёкчайский уезда, Тифлис, 1893.

ճակագրական տվյալներում ելիզավետպոլի նահանգի Ջերրայիլի գավառում հանդիպում է Շահսեևան գյուղական համայնքը, որի բնակիչների թիվը կազմել է 736 մարդ¹: Շամախիի գավառում հիշատակվում է Շահսեևան բնակավայրը եւ նշվում է, որ դրա 58 բնակիչները քոչվորներ են²:

Կենգեղիի ցեղի ծագման պատմությունը մի քանի վարկած ունի: Ժողովրդագիր Ի. Շոպենը Կենգեղիի անունը կապում է օղուզական Քանլը ցեղի հետ, որոնցից սերել են նաեւ ուսսական պատմագրության մեջ հայտնի պեչենեգները: Հեղինակը կենգեղիների յուրահատուկ դիմագծերը՝ կապույտ աչքեր եւ բաց գույնի մազեր, դիտում է որպես նրանց հյուսիսային ծագման ապացույց³:

Մ. Վելիլին պնդում է, որ կենգեղիներն Այսրկովկաս են եկել դեռ արարական տիրապետության շրջանում եւ արարները նրանց օգտագործել են Ատրպատականում ապստամբությունները ճնշելու համար: Հեղինակը ներկայացնում է կենգեղիների ծագման վերաբերյալ մի քանի ավանդապատումներ: Դրանցից մեկի համաձայն ցեղն առաջացել է «կանկար» կամ «խանգար» բույսի անվանումից: Սովի ժամանակ թյուրքական ցեղերից մեկը սնվում էր այդ բույսի վայրի պտուղներով, ինչի համար էլ կոչվեց խանգար. Այսրկովկասում խանգարները բաժանվեցին խմբերի, որոնցից ամենակարեւորը եւ մեծը Կենգեղիի ցեղն էր, իսկ ավելի փոքր խմբերից էին կարա-փափախները կամ կարաբյուրքները եւ ջաիրլիները⁴:

Մեկ այլ տեսակետի համաձայն էլ կենգեղիներն առանձնացել են հզոր ու հայտնի Ուսթաջլու ցեղից⁵: Կենգեղիները տեղափոխվեցին Արաքս գետից հյուսիս, երբ այդ տարածաշրջան եկան ուսթաջլուները⁶:

Սեֆյան պետության ժամանակաշրջանում կենգեղիի ցեղը ազդեցիկ է եղել հատկապես Նախիջևանում, որը դարձել էր այս ցեղի բնակության հիմնական վայրը: Ի. Շոպենը 19-րդ դ. առաջին կեսում գրված իր աշխատության մեջ նշում է, որ Նախիջևանի շրջանում կենգեղիներ-

1 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебранальский уеза, Тифлис, 1893.

2 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уеза, Тифлис, 1893.

3 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области, с. 537.

4 М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>.

5 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 132.

6 KANGARLU, a Turkic tribe of Azerbaijan and the Qom-Verāmin region of central Persia, – Encyclopaedia Iranica, Vol. XV, Fasc. 5, p. 495.

րի թիվը 6473 էր¹: 16-ից մինչև 19-րդ դ. սկիզբ Նախիջևեանի Հաքիմի (ղեկավարի) պաշտոնը պատկանում էր Կենդերլի ցեղին եւ փոխանցվում էր սերնդից սերունդ²: 18-րդ դ. կեսից նրանք արդեն խանի տիրոջ էին կրում³: Սեֆյանների պետութան մի մասը կազմող Նախիջևեանի գոտում կենդերլի ցեղի ազդեցիկութան մասին են վկայում պաշտոնական հրամանագրերում եղած վկայութունները: Մասնավորապես 1605 թ. Շահ Աբբաս Ա-ն Նախիջևեանի կառավարիչ Մաքսուդ Սուլթան Կենդերլիին հրամայում է տեղափոխել Ջուլֆայի Հայերին: Պարսից շահերի առանձին ֆերմաններ վերաբերում են Հատուկ Կենդերլի ցեղին: Այսպես՝ Պարսկաստանի տիրակալ Բերիմ խանը 1753 թ. ֆերմանով Ալի Մուհամմադ բեգ Կենդերլուին Հաստատում էր որպես Կենդերլի ցեղի առաջնորդ, նաև որպես Կենդերլի էլի (վարչա-տարածքային միավոր) վաքիլ (ներկայացուցիչ)⁴: 1770 թ. Բերիմ խանն իր մեկ այլ ֆերմանով Կենդերլի ցեղի առաջնորդ եւ Կենդերլի էլի ղեկավար էր Հաստատում մահաջած Ալի Մուհամմադ բեգի որդուն՝ Բարիմ սուլթան Կենդերլիին: 1773 թ. Բարիմ խանը Լուլթֆ Ալի բեգ Կենդերլիին նշանակում է Նախիջևեանի իշխակասիբաշի (գլխավոր արքունի)⁵:

Ղարաբաղի խանութան հիմնադրումից հետո Փանահ խանը կենդերլիների մի մասին տեղափոխել է իր խանութան տարածք, որտեղից էլ նրանք տարածվել են Արեւելյան Այսրկովկասում: Մասնավորապես, Ղուբայի Ծաթհ Ալի խանը Ղարաբաղի խանութան վրա հարձակումների ժամանակ իր հետ տանում էր նաև բնակչության մի մասին: Այդպես Ղուբայի շրջանում ձեւավորվել են կենդերլիների հետ կապված Ջաղաթայ, Կենդերլի, Ղոփանի գյուղերը⁶: Նույն Ղուբայի գավառի Հարավում 19-րդ դ. կեսին հիշատակվում է Այգյունլի գյուղը, որը նաև կոչվում է Կենդերլի. նույն ժամանակաշրջանում Ղազախի գավառում նշվող Վերին ու Ստորին Սալաքլի եւ Սոֆուլլու գյուղերը վերագրվում են Կենդերլի ցեղին⁷: 19-րդ դ. վերջին Բաքվի նահանգի Ղուբայի գավա-

1 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области, с. 538.

2 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 104.

3 Նույն տեղում, էջ 133:

4 Тбилисская коллекция персидских фарманов, том II, с. 84.

5 Նույն տեղում:

6 Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 37.

7 Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. II, Тифлис, 1887, с. 43, 220.

ուում հանդիպում ենք Կենդերլի անունով գյուղի¹: Շամախիի գավառի Կենդերլու գյուղն ուներ 206 բնակիչ²:

Մուղանլու անունով ցեղային միությունը միավորում էր քոչվոր եւ կիսաքոչվոր թյուրքական ցեղերի, որոնք բնակվում էին մեծ մասամբ Մուղանի դաշտում: Մուղանլու էր կոչվում նաեւ Շահսեւանների ցեղային միության ցեղերից մեկը, որը բաղկացած էր 300 վրանից³: Ըստ երեւոյթի, մուղանլուների մի մասը ժամանակին մտել էր ավելի մեծ եւ հզոր Շահսեւան կոնֆեդերացիայի մեջ: 18-րդ դ. սկզբին նկարագրելով Սալյանի գավառը՝ ցարական բանակի մայոր Ի. Գրբերը նշում է այնտեղ եւ իրանական սահմանից այն կողմ բնակվող շահսեւանների ու մուղանլուների մասին: Նրա վկայութամբ՝ շահսեւաններն ու մուղանլուները ձմռանն իրենց ընտանիքներով ու անասուններով գալիս էին Սալյան եւ խոտի համար նշանակված հարկերը մուծելով ձմեռում այդ շրջանում⁴:

Խոսելով Ջաքաթալայի մոտ բնակվող թյուրքական մուղանլու ցեղի մասին՝ Վ. Մինորսկին նշում է, որ այն, հավանաբար, այդտեղ էր տեղափոխվել Մուղանից⁵: Նույն Ջաքաթալայի օկրուգում 19-րդ դ. վերջում հիշատակվում են մուղանլուները, որոնց թիվն անցնում էր 21 հազարից⁶: 1887 թ. նրանք հայերի հետ միասին հիշվում են որպես Ելիզավետպոլի նահանգի Արեշի գավառի 2 գլխավոր ժողովուրդներից մեկը⁷: 19-րդ դ. վերջում Բաքվի նահանգի Ջեւաթի գավառում հիշատակվում է Մուղանլու բնակավայրը⁸: Ջերբայիլի գավառի Մուղանլու գյուղում

1 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

2 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

3 Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 38.

4 И. Гербер, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728, – В кн.: История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, Москва, 1958 (далее – ИГЭД), с. 100-101.

5 В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963, с. 128.

6 Л. П. Загурский, Этнологическая классификация кавказских народов (Извлечено из рукописного труда). Приложение к Кавказскому календарю на 1888 г., с. 10.

7 Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. VII, Тифлис, 1887, с. 145.

8 Նույն տեղում, էջ 359:

բնակվում էր 138 մարդ¹: Նույն ժամանակաշրջանում Մուղանյուս գյուղ կար նաև Ղուբայի գավառի Հարավում²: 1886 թ. ընտանեկան ցուցակներում Բաքվի նահանգի Ջեւաթի գավառում նշված է Մուղանյուս քոչվորական Համայնքը՝ 2576 անդամներով³: Ծամախիի գավառում էլ Հիշատակվում է Մուղանյուս գյուղական Համայնքը՝ 494 բնակիչներով⁴:

Թեքելյու թյուրքական ցեղը Հանդիպում է նաև Թեքլա անունով: Ի. Պետրուշենկին թեքելյուներին Համարում է թուրքմենական Թեքե ցեղի ճյուղավորումներից մեկը, որն Իրանական Ատրպատական եւ Այսրկովկաս է եկել Փոքր Ասիայից⁵: Ավելի վաղ՝ 11-րդ դարում, թուրքմենական Թեքե ցեղը սելջուկների գլխավորութայն կործանումից Հտոտ Փոքր Ասիայի Հարավ-արեւմուտքում Անթալյա կենտրոնով Հիմնվել էր Թեքե բնյիքը (իշխանությունը), որը Հայտնի է նաև Համիդյանների բնյիք անունով⁶: Այս ինքնուրույն իշխանությունը գոյություն է ունեցել 1321-1423 թթ.⁷: Նրա կործանումից Հտոտ Թեքելյու ցեղի մի մասը մնաց Փոքր Ասիայի Հարավում եւ կազմում էր տեղի քոչվոր թուրքմենական ցեղերի մի Հատվածը⁸: Ցեղի մի մասն էլ անցավ Իրան: Թեքելյուն թյուրքական առաջին ցեղերից էր, որ միացավ Սեֆյանների շարժմանը: Թահմասպ Ա շահը 1540 թ. Շիրվանը Հպատակեցնելուց Հտոտ Թեքելյու ցեղին ու նրա առաջնորդ Ղազի խանին շնորհեց քոչվորութայն Համար Հարմար Շիրվանի մի քանի շրջաններ, մասնավորապես Սալյանն ու Մահմուդաբադը⁹: Սակայն Թեքելյու ցեղը նաև ամենահաճախն էր

1 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебраильский уезд, Тифлис, 1893.

2 Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, том II, Тифлис, 1887, с. 234.

3 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

4 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

5 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 48.

6 İ. H. Uzunçarşılı, Anadolu beylikleri ve Akkoyunlu, Karakoyunlu devletleri, TTK, Ankara, 1969, s. 62.

7 Tekeoğulları, Merkezi Antalya olan Türkmen beyliği (1321-1423), – İslam ansiklopedisi, 1988-2013, cilt 40, s. 347.

8 Tekelü, Safevî Devleti'nin kuruluşunda rol oynayan Türkmen aşiretlerinden biri, – İslam ansiklopedisi, 1988-2013, cilt 40, s. 348.

9 Б. П. Балаян, К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, с. 336.

ապստամբում Սեֆյանների դեմ: Ի վերջո, 1596 թ. շահական հրաման արձակվեց այս ցեղին զլլտովին կոտորելու մասին: Նրանց մեծ մասը կոտորվեց, իսկ ողջ մնացածները մտան այլ ցեղերի կազմի մեջ¹:

Գ. Գեյբուլաևի պնդմամբ՝ 19-րդ դ. վերջում Արեւելյան Այսրկովկասում բնակվում էին Թեքելյու ցեղի շուրջ 30 տասնյակ ճյուղավորումներ²: 19-րդ դ. վերջում Այսրկովկասում արված սոցիալ-տնտեսական ուսումնասիրություններում հիշվում են այս ցեղանվան հետ կապված տեղանուններ: Օրինակ Ջեւաթի գավառում հանդիպում ենք Թեքելյա անունով 3 բնակավայրի. հայտնի են նաև Ամիրալար-Թեքելյա, Թեքելյա Հաջի Մամեդ Հուսեյն, Թեքելյա Միրզա Բարա գյուղերը³: Լենքորանի գավառում նշվում են Թեքելյա, Թեքելյա ինոլ, Թեքելյա-Աքսազլար բնակավայրերը⁴: 20-րդ դ. սկզբի ժողովրդագետ Մ. Վելիլին հիշատակում է Թեքելյա անունով բնակավայրեր Գյոքչայի, Շամախիի, Ջեւաթի, Ղուբայի, Լենքորանի, Ղազախի, Ելիզավետպոլի, Նուխիի գավառներում⁵: 19-րդ դ. վերջին Ջեւաթի գավառում նշված են Թեքելյու-Հաջի-Մամեդ-Հուսեյն եւ Թեքելյու-Միրզա-Բարինի համայնքները՝ 1842 բնակիչներով: Նույն գավառի Թեքելյու-Ամիրալիլար գյուղը եւ համայնքի 1657 անդամները նշված են որպես քոչվոր. քոչվորական բնակչություն ունի նաև նույն գավառի Թեքելյու համայնքը՝ 4440 բնակիչով⁶: Լենքորանի գավառի Թեքելյու-Աքսազլար գյուղն ուներ 275 բնակիչ⁷: Շամախիի գավառում հիշատակվում էր Թեքելյու-Սաֆի համայնքը, որի 127 բնակիչները քոչվորներ էին⁸:

Ծանոթ ցեղի անվանումը ծագում է Շամ տեղանունից, որով նշվում էր Ասորիքի տարածքը: Այս ցեղը սելջուկյան ու մոնղոլական

¹ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 57; Б. П. Балаян, К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, с. 339.

² Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 37.

³ Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. VII, Тифлис, 1887, с. 358-359.

⁴ Նույն տեղում, էջ 548, 608, 704:

⁵ М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>.

⁶ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

⁷ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

⁸ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

նվաճումներից հետո բնակեցվել էր հենց Ասորիքում: 15-րդ դ. սկզբում Շամլու ցեղը վերաբնակեցվել է Իրանում: Ի. Պետրուշևսկին, հիմնվելով «Սիլսիլաթ ան-Նասաբ-ի Սեֆեհիյե» (Սեֆյանների տոհմածառը) 17-րդ դարի ձեռագրի վրա, մեջբերում է Շամլու եւ Ռումլու ցեղերի հետ կապված ավանդազրույցը: Իրա համաձայն՝ Թեմուրը 1402 թ. Սեֆյան Շեյխ Հոջա Ալիին վասալական պատկանելության է տալիս Փոքր Ասիայից եւ Սիրիայից տեղափոխվածներին. Շամլու եւ Ռումլու ցեղերը դերին են ընկել 1402 թ. Անկարայի ճակատամարտում եւ Թեմուրը նրանց հանձնել է Սեֆյան շեյխ Հոջա Ալիին¹:

15-րդ դարի Ակ-կոյունլուների պետության ժամանակաշրջանում Շամլուն եղել է այս ցեղամիության հիմնական ցեղերից մեկը: Պաշտոնապես շամլուները չեն մտել Ակ-կոյունլուների կազմի մեջ, սակայն հայտնի է Ակ-կոյունլու տիրակալ Յաղուբի եւ շամլուների միջեւ մի միջադեպի մասին վկայող փաստաթուղթը: Հալեպի, Ադանայի եւ Տարսուսի գոտում քոչող շամլուները սպանում են Օսմանյան սուլթանի ներկայացուցչին եւ դրանով հարվածի տակ դնում Ակ-կոյունլուների եւ օսմանցիների հարաբերությունները: Յաղուբը հրամայում է պատժել շամլուներին, սակայն միջադեպը մի կերպ հաջողվում է հարթել խաղաղ ճանապարհով²:

Այսրիկովկասում Շամլու ցեղը բաժանվում էր 2 ճյուղի՝ Բեկդիլլի եւ Աբդուլլու: Կուտկաչենի ու Վարդաչենի շրջաններում Շամլի անունով բնակավայրերը, հավանաբար, կապ ունեն Շամլու ցեղի հետ³: Շամլուների դերը նշանակալիորեն մեծացել է Ակ-կոյունլուների պետության անկումից հետո ձեւավորված Սեֆյան Իրանում: Շամլուն դարձել է ղզլբաչական ցեղային դաշինքի հիմնադիրներից մեկը. Պարսից արքունիքում Շամլու ցեղի ամիրաները առանձնահատուկ տեղ ու դիրք են ունեցել եւ մշտապես վայելել են տիրակալի բարեհաճությունը, իսկ Շահ Թահմասպի օրոք շամլուները նույնիսկ համարվել են ղզլբաչական ցեղերից ամենահզորը⁴:

¹ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 90.

² J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), The University of Utah press, 1999, p. 197.

³ Г. А. Гейбулаев, Топопония Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 28.

⁴ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 92, 100, 192.

16-րդ դարում Մուղանը գտնվում էր Ղզլբաշական ցեղերի՝ այդ թվում նաև Շամլու ցեղի տիրապետության տակ¹: Նույն դարի վերջին Շիրվանի կառավարիչ Արաս խանը Շամլու ցեղի ներկայացուցիչներին Շիրվանում կալվածքներ է տալիս²: Շահ Աբբասի օրոք հիշատակվում են Շիրվանում բնակվող Շամլու ցեղի ճյուղավորումներ³:

1886 թ. Այսրկովկասի վիճակագրական տվյալներում Ելիզավետպոլի նահանգի Արեշի գավառում հիշատակվում է Շամլու անունով բնակավայրը⁴: Շամլը անունով փոքր բնակավայր նշված էր նաև Բաքվի նահանգի Շամախիի գավառում⁵:

Բայաթ ցեղը նախ Մահմուդ Կաշգարիի, այնուհետև նրանից օգտված Ռաշիդ աղ-Իինի մոտ նշված է որպես օղուզական 24 ցեղերից մեկը: Այն կոչվում էր առասպելական Օղուզ խանի որդիներից մեկի անունով⁶: Ենթադրվում է, որ Բայաթ ցեղի առաջին ներկայացուցիչները Իրան եւ Փոքր Ասիա են եկել սելջուկյան արշավանքների ու տիրապետության ժամանակ: Այդ ցեղի ճյուղավորումները տարածված են եղել ամբողջ Փոքր Ասիայում, Ասորիքում, Իրաքում, Իրանում եւ Ատրպատականում⁷:

15-րդ դարում բայաթները մտել են Ակ-կոյունլուների ցեղային միություն մեջ եւ կարեւոր դեր են խաղացել թուրքմենական այս պետությունում⁸: Ակ-կոյունլուների տիրապետության ժամանակ Բայաթ ցեղի ասորիքյան ճյուղի մի խումբ տեղափոխվել է Գյանջա (Գանձակ) եւ Բարդա (Պարտավ)⁹:

15-րդ դ. վերջին Բայաթ ցեղի 40 հազար ընտանիք միացել է Իրանում իշխանություն համար Սեֆյանների պայքարին, դարձել նրանց

1 R. Tapper, MOĞĀN (or Dašt-e Moğān, also Muqān), a lowland steppe in Azerbaijan, – Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/mogan-parent-i-ii>.

2 А. Бакханов, Гюлистан-и Ирам, с. 102.

3 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 110.

4 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Арешский уезд, Тифлис, 1893.

5 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

6 Рашид-ад-Дин, Сборник летописей, т. I, кн. I, с. 89-90.

7 BAYĀT, an important Turkish tribe, – Encyclopaedia Iranica, Vol. III, Fasc. 8, p. 882-884; F. Sümer, Bayatlar, – Islam ansiklopedisi, cilt 1, 1988-2013, s. 373- 390.

8 J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 185.

9 F. Sümer, Bayatlar, – Islam ansiklopedisi, cilt 1, 1988-2013, s. 390.

դաշնակիցը եւ համալրել զզլբաշական ցեղերի ցանկը¹: Հայտնի է, որ Շահ Աբբաս Ա-ը Բայաթ ցեղի իշխաններին ու նրանց զորքին տեղակայել է «Ազարբայջան» նահանգում: Արդյունքում նրանց մի մասը բնակութուն է հաստատել նահանգի տարբեր շրջաններում²: Իրաքում հաստատված բայաթներից էր սերում 16-րդ դարի արեւելյան Հայտնի բանաստեղծ Մուհամմադ Ֆիզուլին³:

Սեֆյան շահ Իսմայիլը բայաթների մի մասին Իրաքից տեղափոխել է Հյուսիս եւ բնակեցրել Շարրանի ու Դերբենդի շրջակայքում⁴: 1628 թ. Դերբենդը պաշտպանող ու այնտեղ բնակութուն հաստատած զզլբաշ գինվորների թվում նշվում են նաեւ բայաթները⁵: 16-17-րդ դարերում բայաթ ցեղը հիշատակվում է որպես Շիրվանում ամենալավ արոտավայրերն ունեցող զզլբաշական ցեղերից մեկը⁶: Ղուբայի Ֆաթհ Ալի խանը օգնության ու հովանավորչության խնդրանքով կայսրուհի Եկատերինա Բ-ի մոտ է ուղարկում Դերբենդից Միրզա բեգ Բայաթին⁷:

19-րդ դ. վերջում Բաքվի նահանգի Գյոքչայի գավառում նշված է Բայաթ-Մելիք-Ումուդ համայնքը 433 բնակչով⁸: Նահանգի Ղուբայի գավառում Բայաթ անունով մեծ գյուղական համայնքը, որն ընդգրկում էր 10-ից ավելի գյուղեր եւ ուներ 1719 բնակիչ⁹: Շամախիի գավառի Բայաթ-Նազիր Հուսեյն գյուղն ուներ 46 բնակիչ, իսկ Բայաթ-Աղբուլաղ գյուղը՝ 103¹⁰:

Թյուրքական Ալփաուտ ցեղի մուտքն Առաջավոր Ասիա աղբյուրներում հիշատակված է, ուստի դժվար է ասել՝ ալփաուտները տարածաշրջան են քոչել սելջուկյան, թե՛ մոնղոլական արշավանքների ըն-

¹ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 92.

² BAYĀT, an important Turkish tribe, – Encyclopaedia Iranica, Vol. III, Fasc. 8, p. 882-884.

³ J. Woods, The Aqquyuunlu (clan, confederation, empire), p. 185.

⁴ А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 95. Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 28.

⁵ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 140.

⁶ Նոյն տեղում, էջ 311:

⁷ А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 162.

⁸ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

⁹ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

¹⁰ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

թացքում: Այս ցեղն իր հզորության եւ ազդեցիկության գազաթնակե-տին է հասել Կարա-կոյունլուների թուրքմենական պետության շրջա-նում: Ալփաուտները Կարա-կոյունլուների ցեղային միության հիերար-խիկ կառուցում համարվում էին ամենահզորներից մեկը, իսկ այս պե-տության պարտությունից հետո Ակ-կոյունլու Ուզուն Հասանի օրոք Ալփաուտ ցեղը մտավ մեկ այլ թուրքմենական՝ Ակ-կոյունլուների պե-տության եւ քոչվորական էլիտայի մեջ¹:

Գ. Գեյբուլաեւի դիտարկմամբ՝ հաստատված է, թե այս ցեղի ճյու-ղավորումները երբ են եկել Այսրկովկաս²: Սակայն ամենահավանական ժամանակահատվածը, թերեւս, Սեֆյանների պետության հիմնադրումից հետո է: Հենց նրանց օրոք ալփաուտները որպես զգրաշներ քոչավայրեր են ստացել Հյուսիսային Ատրպատականում, Շիրվանում եւ Ղարաբա-ղում³: Հայտնի է որ զլբաշական ցեղերից 16-17-րդ դարերում Շիրվա-նում ամենալավ հողատարածքներն ունեին Ռումլու, Ալփաուտ եւ Բա-յաթ ցեղերի ներկայացուցիչները⁴: Ալփաուտ ցեղից Շիրվանում հա-րուստ կալվածքներ ունեւ Մանսուր սուլթան անունով էմիրը⁵:

19-րդ դ. վերջում ամբողջ Այսրկովկասում, նաեւ երկրամասի ա-րեւելքում Ալփաուտ անունով պահպանված բազմաթիվ բնակավայրերը ցույց են տալիս, որ ալփաուտները կազմել են Այսրկովկաս տեղափոխ-ված թյուրքական ծագմամբ բնակչության կարեւոր խմբերից մեկը: 19-րդ դ. վերջում Ալփաուտ անունով բնակավայրերը սփռված էին ողջ Ա-րեւելյան Այսրկովկասում⁶: Արեւի գավառի Ալփաուտ գյուղական հա-րմայնքում 1886 թ. դրությամբ բնակվում էր մոտ 1500 բնակիչ գրանց-ված որպես թաթարներ⁷: Ելիզավետպոլի գավառի Ալփաուտ գյուղում

¹ J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 98, 108.

² Г. А. Гейбуллаев, Топонимия Азербайджана (историко-этнографическое обозре-ние), с. 30.

³ Tadhkirat Al Mulük: Manual of Safavid administration. Persian text in facsimile, Translated and explained by V. Minorsky, London, 1943; J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p.184.

⁴ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 311.

⁵ Նոյն տեղում, էջ 210:

⁶ Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказ-ского края, т. VII, с. 11, 180. Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Тифлис, 1893.

⁷ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посе-мейных списков 1886 года, Арешский уезд, Тифлис, 1893.

բնակիչների թիվը 1886-ին 231 էր¹: Ղազախի գավառում գտնվող Ալփատու գյուղական համայնքը միավորում էր 8 գյուղեր եւ ուներ 812 բնակիչ²: Գոքջայի գավառում հիշատակված է Աթփատու-Մեհթիբեկի գյուղական համայնքը՝ 1549 բնակչով³: Շամախիի գավառի Ալփատու գյուղն ուներ 273 բնակիչ եւ գտնվում էր Մարդան բեկի իշխանության տակ⁴: Գ. Գեյբուլլաեւի հաշվարկով՝ մինչ խորհրդային կարգերի հաստատումը Կովկասում կար Ալփատու անունով 11 բնակավայր⁵:

Ահմեդլի ցեղի վերաբերյալ միջնադարյան հիշատակումները սակավ են: Աբու Բաքր Ալ-Թեհրանիի «Քիթաբ-ի Դիյարբաքրիյա» աշխատության մեջ նշվում է, որ Ահմեդլու ցեղի առաջնորդ Ահմադ բեգ Ահմեդլին Ակ-կոյունլու Ուզուն Հասանի ամենահավատարիմ աջակիցներից էր, իսկ իսկանդեր բեգ Մուենչին հաղողում է, որ 17-րդ դարում Սեֆյանները Ահմեդլու ցեղին բնակեցնում են Ղարաբաղում⁶: 19-րդ դ. վերջում հատկապես Ջեբրայիլի գավառում Ահմեդլի անունով բնակավայրերը հաստատում են այս տեղեկությունը (հանդիպում են Քոչ-Ահմեդլի, Փիր-Ահմեդլի գյուղերը եւ Ահմեդլի գյուղական համայնքը՝ 1500 բնակիչներով)⁷:

Նույն ժամանակաշրջանում Արեւելյան Այսրկովկասում Ահմեդլի կամ Ահմեդլու անունը կրող բազմաթիվ բնակավայրերը վկայում են, որ այս ցեղը տարածված է եղել այդ ամբողջ տարածաշրջանում: Ելիզավետպոլի նահանգի համանուն գավառում հիշատակվում են Աղար-Ահմեդլի եւ Քյուրդ-Ահմեդլի գյուղերը, համապատասխանաբար 404 եւ 144 բնակիչներով⁸: Բաքվի նահանգի նույնանուն գավառում 19-րդ դ. վերջում հիշատակվում է Ահմեդլի գյուղական համայնքը՝ 503 բնակչով:

1 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезд, Тифлис, 1893.

2 Նույն տեղում:

3 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

4 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

5 Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 30.

6 J. Woods, The Aqquyuunlu (clan, confederation, empire), p. 184.

7 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебранльский уезд, Тифлис, 1893.

8 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезд, Тифлис, 1893.

չով¹: Նահանգի Գյոքչայի գավառում հիշվում է 1127 բնակիչ ունեցող Հալա-Ահմեդլի համայնքը, իսկ Ահմեդլի գյուղի դիմաց նշված է «քոչվորական» բնորոշումը, ինչը նշանակում է, որ նրա 118 բնակիչները դեռ քոչվորական կենսակերպ էին վարում²:

Աֆշար ցեղի մասին միջնադարում առաջին անգամ իր «Թյուրքական լեզուների դիվանում» (Dîwānu l-Luġat al-Turk) հիշատակում է Մահմուդ Կաշգարին, որի մոտ այդ անունն է կրում օղուզական 22 ցեղերից մեկը³: Աֆշար ցեղը հանդիպում է նաև Ռաշիդ աղ-Դինի օղուզական ցեղերի դասակարգման մեջ, որտեղ դրանք 24-ն են⁴:

Աֆշարները Միջին Ասիայից Մերձավոր Արևելք են տեղափոխվել սելջուկյան արշավանքների ժամանակ: 12-րդ դ. առաջին կեսին քոչվոր Աֆշար ցեղը բնակվում էր Իրանի Խուզիստան նահանգում⁵: Այնուհետև մոնղոլական արշավանքների շրջանում նրանք տարածվել են Իրանի այլ շրջաններ, այդ թվում եւ Ատրպատական: Նրանց մի մասը հաստատվել է նաև Փոքր Ասիայում: 14-րդ դարում Աֆշարները հիշատակվում են որպես Ասորիքի հյուսիսում, մասնավորապես Հալեպի շրջանում հաստատված թուրքմենների մի մասը⁶:

14-15-րդ դարերում աֆշարների որոշ տոհմեր մասնակցել են Կարա-կոյունլուների պետության ստեղծմանը: Իրանում հաստատված աֆշարներն էլ 15-րդ դարում եղել են Ակ-կոյունլուների պետության քաղաքական կյանքում կարեւոր դեր խաղացող քոչվոր ցեղերից մեկը: Մանսուր Բեգի գլխավորությամբ նրանք Ակ-կոյունլուների պետության ղեկավար Ուզուն Հասանի հավատարիմ կողմնակիցներն էին: Նրա գլխավորությամբ աֆշարները մասնակցել են Լենկ Թեմուրի դեմ մղված Տիգրիսի ճակատամարտին: Նրանք Ուզուն Հասանի բանակի կազմում են եղել նաև Օսմանյան պետության դեմ 1473 թ. տեղի ունեցած Բաշքենդի ճակատամարտում⁷:

Օղուզական այս ցեղը 14-17-րդ դդ. մշտապես ակտիվ մասնակցել է Առաջավոր Ասիայի մահմեդական պետական կազմավորումների քաղա-

1 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Бакинский уезд, Тифлис, 1893.

2 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

3 P. Oberling, Afsar, – Encyclopaedia Iranica, I/6, p. 582-586.

4 Рашид-ад-Дин, Сборник летописей, т. I, кн. I, с. 89-90.

5 F. Sümer, Afsar, – Islam ansiklopedisi, cilt 4, 1988-2013, s.160.

6 J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 183; F. Sümer, Afsar, – Islam ansiklopedisi, cilt 4, 1988-2013, s. 161.

7 J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 183.

քական կյանքին: Կարա-կոյունլուների եւ Ակ-կոյունլուների ժամանակաշրջանի ավարտից հետո Աֆշար ցեղն արդեն հանդես է գալիս որպես Սեֆյան պետութւյան հենարան ղզլբաշական սկզբնական ու հիմնական ցեղերից մեկը¹: Աֆշար ցեղից էր 1736-1747 թթ. գահակալած Նադիր շահը: Նադիրը աֆշարների Քրըրքլու կամ Քրըրքլի տոհմից էր եւ սկիզբ դրեց Իրանում Աֆշարների դինաստային, որը նրա մահից հետո իշխանութւյան ղեկին մնաց միայն Խորասանում²:

Ի. Պետրուշևսկու կարծիքով՝ աֆշարների մի մասին Այսրկովկասում բնակեցրել են Թեմուրն ու Միրանշահը: Ժողովրդագետ Մ. Վելիլին նշում է, որ Արեւելյան Այսրկովկասում բնակութուն է հաստատել Քրըրքլու տոհմը, ինչն արտացոլվել է համապատասխան տեղանունների անվանումներում: Ելիզավետպոլի գավառի Քրըրքլու գյուղական համայնքի Քրըրքլու եւ Քովլար գյուղերում 1886-ին գրանցված էր 2300 բնակիչ³: 19-20-րդ դարերի սահմանադլսին Քրըրքլու անունով բնակավայրեր կային Ղուբայի եւ Ջեւաթի գավառներում⁴: 1886 թ. տվյալերով Բաքվի նահանգի Ղուբայի գավառում կար Քրըրքլու գյուղական համայնքը՝ 309 բնակչով⁵: Խորհրդային Ադրբեջանի տարածքում Քրըրքլու անունով բնակավայրեր են նշվել Խանլարի, Կասում-Իսմայիլովի եւ Թոմզի շրջաններում: Աղջաբեդլի շրջանի Ուզեյրիբեհնդ բնակավայրը նախկինում կոչվում էր Աֆշար: Այս խոշոր ցեղի Գյունեշլի տոհմի անունով բնակավայրեր կան ներկայիս Ադրբեջանի Դիվիջիլի եւ Խաջմասի շրջաններում⁶: Աֆշարների տոհմերից մյուսի՝ Իսալլու կամ Ասիլլու տոհմի անունով էր կոչվում ներկայիս Ջալիլաբադ քաղաքը⁷:

Ղաջար ցեղը մեծ դեր է ունեցել Իրանի քաղաքական կյանքում: Այս ցեղի ներկայացուցիչ Աղա Մուհամմադ-խան Ղաջարը 1796 թ. Իրանում հիմնադրեց ղաջարների շահական դինաստիան: Ղաջարներն

1 Tadhkirat Al Mulūk: Manual of Safavid administration, p. 14; И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 48.

2 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 45; А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 137.

3 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезда, Тифлис, 1893.

4 М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>.

5 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезда, Тифлис, 1893.

6 Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 27.

7 Նույն տեղում, էջ 28:

ակտիվ դերակատարութիւնն են ունեցել նաեւ 16-18-րդ դդ. Այսրկովկասի էթնիկ գործընթացներում, նաեւ երկրամասի քաղաքական կյանքում: Ա. Բաքիխանովը եւ Ի. Պետրուշեւսկին, հիմնվելով Աբդ ոււ-Տեղակ Դոմբուլիի «Մասսիրի Սուլթանիյե» (Սուլթանների հիշարժան գործերը) 1825 թ. հրատարակված ձեռագրի վրա, ներկայացնում են Ղաջար ցեղի ծագման ավանդապատումը: Դրա համաձայն՝ ցեղի անունը ծագել է նրա հիմնադիր Ղաջար իշխանի անունից: Այս ավանդության համաձայն՝ զաջար ցեղն առաջացել է 2 մոնղոլական՝ ջալայիր եւ սուլդուզ, եւ 1 տիրեթական թոււնգուլթ, ցեղերի բեկորների միացումից¹: Հայտնի է, որ մոնղոլական արշավանքների շրջանում Հուլաղու խանը ջալայիրների 200 հազար ընտանիքների բնակեցրել էր Պարսկաստանում: Հետագայում Թեմուրը Գանձակում, Ղարաբաղում ու Երեւանում բնակեցրեց Փոքր Ասիայից ու Ասորիքից բերված 50 հազար ընտանիքների: Դրանք հիմնականում այն զաջարների հետնորդներն էին, որոնք Հուլաղուի օրոք ջալայիրների անունով բնակեցվել էին Պարսկաստանում եւ ժամանակ առ ժամանակ անցնում էին Անատոլիա եւ Ասորիք²: Ղաջարները մասամբ Արեւելյան Այսրկովկաս են տեղափոխվել նաեւ Թեմուրի որդի Միրանշահի օրոք³: Մեկ այլ վարկածով՝ նախահայր Ղաջար Նոյինը եղել է իլխանների դինաստիայից Արղուն խանի աթաբեկը. ըստ այս վարկածի՝ նա նաեւ Թեմուրի նախահայրն է համարվում⁴:

Ղաջարների ցեղային հիշողության վրա հիմնված երկու ավանդազրույցների իսկութիւնն ամբողջութեամբ դժվար է հաստատել, սակայն այս պարագայում կարեւորն այն է, որ երկու դեպքում էլ զաջարների ծագումը կապվում է մոնղոլների հետ: Նրանց հայտնվելը Իրանում, Փոքր Ասիայում եւ Ասորիքում եւս նույնացվում է մոնղոլական արշավանքների հետ:

15-րդ դարում զաջարները եղել են Ակ-կոյունլու ցեղային միութեան ցեղերից մեկը⁵: Արդեն 16-րդ դարում նրանք հանդես են գալիս որպէս Սեֆյան տիրակալների հենարան զգրաչական ցեղային միու-

¹ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 95; А. Бакиханов, Гюлстан-и Ирам, с. 172.

² М. Велиан (Бахарлы), Этнография Азербайджана, <http://ethnoglobus.az/>; А. Бакиханов, Гюлстан-и Ирам, с. 82-83, 172.

³ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 90.

⁴ The Cambridge history of Iran, From Nadir Shah to the Islamic Republic, Vol. 7, Cambridge university press, 1991, p. 104.

⁵ J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 195.

թյան հիմնադիր 7 (որոշ տարբերակներում՝ 8) ցեղերից մեկը¹, ապա հիշատակվում Սեֆյան շեյխ Իսմայիլի 7000 հազարանոց սկզբնական զորքում, որը նրա գլխավորությամբ 1500 թ. արշավեց Շիրվան²:

Ղաջարներից էին սերում Երեւանի եւ Գյանջայի խաները³: Գյանջայի ղաջարական Զիյադ օղլի խանական տոհմն իշխեց մինչեւ ռուսական տիրապետության հաստատումը: Այսրկովկասում ղաջարների բնակությունից հետո հայտնի է նաեւ, որ Շահ Աբբասը Գյանջայից տեղահանում եւ Աստարաբադ է տեղափոխում ղաջարների 30 հազար ընտանիք⁴: Սեֆյանների օրոք ղաջարներից էին սերում Հայաստանի եւ Շիրվանի շատ կառավարիչներ ու պաշտոնյաներ, ինչի արդյունքում դադատանցիները ընդհուպ մինչեւ 19-րդ դ. կեսը քամահրաբար ղաջար էին անվանում Այսրկովկասի բոլոր բնակիչներին⁵ (Այսրկովկասի բնակիչներ ասվածն, անշուշտ, վերաբերում է թյուրքալեզուներին):

Արեւելյան Այսրկովկասում 19-րդ դ. ոչ այնքան մեծաքանակ ղաջարների առավել նշանակալի ներկայությունն, ըստ Ա. Բաքիխանովի՝ եղել է Ղուբայի գավառում⁶:

19-րդ դ. վերջում Բաքվի նահանգի Գյոքչայի գավառում նշվում է Ղաջար գյուղը 36 թաթար բնակիչներով⁷: Ղաջար անունով բնակավայր կար նաեւ նույն նահանգի Ղուբայի գավառում՝ 72 բնակիչներով⁸: Ուշագրավ է, որ Շամախիի գավառում հիշատակվող Ղաջար գյուղի բոլոր 225 բնակիչները եղել են հայեր⁹: Զալայիր անունով բնակավայր հիշա-

1 Tadhkirat Al Mulūk: Manual of Safavid administration, p.194; И. П. Петрушевский, Очерки по истории феодалных отношений в Азербайджане и Армении, с. 90.

2 The Cambridge history of Iran, From Nadir Shah to the Islamic Republic, Vol. 7, Cambridge university press, 1991, p. 106.

3 Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 29; А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 82-83, 173.

4 А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 173.

5 А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 173.

6 Նույն տեղում, էջ 22:

7 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезда, Тифлис, 1893.

8 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезда, Тифлис, 1893.

9 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезда, Тифлис, 1893.

տակվում է Զաքաթալայի օկրուգում, որի 204 բնակիչներից 190-ը թաթարներ էին, 14-ը՝ ավարներ¹:

Խալաջ ցեղին հանդիպում ենք 13-րդ դ. պատմիչ Ռաշիդ ադ-Դիհի մոտ: Ներկայացնելով առասպելական Օղուզ խանից սերված 24 օղուզական ցեղերը՝ նա հիշատակում է նաև նրան միացած եղբայրներին ու զարմիկներին, որոնցից յուրաքանչյուրի անունով մեզ հայտնի են թյուրքական ցեղեր: Պատմիչը մասնավորապես հիշատակում է Ուլղուբ, Քանլը, Ղըփչաղ, Կարլուկ, Աղաչերի ցեղերին եւ մեզ հետաքրքրող Խալաջը²: Օղուզական ավանդապատումից կարելի է ենթադրել, որ այդ ցեղը կամ ժողովուրդն ուներ թյուրքական ծագում եւ միացել էր օղուզներին մինչև նրանց արչավանքները դեպի արեւմուտք: Իրաչիդ ադ-Դիհի շարադրում է նաև օղուզական Խալաջ ցեղի ծագման ավանդապատումը: Դրա համաձայն՝ Օղուզ խանը գրավում է Սպահանը, այնուհետև ցանկանում վերադառնալ: Ճանապարհին մի կին երեխա է ունենում: Երբ խան սնունդի բացակայութան պատճառով քաղցած է մնում: Կնոջ ամուսինը սկսում է որսով զբաղվել եւ հետ է մնում Օղուզ խանի մարդկանցից: Խանը զայրանում է եւ դիմում նրան՝ քալ աջ (թյուրքական լեզուներով՝ մնա՝ քաղցած): Այստեղից այդ մարդու տոհմը ստացել է Քալաջ կամ Խալաջ անունը³:

Խալաջների մասին հաղորդում ունի նաև 13-րդ դ. արաբ պատմիչ Իզ ադ-Դիհի իբն Կալ-Ասիրը: Ըստ նրա՝ Մահմուդ Ղադնեհին 1005 թ. իր կողմն է գրավում խալաջական թյուրքերին, որոնց հետ շարժվում է Բալխի վրա⁴: Արաբ պատմիչը հիշատակում է նաև Խորեզմշահ Ջելալ ադ-Դիհի Մանկրուռնայի ամիրաներից մեկին, որը սերում էր խալաջ-թյուրքերից⁵:

Միջնադարում խալաջները մեծ դեր են խաղացել Միջին Ասիայի, Աֆղանստանի եւ Հնդկաստանի քաղաքական կյանքում: 11-րդ դ. սելջուկյան արչավանքների շրջանում խալաջներին մի մասը տեղափոխվել է Իրան եւ Առաջավոր Ասիա: Չնայած իրենց զգալի թվին՝ խալաջները վերջնականապես ձեւավորված ցեղային գիտակցութունն չեն ունեցել⁶:

¹ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Закавказский округ, Тифлис, 1893.

² Рашид ад Дин, Сборник летописей, т. I, кн. I, с. 76.

³ Նույն տեղում, էջ 85:

⁴ Ибн ал-Асир, Ал-кама фи-т-та'рих (Полный свод истории), Ташкент-Цюрих, 2005, с. 179.

⁵ Նույն տեղում, էջ 378:

⁶ Kalaj, Tribe originating from Turkistan, Generally referred to as Turks but possibly Indo-Iranian, – Encyclopaedia Iranica, Vol. XV, Fasc. 4, p. 363-364.

Նրանք Հանդես չեն եկել որպես քաղաքական ինքնուրույն միավոր, ինչպես, օր. ղզլբաշական ցեղերը, կամ Ակ-կոյունլուների դաշինքի մաս կազմող թուրքմենական ցեղերը: Խալաջները Հիմնականում ընկալվել են որպես իսլամադավան տիրակալների, ամիրանների (էմիրների) վարձկան զինվորական ուժեր: Մոնղոլական արշավաքների շրջանում խալաջները խորեղմաշահերի դաշնակիցներն էին, եւ մոնղոլների Հաղթական արշավանքների ճնշման տակ նրանց մի մասը եւս տեղափոխվել է Իրան, այստեղից՝ նաեւ Այսրկովկաս¹:

17-րդ դարում ճանապարհորդները խալաջներին Հիշատակում են որպես Մուղանի դաշտի բնակիչներ²: Արեւելյան Այսրկովկասում 19-րդ դ. վերջին պահպանվել էին Խալաջ անվան հետ կապված բազմաթիվ տեղանուններ³: 1886 թ. Այսրկովկասի վիճակագրական տվյալներում Բաքվի նահանգի Գյոքչայի դավառում նշված է Խալաջ գյուղը՝ 544 բնակիչներով, որոնք զբանցված են որպես թաթարներ⁴: Խալաջ անունով ավելի մարդաշատ 2 գյուղեր՝ 1617 եւ 1190 բնակչով, Հանդիպում ենք նաեւ Ջեւաթի գավառում⁵: Ընդ որում՝ զբանցից մեկի թաթար բնակչութունը ներկայացված է որպես քոչվոր: Բաքվի նահանգի Ղուբայի գավառում Հիշատակվում էր Խալաջ գյուղը 636 բնակչով⁶: Լենքորանի գավառում Հանդիպում ենք Խալաջլու գյուղը 517 բնակչով⁷:

Այսպիսով՝ պատմական Առանի եւ Շիրվանի տարածքն ընդգրկող Արեւելյան Այսրկովկասում թյուրքական տարրը մեծ ծավալով Հայտնվել է սկսած 11-րդ դարի սելջուկյան արշավանքներից: Այս ալիքը նոր թափ է ստացել 13-րդ դարի մոնղոլական արշավանքների ընթացքում: Սակայն երկրամասում թյուրքական տարրի ամենածավալուն ներկայութունն ու քաղաքական ազդեցութունը ուժեղացել է սկսած 14-15-րդ դարերից, երբ տարածաշրջանը գտնվում էր Կարա-կոյունլու, այնուհետ

1 Е. Копуқсу, Балаç, – Islam ansiklopedisi, 1988-2013, cilt 15, s. 229.

2 Г. А. Гейбуллаев, Топонимия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 28; Kalaj, Tribe originating from Turkistan, p. 363-364.

3 Г. Д. Агаев, Данные этнотопонимии о расселении тюркоязычных племён в Азербайджане XI-XV вв., – Этноическая ономастика, Москва, 1984, с. 143.

4 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

5 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

6 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

7 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Ленкоранский уезд, Тифлис, 1893.

տեւ Ակ-կոյունը թուրքմենական պետութիւնների տիրապետութեան տակ: Այս շրջանում տվյալ երկու ցեղային համադաշնութիւնների թուրքական շատ քոչվոր ցեղեր բնակութիւն հաստատեցին Արեւելյան Այսրկովկասում: Իսկ գործընթացն իր դադարձնակետին հասավ արդեն թուրքմենական երկու պետութիւններին հաջորդած Սեֆյան Իրանի տիրապետութեան շրջանում՝ 16-17-րդ դարերում, երբ Մուղանի դաշտը գրեթե ամբողջութեամբ, նաեւ Շիրվանի զգալի տարածքներ բնակութեան տրվեցին նախկին Ակ-կոյունը եւ Կարա-կոյունը ցեղային համադաշնութիւնների մեջ մտած, այնուհետեւ ղզլբաշների կազմը համալրած քոչվոր ցեղերին:

Ուսումնասիրելով Արեւելյան Այսրկովկասում թուրքական ցեղերի բնակութեան դինամիկան կարելի է արձանագրել մի հետաքրքիր օրինաչափութիւն: Քոչվոր ցեղերի մեծ մասը, եկած լինեն սելջուկյան, մոնղոլական արշավանքների, թե ավելի ուշ շրջանում, անցել են նախ Ատրպատական, այնուհետեւ Փոքր Ասիա եւ Ասորիք, այնուհետեւ՝ նորից Ատրպատական եւ վերջապէս Արեւելյան Այսրկովկաս: Այս տեղաշարժն առկա է եղել Թեքելյու, Շամլու, Բայաթ, Աֆշար եւ բազմաթիվ այլ ցեղերի դեպքում: Ընդ որում՝ քոչվոր ցեղերի նման տեղաշարժերի ժամանակ ցեղն ամբողջութեամբ չի տեղափոխվել, այլ միայն դրա մի մասը: Թերեւս, դրանով է պայմանավորված Արեւելյան Այսրկովկասի եւ Իրանական Ատրպատականի, մասամբ նաեւ Թուրքիայի թուրքական ծագմամբ բնակչութեան որոշակի էթնիկ ընդհանրութիւնը եւ միեւնույն ցեղերի անուններով բնակավայրերի առկայութիւնը:

Григорян Самвел
(Москва)
(Գրիգորյան Սամվել)

Ошин из страны Армянской: О локализации Майреац-джурк'а, восточно-армянской прародины Гетумянов

Происхождение Гетумянов (Հեթումյանք), второго по значимости рода Киликийской Армении, является одним из белых пятен армянской истории. По имени Ошина (Աշին, Awšin), самого раннего из известных представителей рода, их также принято называть Ошинянами. По следующим двум причинам мы полагаем первое фамильное определение предпочтительным. Во-первых, оно используется в первоисточниках (см. ниже), тогда как «Ошинян» является «творчеством» современных историографов. Во-вторых, определение «Гетумян» содержит важную информацию, которую следует использовать, в том числе, для прояснения происхождения рода.

Благодаря находкам и исследованиям Алесана Акопяна в последние десятилетия на этом направлении достигнут значительный прогресс. Тем не менее, на наш взгляд, всё еще нет исчерпывающего ответа на следующие вопросы: где находилась местность Майреац-джурк' (Մայրեաց' յւրկ')¹, вотчина Ошина, и из какого княжеского рода он вышел. Настоящая работа содержит два новых акцента, касающихся первого из этих вопросов.

Ошин, о котором идет речь, упомянут в двух средневековых источниках. Одно из дополнений к историческому труду Самуэла Анеци (далее – «Дополнение») представляет собой следующую запись:

В 522 году [армянского летосчисления = 1073 от Р. Х.] ишхан Ошин, вместе с братом ЫАлкамом, матерью, супругой, ишханами, [составлявшими его] княжеский полк, всем имуществом, имея при себе также перст Святого апостола Петра, из-за притеснений тачиков ушел из своей вотчины Майреац джурк', расположенной напротив (у, близ) Гандзака. Прибыв в страну Киликийскую, он с помощью

¹ Данный топоним можно перевести как «Лесные воды» («Աշին») таугі – «лес», «дебри», «ջուր» յւրկ' – «водь», в определенном контексте также «ручьи»). Название имеет весьма общий характер и, к сожалению, не дает информации для локализации.

Христа и святого апостольского перста отнял у тачиков знаменитую крепость Ламброн, что расположена у подножья горы Торос, возвышаясь у столичного города Тарсона || Ի ՇԻԲ ամին ի բռնութենէն Տաճկաց ել Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ Հանդէպ Գանձակայ՝ ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր, ազատագունդ իշխանօքն եւ ամենայն աղխիւն, ունելով ընդ իւր եւ զմատն սուրբ առաքելոյն Պետրոսի: Եւ եկեալ յաշխարհն Կիլիկիացոց եւ աջողմամբն Քրիստոսի եւ սուրբ մատին առաքելոյն էառ ի Տաճկաց եւ զականաւոր բերդն Լամբրօն, որ է մերձ առ ստորոտով լերինն Տօրոսի ի դահ մայրաքաղաքին Տարսնի¹:

Информация об этом Ошине содержится также в памятной записи манускрипта 1190 г. («Толкование Псалмов Давида» Нерсеса Ламбронаци), написанной другим Самуэлом, из Скевры, монастыря ишханов Ламброна. Она дополняет сведения процитированного выше источника, однако в чем-то и противоречит ему. Согласно Самуэлу Скевраци, прибывший в Киликию со своей родней Ошин получил Ламброн от «армянского ишхана Апахарипа из дома Васпураканского» (а не отнял у тачиков), назначенного императором ромеев Алексеем править Тарсоном (Тарс) и Маместией (Мсис). Речь идет об Апахарипе, сыне hАсана, сыне Глухого Хачика, сыне Дереника, которые являются представителями торнаванской ветви дома Арцруни². Автор также сообщает, что Ошин приходился Апахарипу зятем³.

В свете нахождения вышеупомянутого Майреац-джурк'а близ Гандзакка особый интерес представляет следующий фрагмент из той части памятной записи, где говорится о деяниях Апахарипа.

...[Апахарип] отдал Ламброн близкому и дорогому ему ишхану по имени Ошин, который прибыл к нему из страны Армянской. [Апахарип также] вернул ему мощи великого и старшего среди апостолов Петра, которые ранее хранились у армян, о чем свидетельствует предшествующая история || ...զԼամբրունն ետ ի

¹ Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թիւ [Samuel Anetsi and Continuator. The Chronicle from Adam to 1776], Ed. Karen Matevosyan, Yer., 2014, p. 195.

² Подробнее об этом см. G. Dédéyan, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 1, Lisbonne, 2003, p. 307-309.

³ Հայերէն ձեռագրերի սիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր [The Colophons of the Armenian manuscripts of 5-12th centuries], Ed. Artashes Matevosyan, Yer., 1984, p. 255.

մտերիմ եւ ի սիրեցեալ իշխանն, որ եկեալ էր ընդ իւր յաշխարհէն Հայոց անուն Աւշին, եւ աւանդեաց ի նա զմասն մեծի եւ գլխաւորի առաքելոցն Պետրոսի, զոր ունէին Հայք ըստ նախադրեալ պատմութեանն¹:

Итак, отрывок содержит прямое указание на то, что ишхан Ошин прибыл в Киликию из страны Армянской (յաշխարհէն Հայոց). Сопоставив данную информацию со сведениями процитированного выше Дополнения, можно заключить, что *вотчина Ошина Майреац-джурк'* находилась в одной из областей Армении, в ее восточных краях, близ города Гандзака. Указанием на армянское этническое и конфессиональное происхождение главного персонажа настоящего исследования является и эпизод с передачей мощей апостола Петра. Согласно Самуэлу Скевраци, Аплахарип верил их прибывшему из Армянской страны ишхану Ошину², поскольку они «ранее хранились у армян». То есть, армянское происхождение Ошина явилось одним из оснований передачи реликвии ему на хранение³.

Неприступный Ламброн стал наследственным владением потомков Ошина. Он укрепил крепость и выстроил на одной из ее вершин хранилище мощей апостола Петра. Согласно Самуэлу Скевраци, после кончины Аплахарипа Ошин на короткое время до сельджукского вторжения в Киликию стал также хозяином Тарсона⁴. Его потомки по мужским линиям владели многочисленными замками и гаварами в Киликии и Исаврии: Паперон (бывшее владение Аплахарипа), Ламос Киликийский, Аскурос, Лува, Сарвандикар, Корикос, Манион, Анамур, Ламос Исаврийский, Смба-

¹ Там же.

² Из текста вытекает, что передача Аплахарипом Ошину мощей апостола Петра произошла в Киликии, тогда как согласно Дополнению, Ошин привез перст с собой, переселяясь туда из Майреац-джурка. Кроме того, мы хотели бы обратить внимание на сходство написания слов միւսի (masn, «частица», «мощи») и միսնի (matn, «перст», «палец»). Первое содержится в памятной записи Самуэла Скевраци, второе – в Дополнении. Мы не исключаем, что данная разница является результатом ошибочного прочтения одного из этих вариантов поздним автором.

³ Мы выражаем признательность Хачику Арутюняну, старшему научному сотруднику Научно-исследовательского института древних рукописей им. Месропа Маштоца (Матенадаран) за помощь в толковании данного фрагмента.

⁴ Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր, p. 255.

клай, Чанчи, Канчи, Митизон, Сик и т. д.¹ После государственного переворота, осуществленного в 1221-1226 гг. праправнуком Ошина Костандином, представители рода стали де-факто правящим домом Армянского королевства Киликии и Исаврии (хотя де-юре, в целях придания легитимности перевороту, они представляли себя Рубенянами, то есть, потомками основателя Армянского королевства Левона I Рубеняна и его дочери Запел, которую принудили к браку с Гетумом, сыном Костандина)².

Как мы отмечали выше, фамильное определение «Гетумян» (*Հեթումյաք*, *Het'monk*) содержится в первоисточниках периода Армянского королевства Киликии, в частности, в Летописи, приписываемой Смбату Гундастабю³. Сына и наследника вышеупомянутого Ошина звали Гетум (*Հեթումս*, *Het'um*), старшего сына последнего – вновь Ошин, затем снова Гетум, и так далее⁴. Это повторяющееся чередование двух личных имен в семействе владетелей Ламброна позволяет предположить, что отца первого Ошина также звали «Гетум». Данного мнения, в частности, придерживался У.-Х. Рюдт-Колленберг, который, однако, ошибочно причислял предполагаемого отца Ошина Гетума к роду Пахлавуни⁵.

Мы полагаем, что есть и другое косвенное указание на то, что отца Ошина из Майреац-аджурк'а, вероятно, звали Гетум. Найти его помогает аналогия с первым по значимости родом Киликийской Армении – Рубе-

¹ Cl. Mutafian, *L'Arménie du Levant (XI^e-XIV^e siècle)*, t. 1, Paris, 2012, p. 337-364; Wipertus-Hugo Rüdtt-Collenberg, *The Rupenides, Hethumides and Lusignans. The Structure of the Armeno-Cilician Dynasties*, Paris, 1963, table II (H1, The Hethimides); Մմբատայ Սպարապետի Տարեգիրք [The Chronicle of Smbat Sparapet], Ed. Serobē Aglean, Venice, San Lazzaro degli Armeni, 1956, p. 187, 209-210, 244.

² L. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը* [L. Ter-Petrosian, *The Crusaders and the Armenians*], t. 2, Yerevan, 2007, p. 236-261; Rüdtt-Collenberg, *The structure...*, table II (H1): 33, 58.

³ Մմբատայ Սպարապետի Տարեգիրք, p. 190, 213; *La Chronique du royaume de la Petite Arménie par le connétable Sémpad*, Ed. Éd. Dulaurier, Recueil des historiens des croisades, Documents arméniens, t. 1, 1869, p. 625.

⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Ed. Artashes Matevosyan, Yer., 1984; Rüdtt-Collenberg, *The structure...*, table II (H1): 33, 37, 38, 52, 61.

⁵ Rüdtt-Collenberg, *The structure...*, table II (H1): 33; Mutafian, *L'Arménie du Levant...*, t. 1, p. 337-340.

нянами. Этот род получил название по личному имени самого раннего из известных его представителей – Рубена. При этом остаются вопросы относительно того, кто был первым представителем этого рода, пришедшим в Киликию – сам Рубен или его сын Костандин¹.

То, что потомки Ошина из Майреац-джурк'а могли получить в XII-XIII вв. фамильное определение «Гетумян» по имени его сына и или правнука, которых звали «Гетум», нам представляется возможным, но весьма сомнительным. По аналогии с приведенным рубенияновским прецедентом, мы полагаем более вероятным следующее. Род потомков Ошина из Майреац-джурк'а, скорее всего, получил название по имени его отца, которого звали так же, как и его сына и правнука – Гетумом.

Данное допущение дает некоторые – пусть и очень ограниченные – перспективы для локализации местности Майреац-джурк', поскольку личное имя «Гетум» в сохранившемся наследии докиликийского периода армянской истории встречается лишь один раз². Примечательно, что речь идет об эпиграфическом памятнике, обнаруженном в 1965 г. недалеко от Гандзака (около 40 км), вблизи селения Хачакап и расположенного около него знаменитого Монастыря Переводчиков (Таргманчац ванк'), на месте старого села Шатах³. Это бывший гавар Кохт (Կողթ, Kolt) Северного Арцаха⁴. Это большой хачкар высотой более полутора метров и шириной более метра со следующей надписью: ՀԵԹՈՒՄ ԿԱՆԳ[Ն]ԵԱՅ ՁԽԱԶԱ


¹ Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, т. 2, р. 63-67; Ն. Զոհրաբյան, Ռուբեն Առաջինը Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադիր [N. Zohrabyan, Was Ruben I founder of the Armenian kingdom of Cilicia?], Ed. A. Stepanyan, Personality in History, Proceedings of Conference, Yer., 2015, р. 76-80.

² Если не считать сообщения жившего в конце XI в. – первой трети XII в. Маттеоса из Эдессы о начальнике этого города Торосе, сыне Гетума (քաղաքապետս զիշխանն Հոռոմոց՝ զԹորոսս որ աւելին Հերմայ որդի). – См.: Պատմութիւն արարեալ Մատթէոսի մեծի քահանայի Ոսհայեցոյ... [The History performed by Priest Matt'ëos the Great from Edessa], Ed. Mambrë Melik'-Adamean and Nersës Tër-Mik'ayëlean, Valarsapat, 1898, р. 248.

³ Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, Կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, [Corpus inscriptionum Armenicarum, Liber V, Arc'ax, by Sedrak Barxudaryan], Yer., 1982, р. 251-254 (942).

⁴ Բ. Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս) [Babken Harut'yunyan, The Historical Atlas of Armenia (Part I)], Yer., 2005, р. 43.

:ՆԼ: «Тетум воздвиг сей крест :430: [год армянского летосчисления (=981 от Р. Х.)]» (см. рисунок ниже). То есть, хачкар был установлен за 92 года до переселения Ошина в Киликию. Тот факт, что этот единственный сохранившийся армянский памятник с именем «Тетум» был найден не столь недалеко от Гандзака, дает основание поставить вопрос, не является ли данная местность тем самым Майреац-джурк'ом.



До 2000 г. о Майреац-джурк'е, кроме процитированного выше Дополнения, было известно также из надписей на двух надгробных камнях монастыря Ваһанаванк', что в Сюнике. Из них следует, что в этой обители были погребены некий Курдик Мареджреци (*Քուրդիկ Մարէջրեցի*, Kurdik Marĕjrec'i) и Сол'омон Мареджреци. Надписи датированы 1076 г. и 1084 г. соответственно. А. Акоюн обращает внимание на то, что в богатом географическом и топонимическом материале Степанноса Орбеляна отсутствуют какие-либо сведения о нахождении в Сюнике некоей местности или населенного пункта под названием Мареджур (Майреац-джурк)¹. Продолжая исследование данного вопроса, автор указывает на то, что в том же Ваһанаванк'е сохранилось надгробие алуанской царицы Софи, датированное 1081 г., что коррелируется со словами Степанноса Орбеляна о том, что в этом монастыре упокоились «многие цари и царицы Алуанские». В Ваһанаванк'е также сохранился надгробный камень алуанского католикоса Степан(н)оса, который датируется периодом после 1086 г. Любопытно, что из надписи этого камня следует, что католикос переехал в Сюник (по всей видимости, из своего престольного края) – так же, как и ишхан Ошин – из-за притеснений тачиков (*Եւ' տ(է)ր Ստեփա-*

¹ Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական և վիճագրագիտական հետազոտութիւններ (Արցախ և Ոստիք) [A. Hakobian, Historisch-geographische und epigraphische Forschungen (Artzach und Utiq)], Wien – Yer., 2009, p. 67.

նոս Աղվաճնից կաթողիկոս, ներեալ ի Տաճկաց՝ եկա...)¹. Сопоставив эти сведения с информацией о переселении Ошина в Киликию, можно заключить, что в 1060-х – начале 1070-х гг. армянское население Утика и Арцаха испытало разорительные удары и завоевания со стороны тачиков, то есть, в данном контексте, гандзакских эмиров, в результате чего они были вынуждены покинуть свой край и перебраться в различные места – в Сюник, Киликию и т. д.

В 2000 г., исследуя армянские памятники верховья реки hАкари (Հախարի, Накаг), А. Акопян обнаружил у Ахбрадорского монастыря и исследовал несколько эпиграфических памятников, один из которых представляет собой недатированный надгробный камень «Великого Вардако Майреджреци» (Մեծ Վարդկո Մարթըրեցի), отца Состенеса². Последний, по мнению А. Акопяна, является тем самым Состенесом, который упомянут в другой ахбрадорской надписи, которую исследователь уверенно датирует 1068 г.³ То, что на первом из этих памятников «Великий Вардако» представлен как отец Состенеса, вероятно, указывает на то, что последний к тому времени тоже уже был взрослой и известной личностью. Таким образом, камень с упоминанием Вардако Майреджреци можно датировать серединой XI в. На основании этих открытий А. Акопян высказал предположение, что местность в верховьях Акари, где располагается Ахбрадорский монастырь, и есть Ма(й)реджур или Майреац-джурк' вышеприведенных первоисточников, то есть, вотчина ишхана Ошина⁴. Согласно этой версии, именно отсюда в описываемые времена часть мареджурцев бежала в соседний Сюник, а Ошин со своими людьми – в отдаленную Киликию. С таким выводом согласен Клод Мутафян, который в посвященном происхождению Гетумянов разделе своей фундаментальной монографии о Левантийской Армении упоминает также шатахский камень 981 г., не связывая место его расположения с Майреац-джурк'ом (при этом Кл. Мутафян считает упомянутого в надписи камня Гетума вероятным предком Ошина и других представителей его династии)⁵.

¹ Там же, с. 68.

² Там же, с. 66.

³ Там же, с. 58-59, 66-67.

⁴ Там же, с. 67-72.

⁵ Mutafian, L'Arménie du Levant..., t. 1, p. 337.

Мы же полагаем, что такая связь не менее вероятна, чем та, которую обозначил благодаря своим бесценным находкам и исследованиям А. Акопян. Верховья hАкари, как напоминает исследователь, являются частью бывшего арцахского гавара Вайкуник' (*Վայկուկերք, Vaykunik*)¹. Расстояние между Ахбрадзором и Гандзаком даже по прямой воздушной линии составляет около 100 км; реальная же дорога по земле, в зависимости от маршрута, может растянуться от 150 км до 260 км. То есть, это намного больше, чем расстояние между Хачакапом и Гандзаком (около 40 км). Поскольку автор Дополнения писал, что Майреац-джурк' расположен у / близ / напротив Гандзака, данная разница свидетельствует в пользу локализации Майреац-джурк'а в Кохте. Это первый из акцентов, который мы хотели бы внести в данную тему.

А. Акопян объясняет удаленность верховьев hАкари от Гандзака тем обстоятельством, что автор Дополнения уточнением *Հանդէպ Գանձակայ* (у / близ / напротив Гандзака) указывает скорее не на расстояние между Гандзаком и Майреац-джурк'ом, а на место (город), откуда исходили нашествия противника, то есть, в данном случае, на Гандзак². Принимая такое допущение, мы считаем важным привести еще один аргумент в пользу этой версии. Близость одного пункта к другому в представлении средневекового летописца условна; она зависит, в частности, от того, насколько далеко от мест описываемых событий он находился. Дополнение, о котором идет речь, сохранилось в трех манускриптах, датируемых концом XVI в., 1676 г. и концом XVIII в. Автор Дополнения является не Самуэл Анеци. Оно представляет собой позднюю вставку в его исторический труд, датировать которую пока не представляется возможным. Скорее всего, вставка была сделана в XIII в. или XIV в.³ Вероятно, автор Дополнения жил в Киликии, поскольку сведения о происхождении Гетумянов он, как и Самуэл Скевраци, мог почерпнуть из их родовой памяти, устной или письменной. А для того, кто находился в далекой Киликии (и никогда не посещал Арцах) малоизвестное ему расстояние между Гандзаком и Вайкуник'ом тоже могло показаться близким и незначительным.

¹ Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական..., p. 70.

² Там же.

³ Սամուել Անեցի եւ շարունակողներ, p. 29-30, 66-68, 72-73, 195.

Вторым аргументом в пользу локализации Майреац-джурк'а в Кохте является факт присутствия в тексте надгробного камня Вардако «от-топонимического» прозвища «Майреджреци». На наш взгляд, если бы он происходил из той местности, где расположен этот камень, и если бы она была Майреац-джурк'ом, в таком упоминании не было бы необходимости. И, наоборот, тот же пример с надгробными камнями Курдика Мареджреци, Сол'омона Мареджреци, царицы Софи и католикоса Степаноса из Ваһанаванк'а показывает, что присутствие географических прозвищ и указаний на таких памятниках характерны для людей, пришедших (бежавших) из других мест и краев. Итак, верховья һАкари являются, скорее, не Майреац-джурк'ом, а еще одним местом, куда армяне бежали из Майреац-джурк'а, спасаясь от набегавших из близлежащего Гандзака сельджуков.

Мы привели два аргумента в пользу того, что Майреац-джурк', скорее, находился на территории примыкавшего к Гандзаку североарцахского гавара Кохт', а не в расположенном южнее и значительно дальше от Гандзака арцахском гаваре Вайкуник¹. В то же время, мы не считаем, что данные аргументы опровергают версию А. Акопяна. На наш взгляд, они дополняют ее и вносят в исследование темы восточно-армянской прародины Гетумянов дополнительные акценты, которые необходимо учитывать².

¹ И район села Хачакап (Кохт'), и верховья һАкари (Вайкуник'), представляют собой лесистую местность, пересеченную речками. То есть, они оба соответствуют названию «Майреац-джурк», что, как мы отмечали выше, означает «Лесные воды».

² Личные имена ранних Гетумянов и скудость сохранившихся сведений о знати Восточной Армении того периода, к сожалению, не дают достаточных оснований для обозначения их родственной связи с конкретными правившими в Арцахе и Утике владетельными семействами, что могло бы дать дополнительную информацию для локализации Майреац-джурк'а. Распространенность у Гетумянов имени «Смбат» позволяет допустить происхождение ишхана Ошина – по мужской либо женской линии – от правившего в IX в. в отдаленных гаварах Утик'а и Арцаха Саһла, сына Смбата, неоднократно упоминаемого Мовсэсом Дасхуранци – См.: Мовсэс Каланкатуацци, История страны Алуанк, Пер. с древнеармянск., предисловие и коммент. III. В. Смбатяна, Ер., 1984, с. 164-166; Rüdт-Collenberg, The structure..., table II (H1): 39, 59, table III (H2): 103. Личное имя «Васақ», также принятое у Гетумянов, возможно, указывает на их родственные связи с сюнийскими ишханами и царями. То, что Апахарип из побочной ветви царского дома Арцруни и высокопоставленный ромейский наместник, выдал за Ошина свою дочь (не ту ли, что первоначально была обещана шахиншаху Гагику II Багратуни?), свидетельствует о высокородии Ошина.

**Արցախի եւ Ուտիքի քարե մարդակերպ կոթողների
մեկնաբանության շուրջ**

Արցախի եւ Ուտիքի ընդարձակ տափաստանային հատվածներում բազմաթիվ մշակութային հուշարձանների շարքում կարելի է առանձնացնել մի քանի քարե մարդակերպ կոթողներ: Վերջիններս կարելի է դասակարգել երկու խմբում:

Դիտարկվող կոթողների առաջին խմբի կոթողները տարածված են հատկապես Արցախի Հանրապետության հյուսիս-արեւելյան շրջաններում՝ Մարտակերտի շրջանում եւ շրջակայքում: Դրանք դիտարկվում են հիմնականում Արցախի Տիգրանակերտի, ինչպես նաեւ վերջինից ոչ հեռու գտնվող Գյավուրկալա բնակատեղիի շրջակայքում: Այս միջավայրից մի քանի կոթող էլ դեռեւս խորհրդային տարիներին տեղափոխվել են Ստեփանակերտի եւ Մարտակերտի պատմա-երկրագիտական թանգարաններ, իսկ մի մասը շարունակում է գտնվել բաց դաշտում:

Այս մարդակերպ կոթողները կտրվածքում մոտավորապես ուղղանկյուն, տափակ երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ ընդգծելով մարմնի երեք մասերը՝ գլուխը, որը զբաղեցնում է ամբողջ կոթողի 1/3-ից մի փոքր քիչ ծավալ, իրանը եւ ներքնամասը: Կոթողներն ունեն մոտավորապես 30-60 սմ լայնություն, 120-140 սմ, իսկ երբեմն մինչեւ 2 մ բարձրություն եւ մոտավորապես 20 սմ հաստություն: Հայտնի բոլոր կոթողները պատրաստված են կրաքարից, որի ընդարձակ նստվածքները եւ հին մշակումների հետքերով հանքերը լայնորեն տարածված են Արցախի արեւելյան նախալեռներում:

Ելնելով պատկերագրական եւ ծավալային լուծումներից եւ համադրելով տարածաշրջանից հայտնի նմանատիպ այլ կոթողների հետ՝ կոթողների այս խումբը կարելի է թվագրել մ. թ. ա. 8-6-րդ դարերով:

Մարդակերպ կոթողների երկրորդ խումբը ներկայացնում են եռանկյունաձեւ կոթողները, որոնք կարելի է եզրակացնել որպես մարդակերպ: 2013 թ. հունիսին Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը Հնագիտական հետախուզական աշխատանքներ է իրականացրել Թովուզի շրջանում: Այստեղ հայտնաբերվել են մի քանի նոր կուրգանային խմբեր: Նրանցից մեկի վրա, որը ստացել է Թոպտանդաղ անունը, իրականացվել են Հնագիտական աշխատանքներ: Կուրգանային խումբը գտնվում է

Տալուշ (Թովուզ) գետի ստորին հոսանքի աջ ափին՝ գետից 1,5 կմ արեւելք, Մինգեչաուրից վեր կառուցված երկրորդ ջրամբարից 15 կմ հարավ-արեւմուտք: Կուրգանային խմբին պատկանում են 21 կուրգան: Պեղված դամբարանի թաղումային խցում հայտնաբերվել են երեք շերտով դասավորված 41 քարե կոթող: Նրանց բարձրութունը հասնում է 0,85-0,35 մ, բոլորը կտրվածքում եռանկյունաձև են: Հետազոտվող հուշարձանի միակ ժամանակագրական ցուցիչը խեցեղենն է, որը հայտնաբերվել է թաղման խցում: Խեցեղենն օգնում է թվագրել հուշարձանը մ. թ. ա. 9-7-րդ դարերով: Ըստ հուշարձանը հետազոտող հնագետների ենթադրություն արձանները, ամենայն հավանականութամբ, պատկանում են կիմերական մշակույթին:

Թեև հուշարձանի հետազոտողները գտնում են, որ այս արձանները չունեն զուգահեռներ, սակայն հայտնի է, որ նմանատիպ արձաններ հայտնաբերվել են նաև Համլետ Պետրոսյանի եւ Վարդգես Սաֆարյանի կողմից 2000-ական թվականներին Ստեփանակերտում իրականացված պեղումների ժամանակ: Թեև այս կոթողները հանգամանորեն դեռ չեն ուսումնասիրվել, սակայն նախնական դիտարկմամբ նրանք բավականին նման են Թովուզից հայտնաբերված վերոհիշյալ կոթողներին:

Ուսումնասիրելով կոթողների ծավալային եւ քանդակային լուծումները՝ կարելի է եզրակացնել, որ դրանք ունեն, առավել մեծ հավանականութամբ, տեղական Արցախ-Ուտիքյան ծագում, եւ կարող էին նախատիպ հանդիսանալ տարածաշրջանի նմանատիպ այլ մարդակերպ կոթողների համար:

Դիտողություններ Արցախի Տիգրանակերտից հայտնաբերված կնիքի վերբերյալ

Վերջին տարիներին Աղուանագիտությունը թեւակոխել է ուսումնասիրութեան նոր փուլ: Քաղաքական պատմութեան, լեզվա-գրական, ազգագրական, հնագիտական, սոցիոլոգիական եւ աղբյուրագիտական այլ գյուտերով, վերջին տարիներին այդ մասին Մոսկվայում, Երեւանում, Բաքվում տեղի ունեցած գիտաժողովներում եւ դրանց նիւթերն ամփոփող Albania-Caucasica ժողովածոյի առաջին հատորում (Մոսկվա, 2015) հրատարակված հոդվածներում կան Աղուանք քաղաքակրթական երեւույթի մեկնաբանման բոլորովին նոր մոտեցումներ:

Ի մասնավորի, Աղուանքի տարածաշրջանի տարբեր հատվածներում իրականացված պեղումների վերլուծութիւնները շոշափում են ներկայիս այս կամ այն երկրի ցեղերի եւ ժողովուրդների տեղային (լուկա) ինքնութիւնը հաստատող կամ ժխտող արձագանքներ: Այդ համատեքստում էական է Արցախի Տիգրանակերտի պեղումների արդյունքների քննութիւնը, որը ծանրակշիւ հիմքեր է տրամադրում նախնագետի ստորին հովտի էթնիկ հայ բնակչութեան կազմը եւ պատմամշակութային դիմագիծն ընկալելու համար:

Տիգրանակերտի պեղումներով, որոնք սկսվել են 2006 թվականին (արշավախմբի ղեկավար պ. գ. դ. Համլետ Պետրոսյան), հնավայրի անտիկ շրջանի տեղամասերի շարքում ծրագրավորված աշխատանքներ իրականացվեցին նաեւ Կենտրոնական թաղամասում, որը միջնադարյան մշակութային շերտերով, կառույցներով ու դամբարաններով հագեցած քաղաքի մի հատվածն էր ներկայացնում: 2007-2009 թթ. ընթացքում (հնագետներ՝ Համլետ Պետրոսյան, Աղավնի Ժամկոչյան, ճարտարապետ՝ Լյուբա Կիրակոսյան) փլատակներից մաքրվեց վաղմիջնադարյան միանավ, ծավալուն չափերի (21,4 x 6,8 մ) եկեղեցին, որի հատակագծային հորինվածքը, պահպանված խոյակների եւ ճարտարապետական այլ մանրամասների արվեստագիտական հետազոտութիւնը ուրվագծեց Տեկորի, Քասախի, Երերույքի տաճարների (V-VI դդ.) հետ նրա ունեցած ժամանակագրական եւ պատմամշակութային առնչութիւնները:

Ներկա հաղորդումը նվիրված է եկեղեցու հյուսիսային պատին կից, 2 մ դեպի արեւմուտք ձգվող հատվածի հատակին 2008 թվականին հայտնաբերված կավե կնիքի ուսումնասիրութեանը՝ համակարգման հե-

տեւյալ սկզբունքներով՝ ա) որպես Աղուանքի թագավորությունում (ամբողջ նույնանուն մարզպանության տարածքի ընդգրկումով) Վաչագան Բարեպաշտ արքայի օրոք (485-523) կայացած իշխանության՝ քրիստոնեական դավանանքի վերահաստատման հաստատակամության դրսեւորում, բ) նույն ժամանակաշրջանի Հայոց Արեւելից կողմերում եւ Բուն Աղուանքում հայերենի լիարժեք տիրապետության հռչակում, գ) Վաչագան Բարեպաշտ թագավորի ինքնությունը հաստատող առարկայական ապացույց¹, դ) կնիքի գնահատումն իրբեւ կնքագիտության արժեքավոր հուշարձան:

Աղուանքի կնքագիտության վերաբերյալ տեղեկությունները սուղ են: Առայժմ հայտնի են պահպանված արձանագրություններով ամփոփված՝ Արսվաղեն (Եսվաղեն), Ասայ արքաների եւ Առանի ու Բաղասականի անհայտ կաթողիկոսի հիշատակություններով կնքադրոշմներ, որոնք արդեն ամենայն պատշաճությամբ հետազոտված են եւ վայելում են գիտական լայն շրջանառություն²:

Տիգրանակերտից պեղումներով հայտնաբերված սկավառակաձեւ կավե կնիքը թե՛ պատրաստման, թե՛ թեմատիկ իմաստաբանական, թե՛ հայերեն արձանագրություն կրելու հանգամանքով ներդաշնակորեն մարմնավորում է դրա եզակի արժեքը: Պատրաստվելով կառույն կավատեսակից, մինչ թրծումը սուր գործիքի օգնությամբ փորագրվել է ծրագրավորված սյուժե՝ հարդարանքի մանրամասներում շեշտելով ժամանակաշրջանի (V-VI դդ.) արվեստի ընդունված կանոնիկ ոճի թելադրանքը, չբացառելով քրիստոնեական գաղափարաբանության սիմվոլիկ համակարգի տարրերն ու իշխանավորի պատկերատիպը հնարավորինս գեղարվեստական արտահայտչամիջոցներով ներկայացնելու պահը: Պարզ է, որ 485 թվականին Սասանյան արքայից արքա Վաղարշի բարեհաճությամբ իշխանություն ստանձնած Վաչագան Բ Բարեպաշտ Արշակունյի պիտի հետեւեր իրանական մշակույթի ավանդույթին, եւ այդ մոտեցումը կնիքի վրա արտահայտված է պատկերագրության որոշակի կանոնի

¹ Այս արքայի մասին առաջին մանրամասն տե՛ս Յակոբեան Ա., «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագադրութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, – ՀԱ, ԾԺԷ տարի, Վիեննա-Եր., 2003, սն. 45-142: Անանուն, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112:

² Гаджиев М. С., Гемма-печать царя Албании Асвагена, – ВДИ, 2003, № 1, с. 102-119; он же: Атрибуция геммы печати Великого католика Балаасакана и вопрос очередности патриаршества владык Албанской церкви, – «Проблемы истории, филологии, культуры», вып. XIV, Магнитогорск, 2004, с. 465-479; Хуршудян Э. III., Печать наследного принца Арана Асая, – Commentationes Iranicae, Сб. статей к 90-летию В. А. Лившица, Под ред. С. Р. Тохтасьева и П. Б. Лурье, СПб., 2013, с. 191-201.

դրսեւորումով: Այդ առումով Տիգրանակերտի կնիքը կրում է սասանյան դրամական համակարգի տարրերն ու գեղարվեստական արտահայտչամիջոցները՝ դիմերեսին կերպավորելով իշխանավորին, իսկ դարձերեսին՝ քրիստոնեութան խորհրդանիշ շրջանակի մեջ ամփոփված հավասարաթեւ խաչը: Դիմերեսին իշխանավորը պատկերված է ձվաձև դեմքով, նշաձև խոշոր աչքերով, մանրիկ քիթ-բերանով, կարճ բեղ-մորուքով: Թագավորական իշխանութան ատրիբուտները հագուստը, թիկնոցը, ժապավենը եւն արտահայտված էն (թերեւս կրակի մեջ ընկնելուց պատկերը ձեւափոխվել է), աղավաղված պատկերատիպի մանրամասներում պահպանված է գլխի հարդարանքը, որը հնարավոր է է պարզել՝ գլխարկ է, թե թագ:

Կավե կնիքների եզակի նմուշներ առայժմ հայտնի են միայն Աշխաբադից (Թուրքմենստան) 35 կմ հյուսիս-արեւմուտք Բաբարաբ գյուղի եւ Կենտրոնական Ասիայի Բերքուլթ-Կալե ամրոցի շրջակայքի պեղումներից¹: Իմաստային առումով պարզունակ, սոսկ կենցաղային բովանդակութամբ այս կնիքների գյուտը կարեւորում ենք սասանյան խեցեղենի միջավայրում (V-VII դդ.) հայտնաբերվելու հանգամանքով, որն էական արժեք է կավե կնիքների գործառույթի ժամանակը փաստագրելու համար:

Մեր կնիքի կարեւորութան մյուս առանձնահատկությունը արձանագրութան առկայությունն է, որը հայտնաբերման առաջին իսկ պահից եղել է ուշադրութան կենտրոնում: Արշավախմբի ղեկավար Հ. Պետրոսյանի կողմից այն մանրագնին քննութամբ վերծանվել է, վավերացնելով երկու տարբերակ².

ա) ԵՍ / ՎԱՁԼԷ / ԾԱՌԱՅ ՏԵԱԸՆ / ԱՍՏՈՒՅՅ:

բ) ԵՍ / ՎԱՁԼԱԳԱՆ / ԾԱՌԱՅ ՏԵԱԸՆ:

Ուսումնասիրութան ընթացքում առաջնորդվել ենք երկրորդ տարբերակով՝ հիմնավորման համար առաջարկելով որոշ կուպաններ: Առաջին հերթին ուշադրություն ենք դարձրել կնիքի արձանագրութան բովանդակային բանաձեւումին: Հնազանդություն արտահայտող «ձառայ Տեառայ [Աստուծոյ]» իմաստաբանական բանաձեւումն առաջին անգամ հանդիպում է Ավանի տաճարի վիմագրական կոթողներում:

¹ Росляков А., Глиняная печать из села Изгант, – Труды ЮТАКЭ (Южно-Туркменская археологическая комплексная экспедиция), № 5, с. 104-106; Толстов С., Древний Хорезм, Опыт историко археологического исследования, Москва, 1948, ил. 8/1 и 84/3:

² Պետրոսյան Հ., Ժամկոչյան Ա., Հայերեն արձանագրություններով սկավառակ Արցախի Տիգրանակերտից, – ՊԲՀ, 2009, №¹⁰, 1, էջ 166-176:

«Տէր Եզր Հայոց կաթողիկոս, ճշմարիտ ծառայ Աստուծոյ», «Սամէլ ծառայ Քրիստոսի»¹:

Բյուզանդիայում այդպիսի գրութիւնը Հայտնվել է Հուստինիանոս II կայսեր (685-695, 705-711) դրամների վրա, որն ավելի ուշ երեւույթ է. ի դեպ, առանց աղբյուրը հղելու՝ հրատարակիչը արտահայտութեան ակունքը վերագրում է արաբներին, որն ընդունելի է²:

Մեր որոնումների արդուներում պարզվեց, որ «Աստծո ստրուկ» արարատառ գրութեամբ տապանաքարեր Մ դարից վաղ գոյութիւն չունեն, եւ հանդիպում են Հյուսիսային Կովկասի տարածքում³: Տիրանակերտի կնիքի եւ Ավանի արձանագրութեան միաժամանակյա (VI դ.) թվագրութեամբ ակնհայտ է «Աստծո ծառայ» կաղապարված ձեւակերպման Հայկականութիւնը: Այն շարունակաբար կրկնվել է ընդհուպ մինչեւ Կիլիկիան դրամների շրջանառութեան գործառույթում⁴:

Գործառույթը: Հայտնի է, որ կնքամատանիները տնտեսական, քաղաքական, դավանաբանական հիմնախնդիրների լուծման ընթացքում ունեցել են կարեւոր նշանակութիւն: Տարբեր սյուսեներով կնքաքարերն ազդեցվել են մատանիների ակնափոսերում եւ, ըստ պահանջի, վավերացրել տարբեր բնույթի փաստաթղթեր երկրի արտաքին ու ներքին հարաբերութիւնների հետ կապված պետական որոշումներ, առեւտրական բնույթի արտոնագրեր, անձնական նամակներ, ուղերձներ եւն: Դրանցով կնքված կնքագրողները Հայտնի են թե՛ պեղումներից, թե՛ անհատական հավաքածոներից⁵: Հայ մատանագրութեան մեջ հիշատակվում են կնքամատանիների տեսակները, ընդգծելով կրողի տիտղոսը արքայական, կաթողիկոսական, եպիսկոպոսական եւն միաժամանակ շոշափելով յուրաքանչյուրի հոգեւոր կամ իրավական կարգավիճակն ու գործունեութեան ոլորտը: Ավելացնենք, որ Երեւանի տարածքից պատահական գտածո ոսկե, կնքաքարով մատանու վերլուծութեան շնորհիվ մասնագետները (էդ. Խուրշուդյան, Ն. Հակոբյան) կարողացել են հիմ-

1 Ղաֆադարյան Կ., Երեւան. միջնադարյան փուլարձանները եւ արձանագրութիւնները, Եր., 1975, էջ 191:

2 Berlinger A. and Grierson Ph., Catalogue of the Byzantine coins in the Dumbarton Oaks collection and in the Whittenmore collection, Washington, 1968, p. 100.

3 Эпиграфические памятники Северного Кавказа X-XVIII вв. на арабском, персидском и турецком языках, Под ред. Л. И. Лаврова, часть I, Москва, 1966, с. 70, 79, 80, 131.

4 Grierson Ph., From Phocas to Theodoros, III, Vol. 2, Part 2, Washington, 1968, p. 340.

5 Калантарян А., Раннесредневековые буллы Двина, Вып. V (Археологические памятники Армении, № 13), Ер., 1982.

նավորել մատենագրական տեղեկությունների առարկայական համընկնող ընդհանրությունները¹:

Տիգրանակերտի կնիքի պարագայում այս տրամաբանությունը չի գործում, որովհետև կնքամատանիները պատրաստվել են կիսաթանկարժեք քարից համապատասխան կավի վրա դրոշմելու համար, իսկ Տիգրանակերտի կնիքը պատրաստված է կավից, որը փխրունություն պատճառով դրոշմիչի դերակատարություն չէր կարող ունենալ: Հետևաբար առաջարկում ենք վարկած, որը հիմնադրվել է, թեպետև առայժմ կարող է համարվել ինչ-որ չափով հայեցողական, քանի որ այն հնարավոր է վերջնականապես հաստատել կամ ժխտել փաստագրական նոր ստուգագրումներով: Ամենայն հավանականությամբ, Տիգրանակերտի կնիքը համապատասխան օղով (որը պահպանված է կնիքի վրա) ամրացվել է մասնատուփին՝ արձանագրությունամբ վկայակոչելով քրիստոնեություն մեծ ջատագով եւ քարոզիչ Վաչագան Բարեպաշտի անվան հիշատակագրությունը:

Հայ մատենագրության մեջ սրբոց մասունքների կնքման սովորությունի մասին կան բազմաթիվ հիշատակություններ: Օրինակ՝ Կորյունը նման արարողություններից մեկի վերաբերյալ գրել է. «Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոյն հանդերձ ամենայն անուշահոտ խնկաւք եղեալ եւ կնքեալ քրիստոսական կնքովն եւ գաւրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետև իւրաքանչիւրն դառնային»²: Իսկ «Պատմութիւն Աղուանից»-ի հեղինակ Մովսես Դասխուրանցին (Կաղանկատուացին) եւ իր աղբյուրները (հատկապես՝ «Վաչագանի վէպ»-ը) առանձնահատուկ նշանակություն են հատկացրել սրբոց մասունքներին՝ վկայակոչելով քրիստոնեական գաղափարաբանության մեծ քարոզիչ Վաչագան Բարեպաշտի գործունեության այդ ոլորտը, նրա կողմից իբրև քարոզչության միջոց ընտրված մասունքների տեղադրումը այս կամ այն եկեղեցու շինարարության ժամանակ: Աղուանքի Վաչագան Բ Արչակունի թագավորը, սասանյանների հալածանքների շրջանից մնացած՝ քրիստոնեությանն անհարիր սովորությունները, աղանդները եւ զրադաշտականության հետևանքները վերացնելու համար ձեռնարկեց քրիստոնեական ուսմունքի, քարոզչության մեծ արշավ՝ «աղուանական» սրբեր Զաքարիայի, Պանդալեոնի, Գրիգորիսի եւ անգամ բուն Հայաստանից Հռիփսիմե եւ Գայանե սրբուհիների մասունքները փոխադրելով Աղուանք եւ սկսելով նոր եկեղեցիների կառուցումն այդ մասունքների տեղադրությամբ: Այդ մասին Դասխուրանցին

¹ Хуршудян Э., Акопян Н., Сасапидский золотой перстень с геммой на древисармянском (V-VII вв.), – ՄՄԱԵԺ, XVIII, Եր., 1999, էջ 182-193:

² Կորիւն, Վարք Մաշտոցի, Եր., 1941, էջ 88:

գեղարվեստականացված բազմաթիվ նկարագրութուններ ունի, որոնք մեր կարծիքով, հիմնադուրի էին. «...եւ զմնացեալն ի նշխարոյն կնքեալ մեծաւ զգուշութեամբ տայր պահել ի սուրբ եւ յաղնուական սենեկի...»¹:

Մեկ այլ դեպքում պատմիչը մասնատուին է նկարագրում հետեւյալ ձևով. «Եւ զանազան թագաւորական հանդերձիւք պատեալ զնշխարս սրբոյ բազում խնկովք եւ զանազան անուշահոտ ծաղկաւք հանդերձ դնէր ի դեսպակի սրբոյն, զոր շիկակարմիր մորթով կազմեալ եւ սպիտակ կտաւով ի վերայ յարմարեալ եւ ոսկի խաչ ի պատուականագոյն ականց քանդակեալ...»²:

Այս նկարագրութեան մեջ հիշատակում է շքեղ մասնատուիւր, իսկ նախորդում մասունքների կնքման գործառույթը:



Արդ, եթե ընդունում ենք Տիգրանակերտի կնիքին իբրեւ մասնատուիին ամրացված փաստագրում, ապա ո՞ւր փնտրել մասնատուիւր: Հնագիտական պեղումներով փորձենք բացատրել իրողութիւնը: Պեղումների շնորհիվ պարզված է, որ եկեղեցին եղել է գործող մինչեւ IX դարը, երբ Բուղայի հրոսակախումբն ավերեց, կողոպտեց ինչպես տարածաշրջանն, այնպես էլ եկեղեցին, որն, անշուշտ, ունեցել է արարողական շքեղ սպասք, այդ թվում՝ հավանաբար, նաեւ մասնատուի: Պեղումների ընթացքում չի հայտնաբերվել եկեղեցական սպասքի ոչ մի նմուշ, ընդհակառակը, եկեղեցու սալահատակին կար IX դարով թվագրվող օջախի վրա դրված մի կճուճ եւ սանդի վերածված եկեղեցու մշակված քարերից մեկը, որը ենթադրում է եկեղեցու բնակելի տարածքի վերածելու իրողութիւնը: Իսկ IX դարի ջնարակած եւ հասարակ խեցեվերածելու իրողութիւնը եկեղեցու ողջ տարածքում ապացույցն է ոչ քրիստոնյա բնակչութեան զանգվածային բնակեցվածութիւնը, որին էլ բնականաբար խորթ էր պաշտամունքային եկեղեցական կառույցը:

Ամփոփելով Տիգրանակերտի կնիքի վերաբերյալ մեր կռահումները, այն եկեղեցու կառուցողական կերպի քանդակագործութեան մանրամասների, Վաչագան Բարեպաշտի մասին առկա պատմական ուսումնասիրութիւնների (Բ. Ուլուբաբյան, Ա. Հակոբյան, Հ. Սվազյան) եւ զուգահեռ նյութերի համախումբ տվյալներով թվագրվում է V-VI դարերով: Հայերեն իմաստալից արձանագրութեան առկայութիւնը, որ եւ Վաչագան Բարեպաշտի անձի պատմականութիւնը թե հայերեն լեզվի տիրապետող կողմն է ապահովում առարկայական կարեւոր վավերագիր է Հայոց Արեւելից կողմում հայ էթնոսի գերակայութիւնը հաստատա-

1 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, ԲԸՃԱԿԱՃ քՃԱ-գիրը եւ Անբաժութիւնը Վ. Առաքելյանի, Եր., 1983, գլ. Ա.իգ, էջ 86:

2 Նույնտեղում, գլ. Ա.իա, էջ 69:

զրեւու համար: Այն, ինչպես եւ Աղուանքին վերաբերող կնքադրոշմները, կարեւոր սկզբնաղբյուր են տարածաշրջանի պատմութեան դավանաբանական եւ այլ հիմնախնդիրներ լուսաբանելու համար:



«Էթնիկական օգնության» պատմա-քաղաքական
պատճառաբանությունը (Շամախու Գարդման – Գեոկչայի գավառ
– Իսմայիլիի շրջան)

Ղարաբաղյան հակամարտության ընթացքում խորհրդային Ադրբեջանի տարածքում ապրող հայերի եւ խորհրդային Հայաստանի տարածքում ապրող ադրբեջանցիների 1988-1989 թթ. զանգվածային «տեղափոխության» ընթացքը համապատասխանաբար Ադրբեջանից Հայաստան եւ Հայաստանից Ադրբեջան վերլուծականներում չըջանցված թեմա է: Իր ողբերգականության մեջ եւ դաժանության մեջ գիջելով 1988 թ. Սումգայիթի, 1990 թ. Բաքվի հայկական ջարդերին եւ 1991 թ. «Օղակ» («Կոլցո») օպերացիային, այդ «տեղափոխության» մանրամասներն անհամեմատ քիչ են հայտնի:

Հայ-ադրբեջանական վերջին հարյուրամյակի կոնֆլիկտի առավել ցցուկ դրսևորումները տարբեր փուլեր այս կամ այն կերպ ազդել են եւ/կամ դրանց այս այն կերպ մասնակցել են նաեւ կոնֆլիկտի ուղղակի կողմ չհանդիսացող, բայց կոնֆլիկտի աշխարհադրական տարածքում ապրող ժողովուրդներ կամ ժողովուրդների ներկայացուցիչներ, ինչը համարյա ամբողջովին դուրս է մնացել վերլուծություններից: Դրանք, սակայն, պատահական մասնակցություններ չէին/չեն: Առնվազն 20-րդ դարի հակահայկական բոլոր ազդեցիվ գործողություններն Այսրկովկասում տարածվել են, օրինակ՝ նաեւ Ադրբեջանում ապրող ուղիների վրա¹, իսկ 1988-1989-ին արդեն չափազանց փոքրաթիվ ուղիների կեսից ավելին հարկադրված եղան լքել իրենց հայրենիքը, մյուս կեսն էլ ստիպված է Ադրբեջանի պաշտոնական ձեւակերպումներին անընդհատ եւ բարձրաձայն «պատմական եւ ներկա հավատարմություն» հաստատել ուղիների անցյալի եւ ներկայի մասին, իսկ ադրբեջանցի մասնագետ պատմաբանները գրավոր սրբագրում եւ տիրաժամվորում են այդ

¹ Տե՛ս Խառատյան Հ., Ուղիների ողիսականը 18-19-րդ դդ. (Պատմություն, Էթնիկ գոյատեւում, ինքնահաստատում), – «Հայոց մեծ եղեռն-90», Եր., 2005; Աուզնի՝ Ուղիների կրօնը եւ փաստալիքները ԺԹ-ի դարերում, – ՀԱ, Վիեննա-Եր., 2010, սն. 435-495; Харагян Г., Удины: крах всех усилий самосохранения, Москва, 2015.

«Հավատարմությունը»¹: Թվում է՝ ուղիները մասնավոր դեպք են, նրանց մի մասը շարունակում էր մնալ Հայ Առաքելական եկեղեցու Հետեւորդ, նրանց համարում են Կովկասյան Աղվանքի ուղղակի ժառանգորդ² եւ նրանց նկատմամբ Ադրբեջանի պաշտոնական քաղաքականութունն ու քարոզչությունը զգալիորեն պայմանավորված է թե՛ նրանց պատմության «հայկական անցյալով», թե՛ քրիստոնեության պահպանության փաստով, թե՛ ադրբեջանական պատմագրության մեջ ադրբեջանցիների էթնիկական ծագումնաբանության «աղվանական բաղադրիչի» վարկածով, թե՛ Ադրբեջանի մյուս կովկասայեզու էթնիկ միավորների մեջ ուղիների մշակութային մեկուսացվածութամբ են:

Կան, սակայն, նաեւ «այլք», մասնավորապես կովկասայեզու սոււնիները եւ իրանայեզու շիաները, որոնք 1905-1907-ին եւ 1918-1920-ին հնարավորինս չմասնակցեցին Այսրկովկասի թյուրքայեզու շիաների եւ օսմանյան սոււնիների կողմից իրականացվող ջարդերին, եւ բազմաթիվ անհատ մարդիկ կամ խմբեր, ովքեր փորձեցին օգնել հայերին: Մենք չենք քննարկել այս հարցը, մինչդեռ այն, կարծեմ, շատ կարեւոր էր/է հասկանալ: Վերջին՝ 1988-1990-ին Բաքվի, Սոււմգայիթի եւ այլ վայրերի ծայրահեղ ծանր իրավիճակներից փրկված հայերի պատմություններում հաճախ հիշվում են հարեւանի, գործընկերոջ, ծանոթի... օգնությունները, որոնք բերթե միշտ էթնիկական պատկանելության տեղեկություն են պարունակում. «մեր հարեւանը թալիշ էր, մեզ իր տանը թաքցրեց...», «էս լեզգիները եկան ասեցին՝ ավելի լավ է ժամանակավորապես գաք մեր տուն...», «իմ աշխատակիցը թաթ էր, ինձ մեքենայով տարավ...» են:

Բազմաթիվ օրինակներից մեկն է Ադրբեջանի Վարդաշենի (այժմ՝ Օղուզի) բազմազգ (ադրբեջանցիներ, ռուսներ, հայեր, լեզգիներ, ուղիներ, հրեաներ...) շրջանի ձալեթ գյուղից Բաղդասարյան Լեւոնի պատմությունը: 1918-1920-ի կոտորածներից հետո ձալեթը Վարդաշենի շրջանում մնացած միակ հայկական գյուղն էր: 1988-ին ձալեթի տարահանման ժամանակ Բաղդասարյան Լեւոնը տարեց մարդ էր: ձալեթցի Վաղինակ Գրիգորյանը պատմում է. «Մեր ռայոնումը ազգեր շատ կային, բայց մենակ Հայ ազգի հետ ա հտ ընդհարումը, ոչ մի ազգի հետ էլ գործ չունեին... Լյազգիներ կային մեզ մոտ, նրանք էլ էին մուսուլման,

¹ Джавадов Г., Гусейнов Р., Удины: историко-этнографическое исследование, Баку, 1999 (ադրբեջաներեն):

² Նույնիսկ աղուսներն այբուբենով գրված կրկնազիր ձեռագիրը թարգմանվեց ուղիներնի միջոցով, տե՛ս Jost Gippert, Wolfgang Schulze, Zaza Aleksidze, Jean-Pierre Mahé, The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai, Vol. I-II, Brepols Publishers n.v., Turnhout, 2008.

բայց դե նրանք յավ էին, նրանք ոչ մեկն էլ չէին ուզում խառնվեն, ասենք թուրքի [ադրբեջանցու] կողմը պահի, թե հայի կողմը պահի, իրենք խաղաղության կողմն էին... Գյուղի բնակչության դուրս գալու ժամանակ ոնց է պատահել՝ Բաղդասրյան Լեւոնին մոռացել են: Ուրեմն մի կնիկ ա, մի մարդ, արդեն ի վիճակի չէին, ծեր էին, դրանք իրանց տանն են մնացել: Էտ մարդին թող են արել, դուրս եկել: Էտ սովխոզի դիրեկտորը, լյազգի էր ինքը, գնացել ա, թե որտեղից ա լսել, որ էսինչ մարդը մնացել է, իրա վիլիսը քշել ա, հասցրել էտ մարդին բերել նստեցրել ավտոբուս, ասել «էս մարդին էլ տարեք»: Ու իրա ապրանքին էլ տեր ա կացել, հետո էլ ուղարկել տիրոջը՝ Հայաստան: Բաղդասրյան Լեւոնը հիմա չկա, մահացել ա էստեղ: Էդ Լեւոն դային էրկու անգամ ա թուրքից փրկվել: Դրա պատմությանը սաղ մեր գյուղը վկա ա: Ուրեմն առաջինը էտ թվերին ա եղել՝ 18-20-ին: Ուրեմն էտ կոտորմունքի դեպքումը ջահել տղերք են եղել, նենց ա եղել թուրքերի ձեռն են ընկել: Իրանք էլ՝ էտ թուրքերը, զուտ դանակով են եղել, երկուսի վիզը կտրել են, իրա վիզը կտրելիս դանակը կոտրվել ա: Թուրքը մինչեւ վերջ որ չի կարացել մորթի, թողել ա գնացել, դե ասել ա արդեն կմեռնի: Հետո տարել են գյուղ, պահել են, լավացել ա ու էտքան երկար էլ ապրել ա: Եկավ ըստեղ մահացավ: Ինքն էլ հետո ժիվոյ պատմել ա, սաղն էլ լսել են: Էտ մարդի ըստեղը (ցույց է տալիս վիզը) կտրած էր: Էտ դեպքից հետո նորից էտ գյուղումը ինքը տուն ա սարքել, տղա պսակել, տղի համար տուն ա սարքել, էլ չի ասում, որ դե փրկվել եմ, աշխարհքը մեծ ա, դուրս գամ մի կողմի վրա գնամ: Հայաստան ա, թե որտեղ ա, մեկ էլ չի թուրքը վիզս կտրի: Հասել ա էս պահին, որ լյազգին ա իրան փրկել, դրել ա մեքենան, ուղարկել ըստեղ: Ինքը իմ հոր քեռու տղան ա»¹:

Մեկ այլ առիթի թողնելով օգնության կամ ցավակցության «էթնիկական պատումի» օբյեկտիվության կամ սուբյեկտիվ ընկալումների քննարկման ծավալուն հարցը, այստեղ Ադրբեջանի Իսմայիլիի շրջանի երեք հայկական գյուղերի 1988-1989-ի տարհանման որոշ մանրամասների օրինակով փորձենք անդրադառնալ հիշյալ խնդրի կոնկրետ դրսեւորումներին:

1988 թ. նոյեմբերի 23-ին հարձակում է եղել Իսմայիլիի շրջանի Քալբանդ հայկական գյուղի վրա: Հարձակվողները քաղաքացիական անձինք էին, ըստ պատմողների, հավանաբար ոչ հեռավոր գյուղերի տղամարդիկ. «Եկել են, գենքով մտել են, փոքր մեքենաներով ու ավտոբուսներով: Մարդ չեն սպանել, բայց կրակում էին... Մենք գյուղի ներքեւի մասով փախել ենք ձորը: Մեր գյուղում համարյա երիտասարդներ

¹ 1950 թ. ծնված վաղիցակ Գրիշայի Գրիգորյանի հետ 2007-ի հուլիսի 4-ին Աղավ-նավանք գյուղում գրուցել եւ պատմությունը գրանցել է Արսեն Հակոբյանը:

չկային, մեռնող գյուղ էր, բոլորն արտագաղթում էին: Հիմնականում տարեցներ էին: Գյուղում միայն մի քանի մարդ չհասցրեց փախչել, դրանց շատ ծեծել են, տան գույքը ջարդ ու փշուր են արել: Մենք փախանք այգիները, Երիշեն [իմա՝ Վերիշեն – Ն. Խ.] գյուղ կար այնտեղ, [19]15 թ. փախեփախի ժամանակ՝ այդ գյուղն ավերել ու հրդեհել էին, մնացել էին ավերակները, Հին գյուղ է կոչվում, գնացինք այդ ավերակները: Այդ գիշեր տղամարդիկ կրակ բերեցին, ծառերի տակ փոքր երեխաներին հավաքեցինք, մի փոքր տաքացանք: Մի կերպ լուսացրինք, բայց սոված ենք, բոլորը փախել էին մի հագուստով, խուճապի մեջ ուտելիք էինք վերցրել: Առավոտյան ջահելները թաքուն գյուղ գնացին, տներից մի քիչ ուտելիք բերեցին, ջուր բերեցին: Մի քանի օրից հետո մեր շրջանի ղեկավարները եկան, մեզ գտան, թուրքեր [ադրբեջանցի] են բոլորը, մեջները հայ չկա: Եկել են այդ ղեկավարները, մեզ ասում են՝ «մի՛ վախեցեք, դե ոչինչ, որ եկել են ձեզ ծեծել են, բայց հո չեն սպանել: Վերադարձե՛ք ձեր գյուղը, մենք մեքենա կտանք, ինչ որ կարող եք՝ վերցրե՛ք, գնացե՛ք Հայաստան»: Ոչ պաշտպանել, ոչ օրենք, ոչ մի բան: Ի՞նչ կարող էինք անել, դեկտեմբերի 1-ին գյուղից դուրս եկանք: Մինչևե այդ մնացել ենք անտառներում, վախենում էինք գյուղ գնալ... դեկտեմբերի 1-ին եկել ենք... տասնմեկ օր մնացել ենք էդ անտառներում, տասնմին օր: Հետո եկանք հավաքվեցինք, ուղիղ դեկտեմբերի մեկին ինքնաթիփ մեքենաներ բերեցին, Իջևեանի սահմանին [Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանը] մեզ թափեցին...»²:

Իսմայիլի շրջանի Ղալակահ Հայկական գյուղի տարհանման մասին պատմելով՝ Վահիկ Թավարյանը հիշում է նաև Քալբանդ եւ Գիրք գյուղերի մասին. «Մեր շրջանի Քալբանդ գյուղի վրա հարձակվել էին, գյուղացիները փախել լցվել են անտառները, մի կին նույնիսկ անտառում է ծննդաբերել... Ավտորուսը թուրքերով [ադրբե-

¹ Նկատի ունի 1918-1920 թ. Ելիզավետպոլի եւ Բաքվի նահանգների հայերի ջարդերը: Բանի որ հայոց Ցեղասպանության տարեթիվը՝ 1915-ը, գիտակցության մեջ խիստ ակտիվ է, 20-րդ դարասկզբի բոլոր կոտորածների մասին խոսելիս մարդիկ հաճախ ակամա 15 թիվ են նշում: Օսմախոս հայ բնակչության ջարդերի մասին տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 223, ց. 1, գ. 106, թ. 7: ԲՇօրինակ, ձեռագիր: ֆ. 278, ց. 1, գ. 32, թ. 23: Պատճեն, ձեռագիր: Հրատարակված է՝ «Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.»: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածո, ՀՀ Պատմության արխիվ, Եր., 2003: Կոնկրետ Գեոլոգիայի գալվա-
նի մասին տե՛ս էջ 18, 33, 37, 237, 263, 265, 276, 306, 322, 323 եւ:

² Քալբանդ գյուղացի Մարգարիտա Ավանեսի Քոչարյանի հետ ՀՀ Արմավիր քաղաքում (Հայրենյաց փողոց, 26) 2006 թ. հուլիսին գրուցել եւ նրա պատմածը գրանցել է Ա. Հակոբյանը: Պատմողը մի փոքր շփոթում է թվերը. եթե անտառ փախել են նոյեմբերի 23-ին եւ տեղափոխվել դեկտեմբերի 1-ին, ուրեմն անտառում մնացել են 8-9 օր:

Ջանցիներով] լցված հարձակվել են Գիրք գյուղի վրա¹, որպեսզի բռնի տեղահանեն: Գյուղում Ալյոշա անունով մարդ կար, որսորդական հրացանից կրակել էր ավտոբուսի վրա, դրանք էլ սկսում են ավտոբուսից կրակել: Ալյոշան դիրք է մտնում քարի հետեւը, բայց վիրավորվում է: Բայց թուրքերը վախենում են, ետ են վերադառնում: Դրանից հետո Գիրք եւ Քյալբանդ գյուղերի բնակիչները մի շարքից ավելի մնում են անտառներում: Իրենց հենց անտառներից էլ տեղափոխեցին, բայց Ղազախում ավտոբուսներից իջեցրին: Ղազախում դրանց ահավոր ձեծի են ենթարկել... Մեր գյուղ [Ղալակա] էլ շրջանի ղեկավարութունից շուտ-շուտ գալիս էին, երկու ամիս համարյա միշտ գալիս գնում էին: Ռայկոմի քարտուղարը, միլիտեր... Գալիս ասում էին «մենք չենք կարող պատասխան տալ ձեր կյանքի անվտանգության համար, իրադրությունը լավ չի: Մենք միայն կարող ենք ձեզ մինչեւ հարեւան շրջանը ուղեկցել, որպեսզի դուք դուրս գաք: Մեքենաներ տրամադրենք ինչքան կարողանում ենք, որպեսզի մեր շրջանից դուրս գաք առանց կոնֆլիկտի»: Գնում գալիս էին, որպեսզի ժողովրդին համոզեն, հավաքում էին գրասենյակում, համոզում էին դիմում գրել, որ իբր մեր հոժար կամքով բնակչության վայրը փոխում ենք: Դե, ովքեր գրել են, ովքեր չեն գրել: Անձամբ ես չեմ գրել, շատ մարդիկ կան, որ չեն գրել: Արդեն տեսնում ենք, որ Սովետական Միության ոչ մի օրենք չի գործում, ոչ մեկի կողմից ոչ մի օգնություն չենք կարող սպասել: Տեսնելով, որ իրադրությունը շատ է սրվում, նոյեմբերին մեր գյուղում՝ Ղալակայում ոնց որ կոմիտեի նման մի բան ստեղծվեց, ինքնապաշտպանության համար: Կոլխոզը քանի որ մեծ տնտեսություն էր մեր մոտ, տեխնիկա ուներ, տրակտոր, բուլդոզեր..., գիշերը դրանցով փակում էինք գյուղ մտնող ճանապարհը եւ մարդիկ հսկում էին: Որսորդական հրացաններ կային: Շրջկենտրոնից ուղել էին այդ տեխնիկան տանել, բայց մենք

¹ Հայկական սովետական հանրապետությանի հտ. 3, էջ 89-ում կարդում ենք, որ Իսմաիլիի շրջանի Գիրք գյուղում են ծնվել Բաքվի կոմիսարներից Ա. Մ. Ամիրյանը եւ Թ. Մ. Ամիրովը, բայց իրականում Թ. Ամիրովը դաշնակցական էր, և 1918 թ. սեպտեմբերի 14-ին Բաքու բուրք-մուսավաթական համատեղ գործերի մտնելու օրը հեռաց նրա նախով են փախել հայտնի Բաքվի կոմիսարները: Այդ մասին հետազայում պատմել է Ստեփան Ծափույանի քարտուղարուհի Օ. Ծատուրով-սկայան. ««Թուրքմեն» ջերմանավում դաշնակ թաղետու Ամիրովի ջոկատն էր տեղավորվում, իսկ մեր խմբում նրա եղբայր Արսեն Ամիրովն էր՝ «Բակինսկի ռաբոչի» թերթի խմբագիրը: Նստում են այդ նախը: Մերոնք բոլորը, այդ թվում Միկոյանը: Իսկ մենք՝ երիտասարդներս, քսան հոգի, մնում ենք» («Об ушедшем веке рассказывает Ольга Шатуновская»), Составители: Д.ж. Кутыина, А. Бройдо, А. Кутыин, Берлин, Лага, 2001, с. 43-44, <http://www.sakharov-center.ru/asfcd/auth/?t=page&number=1698>).

չթողեցինք, միայն վերջին պահին ենք դրանք թողել: Մեծից փոքր անցել էինք պաշտպանության, ամեն մարդ գիտեր, թե ինքը երբ եւ որտեղ պիտի կանգնի, հակի: Մեր գյուղը պատմական գյուղ էր, 1918 թ. ջարդերի ժամանակ թուրքերից շատ է ինքնապաշտպանվել, փորձ ունեինք: Մենք երկու հայկական գյուղերի՝ Նորչենի եւ Ուշտալի հետ մի գծի վրա էինք, միմյանց հետ պայմանավորվել էինք: Նախկինում այդ երեք գյուղերը մի ընդհանուր կոլխոզ էին, 1988 թվին անջատեցին, ամեն գյուղի վրա մի կոլխոզի նախագահ դրին: Իմաստն էն էր, որ իրար հետ չչփվեին, երեք գյուղի միասնությունն չլինի¹: Մենք էլ պայմանավորվել էինք, որ եթե հանկարծ հեռախոսակապը կտրվի, գիշերները հարձակումների մասին խարույկ վառելով միմյանց լուր տանք: Խաղողի չոր ճյուղերը դարսել էինք, կողքը շոով բենդին դրել, վտանգի դեպքում վառելու եւ միմյանց օգնելու համար: Ցերեկը վտանգավոր է էր, թե՛ մենք կտեսնեինք, թե՛ հարեւան գյուղերից լուր կտային: Հարեւան գյուղերում թուրքերի չկային: Մալականների գյուղից՝ Իվանովկայից գանգում էին: Մալականները: Եղել է ավտորուսներ լցված թուրքերը [ադրբեջանցիները] եկել են մինչեւ այնտեղ, բայց Իվանովկան կանգնել է, ասել է չգիտի գնաք, եթե գնաք էլ՝ իրենք պաշտպանվում են, չեք իմանում, թե վերջն ինչ կլինի: Երկու-երեք անգամ ամբողջ գյուղը տրեփոգ [տագնայա] է բարձրացել, գիշերվա կեսին երեսեքին, ծերերին ասել ենք՝ դուք գնացեք ձորը: Իայց լույսերը էջինք հանգցնում, որ իմանան տներում մարդ կա, իսկ տղամարդիկ մնում էին պոստերում:

Ուղղակի մեր շրջանը բազմազգ շրջան էր, դա թուրքական [ադրբեջանական] շրջան է էր, թուրքական գյուղերը մատների վրա կարելի էր հաշվել, երեւի մի չորս-հինգ հատ կլինեին: Ընդհանրապես մինչեւ Շամախի, Շամախուց այն կողմ, թե այդտեղ ադրբեջանցի կոչեցյալը եղել է՝ չգիտեմ, բայց էդ տարածքում, մեր ապրած տարածքում ընդհանրապես թուրք բառը գոյությունն չի ունեցել: Հիմնականը իհարկե հայերն էին, 14 գյուղ կար հայկական, կար մի հատ մալականների գյուղ, կար մի 4-5 հատ լեզգիների գյուղ, մի հատ լահիճ կոչվող ազգություն գյուղ կար, եւ երկու գյուղեր կային, ես ընդհանրապես չգիտեմ, թե դրանց պատմության մեջ ինչպես են կոչում, մենք հափտու/հափթու էինք ասում, հափթու [իմա՝ հափութլիներ - Ն. Խ.]: Դա

¹ Խորհրդային Ադրբեջանում Իսմայիլի շրջանի Ղալախ գյուղը պաշտոնապես անվանվում էր Քալազյահ, որտեղ գտնվում էր Քալազյահի գյուղական խորհուրդը՝ որպես ընդհանուր համայնքային միավոր ընդգրկելով Քալազյահ, Սուլթանքենդ, Ուշտալ եւ Ուշտալըշլաղ գյուղերը (Калагяхский сельсовет - с. Калагях, с. Солтанкенда, с. Ушта, с. Уштакышлак). Ст'а Азербайджанская ССР, Административно-территориальное деление на 1 января 1977 года, Баку, 1979, с. 49.

շատ փոքր ժողովուրդ է, միայն Ադրբեջանում կան, երկու գյուղ Իսմայիլիի շրջանում են, երեւի մեկ էլ Ղուբայի շրջանում Հափթունների մի հատ գյուղ կար... Հափթունները մեզ օգնել են, նույնիսկ երեխաներին մի քանի օրով տարել իրենց տնտեսում պահել են, մինչեւ վտանգը անցնի: Մի անգամ էլ գիշերը Մոլլա Սալլի գյուղի Հափթուններն իրենց մեքենայով եկան, կանանց ու երեխաներին տարան իրենց գյուղ: Հափթունները մեզ աջակցում էին, թե՛, ասենք, ինֆորմացիայով, թե՛ իրենց տեխնիկայով: Տեխնիկան, օրինակ՝ ամենագնաց, «Վիլիս» որ ասում ենք, այդ մեքենայից, օրինակ՝ բերեցին: Մարդիկ կային, գալիս էին մեզ հետ, անգամ մինչեւ առավոտը պոստում կանգնում, մարդկանց հետ զրուցում, հոգեբանորեն տրամադրում էին, որ չվախենան, խուճապի չենթարկվեն, քանի որ հարձակում լինելու դեպքում նախ իրենց գյուղերով պետք է անցնեին: Նրանք զգուշացնում էին թուրքերին, որ մեր գյուղով հանկարծ ոչ մեկը չգա, որովհետեւ մենք չենք թողնելու, որ անցնեն: Ճիշտ է, իրենք էլ էին մուսուլման, բայց արտաքինով տարբեր էին, կապույտ աչքերով, սպիտակ մաշկով, թուրքերի նման սեւ չէին, եմիշբաշ¹ չէին մի խոսքով:

Կամ թեկուզ լեզգիներ կային, մեր հետ էլ ապրողներ կային: Մեր գյուղում 15-20 ընտանիք լեզգի կար: Հայերեն էին խոսում էդ մարդիկ, Հայերի հետ մերված: Ճիշտ է, սկզբում գյուղում չէին բնակվում, բայց հետագայում, 1960 թվից հետո, արդեն գյուղի մի ծայրամասում իրանց հող էին հատկացրել, իրենք որպես մի թաղ ապրում էին: Գալիս էին մեզ հետ պոստերին [պահակակետ] կանգնում էին: Դե գզում էին, որ իրենք փոքրամասնություն են, համախմբվում են, երեւի դրանից էր, թե ինչ, շատերը հայերեն էին խոսում: Լեզգիներն արդեն մի մասը չեզոք էին, բայց ովքեր սերտորեն կապված էին հայերի հետ, դեպքերի [հայ-ադրբեջանական կոնֆլիկտի] ժամանակ նրանք ինչով կարողացել են՝ աջակցել են: Այդպես մնացել ենք մինչեւ 1989 թ. փետրվար ամիսը, մինչեւ իրենք էլ [իշխանությունները - Հ. Խ.] համոզվեցին, որ մենք հենց այնպես չենք գնալու, մեքենաներ բերեցին, եւ մենք շարասյունով դուրս եկանք: Տները, անասունները թողել ենք: Մենք, երեւի, Ադրբեջանի հայկական գյուղերից վերջին դուրս եկողներն ենք եղել: Արդեն Կիրովաբադի հայերն էլ էին գնում: Արդեն լսել էինք, որ բոլոր հայկական գյուղերը գնացել են, Շամխորի, Խանլարի... շրջաններում այլեւս հայություն չկար: Հետո, գաղթից հետո, ոմանք ետ են գնացել, հարցեր են ունեցել լուծելու, թեկուզ տան փոխանակություն, թեկուզ պարտքեր են ունեցել, տարբեր կարիքներ: 1989 թ. ընթացքում դեռ գնալ-գալ կար: Ես էլ եմ երկու անգամ գնացել: Մեր տեղի լեզգիները,

¹ Սեխագլուխ, երկրագլուխ:

Հափթուները կրկին օգնում էին: Իրենց տներում պահում էին, կերակրում էին, չէին թողնում որեւէ մեկը ձեռք բարձրացնի: Թաքուն էին պահում, ճիշտ է: Քանի որ այդ գյուղերում գաղթից հետո արդեն Հայաստանից տեղափոխված թուրքեր էին, նրանք չէին ճանաչում, թե իրար հետ մաս եկող այդ մարդիկ Հայ են, լեզգի են...»¹:

Այսպիսով, 1988-1989 թթ. Հայ բնակչության տարահաման մասին Իսմայիլիի շրջանի Հայերի բանավոր հիշողությունը պահպանել է Հայերին սպառնացող «թուրքեր» (աղբբեջանցի), օժանդակած կամ օգնած «մալականներ» (ռուս), «լեզգիներ», եւ «Հափուլթներ» էթնանունները եւ չեզոք «Լահիճ» բնակավայրի անունը: Ուշագրավ է, որ թե՛ սպառնացող կողմը՝ «թուրքեր», թե՛ օգնող կողմը՝ «մալականներ» (ռուս), «լեզգիներ», «Հափուլթներ», անձնավորված չեն, դեպքի հիշողության կողմը դերակատարներին որպես անձ չի ներկայացնում, նրանց գործողությունները «անձնային» չի համարում, այլ՝ որպես էթնիկական Հավաքականության վարք, գործողություն: Նույնն է պարագան նաեւ իշխանության ներկայացուցիչների դեպքում. չնայած խոսքը գնում է ազգամիջյան Հակամարտության մասին, իսկ բազմազգ տարածքում տեղական իշխանություններն, ամենայն Հավանականությամբ, կոնկրետ ազգերի ներկայացուցիչներ էին, այնուամենայնիվ նրանց գործողությունները ներկայացված են իբրեւ պաշտոնների, այլ ոչ թե անձերի գործողություն. «...շրջանի ղեկավարություն», «ռայկոմի քարտուղար», «միլիտ», «կոլտոզի նախագահ» բառերին անձնանուններ կամ ազգային պատկանելություն չի ուղեկցում, նրանք դիտված են որպես իշխանության ներկայացուցիչ: Ակնհայտ է, որ պատմողի պատկերացմամբ Հայերի նկատմամբ առկա էր իշխանության քաղաքականություն, որի կատարողները տեղական իշխանություններն էին, բայց ընդհանուր քաղաքականությունը հրապարակ էր բերել ազգերի դիրքորոշումներով պայմանավորված գործողություններ, որոնցում բոլորը էթնիկական դերակատարում ունեին. թուրքերի էթնիկական դերակատարումը սպառնալն էր, Հայերի էթնիկական դերակատարումը՝ պաշտպանվելը, մալականների, Հափուլթների եւ լեզգիների էթնիկական դերակատարումը՝ Հայերի ինքնապաշտպանությունն օժանդակելը/օգնելը:

1988-1989 թթ. իրադարձություններին կոնկրետ Իսմայիլիի շրջանի էթնիկական խմբերի դերաբաշխումը պայմանավորված էր հիշյալ խմբերի էթնիկական ինքնությունամբ, պատմական ոչ վաղ անցյալի իրադարձությունների հիշողությամբ եւ ընթացիկ հարաբերություններով: Քանի որ դերակատարների մեջ հիշատակված է Հայ Հանրությունն ան-

¹ Վաչիկ Թավադյանի հետ ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք գյուղում 2006 թ. հունիսի 5-ին գրուցել եւ նրա պատմածը գրանցել է Արսեն Հակոբյանը:

ծանոթ «Հափութներ»/«Հափթուներ» կամ, ինչպես դրականության մեջ ընդունված է գրել Հափութլիներ էթնո-լեզվական միավորը, մի քանի խոսքով հարկ կա ներկայացել նրանց: Հափութլիները արեւելակովկասյան լեզգիական խմբի Հափութլիներն լեզվով խոսող խումբ են, որոնց լեզուն առավել մոտ է համարվում Հափութների հետ միասին Ադրբեջանի Շահ-դաղ լեռան վրա ապրող կրիզների եւ ջեկերի լեզվին, եւ այս երեք խումբը նույն լեռան վրա ապրող խինալուդների, ալիկների, երգյուջների հետ միասին սովորաբար ներկայացվում են միասին որպես «չահդաղյան խմբի ժողովուրդներ»: Ըստ ադրբեջանցի հետազոտող Մ. Փաշաեւայի, ներկայումս Հափութները ցրված են Ադրբեջանի Խաջմասի, Իսմայիլի, Ղաբալայի, Աղդաշի շրջաններում¹: Տարածված կարծիք կա, որ «Հափութ»/«Հափթու» նրանց անվանում են իրենց գլխավոր բնակավայրի Հափութի անունով, մի երեւոյթ, որ շատ տարածված է Կովկասում²: Ադրբեջանի վարչա-տարածքային բաժանումների մասին 1977 թ. տեղեկատուի համաձայն՝ Հափութ (Haput, Гапут) անունով գյուղ կա Ղուբայի շրջանում (Аликский сельсовет, – с. Алик, с. Джек, с. Гапыт, с. Кырыз, с. Кырыздахна)³, Հափթլի անունով մեկ այլ գյուղ՝ Իսմայիլի շրջանում (Кюрдамашинский сельсовет, – с. Кюрдамашы, с. Ашыгбайрамлы, с. Гапитылы, с. Каракеллук, с. Талыш)⁴: Թուսալեզու դրականության մեջ հանդիպում են Հափութների անվան «գապուտ», «գապուտլի», «գապուտլիներ», «խապուտ», «խապուտլիներ», «խապիտ», «կապրտ», «կապրտներ» ձևերը (гапут, гапит, гапутайны, хапут, хапутайны, хапит, капыт, капытцы): Ադրբեջանցիներն օգտագործում են haputular, hapitlar (Հափութլուներ, Հափիթներ) ձևերը: Իսկ եւ կօգտագործեմ անվան «Հափութ», հոգնակին «Հափութներ» ձևերը:

Ըստ ռուսական աղբյուրների 19-րդ դ. առաջին կեսին Ղուբայի գավառում կար Հափութական 4 բնակավայր⁵, Գյոքչայի եւ Շամախու

¹ Пашаева М. Т., К этнической истории «шахдагских народов», – «Albania Caucasic», I, Москва, 2015, с. 149.

² Харатян Г., «Алванские этнонимы» армянских источников в современной ономастике лезгиноязычных групп, – «Albania Caucasic», I, Москва, 2015, с. 160-171.

³ Азербайджанская ССР, Административно-территориальное деление на 1 января 1977 года, с. 61.

⁴ Նույն տեղում, էջ 49:

⁵ Ягодынский П. Н., Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии, – МИЭБГКЗК, т. II, ч.1, Тифлис, 1884, с. 166.

գավառներում՝ 5 բնակավայր¹, Նուխիում (Շաքի)՝ 2 բնակավայր²: 19-րդ դ. կեսերին Հափուլթների մի մասը բնակութուն է Հաստատել այսօրվա Իսմայիլիի ու Աղդաշի շրջաններում եւ հիմնել Հափուլթու-Մելիքու, Հափուլթու-Հեթեւ-Ղաջար, Հափուլթու-Մուլլա Իսաղլի եւ այլ բնակավայրերը³: Մ. Փաշաեւան դրանց ավելացնում է նաեւ Հափուլթ, Ղարադաղ Հափուլթ, Շրխ Հափուլթ բնակավայրերը⁴: 19-րդ դ. 80-ական թթ. Մուշկուրում ապրում էին 1433 Հափուլթներ⁵, իսկ Գեոկչայի եւ Շամախու գավառներում՝ 710⁶: Բրոկհաուզ-եֆրոնի Հանրագիտարանի տեղեկութուններով՝ Ելիզավետպոլի նահանգում 1886 թ. Հափուլթները կազմում էին բնակչության 0,21%-ը (1520 մարդ), իսկ Ղուբայի եւ Բաքվի նահանգներում՝ 1,2%-ը (2100 մարդ)⁷: Խորհրդային Ադրբեջանի պաշտոնական մարդահամարների ցանկերում Հափուլթների անունը երբեք չի ընդգրկվել, բայց ըստ այլ աղբյուրների՝ նրանք իրենց ազգակից կրիզների եւ ջեկերի հետ միասին 2005-ին Ադրբեջանում 10-15 հազար են կազմել⁸:

Հետազոտողները Համակարծիք են, որ Հափուլթները Կովկասյան Աղվանքի էթնիկ միավորներից մեկն են: Մ. Փաշաեւան նշում է, որ Հափուլթ նրանց անվանում են «դրսեցիները», իրենք՝ Հափուլթներն ինքնանուն ունեն «էր (հէր)», իսկ Հափուլթներին ազգակից արիկները

1 Абелов Н. А., Экономический быт государственных крестьян Геокчайского и Шемахинского уездов Бакинской губернии, – МИЭБГКЗК, т. VI, ч. 2, Тифлис, 1887, с. 15.

2 Арасханианц А. А., Экономический быт государственных крестьян Нухинского уезда Елисаветпольской губернии, – МИЭБГКЗК, т. VI, ч. 1, Тифлис, 1887, с. 19.

3 Ягодьинский П. Н., Նշվ.աշխ., էջ 166; Трубецкой В. В., Бахтияры. Этнические процессы и состав населения в странах Передней Азии, Москва-Ленинград, 1963, с. 150, 155.

4 Пашаева М. Т., Նշվ.աշխ., էջ 149:

5 Списки населенных мест Российской империи, т. 65, Бакинская губерния, Тифлис, 1870, с. 96.

6 Абелов Н.А., Նշվ.աշխ., էջ 15:

7 Российские универсальные энциклопедии Брокгауз-Ефрон и Большая Советская энциклопедия, объединенный словарь, http://gatchina3000.ru/big/056/56804_brockhaus-efron.htm.

8 John M. Clifton, Janfer Mak, Gabriela Deckinga, Laura Lucht, and Calvin Tiessen, «The Sociolinguistic Situation of the Kryz in Azerbaijan» – <http://www-01.sil.org/silesr/2005/silesr2005-006.pdf>; <http://istovjyavtor.tk/naxsko-dagestanskienarody/kryzyz#more-184>; <http://istovjyavtor.tk/structure/naxsko-dagestanskienarody>.

նրանց անվանում են «Հորուզ», ջեկերը՝ «Հերուզ»¹: Խորհրդային մեծ Հանրագիտարանում Հափուլթների (хапутинцы) ինքնանունը ներկայացված է «Հերադ» ձևով²: Քանի որ «ուզ»-ը պատկանելության ցուցիչ վերջածանց է, Մ. Փաշաեան, հետեւելով Գ. Գեյբուլաևին³, հարավոր է համարում Հափուլթների «էր»/«հէր» ինքնանունը բխցնել պատմական աղբյուրներում հիշատակվող «էրեթի», «Հերեթի» տեղանունից եւ Հափուլթական «էր» ինքնանունը նույնականացնել «էր[երի]» հետ, իսկ «Հերուզ»-ը հասկանալ որպես «Հեր[երի] բնակության վայր» կամ «էր-երի», «Հեր-երի» մաս, «էր-երի», «Հեր-երի» պատկանող⁴: Մ. Փաշաեան իր առաջարկը հիմնավորելու համար հղում է նաեւ շահադայան էթնիկ միավորների էթնո-ժազուլման արանական ավանդազրույցներին, որոնցում պատմվում է նրանց արեւմտյան Շաքի-Ջաքաթալայի, պատմական Հերեթի տարածքից տեղափոխության մասին⁵:

Համարվում է, որ Իսմայիլիի շրջանում Հափուլթներն ապրում են Իսմայիլի շրջկենտրոնում եւ Հափուլթու, Մոլլախասալի եւ Հաջիհամաթի գյուղերում⁶ (քանի որ նույն տեղանունները տարբեր աղբյուրներում տարբեր կերպ են հիշատակվում, օր.՝ նույն բնակավայրը հիշված է Հափուլթի, Հափուլթու, Հափուլթ ձեւերով, կամ Հափուլթու-Մոլլա Իսաղլին հիշատակված է նաեւ առանց «Հափուլթու»ի եւ «Մոլլախասալի» ձեւով, Հաջիհամաթիին՝ նաեւ Հաջիհամաթի ձեւով եւն, ուստի սույն հաղորդման մեջ թողնվում են աղբյուրներում նշված ձեւերը): Հափուլթական Մոլլախասալի գյուղը երեք այլ գյուղերի հետ միավորված էր Իսմայիլի շրջանի Հաջիգաթամլը համայնքի մեջ⁷:

Ադրբեջանական Հանրապետության ներկայիս Իսմայիլի շրջանը ձեւավորվել է Խորհրդային Ադրբեջանում՝ 1931-ին, ներառելով հատվածներ նախկին Բաքվի նահանգի Գեոկչայի (մեծ մասը), Շամախու գավառների եւ նախկին Երիզավիտպոլի նահանգի Նուխու գավառի

¹ Пашаева М. Т., Նշվ. աշխ., էջ 150: Si'u fiahi С. Сулейманова, Пограничная область в северо-западных пределах Албании, – Историко-культурологический онлайн журнал PROMETHEUS, 2010, № 5.

² Большая советская энциклопедия, т. 46, Москва, 1965.

³ Гейбуллаев Г. А., Топонимия Азербайджана (историко-этнографическое обозрение), Баку, 1986; он же: К этногенезу азербайджанцев, Баку, 1994, с. 15, 142-159.

⁴ Пашаева М. Т., Նշվ. աշխ., էջ 150:

⁵ Նույն տեղում, էջ 152:

⁶ The Sociolinguistic Situation of the Kryz in Azerbaijan.

⁷ Гаджыгатамлинский сельсовет, – с. Гаджыгатаман, с. Кюра Эльдарбейли, с. Моллаисакаы, с. Гидейли (Азербайджанская ССР, Административно-территориальное деление на 1 января 1977 года, с. 49).

որոշ տարածքներ: Այլ կերպ ասած, Ադրբեջանի Իսմայիլիի շրջանն ընկնում է 19-րդ դ. վերջին Մակար Բարխուդարյանցի կողմից նկարագրված Աղվանքի ա) Մյուս Գարդման, Շամախու Գարդման կամ Լահիճ եւ Գիրդեիման գավառ անվանված տարածքի, եւ բ) Բեխ, Բեթ, Կոկիսոն, 19-րդ դարում՝ Գեոկչայի գավառ անվանված տարածքի մեջ¹: Շրջանի վարչական կենտրոնն ընտրվել է Իսմայիլի գյուղը, որից էլ շրջանի Իսմայիլի անունը: Շրջանի բնակչությունը, ըստ 2013 թ. ադրբեջանական պաշտոնական տեղեկությունների, կազմում է 82.400 մարդ, իսկ ներկայիս բնակչության կազմի մասին ադրբեջանական տեղեկատվական փոքրերը ներում գրվում է, որ՝

- Իսմայիլի քաղաքում ապրում են ադրբեջանցիներ, լեզգիներ, թաթեր, ռուսներ, քրդեր եւ հրեաներ,
- Կուրբանէֆենդի, Իստիսու, Սումուխլի, Քալաջուխ, Ուշտալկիշլաղ եւ մասամբ Ուշտալ, Քուրդ եւ Քյուրտմաշի գյուղերում ապրում են լեզգիներ: Լեզգիներ կան նաեւ Իվանովկա գյուղում (այլ տեղեկություններով լեզգիներ են ապրում նաեւ Թոփչի, Չեմենլի, Ռուշան, Քալընջիկ, Քալաբյազ, Սուլթանքենդ, Հաջի-ահմեդլի գյուղերում),
- Լահիջ, Թալլաստան, Կարանավուր, Միջան եւ Ջուլյան գյուղերում ապրում են թաթեր (լահիճներն իրանալեզու են, բայց թաթ չեն, իրենք իրենց անվանում են «լահըլ», խոսում են լահիճերեն լեզվով – չ. Խ.),
- Հափութլի, Մոլլախասալի եւ Հաջիհամըտլի գյուղերում ապրում են կրիզներ (ինչպես վերը տեսանք, իրականում դրանք Հափութներ են, որոնց Ադրբեջանում հաճախ «միացնում» են կրիզներին – չ. Խ.),
- Քուրդ եւ Քյուրտմաշի գյուղերում բնակչության մոտ կեսը քրդեր են,
- Իվանովկա գյուղում ապրում են ռուսներ: Շատ ռուսներ կան նաեւ Ղուբախալիլի եւ Քյուլլյուլլու գյուղերում,
- Մնացած բնակավայրերում գերակշռում են ադրբեջանցիները²:
 Շրջանն ունի 1 քաղաք, 2 քաղաքատիպ ավան եւ 106 գյուղական բնակավայր՝ 67 համայնքների մեջ ներառված (համայնքն իրականում մի շարք փոքր բնակավայրերով վարչական միավոր է եւ ունի ընդհա-

¹ Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, Եր., 1999, էջ 61:

² Исмаиллинский район, <http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/590585>.

նուր գյուղական խորհուրդ)¹: Վերոհիշյալ գյուղերից Ուշտալում², Ռուշանում³, Քալաբյազում⁴ եւ Իսմայիլիի շրջանի մի շարք այլ վերոհիշյալ ցանկում չնշված, սակայն 19-րդ դ. վերջին Մ. Բարխուդարյանցի թվարկած գյուղերում, ընդհուպ մինչեւ 1988 թ. Հայեր էին ապրում, այդ թվում Կոչաքենդի Համայնքի Կոչաքենդ, Աղբուլաղ (Աղբուլակ)⁵, Թուրքեհնդ (Թուրքիշեն)⁶, Գանգա (Գանձակ)⁷ գյուղերում⁸, Ռուշանի Համայնքում⁹, Ռուշան գյուղից դատ նաեւ Վանք գյուղում¹⁰, Քալբանդի Համայնքի Քալբանդ, Գիրք (Գիրկ)¹¹ եւ Շիլքիւրչի¹² գյուղերում¹³, Քյուրդամաշի Համայնքի Աշըրբայրամլը (Նորաշեն կամ Աշուղ Բայրամ)¹⁴ գյուղում՝ լեզգիաբնակ Քյուրդամաշ եւ Հափուլթաբնակ Հափուլթու գյուղերի Հարեւանությամբ¹⁵ եւն:

Շրջանի բոլոր ազգությունների ներկայացուցիչները ադրբեջաներեն գիտեին, բայց նրանց ներքին գործածության լեզուները մայրենի լեզուներն էին՝ Հայերենը, լեզգիերենը, Հափուլթերենը, ուսերենը, լա-

¹ Բնակավայրերի անվանացանկը տե՛ս Полный список городов, населенных пунктов в регионе Исмаиллинского района, выведенных в алфавитном порядке, <http://routes.votpusk.ru/city.asp?rg=240<=%C3>

² Ուշ-Տալ, Ղալակեայ, Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 109:

³ Լոուշանա շէն, Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 106:

⁴ Քալաբա, Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 109:

⁵ Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 103:

⁶ Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 104:

⁷ Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 104:

⁸ Кошакендский сельсовет, – с. Кошакенд, с. Агбулак, с. Ганза, с. Тубикенд (Азербайджанская ССР, Административно-территориальное деление на 1 января 1977 года, с. 49).

⁹ Рушанский сельсовет, – с. Рушан, с. Ванк (Азербайджанская ССР, Административно-территориальное деление на 1 января 1977 года, с. 49).

¹⁰ Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 107:

¹¹ Գիրկ, Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 105:

¹² Շիլքիւրչի, Բարխուտարեանց Մ., Նշվ.աշխ., էջ 105:

¹³ Кельбендский сельсовет, – с. Кельбена, с. Кирк, с. Кырмызы Октябрь, с. Шукюрчу (Азербайджанская ССР, Административно-территориальное деление на 1 января 1977 года, с. 49).

¹⁴ Աշըրբայրամլը գյուղի հայկական անունը Նորաշէն էր, օգտագործվում էր նաեւ Աշուղ Բայրամ անունը (տե՛ս Բարխուտարեանց Մ., էջ 106):

¹⁵ Кюрдамашинский сельсовет, – с. Кюрдамашы, с. Ашыгбайрамлы, с. Гапыглы, с. Каракеллук, с. Талыш (Азербайджанская ССР, Административно-территориальное деление на 1 января 1977 года, с. 48).

հիճերենք, թաթերենք: Նույնիսկ միմյանց հետ շփվելիս հաճախ գործածում էին ոչ թե ադրբեջաներենը, այլ՝ միմյանց լեզուները, որը սովորում էին կենցաղային կամ աշխատանքային շփումների ընթացքում: Լեզգիները, հափութները դավանում են սուննիականություն, որը տարածվել էր արաբական տիրապետության շրջանում, եւ միշտ հակադրություն կար ավելի ուշ հայտնված թյուրքալեզուների՝ ներկայիս ադրբեջանցիների շիաականության դեմ, լահիճները եւ թաթերը շիաականության հետեւորդ են, հայերը եւ ռուսները՝ քրիստոնյա:

Ներկայիս Իսմայիլիի շրջանը որպես 20-րդ դ. սկզբի Շամախու, Գեոկչայի եւ Նուխու գավառների մաս, 1918-1920 թթ. եղել է հայկական ջարդերի գոտու մեջ, տարածքի հայերի մի մասը կոտորվել է այդ տարիներին, մի մասը՝ փախել, իսկ մնացորդները տեղավորվել էին Իրենց ավերված գյուղերի մի մասում: Թյուրքական կոտորածներից փախչող հայերի ունեցվածքը յուրացվում էր նաեւ լեզգիների կողմից, եւ հայ-թաթարական, ապա նաեւ օսմանցիների կողմից հայկական ջարդերի առանձին դրվագներ առնչվել են նաեւ տարածքի ռուս բնակչությանը: Այնպես որ լեզգիներն ու ռուսները, վստահաբար նաեւ հափութներն ու լահիճները այդ պատմությանը տեղյակ էին ոչ որպես կողքից դիտորդ կամ լսածով: Ստորեւ հղվող մի քանի փաստաթղթեր որոշ հափութ ներկայացնում են այդ ժամանակաշրջանի իրավիճակը:

Հայտնի է, որ 1917 թ. ռուսական բոլշևիկյան հեղափոխությունից հետո փաստացի քայքայվող Ռուսական կայսրության Այսրկովկասյան տիրույթում առկա կուսակցական, քաղաքական, ազգային եւ սոցիալական բոլոր քիչ թե շատ կազմակերպված կամ հրեթաց կազմակերպվող խմբերը շտապում էին իրենց իշխանությունը հաստատել: Մասնավորապես՝ թյուրքալեզու մահմեդականները ոգեւորված էին 1918 թ. գարնանը Կովկաս մտած օսմանյան զորքերի առաջընթացով եւ ռուսական, այդ թվում՝ բոլշևիկյան իշխանությունից ազատվելու գլխավոր հնարավորությունը տեսնում էին ազգակից Թյուրքիայի օգնությամբ եւ/կամ Թյուրքիայի հետ միավորմամբ: Չնայած հստակ քաղաքական հեռանկարի եւ ծրագրի բացակայությանը, Բաքվի եւ Ելիզավետպոլի թյուրքալեզու մահմեդական բնակչության առաջնորդները տենդորեն զինված խմբավորումներ էին կազմավորում եւ ամեն կերպ ջանում էին գավառներում նվազեցնել այլազգիների դիմադրության հնարավորությունները: Այլազգիներից դիմադրության վտանգ սպասվում էր գլխավորապես ռուսներից եւ հայերից: 1918-1919 թթ. Բաքվի Ռուսական ազգային խորհրդի գործիչ, Կովկասում ռուսական զորքերի իրավախորհրդատու Բորիս Բայկովը ռուսական բնակավայրերի վրա հարձակումների մասին գրում է. «1917-ի դեկտեմբերի վերջին, կարծես հրամանով, թաթարական բանդաները սկսեցին ծաղկող վերին Մու-

ղանի ջարդը: Ջարդվեցին-թալանվեցին մոտ 30 հարուստ գյուղեր: Այդ ջարդն այնքան անսպասելի սկսվեց, որ ռուս բնակչությունը համարյա ոչ մի դիմադրություն չունեցավ: Բայց Վերին եւ Ստորին Մուղանում արդեն ոչ միայն ինքնապաշտպանություն նախապատրաստվեցին, այլև իրենց հերթին ոչնչացրին իրենց հարեւանությունյամբ կամ իրենց տարածքներում գտնվող բոլոր թաթարական բնակավայրերը: Իսկ ճակատից Մուղանի բնակիչ զինվորների վերադարձից հետո Մուղանը դարձավ զինված տարածք: Մոտավորապես նույնն էր պատկերը Գեոկչայի եւ հատկապես Շամախու գավառներում, որտեղ նույնպես ռուսական շատ բնակավայրեր կային: Ռուսական ազգային իշխանության անկումից հետո այդ գյուղական բնակչությունը որեւէ մեկի օգնությամբ չէր կարող հուսալ: Կովկասյան իշխանությունը Այսրկովկասյան Կոմիտեն զբաղված էր իր ներքին ու արտաքին ազգային խնդիրներով եւ ժամանակ չուներ այդ պահին իրեն օտար ռուս բնակչության պաշտպանություն հարցերով զբաղվելու: Կովկասյան իշխանության առաջ կանգնած էր մի կողմից հաղթանակած ռուսական բոլշևիզմի ուրվականը, մյուս կողմից ռեալ սպառնալիքը Թուրքիայից»¹:

Ռուսներն, այնուամենայնիվ, գավառներում թվաքանակով շատ էին, մինչդեռ հայերը ոչ միայն առանձին վայրերում բնակչության մեծամասնությունն էին, այլև Թուրքիայում դեռևս շարունակվող հայկական ցեղասպանությունից ազդեցություն չտալով լիարժեքորեն տրամադրված Թուրքիայի նկատմամբ, եւ խիստ անվստահություն ունեին տեղական թուրք առաջնորդների նկատմամբ: Սակայն հարեւան գյուղացիների հետ հարաբերությունները դեռևս բարեկամական էին: Բարեկամական հարաբերություն այստեղ նշանակում էր հնարավորինս ամուր լինել՝ պաշտպանվելու համար թաթար շիաների ավազակային հարձակումներից, որոնք, ինչպես ամփոփ ներկայացված է Բրոկհաուզ-Եֆրոնի չեզոք հանրագիտարանում, սովորական էին եւ հովանավորվում էին Վրոնցովի կողմից ղեկավարված փոխարքայությունում հատուկ արտոնություններ եւ իրավունքներ ստացած թաթար բեկերի եւ աղալարների կողմից²: Ավազակային հարձակումները միայն հայերի դեմ չէին, դա պարզապես կենցաղի ձեւ էր, որից սովորաբար ամենից հաճախ տուժում էին այդ պահին առավել թուլյերը: Իրավիճակն իմացող

¹ Байков Б., Воспоминания о революции в Закавказье. Առաջին անգամ հրատարակվել է «Архив русской революции», т. 9 (Берлин, 1923), տե՛ս <http://www.dk1868.ru/history/ZAKAVKAZ.htm>.

² Ст'ю Бакинская губерния, – «Энциклопедический словарь», т. 4, Издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, СПб., 1891, с. 772, <http://dlib.rsl.ru/viewer/01003924256#?page=313>).

գյուղական բնակչուկթյունը հարմարվել էր կյանքի այդ պայմաններին եւ սովորաբար տարբեր ձեւերով՝ նվերներով, կաշառքով, քիրվալուկթյամբ եւն հավասարակշռում ու հարաբերականորեն կայունացնում էր իրավիճակը: Այդպես էր նաեւ Գեոկչայի գավառում: Խնդիրը բարդանում էր թշնամուկթյան իրավիճակներում, լինելը մասնավոր, թե խմբային: Ահա 1917-1918-ին թշնամական իրավիճակ էր ստեղծվել հայերի եւ թաթարների միջեւ, որը դուրս էր եկել կենցաղայինից եւ ստացել քաղաքական բնուկթ: Սա նոր իրավիճակ էր, դրանից բխող նոր անկանխատեսելի եւ չստուգված գործողուկթյուններով ու հետեւանքներով: 1918-ի դարնան սկզբներին այստեղ հայերի վրա ազդեցիվ հարձակումները դեռեւս այսպես կոչված ավազակների գործն էր, որոնք, սակայն, օրեցօր հաճախակի էին դառնում: Բաքվում հրատարակվող «Արեւ» թերթի 1918 թ. մարտի 15-ի տեղեկուկթյունն այդ մասին է վկայում.

ՀԱՂՈՐԴԱ ԳՐՈՒԹԻՒՆ ԳԵՈՎԶԱՅԻ ԳԱՒԱՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՂՈՊՈՒՏԵՆԵՐԻ, ՍՊԱՆՈՒԹԻՒՆԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

«Ղալազեայ, 4 մարտի: Գեոկչայի գաւառի դրուկթիւնը անտանելի է դարձել: Մինչեւ այժմ թուրք աւազակները հայերին միայն թալանում էին եւ կենդանի բաց թողնում, իսկ այժմ թալանելուց յետոյ նրանց սպանում են եւ դիակներն այլանդակում: Ամսոյս երկուսին Գեոկչայից տուն վերադառնալիս բողակներս ներսէս նալբանդեանցին սպանելով, վերցրել են նրանից 400 ռուբլի եւ 150 ռուբլու ապրանք, իսկ 3-ին սպանել են էլի նոյն տեղում... Հաղորդակցուկթիւնը Գեոկչայի հետ անգամ կտրւած է: Թուրքերի վերաբերմունքը հայերի հետ շատ վատ է, որովհետեւ գաւառիս թիւրք ասկեարները, որոնք գնացել էին Գանձակ, թուրք եւ Շամխոր կայարանները թալանութեան, թալանի փոխարէն իրենցից մի մասի դիակներն են բերել, յայտարարելով, թե սրանց հայերն են կոտորել: Այսօր պատահմամբ Բողականդ գյուղում պատահեցի մի լեզգու, որը իսկոյն մտտեցաւ եւ սկսեց սառնասիրտ պատմել ինձ հետեւեալը. «Ես գալիս էի Միւսիսլի կայարանից, ինքս չորան եմ եւ որովհետեւ ես մեծացել եմ հայերի մէջ եւ միշտ եղել եմ հայի չորան, պարտ եմ համարում յայտնել, որ Միւսիսլի եւ Ուջար կայարանների միջի տարածութեան վրայ մօտաւորապէս հարիւր հայեր կան սպանեած, որոնց թուրք աւազակները սպանել են վագոններում եւ լուսամուտներից դուրս չպրտել»: Ղալազեցի Մովսէս Սանամեանցը Բազէից գիւղ գալու ժամանակ Ուջարի կայարանում փայտով սպանելուց մի կերպ ազատել է եւ մեծ կաշառքով տուն հասել, այնքան ծեծել է, որ յոյս չկայ առողջանալու: Ղալազեցի Հայրապետ Հասարթեանցի ներկայութեամբ Սըղոի կայարանում մի քանի հայ են սպանում, իսկ իրեն էլ շատ ծեծելուց հետո թողնում են, կարծելով թե մեռած է... Այդպիսի

դէպքեր անթիւ են... Գաւառի Հայ գիւղերում բառիս բուն նշանակու-
թեամբ սով է...

Յ. Գ. — Ամսիս Գ-ին մի քանի զինւած թուրք աւազակներ յար-
ձակուած են Գեողչայից գիւղ վերադարձող Բայ Բանդ գյուղի ծխատէր
Փառնակ քահանայի եւ նոյն գիւղի տանուտէրի վրայ: Քահանային
խսկույն սպանուած են, իսկ տանուտէրը մի կերպ ազատելով փախչում
է: Երկու ժամից յետոյ էլի նույն ճանապարհի վրայ սպանել են չորս
Հայերի: Որտեղացի լինելը դեռ յայտնի չէ: Սպանւածների շապիկներն
ու ոտաշորերն անգամ վերցրել են՝ թողնելով մերկ դիակները:

Ա. ք. Մայիլեան»

«Արեւ», 15 մարտի 1918 թ.¹:

Բայց ահա Բաքվում 1918 թ. մարտին տեղի ունեցավ Բաքվի բոլշե-
ւիկյան կոմունայի եւ մուսավաթականների Վայրի դիվիզիայի կռիվը:
Կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանի ջանքերով այդ քաղաքացի-
ական կռիւն բոլշեւիկների կողմից մասնակցեց նաեւ Կովկասյան ճակա-
տից տու՛ն վերադարձող եւ ճանապարհները փակ լինելու պատճառով
Բաքվում մնացած Հայկական դաշնակցական զինվորական ջոկատը,
որով քաղաքացիական կռիւն հաղորդվեց ազգամիջյան բուխողակու-
թյուն վերաճելով Հայ-թաթարական զինված բախման: «Չորս օր քաղա-
քում տառաջիորեն դժոխք էր... երկկողմանի չարությունն աճում էր:
Բոլշեւիկա-թաթարական բախումը սկսում էր ստանալ ազգային
բախման բնույթ, թաթարների դեմ, բոլշեւիկներից զատ, դուրս էին եկել
նաեւ մեծ քանակով Հայեր... Որքա՛ն էին «մարտյան օրերի» թաթարնե-
րի կորուստները... Թաթարներն իրենք առաջին օրերին խոսում էին
6000 սպանվածների եւ վիրավորների մասին: Կարծում եմ, որ ապրած
սարսափներից եւ վախից հետո այդ թիվը չափազանցված է... Փողո-
ցային կռիվների ժամանակ շատ Հայեր էլ են սպանվել... Հայերը մոտ
3000 թաթարների փրկել են Մախլով եղբայրների մեծ թատրոնում, որ-
տեղ նրանց կերակրում էին: Հայերի կողմից փրկված թաթարների մեջ
շատ էին բուրժուազիայի եւ հասարակական գործիչների ներկայացու-
ցիչները, այդ թվում՝ այնպիսի բացահայտ Հայաստաց, ինչպես ինժեներ
Բեյբուլթ-Խան Զիվանչլըրը, նույն տարվա սեպտեմբերին Բաքուն թուր-
քերի եւ ադրբեջանցիների կողմից զրավելուց հետո Բաքվի Հայերի
Ջարդերի կազմակերպիչներից եւ իրականացնողներից մեկը...»²:

¹ Հրատարակված է՝ «Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգնե-
րում 1918-1920 թթ.», էջ 18-20:

² Байков Б., Նշվ.աշխ.: 1918 թ. մարտյան դեպքերից ճիշտ 80 տարի անց, 1998 թ.
մարտի 26-ին, արդեն անկախ Ադրբեջանի հանրապետության նախագահ Իլհամ
Ալիևը, առանց գեթ մեկ ուսումնասիրության, մարտի 31-ը հուշակեց «Ադրբեջան-
ցիների ցեղասպանության օր», չնայած դրանից ճիշտ 20 տարի առաջ, 1978 թ.

1918 թ. Բաքվի «մարտյան դեպքերից» վրեժխնդրությունը դարձավ Հայ բնակչության կոտորածներն արդարացնելու միջոց, որին 1918-1920-ին զոհ դարձավ Հարյուր Հազարավոր խաղաղ Հայ բնակչություն: Կոնկրետ մեզ Հետաքրքրող Գեոկչայի տարածքում Հայերի ջարդը կազմակերպում եւ գլխավորում էր Ալի-բեկ Զիզիկսկին: 1876 թ. Ղուբայում ծնված Ալի-բեկ Գարուն-բեկ օղլի Զիզիկսկին կադրային զինվորական էր, կապիտան: 1914-ին նա նշանակվել էր Ղուբայի գավառի Հեծյալ ոստիկանության խմբի պետ: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից Հետո ժամանակավոր կառավարության կողմից Այսրկովկասում ստեղծված Հատուկ Անդրկովկասյան Կոմիտեի (Особый Закавказский комитет – ОЗАКОМ) կողմից նշանակվել էր Ղուբա գավառի կոմիսար՝ պահպանելով Հեծյալ ոստիկանական խմբի պետի պաշտոնը: Գավառի կոմիսարի պաշտոնում իրեն տեղակալ էր նշանակել Միր-Ջաֆար Բազիրովին՝ ապագա խորհրդային Ադրբեջանի Կենտկոմի երկարակյաց առաջին քարտուղարին ու Լ. Բերիայի ընկերոջը, եւ Ղազի Ահմեդ-բեկ Մամեդ-բեկովին: Նույն 1917-ին, երբ Ղուբայում ստեղծվեց բոլշևիկյան բանվորա-գյուղացիական խորհուրդ, Ալի-բեկ Զիզիկսկու ջանքերով նրա նախագահ նշանակվեց Ղազանֆար Մահմուդ օղլի Մուսաբեկովը: Այս խմբի Հիմնական աշխատանքը դարձավ զինված խմբավորումներ կազմելը: Սա քննարկման բոլորովին այլ խնդիր կլինեք, եթե այդ զինված խմբավորումները կազմավորվեին Ադրբեջանի անկախացման նպատակով: Ջրացառելով այդ նպատակը՝ ասենք միայն, որ Ալի-բեկ Զիզիկսկու զինված խմբավորումները, տեղի մահմեդական բնակչությանը հրահրելով, կազմակերպում էին Հայերի եւ ռուսների ջարդերը: Եուտով, 1918 թ. գարնանը, Ելիզավետպոլի նահանգում օսմանյան թուրքական զորքերի Հայտնվելուց անմիջապես հետո, նրա զինված խմբավորումները դրվեցին թուրք սպա Իսմայիլ էֆենդու եւ Ահմեդ Բեդին-Տրինչի տրամադրության տակ: Ալի-բեկ Զիզիկսկին եւ Ահմեդ Բեդին-Տրինչը դեռ երկար էին գործելու եւ առավել երկար՝ Հիշվելու Հատկապես Գեոկչայի, Ղուբայի եւ Շամախու Հայ բնակչության ջարդերի կապակցությամբ: Բայց դեռ վերադառնանք փաստաթղթերի տեղեկություններին:

Բաքվում հրատարակվող «Արեւ» թերթը 1918 թ. ապրիլի 23-ին տպագրում է.

հոկտեմբերի 11-ին ճույն Հեղափոխարար Ալիեյը բարձրաձայն հայտարարել էր, որ մարտյան դեպքերը կապված էին բոլշևիկյան հեղափոխությունը խեղդելու մուսավաթական փորձի հետ եւ այն հաջողվեց կանխել Բաքվի բոլշևիկյան կոմունայի վեճակային գործողությունների շնորհիվ (Тарасов С., Кто и как создал «дело о бакинских комиссарах», <http://regnum.ru/news/1177585>).

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. «ԽԱՉՄԱԶԻ ԴԵՊՔԵՐԸ» ԸՍՏ ԱԿԱՆԱ-
ՏԵՍՆԵՐԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԻ.

«Խմբագրութիւն մտան Խաչմազից փախած երեք ճանապարհորդ-
ներ, որ Բագու են Հասել ամսին 6-ին, երեկոյեան դէմ եւ պատմեցին Հե-
տեւեալը. Մարտի 20-ին մեզ տեղեկութիւն տւին, որ Խաչմազի շրջանի
եւ ընդհանրապէս Ղուբա գաւառի թուրք գիւղացիները զինւած Հա-
վաքոււմ են Խաչմազ կայարանը. մենք այդ բանն անձամբ ստուգե-
ցինք: Տների տանիքներից նկատելի էր, թէ ինչպէս զինւած խմբերը զա-
նազան տեղերից ձգոււմ են դէպի կայարան: Նոյն օրը կէսօրւայ մօ-
տերքը Խաչմազ կայարանի թուրք կոմիսարը գալիս է գիւղը եւ յայտ-
նում Հայերին, որ գիւղից չփախչեն եւ չզնան մօտակայ ուուս գիւղը,
որովհետեւ միեւնոյն գիւղը շրջապատւած է, ճանապարհներն էլ կտր-
ւած: Ժամը 4-ին եկաւ մեզ մօտ շիխարցի Հասան-բեկը, — ասում է
պատմողը, — նոյնպէս մեզ յայտնեց մեր շրջապատւած լինելը եւ խնդ-
րեց, որ նոյնիսկ տներից դուրս չգանք, երաշխաւորելով, որ Հայերին
ձեռք չեն տայ: Ապա գիւղում ավրող թուրքերից մեզ վրայ պահակներ
նշանակեց, որպէսզի դրսից յարձակումներ չլինեն: Այդ բոլորից յետոյ
յիշեալ Հասան-բեկն անցաւ գիւղի թուրքաց մասը: Հէնց այդ ժամանակ
նրանց մասում լսւեց Հրացանի մի ձայն, որն առիթ տւաւ թուրք պա-
հակներին թողնելու մեզ եւ հեռանալու: Պահակների հեռանալուց յետոյ
բոլոր մեր ընտանիքներով Հաւաքեցինք Սարգիս Առաքելեանի տունը:
Քիչ անց ամեն կողմից գիւղն են խուժում զինւած թուրքերի բազմաթիւ
խմբեր, ղեկավարութեամբ ղուբեցի Իդայաթ Հաջի Շուքուր օղլու,
գերութիւնից փախած տաճկական մի սպայի, շիխարցի Մահմեդ
Սուլթանբեկի, Իբրահիմ Խալիլի եւ այլն: Յիշեալները անմիջապէս մտան
Առաքելեանի տունը եւ յայտնեցին, որ իրենց գլխավոր նպատակն է
Հայերին զինաթափ անել, պատճառաբանելով, որ Բագոււմ կռիւ է
[խոսքը Բաքվի թաթարա-բոլշեւիկյան մարտյան կռիւների մասին է —
Հ. Խ.] եւ իրենց զէնք է պէտք, որպէսզի Բագւի թուրքերին օգնութեան
Հասնեն: Մենք ստիպւած եղանք մեզ մօտ գտնւած հին ձեւի մի քանի
Հրացաններ յանձնել նրանց, որոնք, սակայն, մեզ վերադարձրին, ասե-
լով, որ իրենք կարծել են, թէ Հայերի մօտ կան նոր սիստեմի լաւ զէնքեր
եւ նոյնիսկ գնդացիներ: Վերադարձնելով մեզ մեր «փիստոնի» Հրա-
ցանները, նրանք միեւնոյն ժամանակ ուժով մեզնից խլում են պատա-
հած բոլոր մոսին Հրացանները: Մեզ զինաթափ անելուց յետոյ իրիկնա-
դէմին, ժ. 7-ին հեռանում են, զմիլցիներից պահակներ թողնելով Հայերի
մօտ: Դրա հետ միասին թալանում են գյուղի Հայկական մասի վերին
թաղը եւ եկեղեցին: Երեկոյեան ժամը 9-ին Շիխարսկի Մուրապ-բեկն
ուղարկում է մեզ մօտ նարաջանցի Նուսրաթին յայտնելու, որ Հայերին

ձեռք չեն տալու: Այդ ժամանակ կանչեցինք մեր գիւղի կոմիսար¹ Արտեմ Յաղուբեանին, նրա հետ խորհրդակցելու համար մեր դրուժեան մասին: Վերջինս եւ Նուսրաթը նորից մեզ միամտեցնում են եւ հեռանում: Քիչ յետոյ մենք արդէն իմանում ենք, որ կոմիսար Յաղուբեանը եւ ուրիշ տասը հայեր Նուսրաթի հետ գյուղից փախել են Նարաջան թուրքական գիւղը: Տեսնելով, որ դրուժյունը լուրջ է եւ կատակ անել չի կարելի, մենք էլ երեք հոգով միւս օրը, մարտի 21-ին, լուսաբացին գիւղից փախանք մոտակայ անտառը: Փախչելու ըստէն իմացանք, որ շիխարցի Իբրահիմ-բեկը գնացել է Դերբենտ նոր զինւած ուժեր բերելու համար: Անտառի մեր թաքստեան տեղից օրւայ ժամը 4-ին տեսանք, որ Դերբենտից կայարան ժամանեցին զինւած չեչենների եւ թուրքերի երկու էչեկոններ, որոնք կէս ժամից յետոյ սկսում են կոտորել Խաչմազ գյուղի բոլոր հայերին: Կոտորածից յետոյ մենք գիշերով անտառից էլ փախչում ենք 12 վերստի վրայ գտնուող Միխայլովկա (Նիգալոյ) ուսական գյուղը, մեր ծանօթների տները: Այստեղ էլ յայտնում են, որ չեն կարող թաքցնել մեզ, որովհետեւ թուրքերը խիստ հետեւում եւ փնտրում են փախած հայերին: Միեւնոյն ժամանակ ասում են, որ գաւառական կոմիսար Ալի-բեկ Ջիզիկսկին այդ մասին պաշտոնապէս հրաման է բաց թողել, որի մէջ զգուշացնում է, թէ հայեր թաքցնող ուսական գիւղը նույնպէս կ'ենթարկւի Խաչմազի վիճակին լընդգծումը մերն է — չ. Խ.]: Ամբողջ 14 օր մենք մնացինք յիշեալ գիւղում: Ապրիլի 3-ին Միխայլովկա է հասնում Բաբուից ուղարկւած նաւը 120 զինւորներով, դնդացիներով եւ թնդանոթներով՝ ուս գիւղացիներին տեղափոխելու համար Բագու: Ռուսների տեղափոխութիւնը պէտք է կատարէր միւս օրը, Ապրիլի 4-ին, բայց մենք 3 հոգով նոյն օրն ենք տեղաւորում նաւում: Գիշերը լոյս 4-ի, թուրքերը, տեղեկանալով եկած նաւի մասին, շրջապատում են Միխայլովկան եւ լուսաբացին վերելում յիշած բեկերի ղեկավարութեամբ յարձակում են գիւղի վրայ: Նաւի բերած զինւորների, գնդացիների եւ թնդանոթների միջոցով յաջողում է թուրքերին փախցնել եւ ուսներին տեղաւորել նաւում: Ապրիլի 4-ին, երեկոյան ժամը 5-ին մենք ճանապարհւում ենք եւ Բագու հասնում ամսիս 6-ին, իրիկնադէմին: Միխայլովկայից նաւը հեռանալու ժամանակ մեզ լուր տւին, որ յիշեալ գիւղից փախած բեկերը եւ զինւած ամբողջ աւերում են Եյենովկա, Ալեքսանդրովկա, Ալեքսեւեկա եւ այլ ուսական գիւղերը: Մենք իմացանք նաեւ, որ Նուսրաթի հետ Նարաջան թուրքական

¹ Կոմիսար՝ տվյալ դեպքում բոլշեիկների ներկայացուցիչ: 1917 թ. ուսական բոլշեիկյան ղեկավարությունից հետո 1918-ից Բաքվում իշխանությունը գտնվում էր բոլշեիկյան կոմիտեի՝ այսպես կոչված կոմիսարների՝ Բաքվի կոմունայի ձեռքին, Ստեփան Ծառուսյանի ղեկավարությամբ: Բոլշեիկյան կոմունան իր ներկայացուցիչները՝ կոմիսարներն ուներ գաղտնեղում:

գիւղը փախած Արտ. Յաղուբեանը, խաչմազի քահանան եւ մնացածները նոյնպէս սպանելի են ծովափին, Միխայլովկայից երկու վերստի վրայ: Նրանցից մէկը, չկամենալով մեռնել կատաղի ամբոխի ձեռքով, իրեն ծովն է նետել, որի դիակն ալիքներն ափ են Հանել: Բացի մեր պատմածի մէջ յիշած ղեկավարներէից, յիշեալ ջարդերի կազմակերպման գլխաւոր յանցաւորներէից են նաեւ այժմանցի բեյ Բալաբեզը, նախկին պրիստաւ Զանգիեւը, ղոնաղքենդցի Մայիլ Յուզբաշին, լաջաթցի Մուսաբեկը եւ ուրիշները, որոնք ղեկավարում են թուրք անդիտակից մասսային:

Շ. Յ., Մ. եւ Մ. Մ. եւ Մ.Ա.»

«Արեւ», 23 ապրիլի 1918 թ.¹:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվում է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան ստեղծումը, որից հետո Գեոկչայի (ինչպես եւ ողջ Բաքվի ու Ելիզավետպոլի Հայքի վիճակը) դառնում է պարզապես աղետալի: Սեպտեմբերի 15-ին Բաքուն գրավելուց հետո Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում նոր թափ են առնում զանգվածային ջարդերը: Դրանից շուրջ 30 տարի անց, 1953 թ. հոկտեմբերի 7-ին, ԽՍՀՄ ղեկավար Ն. Խրուշչովը նամակ կատանա Ադրբեջանից ոմն Ի. Կ. էֆենդիեւից, ով դառնութեամբ կգրի, որ ինքը երկար ժամանակ ապարդյուն փորձել է իր երկրի ղեկավար Միր-Ջաֆար Բաղիրովի ուշադրութիւնը հրավիրել Ադրբեջանում բարձր կուսակցական դիրքեր զբաղեցրած հանցագործներին՝ երկրում կոտորածների հեղինակներին հանցագործութիւնների վրա, եւ այժմ վերջապես հնարավորութիւն ունի այդ մասին տեղեկացնելու ԽՍՀՄ ղեկավարին. «Հայտնի է, – գրում է նամակագիրը, – որ 1918-ին թուրքական զորքերը մտան Ադրբեջան եւ ճնշեցին երիտասարդ խորհրդային իշխանութիւնը: Բաղիրովն այն ժամանակ, իր խոսքերով, Ղուբայից գնացել էր Աստրախան: Ղուբա մտալ Շուքրի փաշան: Նրա շտաբի պետը Ահմեդ Բեդիան էր: Հակասովետական շատ աւարներ գնացին ծառայելու թուրքերին եւ մուսավաթականներին: Ես եւ իմ քույրն այն ժամանակ Ղուբայում էինք: Մեր աչքի առաջ լիակատար ոչնչացրին խաղաղ հայ բնակչութեանը (նրանց աճուրդով վաճառում էին)... Այդ ամենն անում էին Ահմեդ Բեդիանը, Ալի-բեկ Զիզիկսկին, այսպես կոչված «երիտասարդութիւնը», այդ թվում՝ այժմ ԽՍՀՄ անդամ Հաջի-աղա Շահվերդովը, Բաղիրովի ընկերը»²:

¹ Հրատարակված է՝ «Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», էջ 33-35:

² Письмо И. К. Эфендиева от 7 октября 1953 г. Н. С. Хрущеву. «Политбюро и дело Берия». Сборник документов, Москва, 2012, <http://istmat.info/node/22395>.

1919 թ. մարտի 24-ին Գեոկչայի գավառի՝ Բաքվում ապրող Հայերի Հայինահցական միութիւնը Բաքվի Հայոց ազգային խորհրդին ներկայացրել է Գեոկչայի գավառի Հայերի իրավիճակի մասին մի զեկուցագիր, որում բացատրում է, թե ինչպես է Գեոկչայի Հայ բնակչութիւնը ենթարկվել կոտորածների: Առաջին ջարդը եղել է 1918 թվին, «Ձատիկ կյուրակի երեկոյան: Թաթախման գիշերը Գանձակից եկած ինչ-որ թուրք ղեկավարների դրդմամբ եւ ղեկավարութեամբ հարձակվում են Նորչեն եւ Շուկուրչու, Կիրք, Գյուլգորան եւ Քաթարքու գյուղերի վերա: Թալանվում է Նորչեն, Շուքուրչու ու Քաթարքու գյուղերը, տալով բավականի սպանված եւ վիրավոր, փախցնում են եւ կանայք: Կիրք գյուղը վերահաս ավերմունքից ազատվում է շնորհիվ մի խումբ զինված գյուղացիների, որոնք գնալիս էին եղել Բաքվից իրենց տները: Դրանց մեծ մասը ֆրոնտից եկած զինվորներ էին... Այդ միեւնույն ժամանակ եկած են լինում մի մեծ խումբ Գեյոքչայից թուրքեր, կանոնավոր զինված, պահանջում են Ղալազիյա գյուղացիք զինաթափ լինել, բայց ստանալով կտրուկ պատասխան պատրաստ դիմադրելու, հետ են գնում թողնելով Հանգիստ գյուղը... երկրորդ անգամ Ղալազիյայի վրա հարձակվում է ... տաճիկական կանոնավոր զորք, որոնց դիմադրում են գյուղացիք անհավասար կռիվով. մի օր որից հետո տաճիկ զորքը մտնում է գյուղ, այրում է մի քանի տներ... Այդ կռիվում գյուղացիք տալիս են մոտ 60 սպանված ու վիրավոր: [Այնուհետեւ] Նորչեն, Շուքուրչու, Գյուլգուրան, Կիրք, Փաթարքու, Գարմախանի, Թորիչեն, Ավանաչեն, Աղբուլաղ, Դայմդաղլու, Մեծ Գանձակ, Քաղբանց եւ Քեշխուրդ Հայկական գյուղերի մոտ 11.000 կարողացել են ժամանակին դուրս գալ իրենց գյուղերից եւ խուսափել կոտորածներից, սակայն Ուշտալ, Նորչեն, Ղալազան, Բողուկանց, Վանք, Ռուշանաչեն ու Փոքր Գանձակ գյուղերի բնակիչները, թվով մոտ 7500 հոգի, մնացել են շրջափակման մեջ: Գյուղացիները փորձել են դուրս գալ հարեւան մալականական ի վանովկա գյուղով... բայց ավաղ, խեղճերը այստեղ եւս ենթարկվում են երկաթի օղակի հենց իրենց հարեւան մալականների կողմից, որոնք զենքը ձեռներին դուրս են գալիս գաղթող եւ սարսափահար ժողովուրդի դեմ: Թույլ չեն տալիս անցնելու, պահանջում են հետ դառնալ գյուղերը: Ինչ կարող էին անել ու հետ են գալիս. սրանցից անցնում են ընդամենը Վանքից 36 հոգի, 1200 հոգուց եւ Ռուշանաչեն, Փոքր Գանձակից 60 1000 հոգուց, մնացած գյուղերից գաղթել են ոչ ավելի քան 1500 հոգի: Մինչդեռ թուրքերը արդեն հասած են լինում Իվանովկա Դավաթաթան ձորից: Գյուղացիներին ոչինչ չէր մնում անելու, քան հետ գալ ու պատրաստվել ինքնապաշտպանութեան, այդպես էլ անում են մնացած գյուղացիք: Ժողովուրդը հավաքվում են Վանք գյուղն որպես մի ամուր տեղ: Այդտեղ են հավաքվում նաեւ Արիշու գավառի մոտ

10 գյուղից Հայ ժողովուրդը, ինչպես, օրինակ՝ Ամիրվան, Բլեղ, Բեգլար-քենդ, Սերթեն Գիղա, Չանաղ Բուլաղ, Գերցացուլ եւ այլն. Հավաքվածների թիվն Հասնում է 10-12.000-ի, որոնք կազմակերպում են ինքնապաշտպանութան գործը, դիմադրությունը լինում է օրհասական, արդեն շրջապատած թուրք զորքի ու տեղական ամբոխի կողմից: Դիմադրությունը տեւում է 4 օր, որի ընթացքում Հայերը միշտ հաղթող են լինում... Խորամանկ թուրքերը տեսնելով, որ գյուղը վերցնելը այնքան արժան չի պետք է նստի, դիմում են իրենց սովորական արհեստին: Կառավարութան անունից Հայտարարում են ամնխատիա եւ ցրում Հավաքված խումանը. ճարը կտրած եւ անդեկավար ու անտեր Հայ ժողովուրդին բան էջը մնում անելու, քան կասկածը սրտում ու Հավատը կորցրած՝ որեւէ տեղից օգնություն ստանալ, ենթարկվում են խաբուսիկ խոսքերին, մանավանդ որ լինում են կառավարութան ներկայացուցիչները. եւ այդպես ցրվում են իրենց գյուղերը պարապելու եւ հնձելու ցանգալի արտերը, որին գյուղացիք սոված դրության սպասել են մի ամբողջ տարի... [Բերքը Հավաքելուց Հետո] Օգոստոսի սկզբներին էր, թուրք չավուշը գալիս է Վանք գյուղը, հրամայում է Հավաքվել եկեղեցու բակը՝ Հայտարարելով, որ կարեւոր խոսելիք կա հօգուտ գյուղացիների Համար: Գյուղի երիտասարդները վատ բանի հոտ են քաշում եւ ուզում են պատասպարվեն անտառները, բայց մեծերը հակառակ են լինում, առարկելով, որ դեանով կասկածի ու կոտորածի առիթ կտան: Գյուղացիք չեն Հավատում չավուշին, բայց եւ այնպես Հավաքվում են մեծ ու փոքր եկեղեցու բակը: Մի տեղ որ փախչելու ոչ մի Հնար չկա, չորս կողմը անդունդ է, մի տեղ ունի, որ չավուշը մարդիկներն են պահում, մինչի այդ Հավաքում են նախօրոք պատրաստված դազանացած ամբոխը, սկսում իրանց դժոխային ծրագիրը. նախ ջոկում են տիկին, աղջիկ ու փոքրահասակ երեխաներին ու սկսում կապոտել մնացողներին, որպես զի տանում են իվանովկա գյուղը փաշի մոտ, եւ Հագիվ դուրս բերելով գյուղից, սկսում են տանջել ու կոտորում են: Շատ քչերին է Հաջողվում ազատվելու այդ սպանդանոցից, որից հետո սկսում են թալանել ամբողջ գյուղը, նույն վիճակին են ենթարկվում եւ մնացած գյուղերը, բայց այն, որ տեսել է Վանք գյուղը, Աստված հեռու տանի: Չմոռանամ ասելու, որ կալսած-պատրաստված ցորենը տարել է կառավարությունը: ... Ահա այդ բոլորից հետո որ տաճիկները տիրելով այդ գավառի Հայկական մասն, որից նա ստացել էր կանոնավոր դիմադրություն, բնաջնջում է մնացող Հայությունը: Շատ քչերին է Հաջողվում ազատվել այդ դժոխքից... Այժմ դրությունը ավելի քան անմխիթար է, մեր ունեցած տեղեկություններից այժմ պարզվում է, որ զանազան գյուղերում ապրում են մոտ 2300 հոգի, մի այդքան էլ կլինեն Բագու... սոված եւ անգործ թափառում են փողոցներում... Մեր գավառի թիվ

մոտ 18.000¹ հայ ժողովրդից... Ղաթափաթա լեզգին այժմ նստած է Ղա-
 լազյա գյուղում եւ չեն կարողանում հեռացնել: Մեր ստացած վերջին
 տեղեկութիւններին համաձայն՝ լեզգիները ափելի են կողոպտում
 հայերին, քան թե մեր հարեւան թուրքերը եւ եթե այդպես շարունակվի,
 այս տարի ոչ արտ կլինի, ոչ խոտ եւ ոչ խաղող, բոլորը ոտնակոխ կլի-
 նին... Դեպքերի ժամանակ շատ կին եւ երեխաներ կան գերված թուրքե-
 րի մոտ, որոնց հնարավորութիւն կա հետ ստանալու եւ դրանց թիվը
 շատ է, եւ ահա այդ գերիներին պետք է օր առաջ հետ բերել, որով հնար
 տված կլինենք վերակենդանացնելու շատ մարած օջախներ...
 Նախագահ կոմիտեի՝ Մ. Խ. Մայիլյանց, Քարտուղար՝ Ս. Գալս-

տյան»²:

Հայաստանի կառավարութիւնը քանիցս դիմում է Ադրբեջանի կա-
 ռավարութիւնը թույլ տալու կենդանի մնացած հայ փախստականնե-
 րին տեղափոխվել Հայաստան, սակայն ԱԴՀ կառավարութիւնը այդ
 տանջահար մարդկանց ոչ թողնում էր Հայաստան տեղափոխվել, ոչ
 թողնում էր իրենց գյուղերը վերադառնալ³, միաժամանակ փակել էին
 բոլոր ճանապարհները: Փախստականների մեջ լուրեր էին տարածվել
 ջարդերի կրկնութիւն մասին եւ նրանք հուսահատ ելքեր էին փնտրում
 դուրս պրծնելու այդ դժոխքից: Ինչպես եւ սպասում էին սեփական
 փորձով վատագույն ելքերը կանխատեսող փախստականները, 1920 թ.
 ապրիլի 8-ին տեղեկութիւն է ստացվում, որ թաթարական բնակչու-
 թիւն մեջ ստրկական վիճակում պահվող հայ բնակչութիւնը նոր ջար-

¹ Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանի տվյալներով՝ 1910-ին Գյոլկչայի ողջ
 բնակչությունը կազմում էր 130.764 մարդ, որից հայերն ընդամենը 11 տոկոսն էին
 կամ մոտ 14.000 մարդ: Տարօրինակ է, որ սովորաբար շատ պատասխանատու այս
 հանրագիտարանի Գեոլոգիա-բնակչության հոդվածի հեղինակը ոչինչ չի ասում գալստում
 անկասկած ապրող լեզգիների մասին, միայն հիշվում է, որ գալստում կան նաեւ
 մոտ 3.000 ռուս հնածիսականներ, փոքրաթիվ թաթեր եւ գալստուիներ (հափութե-
 րը - Հ. Խ), իսկ մնացած բնակչությունը կազմում են ադրբեջանական թաթարնե-
 րը (Փ. Ա. Брокгауз, И. А. Ефрон, Новый энциклопедический словарь, т. 13-й, с.
 85-86, <http://dlib.rsl.ru/viewer/01004103266#?page=54>).

² ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 80, թ. 35-39: Բնօրինակ: Ջեռագիր: Ջեկուցման մեկական օ-
 րինակներն ուղարկվել են Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկա-
 յացուցչին, տեղեկատու բյուրոյին, պալատնետական խմբակցությանը (տե՛ս ՀՀ
 ԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 45-48): Հրատարակված է՝ «Հայերի կոտորածները Բաքվի
 եւ Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», էջ 266-270:

³ ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 78, թ. 18 շրջ.: ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 179 շրջ.: ՀՀ ԱԱ,
 ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 2; ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 195; ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 90,
 թ. 28: Հրատարակված են՝ «Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նա-
 հանգներում 1918-1920 թթ.», էջ 319, 322, 323, 324, 372:

դերի է ենթարկվել, եւ շատ քչերին է հաջողվել փախուստով փրկվել¹: Ադրբեջանի խորհրդայնացմանը մնացել էր մեկուկես ամիս:

Խորհրդայնացած Ադրբեջանում այս հուսահատված մարդկանց կյանքում երկար ժամանակ փոփոխություններ էջին լինում: Իշխանության անցած բոլշևիկները հաճախ նույն մարդիկ էին, ովքեր կազմակերպել եւ իրականացրել էին նրանց ջարդերը: Խորհրդային Ադրբեջանի Չեկայի նախագահ էր դարձել Միր-Ջաֆար Բաղիրովը, ով շուտով պիտի դառնար Կենտկոմի առաջին քարտուղար եւ այդ պաշտոնն զբաղեցնեք ընդհուպ մինչեւ Լ. Բերիայի ձերբակալությունը՝ 1953 թ.: Միայն 1954 թ. ապրիլի 9-ին նա պիտի ցուցանւք տար, թե ինչպես եւ ինչու եւ Ադրբեջանում արտոնյալ պայմաններում ապրել Ալի-բեկ Ջիզիկսկին, բարձր կուսակցական պաշտոններ զբաղեցրել ԱՀմեդ Բեդիրը² եւն: Խորհրդային իշխանությունները երկար պիտի ձեւացնեին, որ չգիտեին, թե ինչպես եւ Ադրբեջանում տեղի ունենում տեղաբնիկ ժողովուրդների հետապնդումները, ինչպես եւ ինչու է խորհրդային Ադրբեջանում ոմանց համար կրթությունը վճարովի, ինչպես եւ մարդահամարներից ամբողջ ժողովուրդներ անհետանում եւն: Բայց մինչ «կհետաքրքրվեին» դրանցով՝ գործն արված կլինեք: Այժմ արդեն նոր մեթոդներ էին գործի դրվել՝ ձեւավորել «ադրբեջանական ինքնություն» եւ դրա մեջ առավելագույնս «ձուլել» ոչ թյուրքալեզու մահմեդականներին, իսկ քրիստոնյաներին աստիճանաբար դուրս մղել տնտեսական սահմանափակումներով կամ քաղաքական մեղադրանքներով: Դրա համար հիանալի հնարավորություն էին ստեղծել ԽՍՀՄ-ում սկսված ստալինյան քաղաքական ռեպրեսիաները: 1936-ին քաղաքական որոշում է ընդունվում Ադրբեջանի մահմեդականներին «ադրբեջանցի» անվանել: Ադրբեջանում քաղաքական ռեպրեսիաները հետազոտող է. Իսմաիլովը գրում է, որ 1937-ին Բաղիրովին արդեն հրահանգել էր «թաթերեն, քրդերեն, թալիշերեն լեզուներից անցնել ադրբեջաներենին», եւ 1939-ին, հեղինակի հավաստմամբ, Ադրբեջանի «բազմաթիվ էթնիկական փոքրամասնությունները սկսեցին հաճույքով դրվել ադրբեջանցի»³:

«Հաճույքով ադրբեջանցի դրվելու» պնդումը թողնելով հեղինակի խղճին, Իսմայիլի շրջանի օրինակով դիտարկենք դրա հետեւանքով

¹ ՀՀ Ա.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 69 շրջ.: Հրատարակված են՝ «Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», էջ 458:

² Մ. Բաղիրովի հանցագործությունների՝ 1954-ի քննության արխիվի 9-ի հարցաքննության արձանագրությունը (РГАСПИ, Ф. 17, Оп. 171, Д. 474, Л. 86-96, <http://istmat.info/node/22310>), հրատարակված է՝ «Политбюро и дело Берия» (<http://istmat.info/node/22125>).

³ Исмаилов Э., История «большого террора» в Азербайджане, Москва, 2015, с. 170.

բնակչության էթնիկական կազմի փոփոխությունները: 1939 թ. մարդահամարի նյութերով այստեղ լեզգիներ գրեթե չկան (գրանցված է 3.149 լեզգի), թաթեր, լաչիճներ, հափուլներ չկան առհասարակ, Հայերի թիվն ընդամենը 6.680 է, Լաչիճ ավանում ապրող 2.672 մարդուց, ըստ այդ տվյալների, 462-ն ադրբեջանցի են, 2.206-ը՝ անորոշ «այլ», իսկ նորաթուխ ադրբեջանցիները ողջ շրջանում կազմել են բնակչության ամբողջ 57,6%-ը¹:

1959 թ. պաշտոնական մարդահամարի նյութերում շրջանի բնակչության ընդհանուր թիվը զգալիորեն նվազել է. 52.445-ից այն հասել է 40.679 մարդու, սակայն ադրբեջանցիներն ամենաքիչն են նվազել՝ 30.234 մարդուց մնացել է 28.889, պակասել են 1.345-ը, ընդ որում՝ ադրբեջանցիները կազմել են շրջանի բնակչության 71%-ը: 6.683 Հայերից մնացել են 4.038-ը պակասելով 2.245-ով: Լաչիճ ավանում մնացել է ընդամենը 1.981 մարդ, որից 1.962-ը՝ ադրբեջանցի, 15-ը՝ ռուս: Թաթ, հափուլ, կրիզ, լաչիճ, քուրդ եւ գոնն «այլ» բոլորովին չկան²:

Հաջորդ 1970-ի պաշտոնական մարդահամարում ընդհանուր բնակչության թիվն ավելանում է՝ հասնելով 51.596-ի: Ադրբեջանցիներն արդեն շրջանի բնակչության 75,9%-ն են կազմում, Հայերի թիվը կրկին նվազել է՝ 4.038-ից հասնելով 3.308-ի, ռուսների թիվը եւս նվազել է՝ 4.017-ից հասնելով 3.826-ի, որից 3.320-ը՝ Իվանովկա գյուղում: Փոխարենը՝ լեզգիների թիվն ավելացել է 1.628-ով՝ 3.255-ից հասնելով 4.883-ի, «Հայտնվում են» 40 թաթեր: Լաչիճ ավանում մնացել է ընդամենը 853 մարդ, որից 842-ը՝ ադրբեջանցի, 1 Հայ, 8 ռուս³:

Իսմայիլիի շրջանի տեղաբնիկ թաթ, լաչիճ, հափուլ, կրիզ փոքրաթիվ էթնիկ համայնքների համար ավելի մխիթարական է էին 1979-ի մարդահամարի նյութերը. նրանք այդպես էլ չեն հայտնվում շրջանի ժողովուրդների անվանացանկերում: Լաչիճ ավանի 31 մարդով ավելացած բնակչության՝ 884 մարդուց 882-ը շարունակում են համարվել ադրբեջանցի: Ադրբեջանցիներն այս մարդահամարի նյութերով արդեն շրջանի բնակչության 79%-ն են՝ 43.627 մարդ: Հայերն, ինչպես միշտ, նվազել են, կորցնելով 931 մարդ՝ 3.308-ից դառնալով 2.377 մարդ. 613 մարդ կորցրել են նաև ռուսները՝ 3.826-ից հասնելով 3.213-ի: Ադրբեջանցիներից գատ ավելացել է նաև լեզգիների թիվը՝ 955 մարդով,

1 Օրջանի ազգային կազմն ըստ այս մարդահամարի տե՛ս «Իսմայիլիի շրջանի բնակչությունը 1939-ին», <http://www.ethno-kavkaz.narod.ru/ismailly39.html>.

2 Օրջանի ազգային կազմն ըստ այս մարդահամարի տե՛ս «Իսմայիլիի շրջանի բնակչությունը 1959-ին», <http://www.ethno-kavkaz.narod.ru/ismailly59.html>.

3 Օրջանի ազգային կազմն ըստ այս մարդահամարի տե՛ս «Իսմայիլիի շրջանի բնակչությունը 1970-ին», <http://www.ethno-kavkaz.narod.ru/ismailly70.html>

4.833-ից դառնալով 5.788 մարդ, նաև հրեաներինը՝ 46-ից դառնալով 155 մարդ¹:

Իսմայիլի շրջանի ազգային կազմը միշտ բազմազգ է եղել, բայց դժվար է պատկերացնել տարբեր ազգությունների իրական թվային հարաբերակցությունը: Պաշտոնական մարդահամարներն ավելի շատ խեղել են այդ թվերը, բարդացնելով իրական կազմի պարզաբանումը: Դրանցում, օրինակ իսպառ բացակայում են թաթ, լահիճ, հափութ, ջեկ էթնանունները, իսկ ազգությունների քանակը ներկայացնող թվերը մեծ հափով հարմարեցված են ադրբեջանցիների թվաքանակի ավելացմանը: Դիտարկենք դա Լահիճ ավանը ներկայացնող բնակչության լահիճների (ինքնանունը լահըջի, լահիջ) օրինակով: Այս բնակավայրն ընտրվում է այն պատճառով, որ ինչ վարչական փոփոխություն էլ կատարվեր՝ Լահիճ բնակավայրը մեկն էր, եւ դրա վերաբերյալ տեղեկություններն ըստ բնակավայրի էր, լինե՞ր այն Գեոկչայի գավառում, թե խորհրդային Իսմայիլի շրջանում:

28.11.2008-ի էլեկտրոնային հանրագիտարանում Լահիճ անվան դիմաց կարդում ենք. «Լահիճ ավանը գտնվում է Իսմայիլի շրջանի տարածքում: Այն Գիրդիմանչայ գետի միջին հոսանքի մի ձորահովտում է... Հիմնվել է 5-րդ դարում: Անվան ստուգաբանությունը բացատրվում է Իրանի Լահիջան վայրից 4-5-րդ դդ. այստեղ տեղափոխված լահիճ ցեղի անունով... Լահիճի հիմնական բնակչությունը նույնանուն լահիճ փոքր ժողովուրդն է, ունի ֆարսերենին ազգակից իր լեզուն»²: Ուրեմն ընդունվում էր, որ Լահիճում ապրում էր «լահիճ» անունով եւ «ֆարսերենին ազգակից լեզվով» խոսող ժողովուրդ: Չանդրադառնալով լահիճների ծագման, լեզվի եւ մշակույթի մասին գիտական վերլուծություններին, ասեմ միայն, որ այս տեքստում Լահիճ բնակավայրում լահիճ անունով ժողովրդի գոյություն մասին տեղեկատվությունը բացառիկ է: Ցարական մարդահամարներում Լահիճ բնակավայրի բնակչությունը ներկայացված է միատարր, բայց միշտ տարբեր անուններով, 1870-ին՝ թաթ, 1873-ին՝ թաթար, 1896-ին՝ կրկին թաթ (տե՛ս Աղյուսակ 5): Խորհրդային մարդահամարների նյութերում, բացի 1926-ից, Լահիճ գյուղի բնակչությունը ներկայացված է որպես «ադրբեջանցիներ»: 1926-ի մարդահամարի նյութերով Լահիճում ապրող 4.082 մարդուց 3.643ը ներկայացված է որպես թաթ, 431-ը՝ թուրք, իսկ մայրենի լեզվով

¹ Օրջանի ազգային կազմն ըստ այս մարդահամարի տե՛ս «Իսմայիլի շրջանի բնակչությունը 1979-ին», <http://www.ethno-kavkaz.narod.ru/ismaily79.html>.

² Энциклопедия / Исмаиллы: Лагич, http://www.baku.ru/enc-show.php?id=177332&comm_id=939.

«Թաթարենոյ» խոսում էին 4.061-ը, «Թուրքերենոյ»՝ 13 մարդ¹ (Թաթերի մայրենի լեզուն ներկայացված է որպես Թաթարերեն): 1939-ի մարդահամարի նյութերով արդեն թաթ նույնպես չի հիշատակվում, իսկ ԼաՀիճ գյուղի 2.672 թիվ կազմած բնակչությունից 2.206-ը տեղավորված է «այլ» սյունակում, առանց որևէ էթնանունի, 462-ը՝ «ադրբեջանցիներ» սյունակում: Այնուհետև ԼաՀիճում ապրողները միշտ միայն «ադրբեջանցիներ» են ներկայացված (տե՛ս ստորև, Աղյուսակը):

Առաջին հայացքից թվում է, որ տեղի է ունեցել բնակչության կազմի փոփոխություն: Իրականում այդ ընթացքում նման բան չէր եղել եւ մինչև այսօր էլ չկա այդպիսին: Միակ փոփոխությունը ԼաՀիճի բնակչության անշեղորհն նվազող թիվն էր: 1896-ին այստեղ ապրել է 6914 մարդ, 1926-ին՝ 4.082: Այս նվազումը, թերևս, կարելի է բացատրել 1918-1920 թթ. ազգամիջյան ընդհարումներով ու կոտորածներով: 1926-ից մինչև 1939-ը բնակչության նվազումը շարունակվել է՝ 4.082-ից հասնելով 2.672-ի: Ենթադրելի է, որ սա էլ ստալինյան հետապնդումների շրջանի հետևանք էր: Դատելով Ադրբեջանի «մեծ տեռորի» պատմությունից, էլզար Իսմաիլովի 2015-ին հրատարակված գրքի տեղեկությամբ, 1936-ից մինչև 1938 թ. Ադրբեջանում ձերբակալվել են 13.356 ադրբեջանցիներ, 16.988 հայեր, 16.488 վրացիներ, 15.000 «իրանցիներ»², իսկ «Ստալինյան ցուցակներով» Ադրբեջանում պատժվել է 870 մարդ, որից 340-ը՝ ադրբեջանցիներ³, այսինքն՝ Ադրբեջանում նրանցից անհամեմատ ավելի «պատժվել են» այլազգիները: Սա կարող է որոշ չափով լույս սփռել ԼաՀիճ բնակավայրի բնակչության թվակազմի նվազման հարցի վրա. 15.000 պատժված «իրանցիների» մեջ, ամենայն հավանականությամբ, պետք է հասկանալ նաև իրանալեզուներին, մասնավորապես թաթերին ու թալիշներին: Նրանք, հավանաբար, պետք է քստորված լինեին կա՛մ հանրապետության ներսում, կա՛մ, որ ավելի հավանական է՝ Սիրիո: Իսկ ԼաՀիճի բնակչությունը հաճախ «թաթ» է անվանվել:

ԼաՀիճի բնակչության թվաքանակը շարունակել է նվազել նաև 1939-ից հետո՝ մինչև 1959-ը, 20 տարում 2.672-ից հասնելով 1.981-ի: Այս դեպքում էլ կարող ենք ենթադրել, որ մեղավորը Երկրորդ համաշխարհային պատերազմն էր: Մի փոքր տարակուսանք է առաջացնում, իհարկե, թե ինչո՞ւ եւ ինչպե՞ս այս նույն 20 տարում նույն իսմայիլի շրջանում 10.282-ով ավելացել է ադրբեջանցիների թիվը

¹ «Շամախիի գավառի բնակչությունը 1926 թ.», <http://www.ethno-kavkaz.narod.ru/shemaha26.html>.

² Исмаилов Э., История «Большого террора» в Азербайджане, с. 170.

³ Նույն տեղում, էջ 171:

28.889-ից հասնելով 39.171-ի, բայց տեսականորեն կարող ենք համարել, որ շրջանի «բազմաթիվ էթնիկական փոքրամասնությունները» լեզգիները, թալիշները, շարունակում էին «հաճույքով գրվել աղբբեջանցի»:

Աղյուսակ. Իսմայիլի շրջանի Լահիճ ավանի ազգային կազմի ըստ ցարական եւ խորհրդային պաշտոնական մարդահամարների նյութերի								
	1859-64 թ. ¹	1873 թ. ²	1896 թ. ³	1926 թ. ⁴	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.
Ընդամենը	5.228	5.750	6.914	4.082	2.672	1.981	853	884
Թաթ	5.228	-	6.914	3.643	-	-	-	-
Թաթար	-	5.750	-	-	-	-	-	-
Թուրք				431				
Աղբբեջանցի	-	-	-	-	462	1.962	842	882
Լեզգի	-	-	-	-	1	-	-	2
Ռուս	-	-	-	-	1	15	8	-
Հայ	-	-	-	-	-	1	1	-
Հրեա	-	-	-	-	1	-	-	-
Այլ	-	-	-	-	2.206	-	-	-

Իսկ ահա 11 տարի անց, 1970-ին Լահիճի բնակչությունը՝ լահիճները կտրուկ նվազում են՝ 1.981-ից հասնելով 853-ի, եւ այս թիվը փոքր շեղումներով շարունակվում է մինչեւ այսօր (1989-ին՝ 842 մարդ⁵, 2009-ին՝ 837): Դարձյալ տեսականորեն կարող էինք համարել, որ սա

¹ Списки населенных мест Российской Империи. По Кавказскому краю составленные и издаваемые Кавказским статистическим комитетом при Главном управлении Наместника Кавказского. Бакинская губерния. Список населённых мест по сведениям 1859 по 1864 год, Составлен гл. ред. Комитета Н. Зейдлицем, Тифлис, 1870, VI, [2], 134, XIV, VIII, с. 30.

² Бакинская губерния. Список населённых мест по сведениям 1873 года, – Сборник сведений о Кавказе/ Под ред. Н. Зейдлица.Тифлис, т. 5, 1879.

³ Лагич, – Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона, т. 82, СПб., 1890/1970.

⁴ «Շամախի գավառի բնակչությունը 1926 թ.», <http://www.ethno-kavkaz.narod.ru/shemaha26.html>.

⁵ Всесоюзная перепись населения 1989 года. Численность городского населения союзных республик, их территориальных единиц, городских поселений и городских районов по полу, http://demoscope.ru/weekly/ssp/sng_89_reg2.php.

Ադրբեջանի ուլբաճիզացիայի արդյունք էր, եթե, իհարկե, Ադրբեջանի ընդհանուր բնակչության մեջ գտնեինք «լահըջ-լահիճ» անունով մարդկանց թեկուզ փոքր թվաքանակ. բայց այդպիսիք չկան: Պաշտոնական մարդահամարներով՝ Լահիճում շարունակում են ապրել «ադրբեջանցիներ», սակայն որոշ ոչ պաշտոնական տեղեկատուներում ասվում է, որ Լահիճի բնակիչներն իրենք իրենց անվանում են թավթեր եւ խոսում են թավթերեն¹, այլոց մեջ՝ բնակիչները Լահիճներ են, լեզուն՝ Լահիճերեն (Лагич – Национальный состав – 99.9% лагичи, этнохороним – лагичцы, лагичей)²:

1936-ին Ադրբեջանի դպրոցներում արգելվեց կովկասալեզու եւ իրանալեզու ժողովուրդների լեզուների ուսուցումը: Դա ստալինյան տեռորի բարձրակետն սկսող տարին էր, երբ Միր-Ջաֆար Բաղիրովի իշխանությունը Ադրբեջանում փաստացի միահեծան էր, եւ նա վայելում էր Լ. Բերիայի ընկերությունը, օժանդակությունն ու հովանավորությունը: Բաղիրովը Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար էր դարձել Անդրֆեդերացիայի կոմկուսի կենտկոմի քարտուղար Բերիայի ընտրվելուց մեկ տարի անց 1933-ին, եւ նրանք ընդհուպ մինչեւ 1953 թ. փոխադարձաբար նպաստել են միմյանց կուսակցական առաջխաղացմանը³: Բաղիրովը համարվում էր «Բերիայի մարդը» եւ աշխատանքի մեթոդներով նրանից շատ չէր տարբերվում: Ադրբեջանում, որտեղ նրան տեղական Ստալին էին ընդունում եւ «Հայր Բաղիրով»՝ «սիրելի Հայր Բաղիրով», «հարազատ Հայր Բաղիրով» կոչում, նա համարյա բացարձակ տեր ու տնօրեն էր⁴, եւ, իհարկե, մարդիկ նրանից վախենում էին: Ղուբայի եւ Իսմայիլիի շրջանների բնակչությունը դեռ շատ լավ էր հիշում Հայկական կոտորածների շրջանում Բաղիրովի ակտիվությունը, իսկ ավելի ուշ՝ նրա հովանավորությունը այդ կոտորածները կազմակերպողներին եւ իրականացնողներին: Ադր-

¹ Ализаде А., Лагич, историко-культурный заповедник Азербайджана, – Журнал: İRS. – 2005, № 4, <http://irs-az.com/new/pdf/090621155605.pdf>.

² Википедия: Лагич, http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/244470#cite_note-24.

³ Լ. Բերիայի հանցագործությունների՝ 1953-ի քննության ւսպտեմբերի 8-ի Բերիայի հարցաքննության արձանագրությունը, վկա Մ. Բաղիրովի՝ փոխտեմբերի 29-ի հարցաքննության արձանագրությունը (ՊԿՏՊԻ, Փ. 17, Օր. 171, Դ. 470, Ա. 215-225, <http://istmat.info/node/22274>); Մ. Բաղիրովի հանցագործությունների՝ 1954-ի քննության ապրիլի 9-ի հարցաքննության արձանագրությունը (ՊԿՏՊԻ, Փ. 17, Օր. 171, Դ. 474, Ա. 86-96, <http://istmat.info/node/22310>), ֆրաշտարակված է՝ «Полигбюро и дело Берия» (<http://istmat.info/node/22125>).

⁴ Исмаилов Э. Р., Власть и народ. Послевоенный сталинизм в Азербайджане. 1945-1953, Баку, 2003, с. 151.

բեջանում ոչ ոք էջը կարող ըմբոստանալ Բաղդիրովի որոշումների դեմ, ցանկացած դժգոհություն որակավորվում էր որպես քաղաքական այլախոհություն «Հակահեղափոխականություն», «Հակասովետականություն», «տրոցկիզմ»: Մարդկային կյանքը ոչինչ չարժեք, քաղաքական այլախոհները դատվում էին ոչ թե դատարանում, այլ տրոյկաների որոշումներով: Խորհրդային տոտալիտարիզմը շատ լավ հնարավորություն էր՝ իշխանությունն որոշումները պարտադրելու: Հնարավոր է, իհարկե, որ Ադրբեջանի ԿԳԲ-ի արխիվներում աշխատելու դեպքում տեղաբնիկ ժողովուրդների լեզուներն արգելելու որոշման դեմ ըմբոստացածների հետապնդումների փաստեր հայտնաբերվեն, բայց բոլոր դեպքերում այս որոշումը հաղթականորեն կատարվում էր: Սրան դեռ պիտի հաջորդեք Ադրբեջանի պատմության շարադրանքը, որից պիտի դուրս մղվեին Ադրբեջանի բոլոր տեղաբնիկ ժողովուրդները:

Անկախացած Ադրբեջանի հանրապետության հետագա ներքին զարգացումները լիովին ապացուցեցին ինքնահաստատվող ադրբեջանա-թուրքական ինքնության ագրեսիվությունը: Իսմայիլիի շրջանը Ադրբեջանի հանրային գիտակցության մեջ ընկալվում է որպես լեզգիական շրջաններից մեկը, չնայած պաշտոնական մարդահամարով լեզգիները կազմում են շրջանի բնակչության միայն մոտ 10%-ը: Հայտնի է նաև, որ 1939-ից մինչև 1979 թ., պաշտոնական մարդահամարների տեղեկություններով, շրջանում լեզգիների թիվը նվազել էր՝ 7.250-ից հասնելով 5.788-ի: Լահիճ գյուղում ադրբեջանցի ուսուցիչները 2003-ին դպրոցից վճռեցին էին ծախուր երեխաներին, նրանց ծնողներին «Հայ» անվանելով՝ պահանջել էին իրենց հանգուցյալներին ընդհանուր գերեզմանատանը չթաղել, ադրբեջանցի երեխաներին սովորեցնում էին լեզգիների հետ ընկերություն չանել, նրանց հետ չամուսնանալ, իսկ լեզգիների սպառնացել էին՝ «չան ծնունդներ, ձեզ պետք է լեռները քշել, դուք պետք է գիշատիչների պես ապրեք» եւն¹: 2003 թ. հունվարի 23-24-ին Իսմայիլիի շրջանում բռնկված ժողովրդական հուզումներն իշխանությունները շտապեցին պատճառաբանել կենցաղային բախում-

¹ Лезгиви. Армяне враги нашей религии? URL: <http://pandukht.livejournal.com/1035512.html>; <http://www.lnka72.ru/>, см. также: Представители лезгинской молодежи: Мы не считаем армянский народ нашим врагом (URL: <http://lezgistan.tv/novosti/predstaviteli-lezginской-molodezhi-my-ne-schitaem-armyanskiy-narod-nashim-vragom/>); Война с армянами в Карабахе – «не наша война»: обращение общественных организаций Азербайджана (<http://lezgistan.tv/novosti/vojna-s-armyanami-v-karabaxe-ne-nasha-vojna-obrashhenie-obshhestvennykh-organizacij-azerbajdzhana/>).

ներով¹, Ադրբեջանի ներքին գործերի նախարարը դա անվանեց երկու հարյուր խուլիգանների գործողություններ, ձերբակալեցին 150 մարդու: Լեզգիական միջավայրը, սակայն հիշեցրեց, որ չըջանում լեզգիական եւ առհասարակ ազգային փոքրամասնությունների էթնիկական կարիքներն արհամարհված են, թաթերեն, լեզգիերեն լեզուները դպրոցներում բացակայում են, չըջանի միակ այլալեզու դպրոցը Իվանովկա գյուղի ուսական դպրոցն է, որը խիստ սահմանափակ ընդունելություն ունի: Թալիշական «Թալըչը Սադո» թերթի խմբագիր Գիլալ Մամեդովը ձերբակալվեց կեղծ մեղադրանքով: Իշանությունները արհեստական դժվարություններ են ստեղծում Լահիճի բնակչության ավանդական եւ խիստ պահանջարկված արհեստագործական արտադրանքն իրացնելու համար՝ այն անվանելով հնոտի (անտիկվարիատ) եւ զբոսաշրջիկներին արգելելով երկրից դուրս տանել այսօրվա արտադրանքը²:

Ադրբեջանի լեզգիները վաղուց են բարձրաձայնում իրենց էթնիկական մշակույթի դեմ ագրեսիայի, իրենց ինքնությունն ոտնահարման, կովկասալեզու ժողովուրդների նկատմամբ Ադրբեջանում դրսևերվող ակնհայտ արհամարհանքի եւ թուրքացման քաղաքականության դեմ դժգոհությունը: Նոր կայացած ադրբեջանա-թուրքական ինքնությունն իր բացարձակ իշխանության իրավունքի փաստարկման չըջանում է եւ որպես սկսնակ այդ իրավունքի որեւէ վիճարկում չի հանդուրժում: Ադրբեջանի պետության մեջ ոչ-ադրբեջանցիների սեփական ինքնության պահպանման կամքի արտահայտումն ընկալվում է իբրեւ ադրբեջանա-թուրքական ինքնության հաղթանակի հանդեպ մարտահրավիր:

Ղարաբաղի հայ բնակչության կողմից Ղարաբաղն Ադրբեջանից անջատելու որոշումը եւ դրան հաջորդած սոււմգայիթյան ջարդերը մարդկանց հիշության մեջ ակտիվացրել էին ոչ միայն հայկական ջարդերի չմոռացված պատկերները, այլեւ իրենց էթնիկական՝ ժողովրդագրական, լեզվական, մշակութային եւ ինքնության կորուստները: Խորհրդային խաղաղ թվացող տարիներին Ադրբեջանում տեղի էին ունեցել անդառնալի փոփոխություններ: Կոնկրետ Իսմայիլի չըջանի բնակիչները հիշում էին նաեւ հարեւան Կուտկաչենի (ներկայիս՝ Ղաբալայի) եւ Վարդաչենի (ներկայիս՝ Օղուզի) չըջանների ուղիների բռնի խլամացման ու կոտորածների՝ ոչ վաղ անցյալի գործողությունները եւ եզ-

¹ Власти встретились с общественностью азербайджанского города Исмаиллы после протестных акций (<http://www.vestikavkaza.ru/news/Vlasti-vstretilis-s-obshchestvennostyu-azerbaydzhanskogo-goroda-Ismailly-posle-protestnykh-aktsiy.html>).

² За событиями в Исмаиллы стоит бесправие лезгин, русских, лагичей и самих азербайджанцев (<http://flnka.ru/main/1203-za-sobytyami-v-ismailly-stoit-bespra-vie-lezgin-russkih-lagichey-i-samih-azerbaydzhancev.html>).

րակացնում, որ խնդիրը միայն «Հայուժյունը» է և եւ կան ավելի խոր-
քային պատճառներ: Խնդիրն Ադրբեջանում ավելի ու ավելի բացա-
հայտփող «թուրքական ռասիզմն» է, որն արագ ազգակերտման՝ սոցիա-
լական ճարտարապետութեան պետական քաղաքականութեան Հաճախ
սովորական, բնական ուղեկիցն է: Հասկանալի է, որ նրանց փորձը հու-
շել էր, որ Հայերով խնդիրը չի ավարտվում: Իսմայիլիի շրջանի Հայերի
ստացած «էթնիկական օգնութիւնը», թերեւս, էթնիկական ինքնա-
պաշտպանութեան չծրագրավորված, գուցե՝ դեռեւս ոչ լրիվ զիտակց-
ված, ինքնաբուխ դրսեւորում էր:

Հերոդոտոսի ուտիների եւ մյուկերի տեղադրության շուրջ

Ուտիների եւ մյուկերի տեղադրությունը պատմագիտությունում մեջ տարբեր ենթադրությունների տեղիք է տվել, այն դեպքում, երբ, կարծես թե, հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրների տեղեկությունները թույլ են տալիս նշված ժողովուրդներին առավել հստակությունը տեղադրել: Այս առումով, անկասկած, պետք է զգուշ լինել տարժամանակյա աղբյուրների տեղեկություններն առանց լուրջ հիմնավորման արհեստականորեն համադրելուց՝ հեռուն գնացող անհիմն նույնացումներ եւ տեղադրություններ կատարելով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Հեկատոս Միլեթացու եւ Հերոդոտոսի տեղեկություններին, որոնք էլ դարձրել են քննության առարկա չանդրադառնալով ուտիների եւ մյուկերի վերաբերյալ անտիկ աղբյուրների մնացած տեղեկություններին¹:

Այսպես, հույն պատմիչ Հերոդոտոսը գրում է. «Սագարտինները, սարանգները, թամանները, ուտինները, մյուկները եւ Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչները, որտեղ արքան բնակեցնում է, այսպես կոչված, տեղահանվածներին, այս բոլորը վճարում էին վեց հարյուր տաղանդ հարկ. սա տասնչորսերորդ նահանգն էր»²: Ինչպես տեսնում ենք, մեջբերված տեղեկությունը XIV սատրապությունը տեղադրում է Հայաստանից եւ վերջինիս սահմաններից շատ հեռու՝ Պարսից ծոցի եւ հարավային Աֆղանստանի միջև: Սակայն ստացվել է այնպես, որ որոշ ուսումնասիրողների կարծիքով³, Հերոդոտոսի մոտ խոսքը գնում է ու-

¹ Սորբե թվարկենք մի քանի ուսումնասիրություններ. А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 74-84; он же: К хронологии завершения этноконсолидации удигов и лезгин (период ослабления Арабского халифата), – Albania Caucasia, Вып. I, Отв. редакторы: А. К. Аликберов, М. С. Гаджиев, Москва, 2015, с. 129-147; նույնի՝ Պատմա-աշխարհագրական և վիճակագրատարական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Եր., 2009, էջ 401-420; Հ. Խորիկյան, Մարաստանի էթնիկական կազմի շուրջ՝ ըստ Սորարոնի, – Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2012, էջ 337-341:

² Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986, III, 93: Այսուհետև հղումները տե՛ս բնագրում:

³ St' u J. Marquart, Untersuchungen zur Geschichte von Eran, Bd. II, Leipzig, 1901, S. 172; И. Алиев, История Мидии, Баку, 1960, с. 103, прим. 5; Р. Меликов, Этническая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.), Баку 2003, с. 117.

տինների երկու առանձին խմբի մասին, մեկը՝ Իրանի ներքին շրջաններում (III, 93.2), մյուսը (VII, 68)՝ իբրև թե, Արաքսից հարավ Իրանական Ադրբեջանում:

Ի. Դյակոնովի կարծիքով՝ մերձարաքսյան ուտինները մտել են Այսրկովկասում առաջացած Սկյութական թագավորության կազմի մեջ¹: Է. Գրանտովսկին կարծում է, որ եղել է ուտինների մեկ ցեղ՝ Կուրից հարավ եւ Արաքսի ստորին հոսանքից արեւմուտք², այսինքն, ըստ էության, ի նկատի ունի Մեծ Հայքի Ուտիք աշխարհի տարածքը:

Ուտինները կապվում են հին պարսկական Յաուտիյայի հետ եւ, հավանաբար, Կրմանի իսլամական ժամանակաշրջանի ջուտերի նախնիներն են, որոնց չպետք է շփոթել զուտտ-գնչուների հետ³: Ուտինները բնակվում էին Կրմանում (Քերման): Ի. Մելիքովը, ընդունելով Յաուտիյայի տեղագրությունը Կրմանում, անհիմն բացառում է⁴ ուտինների նույնացումը Բեհիսթունի արձանագրության Յաուտիյային⁵: Նշենք, որ հայոց Ուտիք աշխարհի անունը մասնագիտական գրականության մեջ փորձել են կապել «հուիտ» բառի հետ, ինչը ուտինների ցեղանվան հետ ոչ մի ծագումնաբանական առնչություն չունի, եւ ոչ մի աղբյուր Ուտիքը ուտինների գավառը չի համարում⁶: Քսերքսեսի հունական արշավանքին ուտինները, մյուս կերպ, պարիկանինները, ըստ Հերոդոտոսի, զինված էին պակտյուլացիների նման, ընդ որում, ուտինները եւ մյուս կերպը հանդես են գալիս միասին, իսկ պարիկանինները՝ առանձին (VII, 68): Հետեւաբար՝ ուտինների, ինչպես նաեւ մյուս կերպի նույնացումը Մեծ Հայքի

¹ И. М. Дьяконов, История Мидии от древнейших времен до конца IV века до н. э., Москва-Ленинград, 1956, с. 280.

² Э. Грантовский, Сагартин и XIV округ государства Ахеменидов по списку Геродота, — Краткие сообщения Института народов Азии, 46, 1962, с. 239.

³ Р. Фрай, Наследие Ирана, Москва, 1972, с. 79. St'u šauš E. Herzfeld, The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 300. Ուտիներին Յաուտիյայի եւ մյուսերին Մակայի հետ կապում է նաեւ Է. Հերցֆելդը (անդ., էջ 196, 300):

⁴ Р. Меликов, Նշվ. աշխ., էջ 115:

⁵ R. Kent, Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 125; "A Commentary on Herodotus Books I-IV", ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press. Inc., New York, 2007, p. 490; B. Jacobs, Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, Wiesbaden, 1994, S. 198-199.

⁶ Б. Арутюнян, Рауф Меликов, Этническая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.), — «Գիտություն» գիտություն, 2005, հուն. 5, էջ 144-146: Հմմ. Յ. Կարազեղեան, Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից գաղապներում), Եր., 1998, էջ 185:

Ուտիք նահանգին եւ վերջինիս մի մասում կամ հարակից տարածքում տեղորոշվող Մուղան երկրամասին արհեստական է եւ անհիմն:

Այսպիսով, եթե որոշ ուսումնասիրողներ ուտիներին արհեստականորեն կապում են Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հետ, ապա մյուսներին էլ նույն սկզբունքով պետք է փնտրեն ուտիների հարեւանությամբ, ինչի համար բավական է եղել մյուսների անվան զուտ արտասանական նմանութունը Մուղանի դաշտի հետ: Մյուսներին եւս որոշ ուսումնասիրողներ բաժանում են երկու խմբի. մեկը Իրանի ներքին շրջաններում, երկրորդը՝ Արաքսի մոտ¹: Ռ. Մելիքովը մյուսների նույնացումը հին պարսկական արձանագրությունների Մակա երկրին բացառում է եւ տեղադրում է Մուղանում²: Ռ. Ֆրայը մյուսներին համարում է մեկ ցեղ եւ նույնացնում Մակա-Մեկրանին³: Է. Գրանտովսկին խոսում է մյուսների մեկ խմբի մասին եւ տեղադրում Արաքսի ստորին հոսանքի շրջանում, այսինքն՝ Մուղանի տարածքում⁴: Սակայն Մուղանի եւ մյուսների նույնացումը բացառվում է, քանի որ Մուղանի ավելի հին անվանումը՝ Մովական, Մովկան, Մովկանք պահպանել են վրացական աղբյուրները (թեկուզ եւ միայն Կուրի ձախսփնյա երկրամասի համար)⁵, այսինքն այս դեպքում մյուսների անվան հետ լեզվական կապը Մուղանի հետ անհիմն է:

Մեր կարծիքով՝ Մուղան տեղանունն ավելի շուտ կապված է մոզերի, քան թե, ինչպես կարծում է Դ. Ալիեւը, մյուսների հետ⁶: Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի գավառանունների վրա, որոնց ստուգաբանական կապը զբաղաչտական պաշտամունքի եւ հավատալիքների հետ միանգամայն հնարավոր է: Օրինակ՝ Որմիզդ-Պերոժ գավառանունը կապված է Ահուրա-Մազդա – Որմիզդ աստվածանվան հետ եւ նշանակում է «Որմիզդի հաղթանակի վայր»⁷: Փայտակարան նահանգի մյուս՝ Հրաքոտ Պերոժ

¹ J. Marquart, zur Geschichte von Eran, Bd. II, S. 174; И. Алиев, История Мидии, с. 103, прим. 5; с. 104, прим. 6.

² Р. Меликов, Նշվ. աշխ., էջ 122:

³ Р. Фрай, Նշվ. աշխ., էջ 79: St' u Gata H. W. Bailey, Maka, – JRAS, Vol. 114, London, 1982, p. 10-13; В. Jacobs, Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 262-265.

⁴ Э. Грантовский, Сагартин и XIV округ государства Ахеменидов..., с. 236.

⁵ Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Ա, Եր., 1934, էջ 143-144, 147, 165-166, 168:

⁶ И. Алиев, Племена и племенные группы в Атропатене, – ВДИ, 1987, № 3, с. 63.

⁷ Э. Хуршудян, Армения и сасанидский Иран, Алматы, 2003, с. 228, прим. 332, 333.

գավառը¹, որը տեղագրվում է Մուղան-Մովականի դաշտում, կապված է իրանական *Frāhat-pērōz > *Frādat-pērōz «Հաղթանակի բարեհաջողութիւնը նպաստող վայր» նշանակութեան հետ: Մյուս Սպանդարան Պերոժ գավառն էլ կապված է իրանական էպոսի հերոս Սպանդիատի հետ՝ որպէս *Spandaδātān pērōz/ž «Սպանդարատի Հաղթանակ, Սպանդարատի եւ նրա զինակիցների Հաղթանակի վայր»²:

Այս տարակարծութիւնների պատճառը Հեկատեոս Միլեթացու հետեւյալ հատվածային պահպանված տեղեկութիւնն է. «...մյուկերից մինչեւ Արաքս գետը»³: Սակայն այս տեղեկութիւնը սոսկ ցույց է տալիս Ասիայի սահմանը հարավից՝ Կարմիր ծովի ափին բնակվող մյուկերից մինչեւ Հյուսիս՝ Արաքս գետը, որը կարող է լինել Ամու-Դարջան (Օքսը) կամ էլ Ինդոսը: Հետեւաբար նշված տեղեկութեան Արաքսի նույնացումը Հայկական Երասխին բացառվում է, քանի որ Արաքս գետանունը Հերոդոտոսի մոտ համապատասխանում է Սեֆիդ-ուուդին, Դանուբին, Ամու-Դարջային, բայց ոչ Երասխին⁴:

Ուրեմն, կարող ենք պնդել, որ XIV սատրապութեան կազմում Հիշատակվող ուտիները եւ մյուկերը ո՛չ աշխարհագրական, ո՛չ էթնիկական առումով բացարձակապէս կապված չեն Ուտիքի եւ Մովական-Մուղանի հետ:

¹ Ա. Յակոբեան, «Աշխարհացոյց» Է դարի Անանունի. Գիտա-քննական բնագիր, – ՀԱ, Վիեննա-Եր., 2013, թիւ 1-12, էջ 140:

² А. Амбарцумян, Пайтакаран, область Гуштасфи и гора Сабалан в армянских и в иных литературных источниках (этимологии названий и происхождение традиции), – Международная конференция по арменоведению «Письменные памятники армянского наследия», Восточный факультет, СПб.ГУ, Санкт-Петербург, 2014, с. 4, <https://ru.scribd.com/doc/240714971/Paytakaran-Province-Gushtasfi-and-mount-Sabalan-in-the-Armenian-and-other-literary-sources-etymology-of-names-and-origin-of-the-tradition>.

³ С. Müller, Fragmenta Historicorum Graecorum, Vol. I, Parisiis, 1841, p. 11-12, fr. 170, 183.

⁴ Արաքս գետանվան նույնացումների մասին տե՛ս Ա. А. Аюпян, Албания-Алуанк, с. 76; Հ. Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենցերի տեղադրության շուրջ, – ՄՄԱԵԺ, հտ. XXVI, Եր., 2007, էջ 27; նույնի՝ Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, – ՊԲՀ, 2008, №¹⁰ 1, էջ 229:

Պանդի սուրբը, սրբավայրը, բռնագաղթը եւ նոր սփյուռքը

1988-1991 թթ. Հայերի բռնագաղթը Ադրբեջանական ԽՍՀ-ից իր մեջ կրում է ոչ միայն մարդկանց, խմբերի տեղաշարժեր ու ճակատագրերի փոփոխություններ, այլև մշակութային երեւույթների փոխակերպումներ: Ինչպե՞ս է բռնագաղթը փոխակերպում մշակութային երեւույթները, ինչպե՞ս է մշակութային երեւույթը բռնագաղթի հետեւանքով պահպանում իր շարունակականությունը, ձեռք բերում նոր դիմադիժ ու ձեւավորում համապատասխան նոր մշակութային ու տարածական միջավայր: Այս խնդիրները մենք քննարկում ենք «Պանդի» սրբի օրինակով: Այն ուշագրավ մի երեւույթ է, որն իր մեջ կրում է ոչ միայն խմբային ու անհատական կրոնականությունից դրսևորումներ, այլև կապված է եղել կոնկրետ պատմական, մշակութային, աշխարհագրական միջավայրի հետ, ունեցել համապատասխան տարածական ձեւ:

Ժողովրդական «Պանդ» անունով հայտնի սրբավայր-մատուռը Հյուսիսային Արցախի եւ Գանձակի դավառի (այսինքն՝ մեծ իմաստով Գարդմանի) հայություն համար կարեւոր ուխտավայր է եղել, որի մասին ազգագրական տեղեկություններ հանդիպում են դեռեւս 19-րդ դ. վերջի աղբյուրներում: Սրբավայրի առաջացումը եւ անունը կապվում է միջնադարյան Աղուանքում հայտնի Սուրբ Պանդալեոնի (Հուս. Պանտալեյմոնի) հետ, որի մասին հիշատակում են Մովսես Դասխուրանցին (Կաղանկատավացին), «Վարք սրբոց»-ը եւ այլ աղբյուրներ: Միեւնույն ժամանակ սրբավայրի առաջացման մասին կան ժողովրդական ստուգաբանություններ: Այդ անունով է հայտնի նաեւ սարը, որի վրա դտնվել է ուխտավայրը:

Այն տարածաշրջանային նշանակությամբ մի յուրօրինակ սրբավայր էր, որի շուրջը ձեւավորված ժողովրդական արարողակարգն ու կրոնական մշակույթը իր օգոստոսյան ուխտագնացություններով մինչեւ 1988 թ. կենդանի էր Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի, Դաշքեսանի շրջանների հայություն համար:

1988-1991 թթ. Հայերի բռնագաղթը այդ տարածաշրջանից իր հետեւանքներն ունեցավ նաեւ Պանդի սրբի, դրա շուրջ ձեւավորված համապատասխան կրոնական ու ժողովրդական մշակույթի վրա: «Գաղթեց» ոչ միայն հիշողությունը Պանդի մասին, այլև նրա շուրջ ձեւավորված արարողակարգը եւ տարածական կազմակերպման ձեւը կրելով նոր սոցիալական միջավայրի ու գործընթացների ազդեցությունը:

Ադրբեջանից բռնագաղթյալ այդ շրջատարածքի բնակչության ջանքերով ՀՀ-ում եւ ՌԴ-ում ի հայտ եկան Պանդի նոր սրբավայրեր (ՀՀ-ում՝ գյուղ Սոթք, Հայաստան, ՌԴ-ում՝ ք. Կրասնոդար), որի շուրջ փորձ արվեց վերարտադրել կորսված մշակույթը:

1990-ական թթ. միգրացիոն ակտիվ հոսքերի հետեւանքով Կրասնոդարում, որտեղ կային նաեւ տեղաբնակ հայեր, հաստատվում են Հայուցիական տարբեր խմբեր՝ Հայաստանցիներ, ադրբեջանահայեր եւն: 1991 թ. մայիսի սկզբին Գետաշենի եւ Մարտունաշենի Հայաթափումից հետո Կրասնոդարում հաստատվում են նաեւ մեծ թվով գետաշենցիներ:

Կրասնոդարի հայկական համայնքի ձեւավորումն ըստ այդմ էլ ընթանում է հայերի տարբեր խմբերի փոխազդեցությունների միջոցով: Համայնական կայացման առանցք է դառնում եկեղեցին, իսկ հետխորհրդային եկեղեցաշինությունը դառնում է համայնական-կրոնական ինստիտուցիոնալիզացիայի կարեւոր գործոն:

Դեռեւս խորհրդային տարիներին, մինչեւ դարաբաղյան դեպքերը, Կրասնոդարում հաստատված գետաշենցիներից մեկը, թերեւս, ընտանեկան շարժառիթներով Պանդի սրբավայրից մի քար է բերում Կրասնոդար որպէս հայրենիքից մի մասունք՝ պահելով այն իր տանը: Ըստ էության, ընտանեկան շրջանակում այն ձեռք է բերում «տան սրբի» կարգավիճակ: 1990-ական թթ. հետխորհրդային վերոնշյալ գործընթացների կիզակետում է հայտնվում նաեւ Կրասնոդարի «Պանդը»: Երբ քաղաքային իշխանությունները հայկական եկեղեցու կառուցման համար տարածք են տրամադրում եւ սկսվում է Կրասնոդարի Ս. Հովհաննես եկեղեցու շինարարությունը, դեպի նոր եկեղեցի ճանապարհ հարթելու, մարդկանց հոսքը նոր կրոնական կենտրոն ապահովելու, եկեղեցու հետ կապը ձեւավորելու նպատակով, տեղի հոգեւոր հայրերի հորդոր-առաջարկով, այս քարը տեղափոխում են եկեղեցու տարածք, ուր զուգահեռ սկսվում է «Պանդի» սրբավայրի (մատուռի) կառուցումը, որն արդեն իր մեջ կրում է նաեւ նոր իմաստ՝ կապված կորսված հայրենիքի ու բռնագաղթի հիշողության հետ:

Այսպիսով, Կրասնոդարում Պանդի սրբավայրից բերված քարը, դառնում է Պանդի ուխտի խորհրդանիշ իր շուրջը համախմբելով բռնագաղթյալ գետաշենցիներին եւ Պանդի հիշողությունը կրող ու պահպանող ադրբեջանահայ մյուս խմբերին. միեւնույն ժամանակ, պաշտոնականացվելով եկեղեցու կողմից այն դառնում է կրոնական համայնքի ձեւավորման ազդեցիկ եւ խիստ հետաքրքրական մի միջոց:

Երուսաղեմյան սրբազան ավանդույթի եւ պատկերագրության
արձագանքները Աղուանքի դարձի պատմության մեջ

Աղուանից աշխարհի դարձի մասին պատմական ավանդույթները պահպանվել են Մովսես Կաղանկատվացի կամ Դասխուրանցի անունով Հայտնի Հեղինակի շարադրած «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում: Վերջինս տարածին, տարածանր ու տարժամանակյա աղբյուրների հիման վրա կազմված ժողովածո է, որի վերջնական խմբագրութունը թվագրվում է 10-րդ դարի վերջով: Ըստ այդմ՝ քրիստոնեացման մասին տեղեկութունները եւս բավական խճճված ու խնդրահարույց են, քանի որ միահյուսում են տարբեր ժամանակների եւ տարբեր անձանց հետ կապված պատմութուններ եւ առասպելներ շարադրված տարբեր պատմա-քաղաքական համատեքստերում եւ տարբեր միտումներով ու նպատակներով: Այդուհանդերձ, ամբողջությամբ վերցված՝ այդ ավանդույթները հիմնականում ամփոփված են երկու առանձին երկերում՝ Հայոց Գրետ կաթողիկոսի նամակում՝ ուղղված Աղուանից Վաչէ Բ թագավորին, եւ Վաչագան Բարեպաշտին նվիրված «Վէպում», եւ արտահայտում են Աղուանից աշխարհի քրիստոնեացման գործընթացի երեք պատմական շերտերը. առաքելական ժամանակաշրջանը եւ քրիստոնեական առաջին համայնքի հաստատումը (70 թ. հետո), որ կապված է Եղիշայ նահատակի (առաքյալի) անվան հետ, չորրորդ դարը եւ թագավորության պաշտոնական դարձը (մոտ 315 եւ 371), որ կապված է Աղուանից թագավոր Ուռնայրի, Հայոց Տրդատի, Գրիգոր Լուսավորչի եւ նրա թոռ Գրիգորիսի անունների հետ, հինգերորդ դարը եւ վերաքրիստոնեացման շարժումը (422-451 եւ 484-490), որ կապված է Եսվաղեն եւ Վաչագան Բարեպաշտ թագավորների, ինչպես նաեւ Մեսրոպ Մաշտոցի ու իր աշակերտների անվան հետ:

Ինչպես արդեն նկատվել է տարբեր մասնագետների կողմից, այս պատմական ավանդույթները մեզ են հասել 7-8-րդ դարերի խմբագրական տարբերակով եւ արտահայտում են երկու հակոտնյա միտումներ. մի կողմից՝ Աղուանից աշխարհի դարձը կապել Հայոց դարձի հանգամանքների եւ անձանց հետ հիմնավորելու համար Հայոց եկեղեցու դեր-իշխանութունը Աղուանից եկեղեցու նկատմամբ, ինչպես նաեւ Աղուանքի հայացման քաղաքականութունը, մյուս կողմից՝ Աղուանքի քրիստոնեացումը եւ եկեղեցու հիմնադրումը կապել ուղղակիորեն Ե-

րուսաղեմի եւ Հակոբ Տեառնեղորոհ Հետ՝ Հաստատելու Համար սեփական եկեղեցու ինքնիշխանութիւնը:

Սակայն, վերոհիշյալ աղբյուրների ուշադիր քննութիւնը եւ Համեմատական վերլուծութիւնը ցույց է տալիս, որ.

ա) երուսաղեմյան ավանդույթներին հղումն ավելի վաղ պատմութիւն ունի եւ կապված է հինգերորդ դարի իրողութիւնների հետ. Ընդամին, դեպի Երուսաղեմ Հայացքն այս դեպքում ոչ թե Հակադիր է, այլ ավելի շուտ կոմպլեմենտար է Հայկական քրիստոնեութիւնի ավանդույթների հետ կապի միտումին եւ տեղավորվում է ընդհանրապես Այսրկովկասի երեք ժողովուրդների պատմական զարգացման փոխառնչութիւններին՝ տվյալ փուլի Համատեքստում:

բ) Աղուանական տեքստում նկատվող երուսաղեմյան արձագանքները, թվում է, առավել կոնկրետ, բազմակողմանի ու ճանաչելի բնույթ ունեն եւ կապված են Սուրբ քաղաքի քրիստոնեացման պատմական ավանդույթի եւ 4-րդ դարի վերջին ու 5-րդ դարի սկզբին ձեւավորված «սրբազան պատկերազրութիւն» հետ: Վերջինս ամփոփում է քրիստոնեական Նոր քաղաքի իրական պատկերը, որ շրջագծված էր Քրիստոսի երկրային կյանքի վերջին շաբաթվա իրադարձութիւնները խորհրդանշող վայրերում կառուցված սրբատեղիներով եւ այդ սրբատեղիներն իրար կապող ծիսական արարողակարգով, եւ Երկնային Երուսաղեմի վախճանաբանական Հայեցական պատկերը, որ արտահայտվում էր Քրիստոսի Երկրորդ Գալստյամբ եւ երկրի վրա Աստծո արքայութիւնի Հաստատմամբ: Երկուսում էլ գլխավոր տեղը զբաղեցնում է Հաղթական Խաչը, որ խորհրդանշում է, միաժամանակ, նորագլուտ խաչափայտի մասունքը, Քրիստոսի Խաչելութիւնն եւ Հարութիւնն իսկութիւնը եւ Երկրորդ Գալստյան Նշանը, 351 թ. Երուսաղեմի երկնքում երեւացած տեսիլը եւ Գողգոթայում կանգնեցված ոսկեհուռ, մարգարտազարդ մոնումենտալ հուշարձանը: Հաղթական Խաչի Հայտնութիւնն խորհուրդը եւ մասունքի պատմութիւնը յավագույնս արտահայտված են երուսաղեմածին երեք աղբյուրներում՝ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութիւն» եւ «Թուղթ առ Կոստանդ կայսր» գրվածքներում եւ Հատկապես ամբողջ քրիստոնյա աշխարհում ամենահայտնի եւ ամենատարածված երկում՝ «Խաչգիւտի պատումում»:

գ) Աղուանից աշխարհի դարձի պատմութիւնը ներկայացնող տեքստերում երուսաղեմածին աղբյուրների օգտագործումը որպէս նախօրինակ՝ կարող է հիմնավորված լինել Աղուանից աշխարհում եւս Նոր Երուսաղեմի կառուցման եւ Երկրորդ Գալստյան սպասման դադարով, ինչպէս դա առկա է Հայոց եւ Վրաց դարձի պատմութիւններին շարադրման Հանգամանքներում:

Гуция Лусине
МАЭ РАН, Санкт Петербург
(Դուրյան Լուսինե)

Костюм армянок Шемахи (по материалам Музея антропологии и этнографии РАН (Кунсткамера))

В фондах Музея антропологии и этнографии (МАЭ) РАН (Санкт Петербург) в составе 18 коллекций фотографий и открыток хранится около 200 фотографических изображений, которые, согласно музейной документации, представляют культуру и быт армян. В числе указанных фотоснимков существенная часть – 70¹ фотографий – индивидуальные, парные или групповые женские портреты или жанровые сцены, в которых запечатлены женщины в традиционных костюмах.

Представленный в коллекционном собрании МАЭ исторический иллюстративный материал имеет исключительное значение для уточнения состава костюмных комплексов, бытовавших в различных локальных армянских традициях, способов ношения отдельных элементов одежды и украшений. Кроме того, сравнительный анализ фотоматериала с вещевыми коллекциями и сведениями, полученными из письменных источников, дает возможность реатрибутировать фотографии, представленные в собрании МАЭ. Фотографии в подавляющем большинстве имеют в регистрационной документации указания населенного пункта, региона или страны, жителями которых являются запечатленные на снимках женщины. Согласно зафиксированным указаниям в музейных документах, значительное число фотографий и открыток – постановочные снимки с участием армянок из Шемахи. Шемахинский комплекс одежды армянок до настоящего времени малоизучен и чрезвычайно редко встречается в музейных собраниях. Следовательно, фотографии в данном случае представляют собой исключительно важный источник, позволяющий уточнить ряд вопросов, связанных с историей развития традиционной армянской культуры.

¹ Одиннадцать снимков, представленных в фотоколлекциях этого собрания, дублируются в коллекции открыток МАЭ. В большинстве случаев это женские портреты, которые были использованы при публикации серии открыток, представляющих типы Кавказа.

Шемахинские армянки на фотографиях из собрания МАЭ сняты в традиционных костюмах, которые при наличии общих черт вариативны в ряде деталей.

К первому варианту относятся костюмы армянок на фотографиях № 135-5, 135-3, 135-4, 135-6, 135-7¹, 135-8, собранных статистиком и этнографом Н. К. Зейдлицем и переданных им в музей в 1883 г. В состав костюмного комплекса горожанки, как видно по фотографиям, входят головной убор, состоящий из небольшой низкой шапочки или обода, головного покрывала, плечевая одежда, представленная рубахой и короткополой верхней распашной одеждой, поясная — юбкой. Небольшая шапочка полусферической формы имеет спереди вышитую тулью. Подобные головные уборы были распространены в ряде армянских регионов, представлены они также на фотографиях иранских армянок (например, № 764-128). На лобную часть шапочки нашиты два ряда дисковидных бляшек, вероятно, это монеты или жетоны. Головное покрывало из тонкой сетчатой ткани темного цвета, декорированное по краям бахромой контрастного светлого цвета. Способ ношения покрывала на фотографиях этой группы следующий: один конец покрывала проведен под подбородком и закинута на плечо, край покрывала мог быть заправлен за уши (№ 135-7).

Плечевая верхняя одежда представляет собой длинный, доходящий до колен присборенный сзади (?) кафтан (в различных традициях называемый *чуха*, *каба*, *катиби*), с длинными рукавами, сшитый из бархата темного цвета, декорированный по краям галуном. Представленные на фотографиях кафтаны имеют два варианта рукавов: 1) сшитые из цельного куска бархата широкие длинные рукава без продольного соединительного шва в нижней части, края которой имеют форму цифры 8 (колл. № 135-4); 2) сшитые из бархата короткие рукава, к которым пришиты детали без продольного соединительного шва аналогичной формы в виде цифры из атласной ткани (колл. № 135-3, 5, 6). Бархатная верхняя плечевая одежда похожего кроя имеется в ряде армянских локальных традиций, в частности, в ереванской, как видно на рисунке Г. Г. Гагарина.

Важной декоративной деталью кафтанов шемахинок были крупные нашивные металлические полые объемные листовидные украшения по

¹ Фотография под колл. № 135-7 была издана в качестве открытки, экземпляр которой хранится в архиве МАЭ под колл. № 10-943.

краям полок, аналогии которым представлены также на верхней одежде армянки и на домашнем кафтане грузинки на рисунках Г. Г. Гагарина. Схожий способ декорирования верхнего платья нашивными металлическими украшениями представлен также на фотографиях иранских армянок А. Севрюгина (например, № 2471-43), однако здесь форма декоративных элементов иная – шаровидная.

Способ ношения кафтана, как видно на фотографиях шемахинских армянок, предполагал несмыкающиеся полы, оставляющие открытой переднюю часть рубахи, надетой под кафтан, из контрастной ему светлой, очевидно, шелковой ткани. Рубаха длиной до колен по краю подола украшена нашивными дисковидными бляшками, вероятно, монетами или жетонами (№ 135-4).

На всех фотографиях на женщинах кожаные (?) пояса с крупными металлическими пластинчатыми пряжками, с двух сторон от которых крепились полусферические детали (например, № 135-6). Пряжки декорированы в технике черни так же, как и большинство женских поясов историко-этнографических областей Арцах и Сюник.

Комплекс съемных украшений, представленный на указанных выше фотографиях, составляют монисты из нескольких рядов монет, нижний ряд которых спускается до пряжки пояса, куполообразные височные украшения, навешенные на головные покрывала и спускающиеся до плеч, многочисленные браслеты, надеваемые на обе руки.

Обращает на себя внимание прическа шемахинских женщин, в частности завитые локоны, закрывающие виски, которые спускаются ниже плеч. Аналогичные прически были распространены также у ереванских и тифлиских армянок и грузинок.

Второй вариант женского костюма из Шемахи представлен на фотографиях под колл. № 136-1, 2, собранных Н. К. Зейдлицем, № 1430-60, 1403-69, 83, 90 из собрания Ф. Ордена (фотографии сделаны до 1890 г.) и № 2471-52¹ из коллекции А. А. Ромаскевича. Несмотря на близость состава

¹ Согласно регистрационной документации, место съемок этой фотографии – Иран, а автор – А. Севрюгин. На фотографии между тем представлена женщина в костюмном комплексе из Шемахи, кроме того, вызывает сомнение авторство А. Севрюгина: о его посещении Шемахи нет сведений, а стилистика фотографии не соответствует известной манере этого фотографа.

ва костюмного комплекса, ряда его основных элементов с первым рассмотренным вариантом, наблюдаются и отличные от него черты, как в деталях костюма, так и в способе ношения некоторых его элементов.

В первую очередь следует отметить, что в отличие от первой группы фотографий на этих портретах шемахинки представлены как в рубахах с разрезным воротом, так и в распашной нижней одежде (№ 136-1, 2).

Существенно различаются головные уборы: если в первом варианте основой служит шапочка, украшенная рядом монет, то во втором представлено высокое налобное украшение из металла, вероятно, на основе ободка. Налобник богато декорирован расположенными горизонтально по верхнему краю розетками, подвесками, а иногда – навершием в виде звезды (№ 1403-90). Цветочные розетки налобного украшения весьма сближают его с каринским головным убором обилием декоративных элементов в виде цветков на налобном ободке. Следует также отметить, что головное покрывало в этой группе фотографий в основном светлых цветов, способ ношения его также отличается – покрывало закинута назад и не закрывает шею женщин спереди, благодаря чему на трех портретах можно заметить достаточно крупный крест на шее моделей (№ 1403-83, 90, 2471-52). Кроме того, куполообразные височные украшения не навешаны на покрывало, а являются подвесками к налобнику, соединяясь с ним кольцом или привязываясь к нему (например, № 136-2).

Среди большого числа шейно-нагрудных украшений, в основном в виде монисто, на некоторых фотографиях данной группы представлены также крупные металлические цветочные розетки со вставками из разноцветных камней (например, № 1403-90). Большинство женщин держит в руках низку круглых бусин, которые можно было надевать в виде браслета (№ 136-2) и использовать в качестве четок.

Рассмотренные группы фотографий демонстрируют главным образом вариативность в головных уборах и украшениях. Тенденции смены элементов костюма в сторону их упрощения, как в случае с налобным украшением, указывают на то, что первый вариант является модернизацией второго. Важно отметить, в связи с этим, что костюм шемахинских армянок развивался от более открытого к закрытому варианту, скрывающему как горло, так и нагрудный крест армянских жительниц этого города.

Махмудова Светлана, Акопян Айк
Дагестанский гос. университет, Матенадаран имени Маштоца
(Մախմուդովա Սվետլանա, Հակոբյան Հայկ)

Новые албанские и армянские надписи, найденные на территории Дагестана

В современной лингвистике сложилась традиция, которая начинает историю планомерного изучения дагестанских языков с XIX в. – с периода окончания Кавказской войны, когда П. К. Услар, А. Шифнер, А. М. Дирр и некоторые другие издают серию серьезных трудов – описательных грамматик по нескольким крупным языкам восточнокавказской группы. До этого известно о трудах П. С. Палласа и И. Гюльденштедта, составивших краткие словари некоторых языков, представивших также первый опыт генетической классификации кавказских языков. Позже, в XX веке, сложилась достаточно обоснованная лингвистическая теория кавказских языков, иберийско-кавказская лингвистика, насчитывающая десятки имен как отечественных, так и зарубежных лингвистов. Большинство северокавказских языков в настоящий период можно считать более или менее описанными, однако проблема заключается в том, что все эти языки получили рассмотрение только с точки зрения современного состояния. Историческая грамматика остается белым пятном для подавляющего большинства нахских и дагестанских языков. В таких условиях встает проблема: как исследовать историю языка, если нет письменных памятников, если нет литературных произведений, на которые следует опираться? И как найти письменные памятники в условиях, когда официально языки считаются бесписьменными до XIX-XX веков? (Например, рутульский, агульский и цахурский языки получают письменность только в 1991 году).

Для специалистов по дагестанским языкам более ранний период истории языка, а значит – и народа, остается за пределами научного интереса. Между тем, в условиях отсутствия письменных свидетельств истории народа, только язык может служить путеводной нитью, сохраняющей связь прошлого с настоящим, указывающим, в каком направлении следует вести поиск истории народа, а отсюда – и языка, складывающегося в процессе развития самого народа, развивающегося вместе с ним, отражающего связи и культуру народа.

В этой связи, как-то малозаметно для дагестанской научной интеллигенции прошло издание в 2008 г. Синайских палимпсестов – рукописей на древнем албанском языке, расшифрованных и переведенных З. Алексидзе, В. Шульце, А. Маз и Й. Гиппертом на несколько языков. Синайские палимпсесты написаны на албанском языке для нужд церкви – это Евангелие от Иоанна и лекционарий. Названные авторы приводят в издании Синайских палимпсестов алфавит и грамматический очерк языка палимпсестов.

Даже при самом поверхностном поиске нам удалось обнаружить несколько интересных артефактов – найденная в могильнике в с. Рутул надпись на староалбанском языке на медном подносе, а также несколько интересных надписей на армянском языке.

Распространенность армянских надписей в Дагестане может свидетельствовать или о том, что армяне были одним из народов Кавказской Албании, язык которых был принят за церковный, что иногда сопоставимо с государственным статусом, или о том, что армяне и албанцы имели весьма близкие связи, отражением которых и стало то, что армянский был в какой-то период письменным языком в Албании. Но, в таком случае, в дагестанских языках должно обнаруживаться некоторое количество заимствований из армянского языка, однако нам не удалось найти исчерпывающих сведений об этом ни у одного из дагестанских лингвистов. Тем не менее, мы склонны считать, что армяно-дагестанские лингвистические связи и их взаимовлияние не изучены до сих пор в должной мере: учитывая исторические связи армян и албанцев, следует ожидать интересные результаты исследований, которые будут посвящены заимствованиям из армянского в дагестанские языки и наоборот. Так, например, слова *хач* и *джан* имеются и в армянском и в рутульском языках.

Исходя из этого, перед дагестанскими лингвистами встанут задачи:

- а) выявить в дагестанских языках арменизмы, которые там несомненно должны быть, если иметь в виду давние связи двух народов;
- б) выявить армянские и албанские надписи, которые должны содержаться в орнаменте древней медной посуды и на камнях, которые имеются в стенах старых домов в древних селениях Дагестана.

Подобная работа внесла бы большой вклад в проблему изучения истории и языков дагестанских народов, установлению связей народов, а также освещению культурного наследия Кавказской Албании.

К исламизации армянского и удинского населения Шаки-Кабалинской зоны в первой половине XVIII в. и некоторые вопросы истории удин

Вопрос исламизации христианского населения разных регионов современного Азербайджана является одним из наименее изученных вопросов истории региона. Выработанная в советские годы концепция этногенеза азербайджанцев и ранняя датировка исламизации местных групп игнорирует сохраняющееся влияние христианства и двух ведущих христианских церквей (ААЦ и ГПЦ) на значительной части территории как современного Азербайджана, так и Дагестана в позднее средневековье и раннее Новое время. Данная концепция также игнорировала насильственный характер практик исламизации и языковой ассимиляции, описывая их как процесс консолидации азербайджанского этноса (Н. Волкова). Наиболее масштабными из случаев исламизации местного населения можно считать исламизацию грузинского населения в Закатальском регионе с начала XVII в., исламизацию армян-католиков в южной части современной Нахичеванской республики в XVIII в. и исламизацию армянского и удинского населения Шаки-Кабалинской зоны в первой половине XVIII века.

В данной заметке приводятся разные источники (армянские, российские, грузинские, мусульманские) и на их основе устанавливаются хронология, географический ареал исламизации и ее последствия в прикладных вопросах истории региона. Так, вопреки информации наиболее известных армянских источников второй половины XIX века (С. Джалалянц, М. Бархударянц, Г. Овсепян), приписывающих исламизацию христианского населения этой зоны периоду правления Шакинского хана Хаджи Челеби (середина XVIII в.), устанавливается, что исламизация раньше – в 20-е гг. XVIII в., в период установления в Ширване и Шаки власти дагестанских горцев во главе с Дауд Бекком и Сухрай ханом и возрастания религиозного фанатизма в регионе, связанного с широким суннитско-шиитским противостоянием, распространением влияния христианской державы (России) и османским вторжением.

Приводится список исламизированных сёл и делается попытка определения их первоначального этнического состава и относительного демографического веса. Утверждается, что исламизация затронула армянское и удинское население региона (которые в источниках упоминаются по конфессиональному признаку как армяне), а сами практики по отношению к ним усилили также репрессии на ранее исламизированное грузинское население Закатальской зоны.

Запрет на прежний язык в процессе исламизации позволяет проводить интересные аналогии с практиками исламизации в Османской империи, в частности, в Ахалцихском пашалыке (сообщение Е. Лалаяна) и hАмшене.

Примечательным является установление многократно завышенного налога за веру (*din iraki* или *din rayi*) в случае поселений, которые отказались принимать ислам (Варташен, Ницж, Джорлу, Мирзабеклу и т. д.). Данный налог позволяет провести аналогии с известным законом Имама Джафара и примером исламизации балканских славян (боснийцев) и показывает, что в долгосрочной перспективе экономическая дискриминация, наряду с политическими репрессиями, играли важную роль в исламизации населения региона.

Приводится примечательное сообщение из «Памятной книги Елисаветпольской губернии» от 1914 г., где отмечается, что группа мусульман Нухинского (Шакинского) уезда, известная как мугалы, по своей внешности, обычаям и почитанию христианских мест поклонения могут быть потомками исламизированных армян. Сравнение с описанием мугалов Закатальского округа не позволяет говорить об общем происхождении всех мугалов данной зоны, но дает возможность предположить, что аналогичное название в разных случаях могло быть дано по причине дискриминируемого статуса даже после исламизации.

Связывание исламизации с личностью Хаджи Челеби (согласно грузинскому источнику, потомка принявшего ислам армянского священника) в армянских и удинских преданиях, рассматривается как часть распространенного фольклорного сюжета, интересный аналог которого можно найти в записанном в СМОМПК (№ VII, 1889 г.) предании джрабердских армян о Тамерлане. В предании Тамерлан называется сыном армянского священника, изгнанного отцом из дома и решившего из-за этого отомстить христианам. Любопытно, что в данном предании якобы единственный

христианин, оставшийся в живых после разорений Тамерлана по имени Вардан считается основателем селения Варташен (одного из немногих сёл, избежавших исламизации в зоне Шаки-Кабала). Данные сюжеты интересны в контексте известных интенсивных исторических связей отмеченных регионов.

Исламизация удин и установление приблизительного количества удинских поселений до исламизации в зоне Шеки-Кабалы позволяют утверждать, что крупный сегмент христианского населения Кавказской Албании сохранялся вплоть до XVIII в. и что последующее резкое сокращение количества удин связано именно с насильственной исламизацией 20-х гг. XVIII века.

Восстановление прежнего ареала удинского заселения позволяют также опровергнуть распространенные спекуляции о том, что удины в данном регионе появились позже и являются переселенцами из правобережья Куры, которое они покинули, якобы, из-за религиозно-культурной дискриминации армян (В. Шульце). В данном контексте также обращается внимание на утверждения о наличии исконно удинских поселений (Сейсулан, Кирзан, Гасанкая и др.) на правобережье Куры, которые стали популярны в последнее время (И. Кузнецов) и основываются на опровергнутых в конце XIX – начале XX века данных Гевонда Алишана, М. Бархударянца и ряда других авторов.

Հայության սոցիալ-իրավական դրությունը Շիրվանում 18-րդ դարի երկրորդ կեսին

Հնուց ի վեր հայերը բնակվել են Արևելյան Այսրկովկասի ողջ տարածքում եւ ենթարկվել տարածաշրջանում կատարվող ռազմա-քաղաքական փոփոխությունների ազդեցությանը: Հայ ազգաբնակչությունը մշտապես ստիպված է եղել պայքարել իր կրոնի եւ մշակութային արժեքային համակարգի պահպանման համար: Ֆիզիկական գոյության օրհասական խնդրին զուգընթաց առաջնահերթ էր հայ ինքնության պահպանումը: Բացառություն էր նաեւ Իրանի տերության, Օսմանյան կայսրության եւ Ռուսաստանի ակտիվ դերակատարմամբ պայմանավորված 18-րդ դարի պատմական եւ քաղաքական իրադարձություններով լի երկրորդ կեսը: Նադիր շահի մահից հետո (1747 թ.) նրա ստեղծած պետությունը տրոհվել էր կիսանկախ եւ ինքնուրույնության ճգնաժամ գրեթե պետական միավորումների՝ խանությունների: Իրանական կենտրոնական իշխանությունը Կուրից Հյուսիս էր տարածվում՝ պարարտ հող նախապատրաստելով Դերբենդի, Ղուբայի, Շաքիի, Շամախիի եւ Բաքվի խաների կամայականությունների համար: Արևելյան Այսրկովկասի խանություններն ինքնուրույն գոյությունն իր բացասական հետեւանքն ունեցավ առավելապես տարածաշրջանի ոչ մահմեդական բնակչության, մասնավորապես՝ հայերի համար:

Խորհրդային պատմագիտության մեջ այն տեսակետն է արտահայտվել, թե 18-րդ դ. երկրորդ կեսին կիսանկախ խանությունների ժամանակաշրջանում ջիզյան կամ գլխահարկը դադարել էր գոյություն ունենալ: Արևելագետ Ի. Պետրուշևսկին թյուրիմացաբար որպես հիմք բնդուեցում էր Կովկասում ռուսական հրամանատարության կողմից 1823 թ. Ղարաբաղի, Շաքիի եւ Շամախիի նահանգներում իրականացրած վիճակագրական «նկարագրություններում» այդ հարկատեսակի բացակայության փաստը¹: Նա եզրակացնում էր, որ հետագայում եւս Նադիր շահի կողմից ջիզյայի վերացման կարգը որոշ խանություններում պահպանվել էր: Սակայն ըստ Հակոբ Փափազյանի՝ Հայաստանում ջիզյա հարկատեսակը շարունակել է գոյություն ունենալ մինչև 18-րդ

¹ И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, с. 285.

դ. վերջը¹: Թեև Հարցին յուրովի լուծում է տալիս նաև Վ. Գրիգորյանը՝ Երեւանի խանության 1780-1790-ական թթ. պատմությունը շարադրելիս. հիմք ընդունելով Հայկական մարզի կառավարիչ Ալ. Ճավճավաճեի եւ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի միջեւ 1828 թ. նամակագրությունը՝ նա եզրակացնում է, որ խանության ժամանակաշրջանում «Հայերը ազատ են եղել Հավատի Հարկից»²:

Վերը նշված փաստարկները ժամանակագրական, պատմական իրավիճակի ու ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման տեմպերի առումով էնե կարող ամբողջապես համապատասխանել իրականությանը: Օրինակ՝ Շաքիի խանությունում խանական կառավարման ժամանակաշրջանում մահալները ղեկավարվում էին սուլթանների ու բեկերի կողմից, իսկ ռուսական իշխանության օրոք 1820-1830-ական թթ. վարչական նոր բաժանումների հետեւանքով ստեղծվում է մահալային նայիրի պաշտոնը³: Այս տրամաբանության մեջ է ընկալվում նաև այն իրողությունը, որ Այսրկովկասում 1820-ական թթ. ռուսական իշխանությունների կատարած խանությունների նկարագրություններում միեւնույն մահալի տարբեր գյուղերի նույն Հարկատեսակի չափը տարբեր է: Օրինակ՝ բաշ-փուլին (գլխահարկ) Ղարաբաղում Տաթեւի մահալի Տաթեւ գյուղի 53 ծխերից Հավաքագրվում էր 200 ռուբլի խանական փողով, Շինաթաղ գյուղի 12 ծխերից՝ 50 ռուբլի, իսկ Շինուհայր գյուղի 56 ծխերից՝ 360 ռուբլի եւ այլն⁴:

Հայտնի է, որ 1807 թ. Շաքիի խանության Հայերը ազերսագիր են գրում Ի. Գուդովիչին՝ միջամտելու Ջաֆար Ղուլի խանի Հավատի դիմաց գանձվող Հարկի Համար: Հետաքրքական է, որ շաքեցիները մատնանշում են այն հանգամանքը, որ Շաքիի կառավարության իրավունքը ստանալով խանը Հարկահավաքմամբ «վերադառնում է» իրենց տառապանքներ պատճառելուն⁵: Այսինքն 18-րդ դ. երկրորդ կեսին ջիզյան

¹ А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ер., 1972, с. 234.

² Հարցի շուրջ մանրամասն տե՛ս Վ. Գրիգորյան, Երեւանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958, էջ 54:

³ Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, Под ред. Ад. Берже, т. VIII, Тифлис, 1881, с. 473.

⁴ Описание Карабагской провинции, составленное в 1823 году действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м, Тифлис, 1866, с. 122, 123.

⁵ Присоединение Восточной Армении к России. Сборник документов, т. I, Под ред. Ц. Агаяна, Ер., 1972, с. 429, 430, 431.

պետք է, որ գոյութիւն ունենար Շաքիում, ինչպես նաև Այսրկովկասի մյուս խանութիւններում:

Ավելին, 1770-1790-ական թթ. սկզբնաղբյուրները, ի տարբերութիւն խորհրդային պատմագիտական մտքի պնդումների՝ ուղիղ հակառակն են փաստում¹: Այսպես, Վ. Զուբովի 1796 թ. Կասպիական արշավանքի մասնակից Պ. Բուտովի վկայութեամբ՝ Ղուբայի խանութիւնը հայերն ու հրեաները սահմանված հարկերից բացի պարտավոր էին խանին վճարել ամուսնացածները՝ 1 ուրբլի, իսկ չամուսնացածները՝ 55 կոպեկ²: Արշավանքի մյուս մասնակից Յ. Միմոնովիչի աղբյուրների համաձայն ամուսնացածները խանին վճարում էին 2 ուրբլի 10 կոպեկ, իսկ չամուսնացածները՝ 1 ուրբլի 10 կոպեկ³:

Հայերի սոցիալ-իրավական դրութիւնը նույնն էր նաև Շամախիում, ուր բնակչութիւնը խանի գանձարան հաստատագրված հարկեր էր վճարում յուրաքանչյուր ընտանիքից 100 ուրբլու չափով⁴: Շամախիի հայ ազգաբնակչութիւնը հարկերից բացի պարտավոր էր խանին ջիզյա վճարել տարեկան 2 ուրբլի եւ 40 կոպեկ, չամուսնացածները՝ 1 ուրբլի եւ 20 կոպեկ, իսկ մինչեւ 20 տարեկանները ազատված էին հարկերից⁵:

Ակադեմիկոս Ս. Գմելինի փոխանցմամբ՝ անհրաժեշտութեան դեպքում Շամախիում խանը ցանկացած ճանապարհով հավաքում էր պահանջվող մթերքը, պարենը, ձիերը, անասունը, փողը, սակայն հիմնական ծանրութիւնն ընկնում էր հայերի վրա⁶:

1780-ական թթ. առաջին կեսին ուսսական լրտեսական աղբյուրների փոխանցմամբ «Հասարակ ժողովուրդը» եւ «պարսից ազգաբնակչութիւնը, մասնավորապես, հայերը» ինչպես Ֆաթհ Ալի խանից, այնպես էլ իրենց մյուս խաներից դժգոհ էին, քանի որ շուրջ երեսուն տարի ձգ-

¹ С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, часть III, I половина, СПб., 1785; Н. Дренякин, Описание Ширвана. 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. Косвена и Х. Хашаева, Москва, 1958 (այսուհետև՝ ИГЭД), с. 157-172; П. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письма». 1796 г., – ИГЭД, с. 200-208; Ф. Симонович, Описание Южного Дагестана. 1796 г., – ИГЭД, с. 138-156; А. Серебров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – ИГЭД, с. 173-190.

² П. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письма», с. 205.

³ Ф. Симонович, Նշվ. աշխ., էջ 150:

⁴ С. Гмелин, Նշվ. աշխ., էջ 96:

⁵ Նոյն տեղում, էջ 96:

⁶ Նոյն տեղում, էջ 97-98:

վող ավատատիրական կռիվները հյուժել էին տեղի ժողովուրդներին՝ անասելի չափերի հասցնելով հավաքվող հարկերը եւ զինվորագրելով բնակիչներին¹:

Կիսանկախ խանությունների քաղաքներում հայերը, պարսիկներն ու թաթարները խառն էին ապրում եւ պարտավոր էին հյուրընկալության (կոնաղլա)² պարտավորությունը կատարել: Այսպես, Ղարաբաղի խանությունում Շուշիի բնակիչները պարտավոր էին խանի հյուրերին ընդունել, հոգալ նրանց եւ ձիերի կարիքներն առանց դրամական վարձատրման³: Ըստ Ս. Գմելինի՝ Դերբենդում հայերը «խանին ոչ մի հարկ չէին վճարում»՝ փոխարենը պարտավորվելով ոստիկանական պարտավորություններ կատարել⁴:

Հայերը Շամախիում եւ Դերբենդում օտարերկրացիներին բնակարաններ տրամադրելուց բացի, պարտավոր էին քաղաքի դարպասների մոտ պահակային ծառայություն կատարել, քանի որ «ինչպես Դերբենդում, այնպես էլ Շամախիում առավել շատ վստահում էին հայերին, քան թաթարներին ու պարսիկներին»⁵: Դերբենդում հայերի վստահելի բնակիչներ լինելու մասին է վկայում Ս. Գմելինի հաղորդած այն փաստը, որ խանի շրջապատում մշտապես հայեր կային⁶: Դա այն դեպքում, երբ Դերբենդը Ֆաթհ Ալի խանի ժառանգական տիրույթը չէր, այլ վերջինիցս նվաճվել էր գենթով, իսկ տվյալ պարագայում վստահել տեղացիներին (այն էլ այլադավան)՝ մեծ ռիսկ էր: Մյուս կողմից, խանի կողքին «մշտապես» ներկայություն կարող էին ունենալ միայն նրա վստահելի մարդիկ: Հայտնի է, որ Ֆաթհ Ալի խանի եւ Դաղստանի տիրակալների միջև 1774 թ. Ղուբայի խանության Գավդուշան կոչվող դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտում խանի զորքի շարքերում արիաբար կռվում էին շուրջ 70 հայեր, որոնից 20-ը զոհվում են՝ մեծ կորուստներ հասցնելով թշնամուն⁷:

Ս. Գմելինը գրում է, որ բարձր հարկեր սահմանելու համար Բաքվի հասարակ քաղաքացիները Մելիք Մուհամմադ խանին չէին սիրում, ու տարածված էր այն համոզմունքը, որ Բաքվում «արդարադատություն

1 Г. Цинцадзе, Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), - «Исторический вестник», № 23-24, Тбилиси, 1970, с. 20.

2 А. Папазян, Նշվ. աշխ., էջ 238:

3 Описание Карабагской провинции, составленное в 1823 году, с. 8.

4 С. Гмелин, Նշվ. աշխ., էջ 19:

5 Նույն տեղում, էջ 98-99:

6 Նույն տեղում, էջ 44:

7 Русско-дагестанские отношения в XVIII - начале XIX в. Сборник документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, 1988, с. 152.

չես գտնի»։ Հատկապես այդ միտքն առկա էր Հայերի շրջանում, որոնք ցանկանում էին այնքան գումար գտնել, որ կարողանան խանի ճնշումներից ազատվել։ Բաքվեցիները դժգոհում էին նաև խանի պահանջած գումարի չափերից, քանի որ իրենք գրեթե ի վիճակի չէին լինում այն վճարել¹։

18-րդ դ. երկրորդ կեսի սկզբնաղբյուրների վերլուծութունը փաստում է, որ Հայերը կարողանում էին փողով իրենց գյուղերը որոշ չափով զերծ պահել այլ ժողովուրդների բնակեցումից։ Այսպես, Ղուբայի խանության Շաբրանի մահալում կողք-կողքի ապրող Հայկական եւ մահմեդական ընտանիքները թեև ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում էին, սակայն խանին պիլին էին վճարում, որպեսզի հրեաներն իրենց մոտ չապրեն²։ Մեկ այլ վկայություն էլ վերաբերում է Մայր Աթոռի ֆինանսական միջոցներից կաթողիկոսի կողմից Երեւանի խանին վճարվող 5000 ռուբլի գումարին՝ որպեսզի Հայկական գյուղերում մահմեդականներ չբնակեցվեն³։

Դավանական առումով Բուն Աղվանք – Ալբանիայի տարածքը թեև 18-րդ դ. երկրորդ կեսին վաղուց կորցրել էր իր պատմա-քաղաքական ու հոգեւոր-մշակութային նշանակությունը, սակայն, ըստ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի՝ «Գեանջայ քաղաքն, Շամախի, Շիրվան, Բագու, Դարբանդ, Նուխի, Պարտաւ, Խաչնու երկիրն, եւ բոլոր տունն Աղուանից» շարունակում էին ճանաչել Մայր Աթոռի առաջնորդութունը⁴։ Վերջինս Աղուանից կաթողիկոսութունից ինչպես տերունի կոչվող մյուս թեմերից (օսմանյան, պարսից, վրաց եւ ուսւսաց ենթակայության տարածքներից), երեք տարին մեկ հոգեբաժնի եւ այլ եկամուտներ էր հավաքում։

Ս. Գմեկինը հիշատակություն է թողել նաև Արեւելյան Այսրկովկասի կրոնական ու դավանական իրավիճակի մասին։ Նրա խոսքերով Բաքու քաղաքի «գլխավոր օրենքը» չիա ուղղության մահմեդականութունն էր, սակայն հանդուրժողականութուն էր ցուցաբերվում նաև

¹ С. Гмелин, 124. աշխ., էջ 84:

² J. Reineggs and M. Bieberstein, A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reineggs and Marshal Bieberstein, by Charles Wilkinson, vol. I, London, 1807, p. 162.

³ С. Бурнашев, Описание областей Адрибиджанских в Персии и их политического состояния, Курск, 1793, с. 18.

⁴ Ջամբո, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացոցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սբբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմեօն ցաւահար եւ վշտակոծ կաթողիկոսէ Երեւանցոյ, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1873, էջ 51:

սուսնինների նկատմամբ, իսկ Հայերն իրենց պատարագը դադարնի էին կատարում¹: Դա փաստում է, որ խանական իշխանությունները Հետապնդում էին Հայերին իրենց ազատ դավանանքի համար: Շամախի խանությունում Ս. Գմելինը ականատես է եղել մի տեսարանի, երբ Հայկական երկու վանքերը պատրաստվում էին խանին 1000 ռուբլի նվիրատվություն անել եւ վախենում էին, որ Ֆաթհ Ալի խանը մոտ ապագայում կարող էր կրկնել պահանջը²:

Այսպիսով, կիսանկախ խանությունների ժամանակաշրջանի համար կարեւոր հարց էին նաեւ Հայերի նկատմամբ իրականացվող ոչ միայն սոցիալական հալածանքները, այլեւ կրոնական անհանդուրժողականությունը: Մի բան, որը զգուշորեն պահպանվում էր իրանական շահերի եւ կառավարիչների կողմից: Այսպես, 1736 թ. Մուղանի դաշտում անցկացվող համաժողովի օրերին Աբրահամ Կրետացի կաթողիկոսը խնդրում է Նադիր շահին թույլ տալ շամախեցի Հայերին՝ Շամախի ամրոցից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող վայրում բնակություն հաստատել, «զի էր օդն ապականեալ, եւ տեղն՝ շողային եւ ջուրն՝ պակաս եւ տաճկունք, որք են լակղիք եւ սուսնիք, վշտացուցանէին եւ նեղացուցանէին զտառապեալսն, այսինքն՝ զազգն մեր»: Կաթողիկոսի խնդրանքի մեջ պարտադիր մաս էր կազմում նոր վայրում եկեղեցի կառուցելու իրավունք ստանալը, «զի անհնար է Հայոց ազգին առանց եկեղեցի[ւ]ոյ բնակիլ ի տեղի մի՛ թէ՛ եւ դրախտ իցէ»³: Ավելին, Աբրահամ Կրետացու ջանքերով շահը վերացնում է նաեւ հավատի համար գանձվող հարկատեսակը՝ ջիզյան: Նադիր շահի հրամանի (1741 թ.) համաձայն՝ բոլոր հաքիմներից ու ամիրներից պահանջվում էր «թույլ չտալ» հայ կանանց, տղաների եւ աղջիկների «բռնի պարտադիր մուսուլմանացումը»՝ սպառնալով պատժել կարգազանցներին⁴:

Միմեոն Երեւանցին նշում է, որ համաձայն Ազադ խանի ռազամի (հրամանի)՝ «զի Հայքն զօրէնս իւրեանց համարձակ պաշտիցեն, եւ կաթողիկոսն ըստ օրինին իւրեանց կառավարեսցէ զազգն իւր, եւ մի՛ ոք

¹ С. Гмелин, Ыշվ. աշխ., էջ 81: Բարվի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման տարեթիվը չի պահպանվել, սակայն հայտնի է, որ վերանորոգվել է 1789 թ (Մ. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքաց եւ գիւղօրէից որք ի Շախախոյ թեմի, Տիփլիս, 1896, էջ 373):

² С. Гмелин, Ыշվ. աշխ., էջ 97-98:

³ Աբրահամ կաթողիկոսի Կրետացու Պատմագրութիւն անցիցն իրոյ եւ Նատր-Շահին պարսից, ի Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1870, էջ 65:

⁴ Մատենադարանի պարսկերէն վավերագրերը, Հրովարտակներ, Պրակ 4 (1734-1797), Կազմեց՝ Բ. Կոստիկյան, Եր., 2008, վավերագիր 17, էջ 50:

խառնիցի եւ կամ ներհակիցէ»¹: Մեկ այլ աղբյուրի վկայութեամբ՝ Քերիմ խան Ջենդի օրոք Իրանում Հայերին թուլատրվում էր քրիստոնեական համայնք ունենալ եւ եկեղեցիներ կառուցել: Շիրազում գտնվող «Գուրգեն անունով մի Հայ Հանդիսանում էր իր ազգի առաջնորդն ու սուլթանը», իսկ Քերիմ խան Ջենդը նրան իր մոտ ընկերն էր համարում²: Իսկ էնզեկլիի նավահանգստում նա հարկահավաք եւ քաղանթար էր նշանակել Մարգիս անունով մի հայի³: Մինչդեռ Ֆաթհ Ալի խանի դաժանությունները չէին շրջանցում նաեւ Հայ հոգեւոր սպասավորներին: Այսպես, Մուղանի դաշտում ավազակախմբով թափառող Շամախիի կուլբ Աղասի խանին ալյուր վաճառելու համար Ֆաթհ Ալի խանը հրամայում է հայկական վանքերից մեկի քահանային հրապարակայնորեն եւ մեծ դաժանութեամբ պատժել:

Հին եւ Նոր Շամախիների միջակայքում գտնվում էին հինգ հայկական գյուղեր Մերզանի, Մադրասա, Մադիան, Քերքենջ եւ Քեյուխունի, որոնք խիստ ավերածությունների էին ենթարկվել Ֆաթհ Ալի խանի կողմից Շամախիի գրավման ժամանակ (1769 թ.)⁴: Այս գյուղերի շրջանում գտնվող երկու վանքերի հոգեւոր սպասավորները վախենում էին բացահայտորեն օգտագործել եկեղեցական անոթներ, սրբապատկերներ եւ այլ պարագաններ, քանի որ խանը կարող էր բռնադրավել դրանք: Այդ պատճառով էլ հայկական վանքերում Աստվածամոր սրբապատկերից բացի ոչինչ ցուցադրված չէր, գրում է Ս. Գմելինը⁵:

Ընդհանրացնելով աղբյուրագիտական նյութը՝ կարող ենք փաստել, որ ի տարբերություն իրանական գահակալների (Նադիր շահ, Աղադ խան, Քերիմ խան Ջենդ)՝ Արեւելյան Այսրկովկասի ինքնիշխան խաները այլադավանների, մասնավորապես՝ Հայերի նկատմամբ, կրոնական հանդուրժողականութուն գրեթե չէին ցուցաբերում:

18-րդ դ. երկրորդ կեսին տարածաշրջանում ծայր առած քաոսի հետեւանքով ակտիվանում են բնակչության տեղաշարժերը: Հակոբ Շամախեցի կաթողիկոսը նշում էր, որ Սեֆյան պետութեան անկումից հետո շուրջ 40 տարի «թագաւորութիւն կարմրազլխաց» չէր հանդարտվում»⁶: Ապակայունացած իրավիճակը թավրիզի շրջակա գյուղերից եւ այլ վայրերից մի խումբ հայերի ստիպում է ընտանիքներով 1753 թ.

¹ Հմմ. Ջամբո, էջ 226:

² J. Reineggs and M. Bieberstein, Նշվ. աշխ., էջ 109:

³ АВПР, 1763 г., Фонд Спошения России с Персией, оп. 77/1, А. 1, л. 45.

⁴ С. Гмелин, Նշվ. աշխ., էջ 96:

⁵ Նույն տեղում, էջ 107:

⁶ ՄՄ, ձեռ. 2911, էջ 102բ: Հմմ. J. Perry, The Zand Dynasty, – The Cambridge history of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge, 1991, Vol. VII, p. 96.

մեկնել էնգելի՝ Աստրախան տեղափոխվելու եւ այնտեղ հիմնավորվելու նպատակով¹:

Նշված ժամանակաշրջանում բնակչության (հատկապես՝ հայերի) տեղաշարժերն Այսրկովկասում այնքան էին ահագնացել, որ տեղերում որոշ հոգեւորականներ չէին կարողանում ճիշտ կազմակերպել հոգեւոր տուրքերի հավաքագրումը: Հարցը կարգավորելու նպատակով միջամտում է Հակոբ Շամախեցի կաթողիկոսը՝ կարգադրելով, որ ժողովուրդը որ վիճակում որ հաստատված է, այնտեղ էլ վճարի եկեղեցուն հասանելիք տուրքը²:

Այսպիսով, 18-րդ դ. երկրորդ կեսի համար կարող ենք փաստել իրանում կենտրոնացված պետութայն բացակայության պայմաններում Արեւելյան Այսրկովկասում ձեւավորված կիսանկախ խանությունների բնակիչ հայերի սոցիալական եւ իրավական դրութայն կտրուկ վատթարացումը:

¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ 1, վավ. 26, էջ 1-2:

² Նույն տեղում, թղթ. 1, վավ. 52, էջ 1:

Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը ըստ Կլավդիոս Պտղոմեոսի եւ Է դարի Աշխարհացոյցի

Իր կեանքի գլխաւոր երկը գրելիս Բ դարի նշանաւոր յոյն աշխարհագէտ Կլավդիոս Պտղոմէոսը¹, ըստ ամենայնի՝ ծանրակշիռ սկզբնաղբիւր է ունեցել Ալբանիա (Աղուանք) երկրի տեղանունների մասին: Դա երեւում է ե՛ւ հարեւան Իբերիայի հետ համեմատելիս (որի բնակավայրերի թիւը հեղինակի մօտ եռակի պակաս է՝ 9), ե՛ւ Մեծ Հայքի (որտեղ դրանց թիւն ընդամենը 2,8 անգամ է աւելի՝ 85, թէպէտ երկիրը մեծ էր շուրջ 5 անգամ): Ալբանիայի բնակավայրերի համադրման փորձերն սկսւում են ԺԸ դարից եւ շարունակւում մինչ այսօր: Վերջին փորձը՝ վրաց-աղուանական կրկնագիրը հրատարակողներին է (Յ. Գիպերտ, Վ. Շուլցէ, Զ. Ալեքսիձէ եւ Ժ.-Պ. Մահէ, 2008), որոնք յենւում են Ս. Մուրաւելի մօտեցումների վրայ, ով առաւելապէս խորացել էր Կասպից ծովի տրանսպրեսիայի խնդիրներում, ինչպէս նաեւ Ռ. Հիւսընի, ով 2002 թ. հրատարակեց Է դարի Աշխարհացոյցի մանրամասն ծանօթագրուած անգլերէն թարգմանութիւնը²: Բոլորն էլ՝ մեծ սխալներով:

Պտղոմէոսեան քաղաքների յաջող համադրման խնդրում բարդութիւնն անտիկ Ալբանիայի թագաւորութեան հիւսիս-արեւելեան սահմանակէտի ճշտումն է: Ուսումնասիրողներից ոմանք (այդ թւում՝ յիշատակուած Ս. Մուրաւելը եւ Ռ. Հիւսընը) սահմանափակում են այդ կողմի սահմանագիծը Աղսու գետով ու Լեանգեաբիզի լեռնաշարով (Շամախից արեւմուտք), կամ ամենաշատը տարածում են մինչեւ Ապշերոն³: Մի այլ խումբ գիտնականներ (օր.՝ Ս. Եուշկովը⁴) հասցնում է այդ սահմանը

¹ Ptolemaei Claudii Geographia, Ed. C. Müller, Parisii, 1901; Klaudios Ptolemaios, Handbuch der Geographie, Griechisch – Deutsch, Herausgegeben von A. Stückelberger und G. Grasshoff, Basel, 2006.

² С. Н. Муравьев, Птоломеева карта Кавказской Албании и уровень Каспия, – ВДИ, 1983, № 1, с. 117-147; The Geography of Ananias of Širak (Ašxarha'oc'yc). The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by R. H. Hewsen, Wiesbaden, 1992; R. H. Hewsen, Armenia: A Historical Atlas, Chicago-London, 2001.

³ Տե՛ս, օր.՝ Հ. Ս. Սվալյան, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Եր., 2006:

⁴ С. В. Юшков, К вопросу о границах древней Албании, – ИЗ, 1937, № 1, с. 129-148.

բաւականին հեռու հիւսիս՝ Միջին Դաղստան: 1987 թ. մեզ, թւում է, թէ յաջողուեց ճշգրիտ որոշել այդ հիւսիս-արեւելեան սահմանակէտը՝ նկատելով Ա դ. Հոռմէացի նշանաւոր պատմիչ Կոռնելիոս Տակիտոսի կարեւոր վկայութիւնը («Աննալներ», VI, 33), որը սահմանը տանում է հէնց Դերբենդի անցքով, կոչելով այն լեռնանցք «Ալբանիայի լեռների ծայրի ու ծովի միջեւ»¹: Աւելին, հնարաւոր եղաւ ենթադրել, որ դեռ Բ. ա. Գ դարում աղուանների բնակութեան սահմանը համարուել է նոյն Դերբենդը: Գիտենք, որ Սելեւկեան առաջին արքայի հրամանով Կասպից ծովի ափագծի հետազոտութիւնը կատարած Պատրոկլէսը (Գ դ. Սկզբում) եւ նրանից օգտուած աշխարհագետ Էրատոսթենէսը (դարի վերջում) արձանագրել են աղուանների բնակուելը Կասպիցի ափին՝ կաղուս-կատիշներից հիւսիս, ընդ որում՝ Ստրաբոնի եւ Պլինիոս Աւագի մօտ պահպանուած տուեալների համադրմամբ Պատրոկլէսի եւ Էրատոսթենէսի մօտ կաղուսական ափի երկարութիւնը ստացւում է 5000 ստադիոն, իսկ «ալբանական» ափինը՝ 300 կամ 400: Սակայն թե՛ անտիկ, թե՛ միջնադարեան աղբիւրների վկայութիւններով՝ կաղուսները զբաղեցրել են Կասպից ափաշերտի լոկ մի փոքր կտորը՝ Կուր եւ Արաքս գետերից հարաւ եւ հարաւ-կասպիական իրանական ցեղերից հիւսիս-արեւմուտք, որոնց յանուանէ նշում են զոյգ հեղինակները նոյն դրուագներում: Դա ենթադրել է տալիս, որ Ստրաբոնին ու Պլինիոսին հասել է Պատրոկլէսի հաշուետուութեան (Պերիպլուսի) մի աղճատուած տարբերակ (Էրատոսթենէսի երկում կամ դրա մի արտագրութեան մէջ), ուր աղուանական եւ կաղուսական ափակտորների չափերի չիտթ է սպրդել՝ փոխատեղման ձեւով. իսկ իրականում Պատրոկլէսն աղուանական ափի համար արձանագրած է եղել շուրջ 5000 ստադիոն ձգուածութիւն (300/400 ստադիոնն էլ՝ կաղուսական ափի համար): Դա մօտաւորապէս համապատասխանում է հետագայում առաջացած Աղուանից թագաւորութեան ափագծի ձգուածութեանը (Կուրի գետաբերանից մինչեւ Դերբենդ), առաւել եւս որ գրեթէ նոյն իրական երկարութիւնն ունեցող Հարաւ-կասպիական իրանական ժողովուրդների՝ Վրկան-Հիւրկանիայի ափագիծը Պատրոկլէսը հաշուել էր մօտ նոյնքան՝ 4800 կամ 4900 ստադիոն:

Աղուանքի պողոմէոսեան բնակավայրերին մեր անդրադարձը կապուած էր 2 տարի առաջ է դ. Աշխարհացոյցի գիտա-քննական բնագիրը կազմելու աշխատանքների հետ: Պարզուեց, որ ուշադիր քննութեան դէպքում լիովին հնարաւոր է ճշգրիտ որոշել Պողոմէոսի, Ստրաբոնի, Պլինիոսի եւ Աշխարհացոյցի գետերի հիմնաւոր համադրութիւնները, որի հիման վրայ էլ՝ արդէն բնակավայրերինը:

¹ А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 35-36.

Պտղոմէոսը թուարկում է Ադուանքի 29 կամ 30 բնակավայր՝ տալով իւրաքանչիւրի կոորդինատները, ընդ որում կատարում է դա 5 հատուած-սեկտորների մէջ: Վերջիններիս սահմանները հեղինակի թուարկած գետերն են, որոնց մի մասը թափւում է ծով (Սոանա, Գերրոս, Կայսիոս, Ալբանոս), միւս մասը՝ Կուր գետը (Ալազոնիոս-Ալազան՝ Իրերիա-Վիրքի սահմանին, եւ այն «վտակը, որ Կովկասից հոսում է դէպի Կուր»): Այս 6 գետերի յաջող տեղորոշումը, որ կապուած է Հիւսիս-արեւելեան սահմանակէտի ճշտման հետ, թոյլ է տալիս մեծ հաւաստիութեամբ կատարել նաեւ բնակավայրերի տեղորոշումը:

Արդ, ստացւում է, որ Պտղոմէոսի մօտ Սարմատիայի հետ սահմանակցող Սոանա գետը (Աշխարհացոյցում՝ Սաւնաս) համապատասխանում է Ռուբասին, որը հոսում է Դերբենդի մօտ ծովին հասնող Ջալգան լեռնաշղթային¹ հարակից զուգահեռ: Սոանայից հարաւ-արեւմուտք յիշատակւում են 2 քաղաքներ, որոնք բաւականին մօտիկ համադրումներ ունեն: Առաջինը՝ Թելայբան, կա՛մ վերականգնւում է Գելայբա եւ համադրւում Ռուբասից հարաւ գտնուող Ազլաբի աւանի հետ, կա՛մ էլ մէկ այլ առանց վերականգնման տարբերակով նոյնացւում է խաչմաս քաղաքի մօտ ընկած յայտնի Հայաբնակ Թալաբի գիւղի հետ (այստեղ կարող էր լինել շփոթ ըստ սեկտորների. թերեւս՝ Թալաբին նաեւ ժ դարաբ աշխարհագէտ ալ-Մուկադդասիի Թելբան է): Երկրորդը՝ Թիլիբիսը, վերականգնւում է Բիլիտիս եւ համադրւում Բելիջի աւանի հետ, որի տեղում դեռ 1987-ին ենթադրել ենք Ջ դարի Բաղախատ-Բաղասատ եպիսկոպոսանիստը (Չողին մօտ, ինչպէս երեւում է Մովսէս Դասխուրանցու եւ Գիրք թղթոցի ցուցակի ակնառու հերթականութիւնից):

Պտղոմէոսի երկրորդ գետը՝ Գերրոսը, ըստ ամենայնի, նոյնանում է Սամուրին, որն ամենակատելին է տուեալ տարածքում: Նրա գետաբերանից հարաւ յիշատակուած են 3 կամ 4 քաղաք: Առաջինը՝ Թիսուան, վերականգնելի է թւում Թրսուան, որն էլ համապատասխանում է միջնադարեան Սապո-թրեմէին, այսինքն՝ հայտնի Շապորան – Շարրանին (ըստ Ս. Երեմեանի): Երկրորդը՝ Խոքոսան (բայց՝ հարեւան սեկտորից, տարբ. Խոքատա, Խոքեմտա), կա՛մ միջնադարից յայտնի Ղուբան է, կա՛մ Խապուտցի փոքր լեզգիալեզու ժողովրդի անունը, որն ապրում էր Կովկասի ե՛ւ Հիւսիսային, ե՛ւ հարաւային լանջերի մի քանի գիւղերում²: Երրորդի՝ Թաբիլակայի առաւել հաւանական համադրութիւնը

¹ Ըստ Ա. Կոդրեացեւի եւ Մ. Գաջեւի՝ Ջալգանը հմմ. Չող – Չոր – Չոյա տեղանունան հետ, որը Դերբենդի աղուաներէն տարբերակն է: Այստեղ Յազկերտ Բ Սասանեանը կառուցեց իր կառաղիսէ, Խոքոսը Անուշիրուանը՝ քարե հօգօր պարիսպը:

² Հմմ. Մ. Թ. Пашаева, К этнической истории «шахлагских народов», – Albania Caucasia, Вып. I, Отв. редакторы: А. К. Аликберов, М. С. Гаджиев, Москва, 2015, с. 151.

նոյնպէս Շահգաղեան մի լեզուով խօսող բարձրլեռնային գիւղերից մէկի անուան հետ է՝ Ալիկի: Չորրորդի՝ Գելլայի անունն էլ, թերեւս, համադրելի է այդ հատուածում հոսող Գիլգիլէյ գետանունան հետ:

Պտղոմէոսի՝ ծով թափւող երրորդ գետը Կայսիոսն է, որի հաւանական համադրումը Փիրասհաթի հետ է. այն հոսում է ծով Շամախիի մօտերքից, եւ նրա վերնահովտում էր այդ հատուածի ամենայարմար ինալգանի լեռնանցքը, որը հին Վարդգրուակն է (տարբ. Վարդէրուակ. գուցէ՞ գրուակ = գելուկ – լեռնանցք): Այս գետից արեւմուտք ընկած սեկտորում յիշատակում են. Ալամուր, որը, գուցէ, ներկայիս Աղսուն է, Խալախան՝ ըստ ամենայնի՝ միջնադարեան Քաղաձոր գաւառի կենտրոնը, Միսիան՝ դրափոխութեամբ Խամիա, որը հնարաւորութիւն է տալիս համադրելու Խամայիի քաղաքանունան հետ, Մոզիատան, որը վերականգնելի է թւում Խոզիատա, ինչի շնորհիւ երեւում է Հոշաչա միջնադարեան տեղանունան համադրութիւնը. այն էլ, անշուշտ, համադրելի է Հոշաւանդի հետ (Կապաղակից մի փոքր արեւելք): Եւ վերջապէս՝ Խաբալայի (տարբ. Խալաբա) համապատասխանութիւնը մայրաքաղաք Կաբալա-Կարալակա-Կապաղակին որեւէ մէկի մօտ կասկած չի յարուցում:

Եւ միայն չորրորդ գետը՝ Ալքանոսն է, որ, ըստ մեզ, համապատասխանելով Տուրիանին (Կապաղակից քիչ արեւմուտք)՝ այսօր թափւում է Կուր, այնինչ Պտղոմէոսը հոսեցնում էր ծով: Թէպէտ, հաշուի առնելով խիստ հարթավայրային լանդշաֆտը, կարելի է ենթադրել, որ ժամանակին Տուրիանը մինչեւ ծով է հոսել՝ Կուրին հիւսիսից գուգահեռ եւ ներկայ Կուրի հունով (իսկ Կուրը հոսել է քիչ հարաւ ընկած լճերի հունով): Բայց մի այլ տարբերակով էլ կարող է գրիչները կողմից վրիպեալ համարուել ծով թափուելու պնդումը: Դրա մասին յուշում է Պտղոմէոսին յանգող Աշխարհացոյցի մի տուեալ: Է դարի հայ անանուն աշխարհագէտը, նկարագրելով Կասպից ծովը Կուրից հիւսիս յիշատակում է լոկ 3 գետ Կէսոս, Գեուս եւ Սւանաս, այսինքն՝ առանց Ալքանոս գետի: Սա մէկն է այն օրինակներից, երբ Աշխարհացոյցը թոյլ է տալիս սրբագրել յոյն աշխարհագէտի բնագիրը:

Ալքանոս գետից արեւմուտք ընկած սեկտորի համար կարեւոր է Ստրաբոնի Սանդոքանէս գետանունան մեկնաբանութիւնը՝ որպէս Սանի (ըստ Աշխարհացոյցի) եւ *Լոքանէս (փխն. *Դոքանէս, քանի որ յուն. Δ եւ Λ նիշերն իրար շատ նման են) գետանունների վրիպեալ միախառնում, ընդ որում՝ *Լոքանէսն էլ համադրելով Պտղոմէոսի Ալքանոսի հետ: Դրանից յետոյ հեշտ է տեսնել, որ Պտղոմէոսի Կովկասից հոսող գետը Ալագանի ստորին հոսանքն է՝ իր Կուրմուխ վտակի հետ, որն այդ ստորին հոսանքի հետ ուղիղ՝ հիւսիս – հարաւ գիծ է կազմում: Այս սեկտորում յիշուած քաղաքներից են. Օսսիկան, որը բոլոր մասնագէտները համադրում են Ծաքիի հետ, Երլայան, որը, հաւանաբար, Երլախ՝

ներկայիս աշխինեայ քաղաքի հինաւուրց ձախափնեայ նոյնանուն թաղամասն է, Իուճան, որն, անշուշտ, ներկայիս Ջուճուտն է, Իոռուլան (վերականգնուած՝ Իոռուլայից. յուև. P > B), ըստ ամենայնի՝ Ջոլլուն է, Մամեխիան՝ Մամրուլքը. թերեւս՝ Ադիարլա-Ալիարլան խեղուած Ալիբեյլին է, Արիալա-Արլանան՝ խեղուած Արդալին, Գաիտարան գուցէ, Մին-գեչաուր քաղաքի հիւսիսային թաղն է եւ նոյն Գանգարան, որ էլ համընկնում է Աշխարհացոյցի՝ այդ շրջանում յիշած Գրլգաւ քաղաքի հետ:

Վերադառնալով Ստրաբոնին, որը թուարկուած է Աղուանքի գետերն արեւմուտքից արեւելք (Ալագոնիոս, Սանդորանէս, Ռոյտակէս եւ Խանէս), նշենք, որ չպէտք է փորձել նրա գետերն անպայման նոյնացնել Պտղոմէոսի գետերի հետ, այլ պիտի մտածել նաեւ, որ խօսքը տարբեր գետերի մասին է: Աշխարհացոյցն Աղուան-Ալագանից յետոյ թուարկուած է Կովկասից իջնող Գեգաուտ, ապա Սանի եւ Սեքոջ գետերը, որից յետոյ բնագիրը խաթարվում է 1604 թ. գրչի խիստ անփութութեան պատճառով, որն այդ հատուածում վրիպել է «ռեկորդային» 2-3 պարբերութիւն (մինչեւ Մեծ Հայքի նկարագրութեան սկզբները)¹: Բայց եղածը բաւարար է, որպէսզի Գեգաուտն համադրենք եւ նոյն աղբիւրի Գրլգաւի հետ, ե՛ւ Պտղոմէոսի Գանգարայի՝ ի վերջոյ, համարելով, որ դա Ալագանի ամենից արեւելեան ու մեծ Աղբիջայ վտակն է: Սանին էլ համադրելի է Կուրի արդի Ալիջան անունով վտակի (նաեւ՝ Ալլիգանչայ) հետ, իսկ Սեքոջը Տուրիանի: Վերջինս էլ, ըստ ամենայնի՝ Ստրաբոնի Լոբանէտն է (Պտղոմէոսի՝ Ալբանոս): Այդ դէպքում Ստրաբոնի Ռոյտակէտը համադրելի է դառնում Կուրի Գեօքչայ-Կոկիսոն վտակի հետ (գուցէ՞ համ. Ռուշանաշէն հայկ. գիւղը), իսկ Խանէտը՝ Ադսուի (համ. նաեւ *Խալէս – Բաղաձոր), այլ ոչ թէ անպայման պտղոմէոսեան որեւէ գետի հետ:

Վերջապէս, Պտղոմէոսի ամենից արեւմտեան սեկտորում, մինչեւ սահմանային Ալագան գետ, յիշուած են բաւականին լաւ տեղորոշւող բնակավայրեր. Դեգլանէն վերականգնվելով Լեգլանէ (յուև. Δ – Λ)՝ կապուած է Լեթիթի հետ՝ իր նշանաւոր զուարթնոցանման տաճարով, Սանուան վերականգնվելով Սարուա (յուև. Ν – Ρ եւս նման են)՝ համադրուած է Ճարի հետ, Մոսեգան Մացեխն է կամ, որ աւելի հաւանական է՝ Տուրիանի վերնահովտի Միչիլքը, իսկ Տագոդան բոլորի համոզմամբ՝ վերականգնելի է Լագոդա՝ որը հետագայում վերածուել է արդի Լագոդէխիի: Բարուկան, թերեւս՝ Բելուկանն է, իսկ Նիգա-ն (տարբ. Նեգա)՝ նշանաւոր Նիժը, ընդ որում՝ երկուսն էլ սեկտորները շփոթով են:

Վերջում նաեւ յաւելենք, որ Աշխարհացոյցից Ղեւոնդ վարդապետի քաղածոյի շնորհիւ, որը Բուն Աղուանքի գաւառները թուարկուած է

¹ Տե՛ս Անանուն (է դար), Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր Ա. Յակոբեանի, – ԷԱ, ԾիԷ տարի, Վիեննա-Եր., 2013, ս. 35-194:

Պարերը Բանանցի հարսանեկան ծիսաշարում

Գարդմանի պատմա-ազգագրական շրջանում հայերի մեջ կենցաղավարված պարերը մշակութային առանձնահատուկ արժեք են ներկայացնում իրենց ինքնատիպությամբ, յուրովի կատարողական ոճով, կառուցվածքով, հատուկ կանոններով: 20-րդ դ. սկզբին այս տարածքի ծեսերն ու սովորություններն ուսումնասիրվել են ազգագրագետ երվանդ Լալայանի կողմից, որը մասնակիորեն անդրադարձել է հարսանեկան արարողակարգում որոշ պարերի անվանումների «Զոմփի», «Ուզունդարա» հավելելով, որ «Զոմփին» խմբապար է, իսկ «Ուզունդարան» կնգապար, կաքավ, այսինքն մենապար¹: Հայ պարագիտությունում մեջ դեռեւս չի հետազոտվել այս տարածաշրջանի պարային մշակույթը:

Մեր խնդիրն է ներկայացնել երեւանաբնակ բանանցեցիներից գրառված պարերից «Զոմփի» շուրջպարը, «հարսի», «սկեսրայրի» մենապարերը, ինչպես նաև վերլուծել կատարման տեղը, ժամանակը, պարի կառուցվածքը, կատարման ձևը, կանոնները, պարագլխի դերն ու նշանակությունը:

«Զոմփի» շուրջպարը կատարվել է նշանդրեքի, հարսանիքի համատեքստում: Բանասացներ Արմիկ Սարգսյանի եւ Անդրանիկ Վանյանի վկայություններ² «Զոմփին» զվարճալի էր, տեմպը՝ բավականին արագ, հիմնական մասնակիցների կազմում ներգրավված էին երիտասարդները, ընդ որում՝ սիրահար զույգեր, թեև պատահում էր, որ մասնակցում էին միջին տարիքի մարդիկ: Պարի կատարման ժամանակ յուրաքանչյուր մասնակից ունենում էր իր պարի ընկերը, այսինքն՝ կողքի կանգնողին: «Զոմփին» կատարվում էր փեսայի տան առջև, հարսնացուի տան ճանապարհին, ինչպես նաև հարսանյաց խնջույքի ժամանակ:

Պարի կառուցվածքը հետևյալն է. մասնակիցները կանգնում են փակ շրջանի դասավորությունում, բռնելաձևեր՝ ձեռքերը ներքեւ, ափափի բռնած, պարաքայլերը թռիչքներով՝ երկու քայլ աջ ուղղությամբ, մեկ քայլ՝ ձախ: Պարը կատարվում էր ժողովրդական գործիքավորմամբ՝ զուռնա, դուդուկ, դամբալ, կոպալով դհոլ: Անցյալ դարի կեսերին Բանանցի լավագույն զուռնա նվագողը համարվում էր Աշրաթը (Գրիգոր

¹ Ե. Լալայան, Գանձակ Գալստ, - «Ազգագրական հանդէս», հտ. 6, Թիֆլիս, 1896, էջ 245:

² Ն. Շամամյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետեւ՝ ԴԱՆ), Եր., 2011:

Տոնյան), որը Բանանցում Հայտնի երաժիշտ Տոնյանների տոհմից էր: Բանանցում եւ Հարակից գյուղերում, քաղաքներում խնջուլքների եւ Հարսանիքների, երաժշտական մրցույթների ժամանակ հիմնականում այս տոհմի երաժիշտներին էին հրավիրում: Աշրաթը Հայտնի էր նաեւ մեջլիսներում (երաժշտական գործիքներով մրցույթ) հաղթելու իր հռչակով, որոնք բացի Հայ երաժիշտներից՝ տեղի էին ունենում նաեւ Հարեւան ժողովրդների երաժիշտների՝ ադրբեջանցիների, պարսիկների միջեւ:

Դեռեւս 20-րդ դ. սկզբին տեղի գուռնաչիները գանազան պարեղանակներ էին նվագում, որոնք կոչվում էին տեղանքի ձորի, սարի, ժայռի անունով, օրինակ՝ «Տատի սոխն», «Զըկնի ձորին», «Լալուկ քարին», «Պաքերի աղբուրին», «Գյոլի», «Ղարզին»¹:

«Զումփի» պարն ունի իրեն բնորոշ կանոնները, որը վերահսկվում էր մակարբաշու՝ պարագլխի կողմից, որը խստորեն հետեւում էր այդ կանոններին: Մակարբաշին ձեռքին ունենում էր հոնի ծառի Հաստ ճյուղից պատրաստված ճրպատ՝ ճիպոտ, որը պարի կարգազանցների ոտքերին էր հարվածում՝ ուժգին դաղելով: Շուրջպարը սկսվում էր փեսայի տան առջեւ մակարբաշու հրահանգով այն ժամանակ, երբ հարսանեկան երթը պատրաստ էր ճանապարհ ընկնելու դեպի Հարսնացուի տուն: Այն կատարվում էր հետեւյալ սկզբունքներով. տան առջեւ մակարբաշին ձեռքի ճիպոտով մեծ կլոր շրջան էր գծում եւ պարողներին հրամայում մտնել պարաշրջան, իսկ լավագույն կատարողներից մեկին զցում էին պարաշրջանի ներսը: Պարի ընթացքում մակարբաշին հսկում էր մասնակիցներին հետեւելով հատկապես ոտքերին: Մասնակիցները պետք է աչալուրջ պարեին, որպեսզի դուրս չգային մակարբաշու գծած շրջանագծից, այլապես ձեռքի ճիպոտով հարվածում էր կանոններ խախտողի ոտքերին: Պարի կարեւոր կանոններից մեկն էր նաեւ անժամանակ պարը չլքելը: Որքան էլ մասնակիցը հոգնած լիներ կամ չկարողանար շարունակել, պարտավոր էր մինչեւ վերջ պարել: Նման պարագայում պարագլուխը ճիպոտով բազմիցս հարվածում էր ոտքերին ու մեջքին՝ որպես «կարգազանցի»: Պարողների կատարողական տեմպը թուլանալու դեպքում պարի ընդհանուր տեմպը կարգավորելու համար, պարագլուխը երաժիշտներին սաստում էր, որ առավել ուժգին նվագեն: Պատահում էր, որ պարաշրջանի կենտրոնում պարողը հոգնելով՝ փորձում էր ճողպրել, դուրս գալ պարաշրջանից, բայց շրջանի մասնակիցները փակում էին միմյանց շատ մոտ կանգնելով եւ ափերն ամուր սեղմելով: Շատ անգամ մակարբաշու գծած շրջանից մասնակիցներից ոմանք միտումնամար դուրս էին հանում իրենց ոտքի կրունկը կամ թաթը մակարբաշուն բարկացնելու համար: Այդ ընթացքում, մինչ մակարբաշին

¹ Ե. Լալայեան, Գանձակի շրջան, - «Ազգագրական հանդես», հտ. 6, էջ 266:

փորձում էր սաստել կարգազանց մասնակցին, մյուս մասնակիցն էր շրջանից դուրս հանում ոտքը: Հիմնականում կանոնները միտումնավոր խախտում էին երիտասարդ տղաները՝ մակարբաշուն համբերությունից հանելու եւ պարի ողջ ընթացքը զվարճալի դարձնելու համար: Մակարբաշու պարագայում պարը վերածվում էր վազվզոցի, իսկ երիտասարդ կատարողների համար զվարճանքի:

«Զոմփին» կատարվում էր հարսնառի ճանապարհին այն ժամանակ, երբ համագյուղացիներից մեկն իր տան առջեւ քաղցրեղենով եւ խմիչքով սեղան էր բացած լինում: Մակարբաշին կանգնեցնում էր հարսանեկան երթը: Փեսան, քավորը, քավորկինը, ազաբ բաշին եւ մյուս ավագ մասնակիցները սեղանի մոտ հյուրասիրվում էին եւ աչքալուսանքի կենաց խմում, իսկ այդ ընթացքում մակարբաշին ձեռքի փայտով գծում էր շրջանը, եւ կրկին վերսկսվում էր պարը: Այդպես մինչեւ հարսնացուի տուն հասնելը, որքան սեղան էին բացած լինում ճանապարհին, այդքան կանգնում էր հարսանեկան երթը, եւ կատարվում «Զոմփին»: Այս պարի վերջին կատարման տեղը լինում էր հարսնացուի տան բակը եւ խնջուկի տունը, որտեղ խնամիների մասնակցությունը նույնպես պարտադիր էր: Պարի ընթացքում պատահում էր, որ մասնակիցները զվարճանքի համար քավորին կամ ազաբ բաշուն էին գցում պարաշրջան եւ չէին թողնում դուրս գալ այնքան ժամանակ, մինչեւ գումար չորոշ չէին տալիս երաժիշտներին:

Բանանցի հարսանեկան խնջուկքում կատարվող ծիսական մենապարերում առանձնանում են «սկեսրայրի», «Հարսի» մենապարերը, գյուղի ավանդույթներին, սկզբունքներով բնորոշ շարժուձեւով: Այսպես, երբ հարսանեկան երթը վերադառնում էր փեսայի տուն՝ փեսայի հայրը պարելով ընդառաջ էր գնում հարսանեկան երթին: Այնուհետեւ հանելով գլխարկը՝ մենապարում էր հանդիսականների դիմաց, ապա ձեռքի գլխարկն ուղղելով հրավիրյալների առջեւ եւ փոքր ինչ խոնարհվելով՝ ձեռքի շարժումով հրավիրում էր տուն: Պարի մեջ բնութագրվող նմանատիպ ժեստերը, շարժումներն իրենց նշանակությունն ունեն: Գլխարկը՝ տան մեծի, ավագի պատիվն ու նամուսն է խորհրդանշում¹, իսկ հարսանեկան երթի մասնակիցների առջեւ գլխարկը հանելով պարելը նշանակում է պատվավոր հյուրերի մուտքն իր տուն:

«Հարսի մենապարը» կատարվում էր խնջուկքի գրեթե վերջում: Այն կատարվում էր բավականին դանդաղ, հանդիսավոր, որը տեղի էր ունենում զուգբերի կենացը խմելուց հետո, քավորի եւ քավորկնոջ գլխավորությամբ: «Հարսի մենապարի» ժամանակ պարում էին միայն այն հանդիսականները, ովքեր գումար՝ չորոշ էին տալիս: Պարի ընթաց-

¹ Ն. Շամալյան, ԴԱՆ, Եր., 2011 թ., բանասաց՝ Արմիկ Սարգսյան:

քում քավորկիները բռնում էր մեծ հախճապակե վազ, որպեսզի հարսի ձեռքի հավաքվող գումարը դրվեր մեջը: Հյուրերի կողմից ամոթ էր համարվում այդ պարին մասնակցել քիչ գումարով կամ առանց գումարի¹: «Հարսի մենապարն» ուներ որոշակի կանոններ: Հարսը պարի ընթացքում իրավունք չուներ գլուխը բարձր պահել, աչքի պոչով որեւէ մեկին նայել, ձեռքերը գլխի մակարդակից վերեւ բարձրացնել, այլապես դա կդիտվեր իբրեւ ոչ պարկեշտ պահվածք: «Հարսի մենապարում» նկարագրված շարժումների ցուցիչները խոնարհության, հեզության արտահայտությունն են խորհրդանշում:

Այսպիսով, ամփոփելով նյութի վերլուծությունը՝ գալիս ենք որոշ եզրահանգումների.

• «Զմփի» պարը Բանանցի հարսանեկան ծիսահամալիրում մեծ դեր ուներ: Պարի կատարման տեղն ընտրվում եւ իրականացվում էր պարագլխի կողմից, որը որոշակի սկզբունքով էր արվում: Կարեւորվում էր պարագլխի կողմից մասնակիցների ընտրությունը, քանի որ այս բնույթի պարատեսակը պահանջում էր Ֆիզիկական տոկունություն եւ կատարողական վարպետություն, այդ պատճառով էլ հիմնական մասնակիցների կազմը երիտասարդներ էին:

• «Սկեսրայրի մենապարում» ընդգծվում էր գյուղում, համայնքում եւ, առհասարակ, հասարակության մեջ զբաղեցրած անհատի դիրքը, կշիռը:

• «Հարսի մենապարը» ոչ միայն Հարսի խոնարհության, հեզության արտահայտությունն էր, այլեւ, ամենայն հավանականությամբ, խորհրդանշում էր աղջիկ – կին անցումային կարգավիճակը:

¹ Ն. Շամսյան, ԴԱՆ, Եր., 2011 թ., քանասաց՝ Արմիկ Սարգսյան:

Շիրվանի եւ Ապշերոնի զարգացման գործում արցախահայերի քաղաքակրթական ավանդի շուրջ

Հետխորհրդային Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզչությունը եւ նոր թափ ստացած պատմաշինարարության պայմաններում ադրբեջանցի պատմաբաններն անցնել են լայնածավալ տեղեկատվական հարձակման, որն էլ ավելի մեծ հետեւողականություն մեզ սկսեց իրականացվել Ադրբեջանի անկախացումից հետո: Ինչպես իրավամբ գրում է ակադեմիկոս Ա. Մելքոնյանը. «Անկախության հռչակումից հետո՝ լալիեյան իշխանության անմիջական ուղղորդմամբ, ադրբեջանական պատմագրությունը հայտնվեց ամեն մի գիտական վերահսկողությունից դուրս եւ իր անսահման երեւակայությունները գերազանցեց անգամ թուրքական պատմագրությունը»¹:

Ադրբեջանական պաշտոնական պատմագրությունը (Չ. Բունիաթով, Ֆ. Մամեդովա եւ ուրիշներ), Բուն Աղվանքի եւ Շիրվանի պատմությունը նվիրված աշխատություններում արհեստածին «ադրբեջանցի ժողովրդի» պատմությունը հնացնելու մտասեւեռումով «ադրբեջանցիներ», «ադրբեջանական ցեղեր» կամ «ադրբեջանական ուսան» փնտրելու նպատակով շարունակաբար փորձել է յուրացնել Արեւելյան Այսրկովկասի՝ Կուրից մինչեւ Ապշերոն թերակղզի ընկած տարածքի էթնոմշակութային եւ քաղաքական պատմությունը: Մինչդեռ, հայ եւ օտարալեզու բազմաթիվ սկզբնաղբյուրներ հավաստում են, որ Կուրի ձախափնյակում XX դարի երկրորդ տասնամյակի վերջում ի հայտ եկած «Ադրբեջան»² անվամբ արհեստածին պետությունում անդրալիթայան տա-

¹ Մելքոնյան Ա., Պատմության կեղծարարության թուրք-ադրբեջանական պատմագրության մեթոդաբանական հիմքը: Պատմություն եւ մշակույթ. ընդդեմ կեղծիքի եւ ոտնձգության: Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ (4-6 մայիսի), Եր., 2011, էջ 13:

² Արեւելյան Այսրկովկասում երբեւէ գոյություն չի ունեցել «Ադրբեջան» անվամբ որեւէ աշխարհագրական վայր կամ պետություն: Արտ. Արեղյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Ատրբեջան եւ ատրբեջանցի անունով երկիր ու ժողովուրդ գոյություն չունեին պատերազմից [իմնա՝ Առաջին աշխարհամարտից – Գ. Ս.] առաջ: Ռուսական հին վիճակագրությունը գիտելի միայն «Արեւելեան Անդրկովկաս», «Բագովնահանգ» եւն, փոխարինելով նույնանուն խանութիւնների՝ պարսկական տիրապետութեան տակ» (Արեղյան Ա., Մենք եւ մեր հարեւանները (ագգային քաղաքականութեան խնդիրներ), – «Հայրենիք», Պոսթըն, 1928, Չ տարի, մայիս, էջ 135):

վաստաններից ներխուժած թյուրք-օղուզների հետնորդները՝ 1930-ական թթ. վերջերից «ադրբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարները «ինքնահաստատվել» են տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, ուղիներ, թաթեր, թալիշներ, լեզգիներ եւն) դեմ վարած ցեղասպան քաղաքականության, ուժացման, քաղաքակրթական արժեքների կողոպտման ու ոչնչացման միջոցով:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Կուր դետով Մեծ Հայքին սահմանակից Բուն Աղուանքի տարածքում վաղ ժամանակներից սկսած բնակվել են ոչ միայն աղուաններ (ըստ Ստրաբոնի¹

1918 թ. մայիսի 26-ին՝ Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո, երբ կովկասյան թաթարների Ազգային խորհուրդը (նախագահ՝ Մամեդ Էմին Ռասուլ Չաղե) երիտթուրքերի թելադրանքով մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակեց արհեստածին նոր «պետության» ստեղծումը, նպատակ ունենալով նույն անվան միջոցով հավակնել իրանի հյուսիս-արեւմտյան պատմական Ատրոպատենե – Ատուրպատական (առաջացել է Մարաստանի Ք. ա. IV դ. սատրապ՝ Ատրոպատեսի անունից) – Ադարբայջան (նոր պարսկերեն) – Ազարբայջան (արաբերեն) անհանգին, հակառակ իրանի բողոքների, այն թյուրքացված տարբերակով հորջորջվեց «Ազերբայջանական Դեմոկրատական Հանրապետություն» (հետագայում՝ «Ազերբայջանական ԽՍՀ», ներկայումս՝ «Ազերբայջանական Հանրապետություն»): Շարադրանքում մեր կողմից օգտագործվել է հայկական «Ադրբեջան» ձևը: Մանրամասն տե՛ս Բարտոլա Վ., Место прикаспийских областей в истории мусульманского мира, Сочинения, т. II, ч. I, Москва, 1963, с. 703; Էնեաթուլան Ռեզա, Ազարբայջան եւ Սուան (Կովկասեան Ալբանիա), Եր., 1994, էջ 12-17; Swietochowski T., Russian Azerbaijan. 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community, Cambridge, 1985, p. 129; Ասատրյան Գ., Գեորգյան Ն., Ադրբեջան. յուրացման սկզբունքը եւ իրանական աշխարհը, Եր., 1990; Galichian R., The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination (Second, Revised and Expanded Edition), London-Yer., 2010, p. 35: Տե՛ս նաեւ Խանլարյան Կ., «Ադրբեջան» աշխարհագրական հասկացության սահմանումները օսմանյան քարտեզներում, հանրագիտարանային նշանակության հրատարակություններում եւ դասագրքերում, – «ՎԷՄ», Եր., 2012, հոկտեմբեր-դեկտեմբեր, հո՞ 4 (40), էջ 145-160:

¹ Страбон, География, Пер., статья и комментарии Г. А. Стратановского, Москва, 1964, кн. XI, гл. IV, § 6, с. 476. Բուն Աղուանքի թագավորության գոյության ընթացքում (Ք. ա. I – Ք. հ. V դդ.) նրա կազմի մեջ մտած ցեղերի էթնոհամայնքման գործընթացի թուլության հետեւանքով Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում այդպես էլ չձեւավորվեց «աղուան» էթնոս՝ միասնական լեզվով, մշակույթով, ինքնագիտակցությամբ եւ, ի վերջո, ինքնանվամբ: Հարցի մանրամասն քննությունը տե՛ս Աкопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 148, 273; Աкопян А., Мурадян П., Юзбашян К., К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.-VIII в. н. э.)», – ՊԲՀ,

Բուն Աղվանքում ապրել են 26 տարալեզու ցեղեր), այլև որոշակի հայկական էթնիկ տարր¹: X դարից սկսած Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով ընկած տարածքը սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի է Շիրվան կամ «Շիրուանայ» երկիր անուններով²: Միքայել Չամչյանն այդ մասին գրում է: «Աղուանից աշխարհ..., որ է ընդ մէջ Կուր գետոյ եւ Կասպից ծովու մինչեւ ի Դարբանդ. եւ սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...»³:

Որպես երկրամասի տեղաբնակ եւ մշակութակերտ ժողովուրդ հայերը մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթա-մշակութային կյանքին եւ ստեղծեցին հարուստ պատմութիւն⁴: Հր. Աճառյանի բնորոշմամբ՝ «Աղուանից երկրին

1987, հո^ր 3, էջ 189; Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Եր., 2006, էջ 84:

1 Տե՛ս Գալստյան Հ., Հակոբյան Ա., Էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում (Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Եր., 2003, էջ 91-92):

2 IX դ. վերջերին, երբ Արաբական խալիփայության թուլացման պայմաններում Բուն Աղուանքի մի շարք մարզեր դարձան ինքնուրույն, Շիրվանի մարզի ամիրան X դ. գրավեց հարեւան մարզերը եւ իշխանության սահմանները հասցրեց Դերբենդից հարավ ընկած ծովափնյա շրջաններ՝ ընդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի, ներառելով Խրսանի, Լայզանի եւ մյուս մարզերը: Տե՛ս Мухоморский В. Ф., История Ширвана и Дербенда X-XI вв., Москва, 1963, с. 85, 106-119; Փափազյան Հ., Անանուն Տաջիկ աշխարհագիրը Հայաստանի եւ Արեւելյան Վրաստանի աշխարհագրության եւ տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), – «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1953, հո^ր 5, էջ 80, 86:

3 Միքայել Չամչյանց, Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թուականը), հտ. Գ, Եր., 1984, էջ 131:

4 Կուրի ձախափնյակում հայաբնակ գյուղերի մշակութակերտ գործունեության անվիճելի վկայություններն են հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցված բազմաթիվ եկեղեցիները, վանքերը (Քիչի Ս. Եղիշա Առաքյալ, Ճալեթի Ս. Աստվածածին, Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա, Մեչարիի Ս. Աստվածածին) եւ մատուռները, հնավայրերի հայերեն բազմաբնույթ արձանագրություններ ունեցող հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցից հարուստ են Նիծ, Վարդաշեն, Ճալեթ, Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշեն, Հնդար, Սաղիան, Մատրասա եւ այլ գյուղերի գերեզմանատները (տե՛ս Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիճագրերը, Եր., 1997): Պատմական բացառիկ արժեք են ներկայացնում նաեւ երկրամասի տասնյակ գրչօջախներում (Բաքու, Ծամախի, Սաղիան, Մեչարի, Մատրասա եւն) XIV-XVIII դդ. ընդօրինակված հայերեն բազմաթիվ ձեռագիր մատյանները (տե՛ս Եգանյան Օ., Մեւրոպ արքեպ. Սմբատյանի «Նկարագիր Ծամախոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, – «Էջմիածին», 1970, հո^ր Ա, էջ 45-48): Երկրամասի գրչության կենտրոններում ոչ միայն ընդօրինակվել են մատյաններ, այլև գրատներում պահվել, կորստից փրկվել

մէջ գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպէս ուժեղ էին եւ այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ եւ ընդհակառակը, զանազան հաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...»¹: Կուրբ ձախափնյակում եւ մերձկասպյան շրջաններում հայ էթնիկ տարրի վաղեմության փաստի առնչությամբ Սիմեոն Ա Երեւանցի պատմագիր կաթողիկոսն իր հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու եւ հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ»²: Շիրվանում հայ բնակչության հնուց եւ վաղ միջնադարից եկող մշակութակերտ գործունեության շարունակականության վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Լեոն Նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չպէտք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցութեան տակ»³: Երկրամասում հայերի տեղաբնակ լինելը փաստում են նաեւ ոչ հայկական աղբյուրները: Այդ իմաստով հատկապես ակնառու է ցարական կառավարության պաշտոնյա, կովկասագետ Յու. Գազեմիստերի արտահայտութիւնը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակութիւնը կարող են ապացուցել միայն հայերն ու ուտիները»⁴: Ըստ որոշ տեղեկութիւնների՝ միջնադարում երկրամասի ողջ տարածքում հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի⁵:

եւ սեզ են հասել այլ վայրերում (Սպահան, Թիֆլիս, Բաբերդ, Արցախ, Գողթան, Նոր Զուղա, Սյունիք, Մոկս, Կաֆա եւն) XIV-XIX դդ. քնդորինակված, նվիրատվությունների կամ այլ ճանապարհներով ձեռք բերված մեծաքանակ արժեքավոր ձեռագրեր, որոնց մի մասն այժմ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում եւ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրասանր (տե՛ս Ստեփանյան Գ., Օսմախու հայոց թեմի գրչության այլ վայրերում գրչագրված եկեղեցապատկան եւ վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), - «Էջմիածին», 2005, հո֊ ժԲ, էջ 67-73):

¹ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002, էջ 44:

² Դիւան Հայոց պատմութեան, Գ զիրք, մասն Բ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Հրատարակեց Գիտ քն. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 417-418:

³ Լ[եո], Օսմախի, - «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, հո֊ 28:

⁴ Гаемейстер Ю., Хозяйственный очерк Закавказского края: народонаселение (Сб. газеты «Кавказ», издаваемой О. Н. Константиновым), первое полугодие 1847 года, Тифлис, 1847, с. 58 («одни Армяне... могут доказать первобытность свои»):

⁵ Տե՛ս Կարապետյան Ա., Օսմախու գավառի գյուղերի պատմությունից, - ԼՀԳ, 1989, հո֊ 2, էջ 57:

Կուրի ձախափնյակի մշակութային զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևերովել է քրիստոնեությունն եւ դարձյալն տարածման ու հաստատման գործում: Ազաթանգեղոսի հաղորդմամբ՝ Գրիգոր Լուսավորիչը եւ Հայոց թագավոր Տրդատ Գ Մեծը (298-330) քրիստոնեությունը տարածեցին «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչեւ ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից...»¹: Հայտնի է, որ IV դ. 30-ական թթ. սկզբներին երկրամասում քրիստոնեություն է քարոզել Բուն Աղուանքի եւ Վիրքի համար եպիսկոպոս կարգված՝ Հայոց կաթողիկոս Վրթանես Ա-ի ավագ որդի Գրիգորիսը, որը նահատակվել է Դերբենդից հարավ Կասպից ծովի ափին գտնվող Վատնյան դաշտում: Ս. Գրիգորիսի մարմինը նրա աշակերտները բերում եւ ամփոփում են Արցախում՝ Ամարասի վանքում²: Բուն Աղվանքում ձեւավորված եկեղեցին, ընդունելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գերակայությունը, վարչականորեն եւ դավանաբանորեն նրա մասն էր կազմում³: Վաղնջական շրջանից հայկական քաղաքակրթական ոլորտում գտնվող Կուրի ձախափնյակի քրիստոնյա, այդ թվում նաեւ հայ բնակչության առկայության եւ Հայ Առաքելական Եկեղեցու քրիստոնեական ավանդույթների պահպանման վկայությունն են գրավոր աղբյուրներում V դարից հիշատակվող Կասպղական, Բաղասականի, Հաշուի, Յրիի, Բախաղատի եւ Շաքիի եպիսկոպոսական թեմերը⁴, որոնց հենքի վրա X դ. վերջերին XI դ. սկզբներին Աղուանից

¹ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփսիս, 1909, էջ 439:

² Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Բնագիրը Ք. Պատկանեանի, Թարգմ. եւ ծանոթ. Ստ. Մալխասեանի, Եր., 1987, էջ 26: Տե՛ս նաեւ Օրսնանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 99, էջ 138-139; Мурадян П., Кавказский культурный мир и культ Григория Просветителя, – «Кавказ и Византия», вып. 3, Ер., 1982, с. 5-20; Սվազյան Հ. Ս., Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորիս, – «Էջմիածին», 2003, հոբ 2, էջ 39-46; Акопян А. А., Албания-Алуанк, с. 124-145.

³ Հմմ. Акопян А. А., Албания-Алуанк, с. 137. տե՛ս նաեւ Հակոբյան Ար., Արեւելյան Այսրկովկասում հայկական եւ իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (մի խմբի ձեւավորման օրինակով), – «Մերձավոր Արեւելք», պր. Ա, Եր., 2002, էջ 33:

⁴ Տե՛ս Կորիւն, Վարք Մաշտոցի, Բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով եւ ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մ. Արեղյանի, Եր., 1941, էջ 70, 72; Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Սարգսեանի, Եր., 1991, էջ 340; Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Եր., 1983, էջ 89, 122, 346:

կաթողիկոսության ենթակայությամբ կաղամալորվել են Շամախիի (Շիրվանի) եւ Շաքիի հայոց թեմերը¹: Աղուանից կաթողիկոսությունը (XIV դարի վերջերից – XV դարի սկզբներից Գանձասար անվամբ²) Հայ Առաքելական Եկեղեցու հովանու ներքո համարվում էր նրա նվիրապետական աթոռներից մեկը, իսկ կաթողիկոսները ձեռնադրվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից³: Միմեռն Երեւանցի կաթողիկոսի վկայությամբ՝ «...զի յորքան ժամանակս Կաթողիկոսքն Հայոց նստէին յերկիրս Հայոց ի բնիկ եւ ի սեպհական յաթոռն Լուսաւորչին, Կաթողիկոսքն Աղուանից միշտ ընդ ձեռամբ սոցին են լեալք, եւ հրամանաւ սոցին են ձեռնադրեցեալք»⁴: Ինչպես նշում է է. Դանիելյանը, «Հայ Առաքելական Եկեղեցու աւանդոյթների վրայ հիմնուած «Աղուանից» հայրապետութիւնը հայոց դաւանաբանութեան հետեւորդն էր: Հայկական ծագմամբ «Աղուանք» անուանումը, յետագայում եկեղեցական իմաստ ստանալով, հայկական աղբիւրներում սկսեց կիրառուել նաեւ Արցախ եւ Ուտիք նահանգների թեմերի առումով»⁵: Որ վաղ միջնադարից մինչեւ Հայոց թագավորության անկումը (428 թ.) Աղվանից թագավորությունը որոշ ընդհատումներով գտնվում էր հայկական թագավորության քաղաքական եւ մշակութային ազդեցության ներքո, խոսուուն վկայությանն ենք հանդիպում Կիրակոս Գանձակեցու երկում. «Սկիզբն առաջնոյ պատմութեանն եղաք զսուրբ Լուսաւորիչն Հայոց... զսուրբն Գրիգորիոս... Իսկ երկրորդ հատուածին ղիցուք զլուսն զլուսաւորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց եւ զհաւանակցաց մերոց, մանաւանդ զի եւ առաջնորդք նոցա հայալեզուք, հայերէնախօսք յլովք էին. թագաւորքն՝ հնագանդք՝ թագաւորացն հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, եւ եպիսկոպոսքն ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ եւ յա-

¹ Մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Շամախու հայոց թեմի սկզբնավորման հարցի շուրջ, – ՀՊԸՀ (տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածո), Եր., 2005, հիմ 3, էջ 870-873:

² Տե՛ս Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Եր., 2006: Բալայան Մ., Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչեւ մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, էջ 168:

³ Տե՛ս Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 162: Ուլուբաբյան Բ., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Եր., 1998, էջ 119: Գանիելեան Է., Գանձասարի պատմություն, Եր., 2005, էջ 47:

⁴ Ջամբո, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնակից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, եւ իրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարարեցեալ ի Սիմեօնէ ցաւահար եւ վշտակոծ կաթողիկոսէ Եր.ցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 77:

⁵ Գանիելեան Է., Գանձասարի վանքը, Եր., 2009, էջ 16-17:

թոռակալաց նորա, եւ ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ կացեալ ի կրօնս, վասն այնորիկ արժան է ի միասին լինել յիշատակ երկուց ազգացս»¹:

Պատմագրական աղբյուրները փաստում են, որ Կուրի ձախափնյակի քաղաքակրթական զարգացումներում հայկական ազդեցութիւնն առավելապես դրսեւորվել է Մեծ Հայքի հյուսիս-արեւելյան՝ Արցախ եւ Ուտիք նահանգներից: Արցախ աշխարհից հայոց ազդեցութիւնը Բուն Աղվանքի էթնո-քաղաքական զարգացումներում ուժեղացավ հատկապես Առանշահիկ կամ Արշակունի Վաչագան Բ Բարեպաշտ թագավորի երկարատեւ ու արդյունավոր իշխանության (485 – VI դ. առաջին կես) շրջանում, որն արքայաբար տիրեց «Արցախայ ամուր աշխարհին» եւ «ի Կամբէճս եւ յԱղունեա»²: Վաչագան Բ արքայաշտի նախածնունդութեամբ թագավորական ամառանոց Աղվնում V դ. վերջին կամ VI դ. սկզբին³ հրավիրված եկեղեցական ժողովին Արցախի եւ Ուտիքի աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդներից բացի մասնակցում էին նաեւ Կուրի ձախափնյակի Կապաղակի եւ Յրիի եպիսկոպոսական թեմերի ներկայացուցիչները. «...Մանասէ՛ Կապաղակայ եպիսկոպոս... Շմաւոն՝ Յրւոյ քորեպիսկոպոս...»⁴:

Պատմական մի ավանդության համաձայն՝ Վաչագան Բ արքայաշտը, երբ 500 թ. Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Բագավան գավառն իբրեւ օժիտ տվեց իր դստերը՝ Վարսենիկին, Բաքուն նրա ձմեռանոցն էր, իսկ Շամախին ամառանոցը⁵: Սուքիաս էփրեկյանն այդ մասին գրում է. «Այս կրակոտ երկիրը, Քրիստոսի 500 թուին... Վաչագան թա-

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 192:

2 Մովսէս Կաղանկատուացի, էջ 47, 50; Անանուն, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 73-74: Տե՛ս նաեւ Ուլուքաբյան Բ. Ա., Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան (V-VII դդ.), Եր., 1981, էջ 141-142; Դանիէլեան Է., Գանձասարի պատմութիւն, էջ 43:

3 Հմմ. Ուլուքաբյան Բ. Ա., Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան, էջ 178; Յակոբեան Ա., «Վաչագանի վեպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, – ՀԱ, Վիեննա-Եր., 2003, սն. 45-142:

4 Մովսէս Կաղանկատուացի, էջ 89-90; Վաչագան Աղուանից արքայ, Սահմանադրութիւն կանոնական՝ եղեալ ի ժողովոյն, որ յԱղունեան եղեւ, Գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 127-140:

5 Տե՛ս Հանրամատչելի հանրագիտական բառարան, հտ. Ա, Կազմեց Հ. Առաքելեան, Թիֆլիս, 1915, էջ 199:

գաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր էր իւր Վարսենիկ դստեր, որոյ ձմերոցը Բագուն էր, իսկ ամառանոցը Շամախին»¹:

Վաչագան Բարեպաշտը պատմութեան մեջ թողել է ազգանվեր ու եկեղեցասեր գործչի բարի համբավ: Նրա հայրենասիրական եւ աստվածահաճո գործունեութիւնը գովեստով է ներկայացվում Մովսէս Դասխուրանցու (կոչված նաեւ Կաղանկատուացի) «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում. «Սա եղեւ դուռն լուսոյ աստուածագիտութեան եւ բազմազան բարեաց օրինակ երջանիկս այս»²: Քանի որ այդ երկը պարունակում է նաեւ Կուրի ձախստիւնակում Վաչագան թագաւորի ունեցած ազդեցութեան եւ ծավալած գործունեութեան վերաբերյալ հստակ տեղեկութիւններ («...կարգէր տեղեաց տեղեաց եպիսկոպոսունս, ե՛ւ երիցունս, ե՛ւ հայեցողս. եւ ի Կամբէճս եւ յԱղուանս զնոյն հրաման սաստից կարգեալ հաստատէր...») ³, ապա դրանից կարելի է եզրակացնել, որ քրիստոնեութեան ամրապնդման նպատակով Վաչագանի ծավալած եկեղեցային գործունեութիւնը տարածվել է ընդհուպ մինչեւ Ապշերոնյան թերակղզի՝ արքունի ձեռնարկով: Այդ է վկայում նրա կողմից 500 թ. Բաքվի բերդի ներսի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման փաստը⁴: Ավանդութեան համաձայն՝ «...Վաչագան Բարեպաշտ թագաւորն... յամի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այսմ եւ Բագուայ հին եւ նշանաւոր եկեղեցին, եւ ուխտատեղին է Սուրբ Աստուածածնայ եկեղե-

¹ Էփրիկեան Հ. Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա, գիրք Ա, Վեներտիկ - Ս. Ղազար, 1903-1905, էջ 362:

² Մովսէս Կաղանկատուացի, էջ 83:

³ Նույն տեղում, էջ 50:

⁴ Տե՛ս Էփրիկեան Ս., Նշվ. աշխ., հտ. Ա, գիրք Ա, էջ 362, տե՛ս նաեւ Հանրամատչելի հանրագիտական բառարան, հտ. Ա, էջ 199:

⁵ Եկեղեցին գտնվում էր քաղաքի հին թաղում, բերդի ստորոտում, «Կույսի աշտարակի» մերձակայքում՝ հայկական քարավանատանը կից: Աղբրեջանում տարիներ ի վեր պետական մակարդակով իրականացված հայկական հուշարձանների ոչնչացման եւ հակահայկական քաղաքականության հետեւանքով 1992 թ. եկեղեցին բարբարոսաբար պայթեցվել է տեղի խուժանի կողմից: Անգլիացի լրագրող Թոմաս դե Վաալը վկայում է. «...հին քաղաքում՝ Կույս Մարիամ մատուռի տեղում, այսօր դատարկ ու ամառի տարածք է: 1992 թվականին՝ Ղարաբաղյան պատերազմի ամենաթեժ ժամանակաշրջանում, Բաքվում աշխատած դիվանագետներից մեկի խոսքերով, ինքն ակամատես է եղել, թե ինչպէս էր գետնին հավասարեցվում մատուռը» (Թ. դե Վաալ, Սեւ Այգի. Հայաստանն ու Աղբրեջանը խաղաղության եւ պատերազմի միջով, Եր., 2007, էջ 155): Քանզված եկեղեցու տեղում կառուցվել է թեյարան (Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, - Հայոց պատմության հարցեր, հտ. 8, Եր., 2007, էջ 153):

ցին...»¹: Հայկական եկեղեցու գոյութունն իսկ կարելի է զորեղ ապացույց համարել վաղ միջնադարյան Բաքվում հայ համայնքի գոյության մասին: Արեւելագետ, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Բ. Միլլերը թաթերի, այդ թվում եւ հայ-թաթերի պատմութունն ուսումնասիրելու նպատակով 1928 թ. շրջագայելով Ապշերոն թերակղզում, գրում է, որ այդտեղ «նախկինում գոյութուն է ունեցել Բայսիդուն (Qaisidun) հին քաղաքը, որը հավանաբար եղել է հայկական»²:

XVIII դ. վերջերին Կուրի ձախափնյակի տեղաբնակ հայության թվաքանակը զգալի չափով ավելացավ Արցախից կատարված արտագաղթերի հետեւանքով: Իրանի Աղա Մուհամմադ շահի՝ 1795 եւ 1797 թթ. արշավանքների ու ավարառութունների հետեւանքով, երբ լիովին քայքայվեց Արցախի տնտեսութունը, արշավանքների պատճառած չարիքներին միանում են նաեւ սովն ու համաճարակները: Հուսահատության եզրին հասած արցախահայերի մի մասը բռնեց գաղթի ճանապարհը՝ հանգրվանելով Եիրվանում, Վրաստանում եւ Ռուսաստանում³: Աղբյուրներում Եիրվան տեղափոխված հայերի թիվը նշված է 8-12.000 ծուխ⁴: Մակար եպ. Բարխուդարյանցն անդրադառնալով Արցախից տեղի ունեցած գաղթին, ցավով գրել է. «Յրուած եւ գերուած հայեր... միլիոնաւոր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած:... դատարկուած են Գարդման, Փառխոս, Բաւս կամ Բուստի, Զաւէ, Զրաբերդ, Խաչեն, Վարանդայ եւ Դիզակ գաւառներն: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներն: Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի դնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Եաքի եւ Շամախի, մի մասն Կախեթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա»⁵: Այս դեպքերն իրենց արձագանքն են գտել նաեւ XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփի Հովսեփյանց) «Թարիս-ե Սաֆի» («Ճշմարտացի պատմութուն») պարսկերեն պատմագրա-

¹ Սմբատեանց Մ., Նշվ. աշխ., էջ 373: Հմմ. Ֆիզիքական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրություն Հայաստանի, Կազմեց Աւետիք Տէր-Յակոբեան, Թիֆլիս, 1914 (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 335, ց. 1, գ. 24, թ. 98-99):

² Миллер Б., Таты, их расселение и говоры (материалы и вопросы), – «Известия общества обследования и изучения Азербайджана», № 8, вып. VII, Баку, 1929, с. 13.

³ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հտ. Գ, գիրք Բ, Եր., 1973, էջ 405, տե՛ս նաեւ Բաֆֆի, Խամսայի մեկնությունները, – Երվերի ժողովածո, հտ. 9, Եր., 1987, էջ 491-492:

⁴ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հտ. Դ, Եր., 1984, էջ 252:

⁵ Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ Լ:

կան երկում, ուր հեղինակը գրում է. «Երեք տարի Ղարաբաղում երկնային ու երկրային աղետի [հրաշտի] հետեւանքով անբերրիություն ու սով էր: Այնտեղի բնակչության մեծ մասը իր օրվա հացն ապահովելու համար ցրվել էր Շաքիի, Շիրվանի, Ղարադաղի եւ [Հարեւան] մյուս երկրները»¹:

Հաստատվելով Շիրվանում՝ արցախահայերը համալրել են հնաբնակ հայերի թիվը՝ երկրամասում հետզհետե կազմավորելով սովաբ բնակչությամբ հայաբնակ գոտի: Եսայի Հասան-Ջալալյանցը հավաստում է. «Եւ երկիրն էր (իմա Շիրվանը – Գ. Ս.) բարելի եւ շէն եւ մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յուովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականն. եւ թէ այլ ազգօք...»²: XIX դարասկզբին երկրամասում շրջագայած Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցին նկատի ունենալով Շիրվանում հայ բնակչության սովաբ լինելու հանգամանքը, Շիրվանից մինչեւ Դերբենդ ու Կասպից ծով ընկած տարածքը համարել է Հայաստան. «...Դարբանդ քաղաք է ի Հայաստան ի եզրը Կասպի ծովու... Շիրւանս է լայնատարած աշխարհ մի ի մայրաքաղաքացն Հայոց եւ ունի բազում գեղօրեաքս... Յելից վերկալով առ Շաքի. սայ եւս է ի ի ներքոյ լեառն Կովկասայ, որ գոյ ի մէջ Հայաստան աշխարհումն...»³:

Շիրվանում հաստատված արցախահայերն իրենց համար բնակչության նոր վայրեր ընտրեցին նախկինում հայաբնակ եւ այժմ դատարկված կամ մասամբ բնակեցված գյուղերը, որտեղ, գրեթե առանց բացառության, պահպանվել էին բնիկ հայերից մնացած բազմաթիվ եկեղեցիներ, արձանագիր խաչքարերով ու տապանաքարերով գերեզմանոցներ: Գյուղերի մի մասը վերականգնվեց նույն տեղում եւ շատ դեպքերում նույն անվան տակ շարունակեց պահպանել իր գոյությունը⁴: Արցախահայերը Շաքի – Շիրվան գոտում հիմնադրեցին շուրջ հարյուր գյուղ⁵: Երախտաշատ գիտնական Մ. Բարխուդարյանցը 1890 թ. ճանապարհորդելով Կուրի ձախափնյակում, իր այցելած յուրաքանչյուր բնակավայրի համար նշում է այն վայրերը, որտեղից եկել ու այդտեղ են հանգրվանել

¹ Միրզա Յուսուֆ Նեքեստով, Մշմարտացի պատմություն, Թարգմ. բնագրից, Անթուրությունը եւ ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Եր., 2000, էջ 73:

² Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 26:

³ Տեր Բաղդասար Գասպարեան Շուշեցի, Ծաղկաքաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Լ. Բոյորտյան, – «Բանբեր Մատենադարանի», 9, Եր., 1969, էջ 292-294:

⁴ Տե՛ս Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 4:

⁵ Տե՛ս Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեյջանի բոնակցված շրջաններում, Եր., 1999, էջ 12:

արցախահայերը¹: Վերաբնակիչները հիմնականում Զրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա եւ Դիզակ գավառներից էին²:

Հաստատվելով Շիրվանում, արցախցիներն իրենց գործիմացութեան եւ անսպառ եռանդի շնորհիվ հապես նպաստում են երկրամասի զարգացմանը՝ առեւտրա-տնտեսական ու կրթա-մշակութային կյանքի բարգավաճմանը: Երանց ջանքերով նորահիմն գյուղերում հայ ճարտարապետութեան հորինվածքներով կառուցվեցին կամ վերականգնվեցին եկեղեցիներ, մատուռներ, բացվեցին եկեղեցական-ծխական դպրոցներ եւն: Արցախահայերը հական փոփոխութեաններ առաջացրին երկրամասի հայաբնակ գոտու ազգագրական պատկերում: Օրինակ տեղայնացվեցին արցախյան գորգագործական մշակութի ավանդույթները³: Արցախցիների հաստատումից հետո Շիրվանում աստիճանաբար սկսում է գերակշռել Արցախի բարբառը: Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ «Բնիկ Շամախեցոց բարբառն թէեւ տարբեր է Արցախի բարբառից, այսուամենայնիւ հետզհետ է առաջինն տեղի է տալիս երկրորդին»⁴: Իր ուղեգրական նոթերում Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցին անդրադառնալով շիրվանահայերի խոսակցական լեզվին՝ գրում է. «...բառով գռէիքօ-

¹ Ինչպես, օրինակ՝ Շամախու գավառի Բիլիստան գյուղում հաստատվել են Վարանդա գավառից, Դարա-Քարքանջում՝ Շամձոր, Ցոր, Թաղլար եւ Մարտար գյուղերից, Դվարիշենում եւ Թալիշում՝ Դիզակ եւ Վարանդա գավառներից, Ղաջարում՝ Վարանդայից, Միրիշենում՝ Միրիշեն, Հաղրուք եւ Շոշ գյուղերից, Նորշենում՝ Վարանդայից, Փախրաբուշում՝ Տող եւ Շամձոր գյուղերից, Զոհունում՝ Վարանդա գավառի Ավետարանոց, Մովսեսի, Մամնա եւ Հարար գյուղերից: Գյոքչայի գավառում հաստատվել են՝ Ագալիշեն գյուղում՝ Խաչեն, Զրաբերդ եւ Վարանդա գավառներից, Աղբուլաղում՝ Շոշ, Ավետարանոց, Հաղրուք եւ Զանգեզուր գավառի Խնձորեսկ գյուղերից, Ավանաշենում՝ Դիզակի, Վարանդայի գավառներից եւ Խաչենի Դաշբուլաղ գյուղից, Գանձակում՝ Դիզակ եւ Վարանդա գավառների՝ Հաղրուք, Թաղլար, Մարտար եւ այլ գյուղերից, Գիրքում՝ Տող, Գիշի, Թաղավարդ եւ Թաղլար գյուղերից, Դայմաղաղում՝ Մուշկապատ գյուղից, Թուրիշենում՝ Դիզակ, Վարանդա եւ Զրաբերդ գավառներից, Ղալակալում՝ Խաչեն եւ Զրաբերդ գավառներից, Օուքուրչում՝ Խաչեն գավառի Բալուջա, Դաշբուլաղ, Խանձք եւ Ղշլաղ գյուղերից, Խուշանաշենում՝ Խաչեն եւ Վարանդա գավառների Խանձք եւ Գիշի գյուղերից, Վանքում՝ Վարանդա գավառի Աշան, Նիմնի, Մարտար, եւ Խաչեն գավառի Վանք գյուղերից ու Զրաբերդ գավառից, Քեշխուրդում՝ Դիզակ եւ Վարանդա գավառների Հաղրուք, Տող, Թաղլար, Մարտար, Ավետարանոց եւ Շոշ գյուղերից: Նույնի գավառի Սոկուրթու գյուղում հաստատվել են Խաչեն գավառից եւն. տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուամից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 177-207:

² Տե՛ս նույն տեղում, էջ 89-134:

³ Մանրամասն տե՛ս Պողոսյան Ա., Արցախյան գորգագործության մշակույթի ավանդույթները Հյուսիս-արեւելյան Այսրկովկասում, - Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածո, հտ. 14, Եր., 2012, էջ 240-249:

⁴ Բարխուտարեանց Մ., Աղուամից երկիր եւ դրացիք, էջ 295:

րէն խօսին որպէս Ղարաբաղցիք...»¹: Հր. Աճառյանը եզրահանգել է, որ Շամախիի հայերի բարբառը կազմում է Արցախի բարբառի մի ենթաբարբառը²: Ար. Ղարիբյանը եւս լեզվաբանական քննութեամբ ցույց է տվել, որ արցախ-ղարաբաղյան բարբառով «...խոսում են Ղարաբաղի բնակչութիւնը եւ բոլոր այն ղարաբաղցիները, որոնք գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջանում...»³: Ինչ վերաբերում է Բաքու քաղաքի հայ բնակչութեան խոսակցական լեզվին, նրանց բառապաշարում առկա է եղել այստեղ հաստատված արցախցիների, զանգեզուրցիների, շամախեցիների եւ այլ տեղավայրերի հայութեան լեզվաբարբառային շերտերի ձուլման գործընթացը⁴: Իսկ Նուխի եւ Արեշի գավառների հայ բնակչութիւնը հիմնականում խոսել է Արեշ-Հավարիկի բարբառով⁵:

Արցախահայերի մի մասը հաստատվեց նաեւ Շիրվանի կենտրոն Շամախի քաղաքում: Տակավին վաղ ժամանակներից Շամախին ունեցել է ստվարաթիվ հայ բնակչութիւն, որը ժամանակի ընթացքում ստեղծել է հաճելի հարստութիւն եւ մշակութի անկրկնելի կոթողներ⁶: Անգլիացի ճանապարհորդ ու վաճառական Անթոնի Զենքինսոնը 1563 թ. ապրիլի 10-ին Շամախիում եղած ժամանակ թողել է հետեւյալ ուշադրավ գրառումը. «...այս քաղաքը [Շամախին – Գ. Ս.] ... բնակեցված գլխավորապես հայերից...»⁷: Միջնադարում Շամախին եղել է երկրամասի

¹ Տէր Բաղդասար Գասպարեան Ծուշեցի, էջ 293:

² Աճառեան Հր., Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ եւ դասաորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), – Էմինեան ազգագրական ժողովածոյ, հտ. Ը, Մոսկուա – Նոր Նախիջեան, 1911, էջ 76:

³ Տե՛ս Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն (հնչյունաբանություն եւ լեզվաբանություն), Եր., 1953, էջ 230: Հարցի հանգամանակից քննությունը տե՛ս Ղարիբյան Ա., Նշվ. աշխ., էջ 260-262. տե՛ս նաեւ Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների), հտ. IV, Բ գիրք, Եր., 1961, էջ 60, 64-66, 178, 187-188, 192, 210, 287, Բաղրամյան Ռ., Նշվ. աշխ.:

⁴ Տե՛ս Բաքվի հայոց բանահյուսությունը, Կազմողներ Ա. Ղազիյան, Ս. Վարդանյան, Եր., 2004, էջ 16:

⁵ Տե՛ս Տէր-Պողոսեան Գ., Հասարակի բարբառը, – ԲՀԳԻ, Էջմիածին, 1921-1922, գիրք Ա եւ Բ, էջ 160-175: Լուսեց Ա., Արեշի բարբառը, Եր., 1982:

⁶ Շամախիի հայության պատմության մանրամասն քննությունը տե՛ս Ստեփանյան Գ., Շամախին եւ շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչեւ XX դարի վերջերը), – «ՎԷՆ», Եր., 2009, հր՝ 3, էջ 74-95: նույնի՛ Շամախի քաղաքի հայերի պատմությունից (դասախոսության բնագիր), Եր., 2013:

⁷ Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, Աղբյուրներ Հայաստանի եւ Անդրկովկասի պատմության, հտ. Ա, ԺԳ-ԺԶ դդ., Եր., 1932, էջ 372:

Հարուստ գրչօջախներից մեկը¹: Մշակութային այդ գործունեությունն իր շարունակությունն ունեցավ նաև հետագա ժամանակներում, որում իրենց մեծ նպաստն են բերել նաև արցախահայերը²: Ձեռնամուխ լինելով գրատպության գործին, 1849 թ. բանաստեղծ Մովսես Զոհրայանց Արցախեցին³, Մարգար Ղուլիյանցը եւ Մինաս Տարղիլիջյանցը Շամախում հիմնադրում են տպարան, ուր նույն թվականին տպագրվում է շուրջ 265 էջանոց «Գիրք Սաղմոսաց Դաւթի» աշխատանքը, որի հիշատակարանում ասված է. «Ի Հայրապետութեան տեառն Ներսէսի Ե կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ զանազան նշանաց ասպետի. Հրամանաւ վիճակային Հայոց Կոնսիստորիային Շիրվանու. Շամախի, ի տպարանի երկց ընկերացն՝ Մովսիսի Զոհրայանց, Մարգարէի Ղուլիեանց եւ Մինասի Տարղիլիջեանց»⁴:

Մեծ է եղել հատկապես արցախահայերի դերը Շամախիի առեւտրա-արդյունաբերական Հարաբերություններում: Արցախցի առեւտրականները զբաղվում էին մեծածավալ առեւտրով եւ կապ էին պահպանում հեռավոր երկրների հետ, իրենց ձեռքին էին կենտրոնացրել տարանցիկ առեւտուրը: Նրանց գործունեության սահմանները տարածվում էին Ռուսաստանից, Իրանից, Եւրոպայից մինչեւ Կենտրոնական եւ Միջին Ասիայի երկրներ: Շամախիի տնտեսական կյանքում մեծ դեր էին կատարում հատկապես շերամապահությունն ու մետաքսագործությունը: Ուստի արցախահայերը ներգրավվեցին նաև այդ ոլորտում⁵:

¹ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զելթունյան, Փ. Անթրայան, Խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, հտ. Բ, Եր., 1970, էջ 728, 765:

² Տե՛ս Ստեփանյան Գ., Ծամախի եւ Բաքու քաղաքների հայկական տպագրության պատմությունից, – Հայկական տպագրությունը դարերի միջով (Հոդվածների ժողովածո), Եր., 2014, էջ 93-105:

³ Մ. Զոհրայանցն ավարտել էր Ծուշիի գավառական դպրոցը եւ վարչական աշխատանք էր կատարում Այսրկովկասի գանազան քաղաքներում: Թղթակցել է «Վովկաս» շաբաթաթերթին, ուր տպագրվել են մեծ մասամբ գրաբարով գրված նրա խոհական, հայրենասիրական եւ սիրային բանաստեղծությունները: Նրա թարգմանությամբ տպագրվել են նաեւ Վ. Կապնիստի, Ծատրովի, Ն. Կարամզիևի, Ի. Բոգդանովիչի բանաստեղծությունները (տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դդ., հտ. Ա, Գահիրե, 2006, էջ 427-428):

⁴ Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հտ. Բ, Եր., 1976, էջ 427-428:

⁵ Տե՛ս Ստեփանյան Գ., Ծամախահայերի դերը Արեւելյան Այսրկովկասի առեւտրատնտեսական հարաբերություններում, – Հայաստանի քաղաքակրթական ավանդը մետաքսի ճանապարհի պատմության մեջ (Միջազգային գիտաժողովի նյութեր, 2011, 21-23 նոյեմբերի, Երևան), Եր., 2011, էջ 198-218:

Առանձնապես մեծ է եղել Ապշերոնում՝ Բաքվում Հաստատված արցախահայերի դերը մինչև XIX դ. կեսերը Համեմատաբար Հետամնաց այդ բնակավայրի սոցիալ-տնտեսական ու կրթա-մշակութային կյանքի վերելքն ապահովելու գործում: Հիշենք, որ արցախահայերի թիվը Բաքվում առանձնապես աճեց XIX դ. 70-80-ական թթ. կապված նավթի արդյունահանման եւ արտահանման հետ¹: Արցախից Բաքու պանդխտութեան մեկնող երիտասարդութունը հիմնականում եղել է Վարանդա գավառից: Ե. Լալայանը գրում է. «Պանդխտութունը, որ սաստիկ տարածված է գավառիս [Վարանդայի – Գ. Ս.] բնակչութեան մեջ: Գլխավորապես պանդխտում են Բաքու, Ղազախ, Պետրովսկ եւ Անդրկասպյան երկրները: Վարանդացուն տակավին նոր ծանոթ այդ երկրները, մանավանդ Բաքուն յուր նավթահորերով, գրավել եւ գերել է»²:

Տարածամանակյա փաստերը վկայում են, որ Բաքվի նավթարդյունաբերութեան զարգացման գործում իրենց առանձնահատուկ դերն են ունեցել Հատկապես արցախահայերը³: Առեւտրական կապերով կապված լինելով Եվրոպայի եւ Ռուսաստանի հետ՝ արցախահայ առեւտրատրդյունաբերողներն առաջիններից էին, որ կանխազգացին նավթի նշանակութունը եւ սկսեցին զբաղվել ու զարգացնել նրա արդյունաբերութեամբ: Նրանց հիմնած Հայաստան ընկերութունները («Արարատ», «Արցախ», «Արամազդ», «Սյունիք», «Որոտան», «Մասիս», «Աստղիկ» «Վարանդա» եւն) մեծ դեր են խաղացել Ապշերոնի նավթի արդյունահանման եւ վաճառքի կազմակերպման, ինչպես նաեւ Բաքվում ֆինանսա-վարկային եւ բանկային Համակարգերի կազմավորման գործում⁴: Նավթարդյունաբերութեան ոլորտում արցախցի թերեւս առաջին նախաձեռնողներից էր Հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչ Պետրոս Մանչեյանը, որը կառավարութեան հետ 1810 թ. ստորագրած Համաձայնագրով կապալով շահագործում էր Ղուբայի նավթահորերն ու ծովային ձկնորսարանները⁵: Արցախցիներ էին խոշոր նավթահանքերի տերեր, եղբայրներ Առաֆեյյանները, Ղուկասյանները, Կրասիլնիկյանները, Գրիգոր եւ Հովսեփ Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը,

¹ «Տարագ», Թիֆլիս, 1891, մարտի 31, հո^ր 12, էջ 178:

² Լալայան Ե., Երկեր, հտ. 2, Արցախ, Եր., 1988, էջ 136:

³ Տե՛ս Микаелян В., Мирзоян С., Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX – первые десятилетия XX вв.), – ԼՀԳ, 1990, հո^ր 2, էջ 74-81:

⁴ Հարցի մանրամասն քննությունը տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2011:

⁵ Տե՛ս Դիլոյան Վ., Արեւելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին եւ հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989, էջ 117:

Մուսայել Շահգեղանյանը, Դավիթ Ավան-Յուզբաշյանը, շուշեցի Լազարյանների գերդաստանի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Դավիթի Լազարյանը, Սամվել Բաղիրյանը, Հարություն (Արտեմ) Մադաթյանը, Միքայել Արամյանցը եւ շատ ուրիշներ¹: Այս առումով ուշագրավ է «Տարագ» ամսագրի վկայակոչած հետեւյալ տեղեկությունը. «Գաղտնիք չէ, որ Բագրի Հայ Հարուստները մի աննշան բացառութեամբ, բոլորը դարաբաղցիներ են: Սրանք գաղթելով Բագու՝ իրանց բնածին ընդունակութեամբ եւ տոկունութեամբ մի երեսուն-քառասուն տարւայ ընթացքում շինել են այժմեան Բագու քաղաքը եւ ձեռք բերել ահագին հարստութիւն»²: Բաքվի նալթադաշտերի Հայ խոշոր սեփականատերերի շրջանում հատկապէս առանձնանում են շուշեցի Պողոս, Հակոբ, Աբրահամ եւ Արշակ Ղուկասյան եղբայրները: Նալթի արդյունաբերութեան մեջ Պողոս Ղուկասյանի ձեռնարկած արդյունավետ գործունեութեան շնորհիվ նրա համբավը Կովկասի վաճառականութեան շրջանակներից լայն տարածում գտավ նաեւ Ռուսաստանում եւ այլուր՝ դառնալով համառուսաստանյան չափանիշներով նալթարդյունաբերող առաջին Հայը: 1891 թ. Պողոս Ղուկասյանը նախագահում է «Բաքվի նալթարդյունաբերողների միութիւնը», այդ պաշտոնը 1896-ից մինչեւ իր մահը՝ 1917 թ., ղեկավարում է նրա կրտսեր եղբայր Արշակը³:

Բաքվում արցախցի առեւտրա-արդյունաբերողները նալթի վերամշակման եւ արդյունաբերական այլ գործարաններ ունենալուց դատ, ունեցել են նաեւ նալթամատուցներ եւ սեփական շոգենավեր: Շոգենավերի տերեր էին Ղուկասյան եղբայրները եւ Գ. Թումայանը: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել նաեւ արցախցի առեւտրա-արդյունաբերողների եւ Հայկական այլ ընկերութիւնների՝ «Մասիս», «Արարատ», «Անի», «Սեւան», «Արմենիա», «Արցախ», «Հայաստան», «Բաքֆի», «Արաքս», «Վան», «Մուշ» եւ Հայաստան այլ շոգենավեր⁴:

Այսպիսով՝ ակներեւ է, որ ներկայիս Ազրբեջանի արդյունաբերութեան մի շարք բնագավառների, մասնավորապէս՝ գլխավոր ճյուղի՝

¹ Տե՛ս Ստեփանյան Գ., Արցախահայության դերը Բաքվի առեւտրա-արդյունաբերության զարգացման գործում. XIX դ. – XX դարասկիզբ, – Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ I, Ստեփանակերտ, 2009, էջ 262-266:

² «Տարագ», Թիֆլիս, 1892, հո՞ 2-5, էջ 350:

³ Տե՛ս Սարուխան Ա., Աղեքսանդր Մանթաշեանց. Մեծ վաճառականն եւ քարեգործը: Յիշողութիւններ իր մահուան 20 ամեակի առթիւ, Վիեննա, 1931, էջ 46-47:

⁴ Տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից: Մովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում, – «Այս» ծովային ֆետագոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2010, էջ 39-44:

նալթարդյունաբերության զարգացման հիմքում ընկած են հատկապես հայ առեւտրա-արդյունաբերողների եւ մասնավորապես՝ արցախցիների երկար տարիների տքնաջան աշխատանքի շնորհիվ ձեռք բերված արդյունաբերական միջոցները:

Անհրաժեշտ է նշել, որ Բաքվի հայ դրամատերերը, նրանց թվում նաեւ արցախցիները, Բաքվից բացի, վիթխարի կարողությունների հասնող անշարժ գույք էին ձեռք բերել նաեւ Թիֆլիսում՝ այդտեղի լավագույն փողոցներում (Միքայելյան, Գոլովինսկի, Սոլովակի թաղ, Հավլաբար եւն) գնելով կամ կառուցելով շքեղ տներ¹: Այդ նպատակով իրենց կապիտալներն էին Թիֆլիսում ներդնում Ա. Ղուկասյանը, Գ. Թումա-յանը, Գր. Առաֆելյանը, Կ. Կրասիլնիկյանը, Ս. Բուդաղյանը, Գեւորգ եւ Ալեքսանդր Լալայանները եւ ուրիշներ²:

XX դ. սկզբներին Բաքվի հայ դրամատեր խավի գրեթե բոլոր ներկայացուցիչներն իրենց անբավ հարստությունից բաժին էին տրամադրում բարեգործական նպատակների համար: «Չնայելով տեղացի հայոց սակաւութիւնը, նոքա [Բաքվի հայությունը – Գ. Ս.] շատ աշխատասէր եւ հոգասէր են եւ իւրեանց քանի մի բարի գործքերովը նախադաս համարուելու են այլ քաղաքների հայերէն»³, – ասված է «Տոմար ընտանեկան» օրացույցում:

Փաստերը վկայում են, որ Բաքվի հայ բարերարները, նրանց թվում նաեւ արցախցիները, մայր հայրենիքի հետ այնքան սերտորեն էին կապված, որ նրանցից շատերը, օգտագործելով իրենց դիրքն ու հեղինակությունը, զանազան առիթներով դրամական նվիրատվություններով զգալի օժնություն են ցուցաբերել հարազատ ժողովրդին: Մեկենասությունը հիմնականում ուղղվում էր հիվանդանոցների եւ դպրոցների կառուցմանը, ազգային թատրոններին եւ մշակութային այլ օջախներին, աղետալներին ու որբերին, նյութական օգնություն էր տրամադրվում այդ նպատակով ստեղծված բարեգործական ընկերություններին եւն: Բարեգործության իր մասշտաբներով հատկապես աչքի էին ընկնում Կրասիլնիկյանց եւ Ղուկասյան եղբայրները, որոնք իրենց կուտակած մեծ կարողությունից բավական գումարներ են ծախսել այդ նպատակներով: Հատկանշական է, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման հենց առաջին տարիներին Բաքվի հայ մեծահա-

¹ Ст'у Туманов Г., Заметки о городском самоуправлении на Кавказе, Тифлис, 1902, с. 83.

² Ст'у «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 256, տե՛ս նաեւ ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 11:

³ Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հտ. Ա, Աշխատասիրեաց Տ. Սրբուհի Ա. Երիցեաց, Թիֆլիս, 1874, էջ 122:

րուստները մեծագույն մար նվիրատվություններ արեցին՝ գիտական և լուսավորական հաստատություններ բացելու համար: Ինչպես օրինակ՝ Արշակ Ղուկասյանը 5.000.000 ռուբլի կտակեց հայկական համալսարանի հիմնարկման համար¹:

Այսպիսով՝ հսկայական էր Բաքվի հնաբնակ հայություն, մասնավորապես արցախցիների դերը Շիրվանի և Ապշերոնի քաղաքակրթական գործընթացներում: Այն կասեցվեց 1918 թ. սեպտեմբերի 15-ին, երբ թուրքական զորքերն ավերիչ արշավանքով գրավեցին Բաքուն և 3 օր շարունակ զազանաբար կոտորեցին ավելի քան 30.000 հայերի²: 1918-1920 թթ. հայերի ցեղասպանություն քաղաքականությունը շարունակվեց նաև Գանձակ-Շիրվանյան նահանգի Նուխի և Արեշ, ինչպես նաև Բաքվի նահանգի հայահոծ Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառներում³: Թուրք-մուսավաթականներն ավերեցին ու ոչնչացրեցին նաև Հազարամյակներով ստեղծված հայկական բազմաթիվ խաչքարեր, մատուռներ ու եկեղեցիներ՝ Հայ բնակչության նկատմամբ իրագործելով նաև մշակութային եղեռն:

Հայ բնակչության նկատմամբ մուսավաթական կառավարության իրականացրած հայահալած հանցավոր քաղաքականությունը շարունակվեց նաև Խորհրդային իշխանության տարիներին: Ադրբեջանում հայ բնակչության իրավազրկելու և հալածելու քաղաքականությունը հաջորդեցին Սոմալայիթում և Բաքվում հայերի դեմ 1988 թ. փետրվարին և 1990 թ. հունվարին կազմակերպված ջարդերը⁴: Հայերի ցեղա-

¹ Տե՛ս Աւետիք Ղուկասեանի կտակին շուրջ, - «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1913, 9/22 փետրուար, հոմ 1154, տե՛ս նաև Խաչատուրեան Յ., Երեք ամիս ի Կովկաս, - Թեոդիկ, Ամենուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, Ժ-ԺԿ տարի, 1916-1920, էջ 200:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96-99: Հմմ. նաև Գеноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна, Ер., 1982, с. 524; Ստեփանյան Գ., Բաքվի հայերի 1918 թ. կոտորածները և թուրք-ադրբեջանական իշխանությունների պատասխանատվությունը, - Ադրբեջանի պետական ֆակուլտետի 21-24-րդ Ստեփանակերտում և Օուշիում կայացած միջազգային գիտա-գործնական կոնֆերանսի զեկուցումներ, - «Կանաթ» գիտական կենտրոնի տարեգիրք, Օուշի, 2010, հոմ 4, էջ 223-237:

³ Տե՛ս Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ., - Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, հտ. 5, Եր., 2002, էջ 23-28; նույնի՝ Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., - ԲԳՀ, 2008, հոմ 3, էջ 31-48:

⁴ Сумгаит... Геноцид... Гласность? Составили Г. Улубабян, С. Золян, А. Аршакян, Ер., 1990; Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը (պաշտոնական փաս-

սպանությանը հետեւեց Ադրբեջանից ավելի քան 361.000 հայերի վերջին հատվածի բռնադաշխւթը¹:

տաթղթեր, ականատեսների վկայություններ եւ այլ նյութեր 1990 թ. փունվարի 13-19-ի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով), Եր., 1992:

¹ Տե՛ս Խոջաբեկյան Վ., Ցեղասպանությունը եւ հայաթափությունը Ադրբեջանում (1918-1990-ական թթ.), - ՊԲՀ, Եր., 2005, հոփ 1, էջ 40:

Ալբանիա, Ադուանք, Գարդման, Ուտիք եւ Շակաշեն անունների մասին

Մ. Թ. I դարի հույն եւ լատին պատմիչները (Իսիդորն Նիկեացի, Պլինիոս Ավագ) Ալբանիա անունը կապում են լատիներեն *albus*-սպիտակ բառի հետ: Այդ անունը տրվել է երկրի բնակիչներին, իբրև թե նրանց սպիտակահեր լինելու պատճառով: Ելնելով այսպիսի վկայություններից՝ մի շարք ուսումնասիրողներ (Ա. Յանովսկի, Ա. Բաքիխանով եւն) Ալբանիա անունը կապում են լատիներեն *albus* «սպիտակ» իմաստն ունեցող բառի հետ եւ երկրի անվանադիր համարում հույն ու հռոմեացի պատմիչներին:

Այլ ուսումնասիրողներ (Ն. Մառ, Կ. Տրեւեր, Բ. Ուլուբաբյան եւն) *alb-*, *alp-* բառի մեջ տեսնում են կելտական «լեռ», «բարձր» բառը, ելնելով այն հանգամանքից, որ Եվրոպայում ու Բալկաններում կան նույն հնչողություններ աշխարհագրական անուններ (Շոտլանդիայի հնագույն կելտական անունը Ալբանիա է, Բալկաններում կա Ալբանիա անունով երկիր, իսկ Կենտրոնական Եւրոպայում գտնվող լեռնաշղթայի Ալպեր անունը բխեցվում է կելտական *alp-*, *alb-* «լեռ, բարձր» իմաստն ունեցող բառերից): Ակադ. Ն. Մառը ենթադրում է, որ «Ալբանիա» եւ «Դադստան» անունները «լեռների երկիր» իմաստն ունեն: Նա նաեւ իրավացիորեն նշում է, որ հին հույների ու հռոմեացիների միջոցով մեզ հասած անունների մեծ մասը կամ իրենց լեզվով տառադարձություններ են, կամ թարգմանություններ: Փաստերը ցույց են տալիս, որ այս տարածաշրջանի, մասնավորապես Հայոց Արեւելյան Կողմի աշխարհագրական անունները առանց հայկական գրավոր աղբյուրների ու հայոց լեզվին դիմելու, անհնար է մեկնաբանել:

Հայկական գրավոր աղբյուրներից կարելու է խորենացու վկայությունը. «...աշխարհն էլ Աղվանք կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետեւ նրան աղու էին ատում»: Իսկ սա նշանակում է, որ Ադուանքը տարածքի անուն է եւ ոչ ինչ-որ էթնիկ խմբի: Հայ պատմագրության մեջ Աղվանք անունը օգտագործվել է ցույց տալու համար Հայոց Արեւելյան Կողմի նահանգների տարածքը: Պետք է մտածել, որ հույներն ու հռոմեացիները Հայտնվելով այս տարածաշրջանում, առաջին հերթին շփվում էին Հայերի, պարսիկ մյուս ցեղերի ու ժողովուրդների հետ: Եփոսանների ժամանակ նրանց Հայտնի էր դառնում տարածաշրջան-

նի, այս դեպքում Հայոց Արեւելյան Կողմի Հայկական Աղվանք անվանումը: Եւ ինչպես այլ դեպքերում, այս դեպքում եւս հույները Աղվանք անունը հարմարեցրել են իրենց լեզվին եւ հնչեցրել Ալբանիա ձեւով (գործել է Ղ-ւ, Վ-բ հնչյունափոխութիւնը): Եթե գործել է այս տարբերակը, ապա կարելի է ասել, որ Ալբանիա անունը Հայոց Աղուանք անվան հունա-հռոմեական տարբերակն է:

Հետեւաբար՝ կարող ենք պնդել, որ Աղուանք անունը ծագել է հենց հայկական միջավայրում:

Операция «Кольцо» – позорная страница в истории Советской Армии¹

Против 1497 семей геташенцев, оставшихся в селе к тому времени, было брошено 207 танков и бронетранспортеров, 6 вертолетов типа «Крокодил» и «Кобра».

Сёла Геташен, Мартунашен и Сулук (Азат) были одними из самых, если так можно выразиться, армянских сёл рядом с Кировабадом (Гандзак). Село Геташен было самым большим и насчитывало около четырех тысяч человек, два остальных были поменьше. Это были яркие, самобытные деревни с обязательными небольшими церквями, стариками в центре села... В 1828 году село вошло в состав России. В 1860 году здесь появилась первая школа. В центре Геташена находилась церковь Сурб Аствацацин, четырехэтажный дворец Мелик-Мнацакянянов, еще одна церковь, датированная 1749-м годом; часовня, в которой хранилось рукописное Евангелие 1211 года. К югу от села располагался Ехнасарский монастырь. Геташен дал двух героев Советского Союза – Газароса Авакяна и Эдуарда Аляняна.

Все закончилось 2 мая 1991 года, когда закончилась операция «Кольцо», в результате которой армянское население было полностью изгнано из родных домов. Сама операция началась 30 апреля 1991 года, когда танки и БТР вошли в Мартунашен и Геташен.

«Геташен – это только начало военного этапа Карабахского движения, когда люди еще не осознавали до конца, что происходит. Думаю, операция «Кольцо» и есть начало войны против Арцах». (Из воспоминаний оператора Вардана Оганесяна, 2 месяца просидевшего в азербайджанской тюрьме).

23 апреля советская армия полностью окружила Геташен и Мартунашен. «Те, кто приехали защищать село – были отряды «Арабо» во главе с

¹ Автор данного материала, талантливый журналист-аналитик К. Тер-Саакян скончалась в 2014 г. Наш источник: <http://novostink.ru/analytics/68748-operaciya-kolcopozornaya-stranica-v-istorii-sovetskoj-armii.html#ixzz46xSEl8T6> – *Ред.*

Симоном Ачикгёзяном («Дед», погиб 30.04.1991 г., выйдя один против танка) в Мартунашене, разданский отряд во главе с Зарзандом Данцеляном (Грач), отряд «Малатия-Себастья» Ваана Затикяна и дашнакцаканы во главе с легендарным Татулом Крпеяном. (Из воспоминаний ополченца-геташенца Симона Талаляна).

30 апреля состоялось заседание Совета Безопасности СССР во главе с М. Горбачевым. Подразделение Бакинского полка ВВ МВД СССР под командованием полковника Машкова заняло господствующие над Геташеном высоты и начало обстреливать село. Сообщение любительской радиостанции из Геташена: «Ворвавшиеся в село войска начали погромы мирных жителей. На 21.00 убито более 10 человек, имеется много тяжело раненых и заложников...».

Против 1497 семей геташенцев, оставшихся в селе к тому времени, было брошено 207 танков и бронетранспортеров, 6 вертолетов типа «Крокодил» и «Кобра». На окраине сразу же были подожжены 27 домов, появились первые жертвы. Жители стянулись к центру села, образовав круг самообороны. Начали с бомбежки вертолетами, затем начали стрелять танки, следом вошли русские солдаты, около 28 тысяч, а прячась за их спинами – азербайджанский ОМОН, представители Народного фронта и мародеры – всего около 13 000. Лица солдат были почему-то обмазаны зеленкой...

30 апреля в Геташене и Мартунашене в результате погромов, устроенных ОМОН-ом, было убито 17 человек, десятки ранены, в том числе и дети. В заложники взято более 40 человек. 2 мая азербайджанский ОМОН распространил документ, согласно которому жители сёл Геташен и Мартунашен якобы просят омовцев и военных дать им возможность беспрепятственно покинуть сёла. Председатель КГБ Крючков уже апеллировал к тексту этого документа.

3 мая. Село Мартунашен полностью горело. Погибли 12 человек, без вести пропали 20 и взяты в заложники 7.

4 мая. Президент Горбачев передал через Крючкова: «Вопрос о депортации населения Мартунашена и Геташена снят. Никто не имеет права принуждать жителей этих деревень покинуть места их проживания». Вопрос действительно был снят, потому что в сёлах уже не осталось армян. 2 мая вертолеты начали вывозить людей. 8 мая начался грабёж села...

А вот как описывает операцию правозащитный центр общества «Мемориал»:

«Документы, имеющиеся в распоряжении «Мемориала», дают веские основания полагать, что решения о депортации жителей ряда армянонаселенных сёл НКАО и прилегающих районов были приняты на заседаниях Совета обороны Азербайджанской Республики 10.04.91, Президиума Верховного Совета Азербайджанской Республики 11.04.91 и на совещании у президента Азербайджанской Республики А. Муталибова с руководством КГБ, МВД, Прокуратуры республики 16.04.91. Руководство операциями по депортации было возложено на министра внутренних дел Азербайджанской Республики М. Н. Асадова. На этих совещаниях звучала резкая критика в адрес Центра, были поставлены вопросы о решении карабахской проблемы собственными силами, о резком увеличении контингента вооруженных формирований МВД и КГБ Азербайджана.

Маловероятно, что проведение широкомасштабных операций, планируемых руководством Азербайджана, не было согласовано с руководством МВД, КГБ и Министерства обороны СССР.

В мае – начале июня 1991 года в НКАО и прилегающих районах Азербайджанской Республики силами подразделений МВД Азербайджанской Республики при участии подразделений внутренних войск МВД СССР и Советской Армии были депортированы жители 19 армянских сёл – всего более 5000 человек.

В руководстве операцией непосредственное участие принимали командующий 4-й армией Закавказского военного округа генерал армии Соколов и первый заместитель министра внутренних дел Азербайджанской Республики Р. Мамедов, которые в первых числах мая находились в районе села Чайкенд (Геташен). Следует сказать, что до описываемых событий подразделения Советской Армии в активных операциях участия не принимали.

Командующий внутренними войсками МВД СССР генерал-майор Шаталин был осведомлен обо всём происходившем в Чайкенде (Геташене) на всём протяжении операции. Комендатура района чрезвычайного положения НКАО и прилегающих районов была отстранена от руководства данной операцией.

Межаниян Сергей: «...В то время, как я убегал, увидел, что у дома Хамперяна Володи собрались солдаты и ОМОН-овцы, они заставляли его ос-

тавить дом. Жена Володи, Хамперян Тагуи заявила, что она не оставит свой дом, и в это время один из ОМОН-овцев штыком автомата разорвал Володе губу, Володя потерял сознание, а жену его прогнали из дома. В центре села я увидел, что солдаты и ОМОН действуют еще более жестоко, они ломали, разбивали вдребезги домашние вещи, сжигали дома...».

Нанян Тамара Галустовна: «Пятеро военнослужащих и трое азербайджанских ОМОН-овцев ворвались во двор нашего дома... Они дулами автоматов втолкнули меня внутрь квартиры и потребовали дать им деньги и золотые вещи. Когда я заявила, что таких не имею, они перевернули вверх дном все вещи. Когда пришел мой муж, они напали на него и стали избивать... Я попыталась вмешаться, но русский военнослужащий выстрелил в меня и ранил в руку. Военнослужащий приставил дуло автомата к моему животу и выстрелил, но к счастью пуля попала в ноги». Муж Т. Г. Нанян и сосед доставили ее в больницу.

Эрсик Акопкохян сообщила, что она была вынуждена бежать из своего дома, когда военные и ОМОН-овцы занимались грабежом. Те настигли ее на улице и, нанося удары по голове, потащили к танку. Ей удалось вырваться, однако, по ее словам, последствия ударов по голове продолжают сказываться на ее здоровье.

При уводе жителей из села при попытке к бегству был застрелен 30-летний житель Чайкенда В. Назарян. В домах по окраинам жители Чайкенда обнаружили трупы десяти убитых жителей села, а также более десятка раненых. Среди убитых были женщина Минасян Рипсима около 80 лет, мужчины Ахумян Ванес около 83 лет, Гянджумян Бениамин 75 лет, Сейран Папик 84 лет — люди, в отношении которых заведомо нельзя предположить, что они являются членами вооруженных группировок. Остальные 6 убитых были мужчинами разного возраста. По нашим сведениям, никто из них не оказывал вооруженного сопротивления. По свидетельствам врачей, тела многих убитых были изрешечены автоматными очередями. Мельсик Согомян был убит топором.

В отличие от Чайкенда, в село Мартунашен военные входили утром 30-го апреля вместе с сотрудниками азербайджанского ОМОН. Именно поэтому вооруженные люди, находившиеся в селе, оказали сопротивление. Был подбит один бронетранспортер, среди ОМОН-овцев были раненые и, по некоторым сообщениям, 1 или 2 убитых. В ответ село было обстреляно из танковых орудий. В результате 1 вооруженный человек и 1

мирный житель села Оганесян Оганес Макарович 65 лет были убиты, разрушен и сожжен ряд домов. Вооруженный отряд покинул село. Войдя в село, военные и сотрудники азербайджанского ОМОН убили еще 3 мирных жителей: Алкамяна Шамира Аршаковича 57 лет, Агаджаняна Размика 49 лет, Давтяна Хачатура 67 лет. По свидетельству очевидцев, они были безоружны.

После обмена заложниками село регулярно начало обстреливаться из автоматов и пулеметов. Огонь велся не прицельно, а с целью запугать жителей села. Танки обстреливали из орудий склон горы над селом, так что в село падали обломки скалы. От жителей требовали сдать всё имеющееся оружие и покинуть село. В результате часть испуганных жителей выразила желание покинуть село навсегда.

Так закончилась очередная трагическая страница в истории армянского народа. Операция «Кольцо» еще раз подтвердила, что перед озверевшими азербайджанцами все бессильны. Операция также показала, что полагаться армянам нужно только на собственные силы — никто не поможет: ни Москва, ни Советская Армия, никто.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԲԵՀ – Բանբեր Երեւանի Համալսարանի (Երեւան)
- ԼՀԳ – ՀՀ ԳԱԱ Լրագրեր Հասարակական գիտությունների (Երեւան)
- ՀԱ – Հանդէս ամսօրեայ (Վիեննա-Երեւան)
- ՀՀ ԱԱ – Հայաստանի Հանրապետության Ազգային արխիւ (Երեւան)
- ՄՄԱԵԺ – Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ (Երեւան)
- ՊԲՀ – Պատմա-բանասիրական Հանդէս (Երեւան)
- АВПР – Архив внешней политики России (Москва)
- ВАА – Вестник архивов Армении (Ереван)
- ВВ – Византийский временник (СПб., Москва)
- ВДИ – Вестник древней истории (Москва)
- ВОН – Вестник общественных наук АН (Ереван)
- ВЯ – Вопросы языкознания (Москва)
- ЖМНП – Журнал министерства народного просвещения (СПб.)
- ИГЭД – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. Косвена и Х. Хашаева, Москва, 1958
- ИЗ – Исторические записки АН СССР (Москва)
- ИФЖ – Историко-филологический журнал (Ереван)
- МИЭБГКЗК – Материалы для исследования экономического быта государственных крестьян Закавказского края (Тифлис)
- РГАСПИ – Российский государственный архив социально-политической истории (Москва)
- СМОМПК – Сборник материалов для описания местностей и племен Кавказа (Тифлис)
- СТ – Советская пноркология (Москва)
- СЭ – Советская этнография (Москва)
- BSOAS – Bulletin of the School of Oriental and African Studies (London)
- JRAS – Journal of the Royal Asiatic Society (London)
- REArm. – Revue des Études Arméniennes (Paris)

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Айвазян Григорий – К вопросу об этногенезе армян Азербайджана в свете албано-удинской проблематики	3
Ավագյան Մարիամ – Արդի դարաշրջանի նոր մարտահրավերների և Ադրբեջանահայերի անհետաձգելի խնդիրների շուրջ	25
Ավանեսյան Լիլիա – Տեղեկություններ Շամախիի XVII – XX դ. սկզբի հայկական գորգագործության և մանածագործության մասին.....	30
Գալստյան Վարդան – Արևելյան Այսրկովկասի թյուրքական ցեղերը ԺԹ դարում.....	33
Григорян Самвел – Ошин из страны Армянской: О локализации Майреаджурк'а, восточно-армянской прародины Гетумянов	60
Երանյան Նժդեհ – Արցախի և Ուտիքի քարե մարդակերպ կոթողների մեկնաբանության շուրջ	69
Ժամկոչյան Աղավնի – Դիտողություններ Արցախի Տիգրանակերտից հայտնաբերված կնիքի վերբերյալ	71
Խառատյան Հրանուշ – «Էթնիկական օգնության» պատմա-քաղաքական պատճառաբանությունը (Շամախու Գարդման – Գեոկչայի գավառ – Իսմայիլիի շրջան).....	78
Խոբրիկյան Հովհաննես – Հերոդոտոսի ուտիների և մյուկերի տեղադրության շուրջ.....	111
Հակոբյան Արսեն – Պանդի սուրբբ. սրբավայրը, բնագաղթը և նոր սփյուռքը.....	115
Ղարիբյան Նազենի – Երուսաղեմյան սրբազան ավանդույթի և պատկերազրության արձագանքները Աղուանքի դարձի պատմության մեջ	117
Гущян Лусине – Костюм армянок Шемахи (по материалам Музея антропологии и этнографии РАН (Кунсткамера)).....	119
Махмудова Светлана, Акопян Айк – Новые албанские и армянские надписи, найденные на территории Дагестана.....	123
Меликсетян Самвел – К исламизации армянского и удинского населения Шаки-Кабалинской зоны в первой половине XVIII в. и некоторые вопросы истории удин	125

Մխիթարյան Գոհար – Հայության սոցիալ-իրավական դրությունը Շիրվանում 18-րդ դարի երկրորդ կեսին.....	128
Յակոբեան Ալեքսան – Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը ըստ Կլաւդիոս Պտղոմէոսի եւ Է դարի Աշխարհացոյցի.....	136
Շամամյան Նարինէ – Պարերը Բանանցի հարսանեկան ծիսաշարում	142
Ստեփանյան Գեորգ – Շիրվանի եւ Ապշերոնի զարգացման գործում արցախահայերի քաղաքակրթական ավանդի շուրջ	146
Տերյան Անժէլա – Ալբանիա, Աղուանք, Գարդման, Ուտիք եւ Շակաշէն անունների մասին.....	164
Тер-Саакян Карина – Операция «Кольцо» – позорная страница в истории Советской Армии.....	166
Համառոտագրությունների ցանկ	171
Բովանդակություն	172
Contents	174

CONTENTS

Ayvazyan Grigori – Question ethnogenesis of Armenians of the Azerbaijan in the light of the Albanian-Udi problem (<i>Rus.</i>)	3
Avagyan Mariam – About the new challenges of the modern era and the urgent issues of Armenians from the Azerbaijan SSR (<i>Arm.</i>)	25
Avanesyan Lilia – On the Carpet-Weaving and Textiles of Shirvan from the 17th to the early 20th centuries (<i>Arm.</i>)	30
Galstyan Vardan – The turkic tribes of the Eastern Transcaucasia in 19th century (<i>Arm.</i>)	33
Grigoryan Samvel – Ošin from Armenia: The location of Mayreac 'jurk', ancestral homeland of the princes of Het'umian House (<i>Rus.</i>)	60
Eranyan Njdeh – About interpretation (<i>Arm.</i>).....	69
Zhamkochyan Axavni – An indication on the seal with Armenian inscriptions from Tigranakert of Artsakh (<i>Arm.</i>).....	71
Kharatyan Hranush – Historical and Poitical Reasoning of «Ethnic Help» (Gardman-Geokcha District of Shamakhi – Ismaili Region) (<i>Arm.</i>)	78
Khorikyan Hovhannes – On the Location of the Utii and Myki by Herodotus (<i>Arm.</i>).....	111
Hakobyan Arsen – Shrine of «Pand»: sanctuary, deportation and new diaspora (<i>Arm.</i>).....	115
Gharibyan Nazeni – References on the Sacred Tradition and Iconography in the Story of the Conversion of Alouania (<i>Arm.</i>)	117
Ghushchyan Lusine – Le costume femmes arméniennes de Chemakha (basé sur les collections de photos de MAE (la Kunstkamera)) (<i>Rus.</i>)	119
Makhmudova Svetlana, Hakobyan Hayk – New Albanian and Armenian Inscriptions, found in Territory of Daghestan (<i>Rus.</i>)	123
Meliksetyan Samvel – The conversion to Islam of Armenian and Udi population of Shaki-Kabala region and some questions of the history of Udi (<i>Rus.</i>)	125
Mkhitaryan Gohar – The social and legal status of the Shirvan Armenians in the second half of the 18th century (<i>Arm.</i>).....	128
Hakobyan Aleksan – The cities and rivers of Proper Albania by Claudius Ptolemy and Ashxarhac'oyc' of the 7th century (<i>Arm.</i>)	136
Shamamyán Narine – Dances in the Wedding Ceremony Cycle of Banants (<i>Arm.</i>).....	142
Stepanyan Gevorg – Civilizational Contribution of the Artsakh Armenians to the Development of Shirvan and Apsheron (<i>Arm.</i>)	146

Teryan Anjela – About the origin of the toponyms of Albania, Aghuanq, Gardman, Utiq and Shakashen (<i>Arm.</i>)	164
Ter-Sahakyan Karina – Operation «Koltso» («Ring») – a shameful page in the history of the Soviet Army (<i>Rus.</i>)	166
Abbreviations list	171
Contents (<i>Arm., Rus.</i>)	172
Contents	174

**ԳԱՐԴՄԱՆԻ ԵՒ ՇԻՐՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՎԱՆԴԱՆՆԵՐԸ
(պատմություն եւ արդիականություն)**

Հանրապետական գիտաժողով

Երեւան, 29-30 ապրիլի, 2016 թ.

**ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ
ԴՐՈՒՑԹՆԵՐ**

ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2016

Երեւան

Հրատ. խմբագիր	Ա. Հակոբյան
Համակարգչային ձեւավորումը	Ս. Հակոբյան
Կազմի ձեւավորումը	Ա. Ավետիսյան
Սրբագրիչ	Է. Գեւորգյան

Հրատ. պատվեր № 694

Հանձնված է արտադրության՝ 06. 05. 2016 թ.:

Չափսը՝ 60×84 1/16: Ծավալը՝ 11,0 մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երեւան, Մարշալ Բաղրամյան 24

[1800mm.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0414340

A π
101720

ISBN 978-5-8080-1218-9



9 785808 012189 >